



ՄԻՀՐԱՆ ՏԱՄԱՏԵԱՆ

ԻՄ
ՅՈՒՆԵՐԷՍ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ՝ ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ՊԷՅՐՈՒԹՅՈՒ ՄԻՀՐԱՆ ՏԱՄԱՏԵԱՆ ԱԿՈՒՄԲԻՆ

ՄԻՀՐԱՆ ՏԱՄԱՏԵԱՆ

ԻՄ ՅՈՒ ՀԵՐԷՍ

ԽՄԲԱԳՐԵՑ ԵՒ ԾԱՆՕԹԱԳՐԵՑ
ՎԱԶԷ ՂԱԶԱՐԵԱՆ

ՊԵՂՐԱՔ


1985

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԿԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՎ

ՑՈՒՆԵԼՈՒ

ՑՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՑՈՒՆԵԼՈՒ
ՑՈՒՆԵԼՈՒ



ՄԻՀՐԱՆ ՏԱՄԱՏԵԱՆ

(1864 - 1945)

12. 08. 2013



ПРИЛОЖЕНИЕ № 1

(подпись)

ԿԻԼԻԿԵԱՆ ԵՐԱԶԻՆ ՆԱԽՈՐԴԸ

Այս հատորը լոյսին կը տրուի ոչ թէ անոր համար որ 1985-ի Ո-դոստոսը կը կազմէ 65-ամեակը Կիլիկիոյ անկախութեան հռչակման եւ կամ 10-ամեակը Միհրան Տամատեանին մահուան :

Ո՛չ : Անմահներուն կեանքն ու գործը կարօտ չե՛ն յորելնական տարեթիւերու՝ մեր սեւեռումը իրենց վրայ հրաւիրելու համար : Անմահները իրենց կեանքին օրինակով եւ գործունէութեան թելադրանքով ներկայ են միշտ եւ ամենուր :

Եւ նոյնիսկ իր զաղափարական հակառակորդներէն անբասիր զործիչի յուսադատկին արժանացած Տամատեանը անմահ է :

Ճգնեցէք զրեւոյստմութիւնը 19-րդ դարու աւարտին եւ 20-րդ դարու սկիզբը Արեւմտահայաստանի ու Կիլիկիոյ մէջ ծաւալած ազգային ազատագրական խմորումներուն եւ շարժումներուն : Զեր զիստց պիտի գտնէք անպայման Տամատեանը՝ իրրեւ արձանացեալ խոր, քաղաքացիական, մտաւորական յեղափոխականի եւ աննահանջ կազմակերպիչը զիմադրական թէ կամաւորական շարժումներու :

Զանազէք արձանագրելու պատմութիւնը գրօնքի վերածուած արեւմտահայութեան : Զեր առջեւ պիտի յառնէ անխուսափելիօրէն Տամատեանը՝ իրրեւ աննկուն ախոյեաններէն մին սփիւռքի կազմակերպման, ներգաղթի հատապոյման, հայապահպան աշխատանքին, սփիւռքը հայրենիքին կապող կամուրջի դարբիններուն :

Դրի առէք պատմութիւնը արեւմտահայ զարթոնքին ուղեկցած ու մանաւանդ անոր յաջորդած ժողովրդավար շարժումներուն եւ ռամկավարական միտքի զարգացման : Զեր աչքերուն պիտի ըսիսի անոտարակոյս ուրուագիծը Տամատեանին՝ իրրեւ անվհատ սերմնացանը ռամկա-

վարական հայեցակետերուն եւ ոգիին :

Փորձեցէք մտաբերել անունները տիպար ազգային - քաղաքական դործիչներու : Զեր միտքը պիտի բացուի աներկբայօրէն նա' եւ անունին վրայ Տամատեանին՝ իրեւ մարմնաւորումը առաւելաբար զարծի մարդուն (թէ եւ անոր խօսքն ալ էր պերճիմաստ) , իրապաշտ գործիչին , անսակարկ ու անխաղախ հայրենասէրին , իմաստուն առաջնորդին , Հայ Դատի անխոնջ նուիրեալին , հայ արժէքներու ջերմ պաշտպանին , պետական մտածողութեամբ օժտուած շրջահայեաց գիւտողէտուն :

Ահա այս բոլորը , եւ դեռ աւելի'ն , Տամատեանը կը դարձնեն մշտադոյ ներկայութիւն մեր ժողովուրդի պատմութեան մէջ , ու այս գիրքը , ահաասիկ , կը հանուի լոյսին՝ նոր լուսարձակ մը եւս ուղղելու մեր պատմութեան էջերուն , նոր քար մը եւս տեղադրելու Տամատեանին պատուանդանին , որ պէտք է կանգնի :

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՀԱԿԻՐՃ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1864- Կ. Պետոյ մէջ , Սերովրէ Տամատեանին եւ Իսկուհի Թամայու-րաճեանին ընտանեկան բոյնին մէջ կը ծնի Միհրան Տամատեանը , հինգերորդը՝ վեց դաւակներու :

1872- Նախակրթութիւնը Բերայի Ս. Յակոբ եւ Բանկայթիի վիւն-նական միաթարեաններու վարժարաններուն մէջ ստացած պատանի Միհրանը կ'ուղարկուի Վենետիկ՝ աշակերտելու Մու-րատ - Ռաֆայէլեան վարժարանին :

1878- «Բաղմավէպ»ի մէջ լոյս կը տեսնէ Տամատեանին առաջին պը-րական գործը՝ «Ի համբարձումն Փրկչին նուագ» բոսնաւորը :

1880- Վենետիկէն շրջանաւարտ Միհրանը արդէն դարձած է Պոլիս եւ ուսուցչական պաշտօններ ստանձնած Բանկայթիի յիշակ , աւետարանականներու Հարկեան եւ նոյնպէս Բանկայթիի Սու-րէնեան վարժարաններուն մէջ :

1881- Ուսուցիչ՝ Բերայի Նարեկեան վարժարանին :

1882- Ատանայի մէջ աւագ ուսուցիչ՝ Հայոց Միացեալ Ընկերու-թեանց Աքադրեան վարժարանին :

1883- Ուսուցիչ՝ Պէօյիւք Տերէի (Պոլիս) հայ կաթողիկէ դպրոցին :

1884- Հայոց Միացեալ Ընկերութեանց առաջարկով , աւագ ուսու-ցիչ՝ Մշոյ բարձրագոյն վարժարանին , որ շուտով պիտի կոչ-ւէր Ներսէսեան՝ ի յիշատակ նոր վախճանեալ վարժապետեան Ներսէս Պատրիարքին :

- 1886- Տեսուչ՝ Միացեալի վարժարաններուն։ Արդէն Տամատեանի մէջ կը սկսին նշմարելի դառնալ յեղափոխական գործին լծուելու խմորումները եւ ան մի քանի գործակիցներով հիմը կը դնէ զաղտնի կազմակերպութեան մը։
- 1888- Դարձ՝ Պուլիս եւ ուսուցչութիւն՝ Օրթագիւղի հայ կաթողիկէ զպրօցին մէջ։
- 1889- Կը միանայ Հնչակեան Կուսակցութեան եւ Գում Գափուի ցոյցէն ետք (Յուլիս 15-ին՝ հին տոմարով) կը հարկադրուի հեռանալ Աթէնք, ուր կասկ կը հաստատէ յոյն, մակեդոնացի ու կրետացի յեղափոխականներու հետ։
- 1891- Իր առաջարկութեամբ եւ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնին որոշումով, Սեպտեմբեր Տամատեանը Մելքոն Խուրշիտ Կեղծանունով ճամբայ կ'իյնայ դէպի Սասուն՝ անցնելով Կիլիկիայէն, ուր կ'այցելէ զանազան քաղաքներ եւ բազմաթիւ աղղային թէ յեղափոխական գործիչներու։ Տամատեանը՝ Մելքոն, Աւատա աղա եւ նալ ծածկանուններով՝ Սասնոյ գիւղերը չբռնազայելով, հետամուտ էր ընդհանուր ապստամբութեան կազմակերպման։
- 1893- Մայիսի աւարտին կը ձերբակալուի ու կը տարուի նախ Մուշ, ապա՝ Բաղէշ։ Ճամբան, ձիու մը աքացիին հետեանքով կը փախուի Տամատեանին աջ սրունքին ոսկորը։
- 1894- Իբրեւ վտանգաւոր յեղափոխական Պուլիս տարուած Տամատեանն իր հնարամտութեան շնորհիւ Մայիսին ազատ կ'արձակուի վերջապէս։
- 1895- Պապը Ալիի ցոյցի կազմակերպիչներէն մին՝ Տամատեանը ցոյցի կայացումէն օր մը առաջ, Սեպտ. 17-ին, Կուսակցական սրտումով կը մեկնի Վառնա՝ Պուլկարիոյ եւ Ռումանիոյ մէջ Կուսակցական գործունէութիւն ծաւալելու։ Հոկտեմբեր, սակայն, ռումանական կառավարութիւնը զինք կը ձերբակալէ եւ ճամբայ կը հանէ դէպի Պուլիս։ Բարեբախտաբար կը յաջողի խոյս տալ եւ հանգրուանել Աթէնք։
- 1896- Տամատեանը Լոնտոն է՝ իբրեւ խորհրդական անդամ Հնչակեան Կեդրոնի եւ աշխատակից «Հնչակ»ի ու «Ապստալ»ի։ Քառասնեայ գործակցութենէ ետք նազարբեկեան ամուլին հետ, Արփիարեանին, Սըվազլիանին եւ այլոց հետ հիմը կը դնէ Նոր Հնչակեանութեան, ուր շուտով պիտի որդեգրէր Վերակազմալ Հնչակեան Կուսակցութիւն անունը, դառնալով անդամ անոր Կեդրոնին։
- 1898- Շրջանէ մը ի վեր Կեդրոնէն քաշուած Տամատեանը, Աղբր-

աանդերիոյ մէջ դումարուած Վ. Հ. Կուսակցութեան ընդհ. Ժողովէն ղեկավար, կը հրաժարի կուսակցութենէն եւ նոյն քաղաքի մաքսատան մթերանոցներու ընկերութեան մօտ կը դառնայ հաշուակալ, առանց, սակայն, հրաժարելու աղղաքին կեանքին իր մասնակցութիւնը բերելէ :

- 1899- Գահիրէի մէջ լոյս կը տեսնէ Տամատեանին «Ներշնչումներ» բանաստեղծութիւններու զիրքը, Պերճ զրական ծածկանունով :
- 1900- Կ'ամուսնանայ իր յեղափոխական ընկեր Յակոբ Փափազեանին քրոջ՝ Զարուհիին հետ, որմէ կ'ունենայ Շաքէ եւ Նուարդ զուտրերը :
- 1904- Կը դառնայ քարիւղի Մանթաշէֆ ընկերութեան Աղիքսանդրիոյ գրասենեակին պետն ու համարակալը. պաշտօն՝ զոր կը վարէ մինչեւ 1917: Նոյն տարին կը միանայ վերակազմակերպութեան շարժառարկան հասուածին :
- 1908- Տամատեանը հոյլ մը գաղափարակիցներով կը դառնայ հիմնադիրը Հայ Սահմանադրական Ռամկավար Կուսակցութեան (Հոկտ. 31), որուն զրօշին տակ որոշած էին մէկտեղուիլ արմենականներ, վերակազմեալ հնչակեաններ եւ սահմանադրականներ: Նոյն տարուան Օդոստոսին Թէքէեանին հետ կ'անցնի Պոլիս, հոն եւս հիմնելու Հ.Ս.Ռ.Կ.ի մասնաճիւղ մը :
- 1909- Դարձեալ այց Պոլիս՝ կազմակերպչական գործերով :
- 1910- Աղիքսանդրիոյ մէջ լոյս կը տեսնէ Տամատեանին «Ռամկավարութիւն» աշխատասիրութիւնը :
- 1912 Սեպտ. - 1913 Յուլիս - Տամատեան մերթ Աթէնք է եւ մերթ Տէօրթ - Եոլ (անցնելով Պէյրութէն ու Հալէպէն), Կիլիկիոյ ինքնապաշտպանութեան գործով :
- 1914- Մանթաշեան Տան գործերով Տամատեանը կ'այցելէ Սուրիա :
- 1915- Կը դառնայ հիմնադիրներէն Ռամկավարներու «Արեւ» պաշտօնաթերթին :
- 1916- Տամատեանը կը դառնայ նաեւ հիմնադիրներէն Եղիպտոսի Հայ Ազգային Միութեան: Ան՝ իբրեւ Ռամկավար Կուսակցութեան ղեկավար ընդունուած տեսակցութիւններ կ'ունենայ Մարք Սալթիկ եւ Գնդ. Պրեմոնի հետ, հայկական կամաւորական շարժումի կազմակերպման ի ինդեր :
1917. Տամատեանը Փարիզ հանդիպելէ եւ Պօղոս Նուպարին հետ խորհրդակցելէ ետք, հնչակեան Սապահգիւղեանին եւ դաշնակցական Հանրմեանին հետ կը մեկնի Մ. Նահանգներ, հոն

ևս չիմենելու Հայ Ազգային Միութիւն եւ զարկ տալու կամաւորական զործին: Հոն կը մնայ մինչեւ Օգոստոս, երբ զինք կը գտնենք Փարիզ՝ իբրեւ խորհրդական Ազգային Պատուիրակութեան եւ ներքին խմբագիր «Լա Վուա տը Լ'Արմենի»:

1918- Սեպտեմբերին կը մեկնի Իտալիա, խտալական կառավարութեան մօտ ներկայացնելու Ազգային Պատուիրակութիւնը:

1919- Փետրուարին Պողոս Կոնստանտին Կոնստանտինով կը վերադառնայ Փարիզ, մասնակցելու հոն կայանալիք Հայկական Համադաւանութեան, որ սկստի ընտրել Ազգ. Պատուիրակութեան նոր կազմը: Ապրիլին կ'անցնի Եգիպտոս՝ միանալու իր ընտանիքին, բայց Յունիստին Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան կողմէ Կիլիկիոյ յիշգոր ներկայացուցիչ Նշանակուած ըլլալով, անմիջապէս կ'ուղեւորուի Կիլիկիա:

1920- Օգոստոս 4-ին, առաւելաբար Տամատեանին ջանքերով եւ գլխաւորութեամբ, Կիլիկիան կը հռչակուի անկախ՝ իր հայ, յոյն, արաբ եւ ասորի բնակիչներուն կողմէ, եւ Տամատեանը կ'ընտրուի վարչապետ Կիլիկիոյ: Վարչապետութիւնը կը տեւէ ընդամէնը մի քանի ժամ ստեղծելու, Ֆրանսական աննպաստ միջամտութեան հետեւանքով:

1921- Յունիստին կը դառնայ Եգիպտոս, ուր քիչ ետք խանդավառութեամբ կ'իմանայ Ռ. Ա. Կ. կազմութիւնը ի Պոլսի:

1922- Մայիսին կ'անցնի Պէյրութ, ամբողջ ութ տարիներ տնօրինելու քարտէշի Մանթաշէֆ ընկերութեան նորահաստատ գրասենեակին գործերը:

1930- Գահիրէի Ամիրայեան Տան հետ համաձայնելով, Պէյրութի մէջ կը բանայ նոյն տան մասնաճիւղը նկատուող ծխախոտատուփի գործարան մը, զոր երկու տարի վարելէ ետք, երեք տարի ալ իր հաշուոյն կը շարունակէ բանիցնել, մինչեւ գործատան փակումը՝ ի հետեւանք Ռեժիի հաստատման:

1936- Ապրիլին Պէյրութի Ամերիկեան հիւանդանոցին մէջ վիրահատութեան ենթարկուելով՝ կը կորսնցնէ աջ սրունքը, որուն վէրքը դարձեալ բորբոքած էր: Ասիկա պատճառ կ'ըլլայ որ ձեռք քաշէ «Ջարթօնք» օրաթերթի հրատարակութեան ձեռնարկէն, - որուն գլխաւոր նախաձեռնողներէն մին էր, - եւ երթայ վերջնականապէս հաստատուելու Գահիրէ:

1942 Գահիրէի մէջ կ'ըլլայ հիմնադրիչներէն Հայ Ազգային Հիմնադրամին:

1945- Օգոստոս 12-ին Գահիրէի մէջ աչքերը ընդմիջտ կը փակէ

Ռամկապար Աղատական Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան նախագահը՝ Միհրան Տամատեան, որուն մարմինը կ'ամփոփուի իր զազափարի միւս մեծ արիւմանին՝ Իանաստեղծ Վահան Թէքէեանի կողքին:

Այս հատուածը փակելէ առաջ, հարկ է նշել թէ Տամատեանը Վ.Հ.Կ.ի, Հ.Ս.Ռ.Կ.ի եւ Ռ.Ա.Կ.ի մէջ ամենապատասխանատու պաշտօններ վարելէ բացի, քանիցս ընտրուած է անգամ Աղեքսանդրիոյ Թեմական Ժողովին: Հ.Բ.Ը.Միութեան անգամակցած է անոր հիմնադրութեան սկիզբնական տարիներէն իսկ եւ դարձած անոր Պէյրութի տեղական մասնաժողովին անգամ ու ատենապետ երկար տարիներ: Եղած է խորհրդական եւ մտերիմ գործակից երջանկայիշատակ Սահակ եւ Բարգէն Կաթողիկոսներուն: Համերաշխ գործակցութիւն ունեցած է լուսահոգի Արփարեան Կաթողիկոս-Պատրիարքին եւ հայ աւետարանական համայնքապետերուն հետ: Աջակցած է Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցին եւ մասնակցած Հայ երիտասարդաց Ընկերակցութեան ծրնրողոցին:

* * *

ՏԱՐԱՏԵԱՆԻՆ ԹՈՂՕՆԸ

Տամատեանէն թուղթին յանձնուած կը մնան բազմաթիւ տղապրեալ եւ անտիպ նիթեր, որոնց մէկ մասը անպայման արժանի է հասօրնելու մէջ ամփոփուելու:

Ան աշխատակցած է Պոլսոյ «Մասիս»ին, «Լոյս»ին, Ասիական Ընկերութեան հրատարակած «Երկրագունտ» հանդէպին, Փոքրթուգականի «Արմէնիա»ին, «Հնչակ»ին, «Ապստակ» երգիծաթերթին, «Արեւ» պաշտօնաթերթին, «Բիւզանդիոն»ին, «Մարտ»ին, «Շիրակ»ին, «Օրէնք»ին, «Ազգ»ին, «Փիւնիկ»ին, «Լուսաբեր»ին, Պարթեւեանի «Եգիպտոս»-այ տաւեցոյց»ին եւլին:

Ինքնազիր բանաստեղծութիւններու կողքին (մեծ մասամբ անտիպ), որոնցմէ յատկապէս նշանաւոր են «Տաւրիկցի կտրիճը», «Հեռաւոր երկիր» եւ «Պանդուխտ մշեցին» քերթուածները, ունի թարգմանութիւններ մանաւանդ Ֆրանսական գրականութենէն՝ հմուտ բլաւոյ ֆրանսերէնէն: Ան լաւ գիտեր նաեւ թրքերէն, անգլերէն, յունարէն ու իտալերէն լեզուները: Ծանօթ էր նաեւ արաբերէն ու սղաներէն լեզուներուն:

Այդ թարգմանութիւններէն կարելի է յիշատակել Անտրէ Ռիվուարի «Դոյզն ձօն»ը միարար թատերերգութիւնը՝ լոյս տեսած առանձին յրօշոյ կրրէս, Ռէյմոն Փուանքարէի «Հայրենիքի գաղափարը», Ծըրանսուա Գոփէի «Դարբիններու գործազուլը» եղերգը՝ Պէյրութ լոյս տեսած, Այսլէր Սամէնէն, Թէոտոր տը Պանփիլէն, Անտրէ Շենիէնէն,

Փոլ Վերլինյան, Վերթուր Հիւկոյէն, Լամարթիւնէն եւ ուրիշներէ տաղեր ու թատրերգութիւններ:

Տամատեանին խոհուն դրչին արգասիքն են տակաւին՝ կուսակցական զբոսկիներ, բազմաթիւ համաձայնագրեր, պաշտօնական տեղեկադրեր ու նամակներ, ծանուցագրեր եւլն: Եւ այդ բոլորին մէջ ներկայ է չրջահայեաց, սթափ, բառերը կշռել գիտցող, կուռ սրամաքանութեամբ, օժտուած, կենցաղաղէտ ու ճկուն աղգային-քաղաքական գործիչը, որ հետեւողականօրէն զիտէ պաշտպանել իր տեսակէտներն ու համոզումները, որոնք սակարկելի չեն՝ երբ հարցը կը վերաբերի հայ ժողովուրդի ճակատադրին եւ յերազոյն շահերուն: Բաց աստի, անոր հրապարակագրական յօդուածներուն թէ պաշտօնական դրութիւններուն մէջ միշտ առկայ է աղգային խոր արժանապատուութեան զիտակցութիւնը, որ կու գայ իր ժողովուրդին քաղաքարկթական բարձր արժանիքներուն վրայ ակնածալի համոզումէ մը:

Տամատեանին անտիպները իր անձնական արխիւին միւս նիւթերուն հետ, որոնք մէջ կան մանաւանդ Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան եւ Փրանտական հոլատարութեան չրջանի Կիլիկիոյ պատմութեան վրայ լոյս սփռող բազմաթիւ փաստաթուղթեր, մաս կը կազմեն Ռ.Վ.Կ.ի կեդրոնական արխիւին՝ սպասելով զիւրեք ուսումնասիրող միտքերու:

• • •

ՏԱՄԱՏԵԱՆԻՆ ՅՈՒՇԱԳԻՐՈՒԹԻՒՆԸ

Ընթերցողը ներկայ զերբոյ հիմնականին մէջ պիտի հանդիպի երկու յուշագրական փորձերու, երկուքն ալ՝ թերաւարտ, դժբախտարար:

Այդ փորձերէն առաջինը կատարուած է Լիբանանի մէջ, 1934 թուականի Օդոստոս եւ Սեպտեմբեր ամիսներուն, երկու տետրերու մէջ, Փրոֆ. Բարունակ Թովմասեանին ձեռագրով եւ Միհրան Տամատեանին ուղղումներով կամ յաւելումներով: Յիշեալ տետրերը կը պահուին Ռ.Վ.Կ.ի կեդրոնական արխիւին մէջ: Թերաւարտ յուշագրութիւնը տարածուած է 142 թուագրեալ էջերու վրայ, թէեւ գրութիւններ կան 19 ոչ-թուագրեալ էջերու մէջ եւս:

Թէ ի՞նչպէս սկսած եւ ինչո՞ւ թերաւարտ մնացած է տուեալ յուշագրութիւնը, պատասխանը կ'իմանանք Փրոֆ. Բարունակ Թովմասեանին մէկ յօդուածէն*, որ կը նշուի թէ երէց եւ երիտասարդ զաղափարի րնկերներու, բայց մանաւանդ Փրոֆ. Թովմասեանին, ինչպէս նաեւ

*. «Ի՞նչպէս Տամատեանի յուշագրութիւնը ինչպէս սկսաւ եւ ինչպէս մնաց անավարտ», «Զարթօնք» օրաթերթ, 12 Օգոստոս 1970:

Տիկ. Զարուհի և Օր. Նուարդ Տաժատեաններուն պնդումներուն տեղի տալով, ազգային անգղազական շարժիչը՝ Միհրան Տաժատեան, Ղոստոս Ղլիզին մէջ սկսած է պատմել իր յուշերը, որոնք մնացած են անաւարտ՝ Տաժատեանին սրունքի հին վերքին բարբառած և անոր յաջորդած վերահասութեան հետեւանքով:

Իր յորդածին մէջ, Փրոֆ. Թովմասեանը դիպուկ կերպով բնած է արդէն. «Յուշագրութիւնը, զոր թողած է Միհրան Տաժատեան, ընտաւարդարութիւն չ'ըներ իր անձին. դէպքերու, դէմքերու և վայրերու թուումն է ան և ոչ թէ իր զործին վերլուծումը...»: Բայց աւելի քան երեսուն տարիներու անջրպետ մը պատճառ դարձած է որ Փրոֆ. Թովմասեանը կարծէ թէ Պետրոս Տեփոյեանը՝ իր «Միհրան Տաժատեան» աշխատասիրութեան մէջ՝ նկատի ունեցած է Ղոստայի մէջ զրի առնուած յուշերը, մինչդեռ այլ է իրականութիւնը: Տեփոյեանը օգտագործած է Տաժատեանին յուշագրական երկրորդ փորձը, որ կատարուած է Գահրէի մէջ, 75 տարեկանին (1939 թուական):

Ռ.Ա.Կ.ի կեղծոնական արխիւին մէջ հանդիպեցանք այդ երկրորդ փորձին ալ, ամբողջութեամբ Տաժատեանին ձեռագիրով: Մեր պրպտումները ի յայտ բերին թէ Տաժատեանը յուշագրութեան երկրորդ փորձը կատարած է՝ իր յորեկեանին առթիւ զայն հրատարակութեան տալու զիտատրութեամբ, զոյգ փորձերը նկատելով մէկ ամբողջութիւն:

Մատիտագիր այդ երկրորդ յուշագրութիւնն ալ ինչ-ինչ պատճառներով մնացած է անաւարտ և անտիպ, մինչեւ որ Տաժատեանին մահէն ետք, Պետրոս Տեփոյեանը 1956-ին զայն յանձնած է լոյսին՝ Գահրէի «Արեւ» օրաթերթին մէջ իրեն թերթօն: 1964-ին, Պէյրութի մէջ, «Զարթօնք» օրաթերթին տպարանէն այդ յուշագրութիւնն ու Տեփոյեանին աշխատասիրութիւնը լոյս տեսած են առանձին գիրքով մը, 240 էջ ծաւալով:

Երբ աչքէ կ'անցնէինք տպագրուած յուշագրութեան ընդիրը, զարմանքով նշմարեցինք թէ Պետրոս Տեփոյեանին ուշադրութենէն մեզի համար անբացատրելի պատճառով մը վրիպած են յիսուն ձեռագիր էջեր, որոնք անմիջական շարունակութիւնը կը կազմեն Տաժատեանին լոյս տեսած յուշերուն...:

Այդ յիսուն էջերը ներկայ հատորին մէջ լոյսին կը տրուին «Տաժատեանին լոյս տեսած յուշերուն շարունակութիւնը» խորագիրով:

Աւելորդ է ըսել թէ այս հատորը պէտք է նկատուի մէկ ամբողջութիւն՝ Տեփոյեանին ակնարկեալ աշխատասիրութեան հետ:

Ուղղագրական, շարադասական ու կէտագրական մասնակի փոփոխութիւններով միայն տպագրութեան յանձնուող յուշակերպերը մասնաւորաբար արժէքատու են անով՝ որ առաջին անգամ ըլլալով կարգ մը իրողութիւններ ի յայտ կը բերեն պարզ ընթերցողին թէ պատմաբանին համար:

Հոս մեր կողմէ վերլուծումը պիտի չկատարուի անոնց: Պիտի

չանդրադարձուի կիրիկիոյ ողբերգութեան, պիտի չյուզուի օտարնե-
րուն վրայ դրսած յոյսերուն հիմնաւոր կամ անհիմն ըլլալուն հորցը,
պիտի չարձարձուի քաղաքականօրէն կարելիին ու անկարելիին թըն-
ճուելը, պիտի չմատնանչուին պատասխանատուներ, պիտի չարժեւորուին
ազգային - քաղաքական արեւելյումի խնդիրները:

Յուշերը բաւական խօսուի են կարգ մը պարագաներու, եւ մենք
պիտի բաւականանանք ներկայիս այսքանով:

Որայն ընթերցողին յատուկ ուշադրութիւնը կ'ուզենք հրաւիրել
կէտի մը վրայ, որ այնքան ճարտարօրէն եւ իրաւացիօրէն իր յստակ
հաստատումը կը դնէ Տաճատեանին գրչին տակ: Ատիկա Հայ Բեղա-
փոխութեան պատմական անհրաժեշտութեան հարցն է եւ Տաճատեանը
չառ յստակ կերպով ու կոռ տրամաբանութեամբ կ'ընդգծէ, մէկէ ա-
ւելի անգամներ, թէ Օսմանեան պետութեան ճնշումներն էին անխուսա-
փելիօրէն եւ անհրաժեշտարար արեւմտահայութիւնը յեղափոխութեան
մոլոգի դիտար որդապատճառը, եւ ոչ թէ Հայ Բեղափոխութիւնն էր
պատճառը թրքական ճնշումներուն կամ կոտորածներուն:

Այո՛, Հայ Բեղափոխութիւնը պատմականօրէն բնական եւ օրինա-
չափ երևոյթ էր: Ասիկա՝ պարզ ու մեկին:

Անկէ անդին, արժեւորումը Հայ Բեղափոխութեան: Կը յղուիք
երրորդ պարբերութեան՝ Տաճատեանին «Յառաջաբան»ին...:

• • •

ՊԵՏՈՒԱՆԴԱՆԸ՝ ՈՐ ՊԷՏՔԻ Է ԿԱՆԳՆԻ

Տաճատեանը, ռամկավար ազատական անդուգական գործիչը, իր
կուսակցութեան համար անմահ արժէք մը ըլլալէ առաջ ու վեր՝ իր ազ-
գին, իր ժողովուրդին համար անմահ արժէք է:

Տաճատեանը ամբողջ Հայ ժողովուրդին է:

Եւ ժամանակն է որ լուրջ ուսումնասիրութիւններով մեր ամբողջ
ժողովուրդին, Հայրենիքի մէջ թէ Սփիւռքի, սեփականութիւնը պա-
նան Տաճատեանին կեանքն ու գործը, իրենց բոլոր ուսանելի մանրա-
մասնութիւններով, որպէսզի Տաճատեանին համար կանգնի այն
պատուանդանը, որ յատուկ է Հայ Դատի անմահանուն նաւորւններուն:

Դեկտ. Վ. ՂԱԶԱՐԵԱՆ

ՄԱՐԿՈՅ

ԻՄ ՅՈՒՇԵՐԷՍ

ՆԱԽԱԲԱՆ

Տարիներէ ի վեր, բաղձաթիւ հայ ազգայիններ՝ ըլլա՛ն իմ գաղափարակից ընկերներս, ըլլա՛ն Հնչակեաններ վամ դաշնակցականներ, ըլլա՛ն անկուսակցական մտաւորականներ, կամ հայ ազատագրական պայքարի պատմական դրուադներով հետաքրքրուող նորահաս երիտասարդներ, զիս կը յորդորեն, ինձմէ թախանձազին կը պահանջեն գրել իմ յեղափոխական կեանքիս յուշերը:

Արդարեւ, այս մասին իմ վրայ ծանրացող պարտականութիւնը ես ինքս ալ բնականաբար զգացած եմ. բայց միշտ ալ վարանած եմ այդ գործին ձեռնարկել, նկատի ունենալով այդպիսի ձեռնարկի մը դժուարութիւնները, քանի որ երբեք ժամանակ չեմ ունեցած օրը օրին յուշերս արձանագրելու եւ ոչ ալ խնամքն ունեցած եմ հաւաքելու այս նիւթին շուրջ յեղափոխական կամ ուրիշ թերթերու մէջ գրուածները կամ պահելու ու դասաւորելու թանկազին վաւերաթուղթեր: Այս հանդամաքներու մէջ ինծի համար շատ դժուար գործ մը պիտի ըլլար որոշել զէպքերու ճշգրիտ թուականները, յիշել տեղերու եւ անձերու անթիւ անուններ ու զանազան կարեւոր մանրամասնութիւններ: Պիտի չուզէի անշուշտ՝ չոր ու ցամաք, կցկտոր ու կիսկատար դրուագներ, նշխարներ ու նշմարներ իրարու քով բերել, որոնցմէ կարելի չըլլար հանել օգտակար եզրակացութիւններ եւ ապագային համար պատմական հրահանգիչ դասեր: Յիշողութիւնս թարմացընելու համար պարպտումներ ընելու ո՛չ ժամանակ ունէ՛ի, ո՛չ ալ կրնայի ներկայիս ապրած միջավայրիս մէջ գտնել ինծի համար

պէտք եղած ատաղձը: Եթէ կարող ըլլայի այս բոլոր դժուարութեանց յաղթել, մեր կեանքի փոթորկալից այս շրջանին մէջ որքան պաղարինութիւն եւ պայծառատեսութիւն պէտք էր ինծի՝ իրերը առարկայական կերպով դիտելու եւ պատասխանատուութիւնները անաչափօրէն ու միանգամայն համոզիչ կերպով մէջտեղ դնելու համար:

Մեր յեղափոխական անցեալը կրնայ դիտուիլ տարբեր հայեցակէտերէ. այսպէս, մեկնելով ահռելի սխալներէն եւ աղէտալի արդիւնքներէն, կարելի է պնդել որ հայ յեղափոխութիւնը մեծ չարիք մը հղաւ ազգին համար, եւ ըստ այնմ ճշդվել զայն եւ անոր արոյսանքները: Կարելի է ընդհակառակը, թուարկելով տեղի ունեցած այնքան հերոսամարտերը եւ ի հանդէս եկած այնքան սխրալի անձնութիւնները, պանծացնել հայ յեղափոխութիւնը ու ներկայացնել արդի հայութիւնը իբրեւ հրաշափոխուած շնորհիւ հայ յեղափոխութեան: Այս երկու հակընդդէմ տեսութիւններն այլ ունեցան ու պիտի ունենան զեւ իրենց հետեւողները: Երրորդ մեկնակէտ մըն ալ կայ սակայն. ընդունիլ հայ յեղափոխութիւնը իբրեւ պատմական պահանջ մը հայ ժողովուրդին համար, յարգանք ընծայել Հայ Դատի անձնուէր աշխատակորներուն, բայց միեւնոյն ժամանակ մատնանշել անձերու կամ խումբերու կողմէ գործուած աններելի սխալները, տեղի ունեցած խալ, յախուռն եւ յիմարական գործունէութիւնները՝ ի խրատ եւ ի զգաստութիւն ապագայ սերունդներու: Այս վերջին ուղեգիծը պիտի ըլլայ իմս, ու վը յաւակնիմ կարծել թէ այս նոյն ուղղութիւնը պիտի ըլլայ նաեւ Հայ Յեղափոխութեան ապագայ պատմարանին ընդգրկելիք ուղեգիծը:

Գիտնալով որ կեանքիս վերջալոյսը մօտ է, որ կատարեալ յուշագրութիւն մը ներկայացնել այլեւս իմ ուժերէս վեր է եւ որ լաւագոյնը հակառակ է լաւին, որոշեցի վերջապէս այս գրութեան ձեռնարկել, պատմութեանս հրկար շարքը քաղելով մեծագոյն մասով իմ յիշողութեան: Յաւակնութիւն չունիմ բռնաւ ինքզինքս անսխալական համարելու. բայց անճշդութիւններն ու պակասները դիտարկեալ պիտի չըլլան. դատաստաններս ու դնահատումներս պիտի կրնան թերեւս ըլլալ երբեմն սխալ, բայց միշտ պիտի ըլլան անկեղծ եւ անաչափ. քննադատութիւններուս կարգին պիտի չխնայեմ նոյնիսկ իմ պատկանած կուսակցութեանս, զի յուշերս պատմութեան համար կը գրեմ եւ ո՛չ թէ ի պէտս որեւէ կուսակցութեան: Հա՞րկ է ըսել՝ այս գրութիւնը զբաղեցնող եւ անսթեքելիք եւ նոյնիսկ անխնամ ոճով:

Կը յուսամ թէ այսպիսի հանգամանքներու մէջ գրուած այս գիրքը՝ իր պակասութիւններուն համար ներողամտութեանը

սլիտի հանդիսի ընթերցողներուս, և Լթէ ան գո՛նէ մասնակի լոյս մը տնդէ 55 տարիներու մեր ազգային կեանքին մութ կէտերուն վրայ, նպատակիս հասած սլիտի ըլլամ :

Իմ կարգիս՝ ևս ալ պահանջ մը ունիմ ընթերցողներէս. - ո՛րչափ որ տեղ տեղ գրութեան տուած ըլլամ վիպական ձեւ մը, թէ՛ միօրինակութիւնը փարատելու և թէ՛ արձանագրելու համար կարգ մը մանրադէպեր, որոնք թերեւս ոմանց աւելորդ թուին, բայց ինծի համար քաղցր են իբրեւ անձնական վերյուշումներ, - ընթերցողք գայն պէտք չէ՛ կարդան իբրեւ վէպ մը, այլ իբրեւ հարազատ և հաւատարիմ պատմութիւն, ու գայն պէտք է կարդան իրենք ալ առարկայական կերպով՝ գերծ կամ խակալ կարծիքներէ եւ կուսակցական տնճուկ նկատումներէ. ինչպէս ընթերցողներս ինձմէ կը սպասեն անաչառ և անկեղծ դատողութիւն իրերու, դէպքերու և անձերու նկատմամբ, ևս ալ նոյն անաչառութիւնը, անկեղծութիւնը և անկողմնակալութիւնը կը պահանջեմ իրենցմէ, զի այս կերպով միայն կրնան իրերուն խորը թափանցել և հասնիլ ուղիղ և անսայթաք եզրակացութեանց :

Առանց այս էական պայմանին, որեւէ գրութեան և որեւէ ընթերցում հաւասարապէս անօգուտ են, չըսելու համար վնասակար :

ԳԼՈՒԽ Ա.

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԾԱԳՈՒՄԸ ՆԱԽԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՇՐՋԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Որեւէ ազգի քաղաքական կեանքի բարեշրջութիւնը անպայմանօրէն կապուած է հեռաւոր եւ մօտաւոր շատ մը եղելութիւններու եւ ազդանքներու հետ, այնպէս որ կարելի է ըսել թէ միշտ եւ ամէն ժամանակ ներկան անցեալին շարունակութիւնն է: Այս տեսակէտէն մեկնելով, ժամանակակից պատմութեան մէկ որոշ շրջանը ներկայացնելու համար՝ շատ ղժուար է որոշել թէ ո՞ր կէտէն պէտք է սկսիլ իբրեւ ճշգրիտ մեկնակէտ:

Եւ այստեղ աւելորդ վը նկատեմ խօսիլ, օրինակի համար, հայկական անկախութեան կորուստէն աւելին, ժամանակ առ ժամանակ տեղի ունեցած ազատաւորական փորձերուն, ինչպէս՝ Իսրայէլ Օրիի, Ղարապաղի մելիքներու, Ներսիս Առաքաղեցիի եւ ուրիշներու քաղաքական զործունէութիւնը, կամ արդէն մեզմէ հեռու ժամանակներու մէջ ի յայտ եկած հերոսական դրուադներու վրայ, ո՛չ ալ կ'ուզեմ անդրադառնալ 19-րդ դարու ազգային - դրական վերազարթնումին, հայ բանաստեղծներու հայրենասիրական երգերուն, Մերենցի, Ռաֆֆիի ազատաշունչ վէպերուն, մեզ շրջապատող ճնշեալ ազգութիւններու (յոյներ, ռումէններ, սերպեր, պուլկարներ, կրետացիներ եւլն.) ազատագրական շարժումներուն, Լեւոնական եւ ռուսական յեղափոխութիւններուն, Ազգային Սահմանադրութեան հաստատումին եւ Զէյթունի յաջորդական խլրտումներուն, ինչպէս նաեւ ուրիշ շատ մը քաղաքական

արտաքին և ներքին ազդակներուն, որոնք, սակայն, ահաբեկ-
ցութիւն ունեցած են հայ յեղափոխական միտքին աստիճանական կեր-
պաւորումին ու դարպացումին մէջ:

Գաղաքական եւ քաղաքակրթական մեծ անցեալ մը ունեցող, իր
սեփական մշակոյթով և աւանդութիւններով պարծող որեւէ ճնշեալ
ազգ, ընական է որ, ուշ կամ վաճառի, պիտի ձգտէր իր ազգային ա-
զատագրութեան: Եւ սակայն, ազգի մը իր ազատագրութեան այս բնա-
կան ձգտումին աւելի կանուխ կամ աւելի ուշ արտայայտութիւնը դը-
լիստորայէն կախում ունի կեանքի այն պայմաններէն, որոնց ենթար-
կուած է ան՝ իր վրայ տիրող պետութեան կողմէ: Այս տեսութիւնը
ինքնին պատասխանն է սա՝ հարցումին, թէ արդեօք Օսմանեան պետու-
թեան ճնշումն էր որ յառաջացուց Հայ Եղափոխութիւնը, թէ Հայ
Եղափոխութիւնն էր որ պատճառ դարձաւ թրքական ճնշումներուն և
կոտորածներուն:

Տարակոյս չկայ որ, ինչպէս բոլոր միւս ճնշեալ ազգութիւնները
չկրցան հանդուրժիլ թրքական անարդ լուծին և թուրք ռեժիմի իրենց
ընծայած անբերելի պայմաններուն, հայ ազգն ալ, որ իր երկրին ա-
սիական հեռուոր դիրքին եւ դինք չըջապատող վայրադ ցեղերու երե-
սէն, ա՛լ աւելի անտանելի կացութեան մը մատնուած էր, առաջին ա-
ռիթին պիտի սպասէր զոնէ իր կեանքի պայմաններուն որոշ աստիճան
բարեկաւումը պահանջելու և իրականացնելու համար: Ահա այդ առի-
թը եղաւ ռուս-թրքական պատերազմը:

ՀԱՅԱՆՊԱՍՏ ԴԱՇՆԱԳԻՐՆԵՐ.— Ամէն ոք գիտէ թէ ի՞նչ հան-
գամանքներու տակ կատարուեցաւ երջանկայիշատակ Ներսէս Պատ-
րիարքի դիմումը նախ՝ յաղթական Ռուսիոյ և յետոյ՝ Պերլինի վեհա-
ժողովին, հայկական նահանգներու բարենորոգումներու պահանջով,
և թէ ի՞նչպէս մէջտեղ եկան Սան - Սթեֆանոյի, Պերլինի և Կիպրոսի
դաշնագիրները, որոնցմէ իւրաքանչիւրը բարենորոգումներ կը պահան-
ջէր Սուլթանէն՝ հայաբնակ նահանգներու համար: Այս դաշնագիրնե-
րուն կը հետեւէր քիչ ետքը 1880-ի համիմաստ ծանուցագիրը, ո-
րով Եւրոպայի վեղ մեծ պետութիւնները միասնաբար կը պահանջէին
Սուլթանէն խոստացուած բարենորոգումներու շտապիտով գործադրու-
թիւնը:

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ.— Որչափ որ այս կերպով Հայկական ինը-
դերը միջազգային դիւանագիտութեան առջև կը դրուէր՝ իրբեւ Արեւ-
ելեան ինքորոյն նորագոյն մէկ երեւոյթը և այս պատճառ մըն էր հայ
նոր սերունդին նոր յոյս և ոգեւորութիւն ներշնչելու, բայց միւս կող-
մէ հայ ժողովուրդը մոռցած չէր իւրմեան Հայրիկի Պերլինէն վերա-
դարձին խօսած համբաւաւոր Շերիփի Գարոյը, որուն նշանակութիւնը
այն էր, թէ մեր թուղթէ դիմումներուն փոխարէն Եւրոպայէն ստացած
էինք միայն թուղթի վրայ բարենորոգումներ, մինչդեռ ուրիշներ իրենց
երկաթով ձեռք բերած էին իրական ազատութիւն: Պարզ է ուրեմն որ

Հայ երիտասարդութիւնը ամբողջ Տաճկաստանի մէջ սկսած էր մտածել թէ, հակառակ բոլոր խոստումներուն եւ նպաստաւոր երեւոյթներուն, կարելի չէր յուսալ որեւէ իրական բարենորոգում՝ առանց մեծ ճիգերու եւ զոհարարութիւնաց։ Ահա այս մտածելակերպն էր որ առաջ բերաւ առաջին յեղափոխական խմորումները Հայ երիտասարդութեան միտքերուն մէջ։ Բայց հոս կը կրկնեմ որ թրքական յարաճուն ճնշումները եւ հարստահարութիւններն էին որ մեծապէս զարկ տուին այս տակաւին տարտամ յեղափոխական ձգտումներուն։

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ.- 1880 թուականին վրայ կը դառնուինք։ Կ. Պոլսոյ մէջ ամէն օր սունկի պէս կը բուսնին զանազան ընկերութիւններ։- Դպրոցասէր, Արարատեան, Արեւելեան, Կիլիկեան (որոնք յետոյ ի մի ձուլուելով կազմեցին Հայոց Միացեալ Ընկերութիւնը), Աթափան, Արուեստասիրաց, Թորգոմեան, Ազգանուէր Հայուհեաց, Դպրոցասէր Հայուհեաց եւ այլ բազմաթիւ ընկերութիւններ։ Ասոնց կազմութեան առաջնորդող հիմնական զաղափարը սա՛ էր, թէ ժողովուրդ մը յեղափոխական շարժման ձեռնարկելէ առաջ, պէտք է նախապէս արթնցնէ իր զաւակներուն ազգային գիտակցութիւնը դաստիարակութեամբ եւ միւս կողմէ՝ հանգամանքներու ներած չափով բարւոքէ իր նիւթական վիճակը։

Այս շարժումը կարելի չէ որակել բուն իսկ յեղափոխական շարժում մը, այլ՝ կրթական, յառաջդիմական, ազատական։ Իսկ բուն յեղափոխական կազմակերպութիւն տակաւին դոյութիւն չունէր։

ԱՌԱՋԻՆ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ ԿԱՐՆՈՅ ՄԷՋ.- 1880-ի ամրան * առաջին անգամ կարեւոյ մէջ իբրեւ նորանշան երեւոյթ ի յայտ կուգայ Հայ յեղափոխական անդրանիկ կազմակերպութիւն մը, որուն գլխաւորներն էին Ուաչատուր Կերեքեան, Տէր Մելիքսէթ քահանայ, մի

* - Ռ. Փ. Յովհաննիսեան իր «Արեւմտահայ ազգային - ազատագրական շարժումները եւ կարինի «Պաշտպան Հայրենաց» կազմակերպութիւնը» աշխատութեան մէջ (Երեւան, 1965) կը մշէ թէ կազմակերպութիւնը հիմնուած է 1881-ի Մայիսին՝ Խաչատուր Կերեքեանի, Կարապետ Նշկեանի, Յակոբ Իշալացեանի, Յովհաննէս Աստուրեանի, Եղիշէ Տորսունեանի եւ Ալեքսան Էթալիկեանի կողմէ, միշտ իր վրայ կրելով «Երկրագործական Ընկերութիւն» անունը։

Ասկէ գատ, Ռ. Յովհաննիսեան Մելիքսէթ (Մելիքսէդէկ) քահանայի դերին մասին կը բերէ քեր ու դէմ կարծիքներ. իսկ Օրմանեանի համար կը գրէ թէ ան մախ տեղեակ չէր հաւանութեամբ, բայց յետոյ դարձաւ ոչ միայն կազմակերպութեան մասնակից, այլեւ՝ ապառնակեց ամոք համար ներսէս Պատրիարքի աջակցութիւնը.- Վ. Լ։

քանի ռուսահայեր, եւ որուն անդամներուն մեծագոյն մասը կը կազմէին կարնոյ կօշկակարներ, դարբիններ եւ ձիթահողջի հասարակ գիւղացիներ: Ասոնք ունէին տարրական կանոնադիր եւ երգմնագիր մը: Բայց վերոյիշեալ Մեղիքէթ քահանայի մատնութեան երեսէն այս կաղամակերպութիւնը երեւան հանուեցաւ եւ տեղի ունեցան 70ի չափ ձերբակալութիւններ: Այդ օրերուն տակաւին դրաքննութիւն հաստատուած չըլլալով, այս յեղափոխական մարմնոյն երեւան հանուելուն բոլոր մանրամասնութիւնները դրուեցան Կ. Պոլսոյ թուրք եւ հայ թերթերուն մէջ, խորունկ տպաւորութիւն թողելով հայ երիտասարդութեան մըտքերուն մէջ: Հայ երիտասարդները, որոնց կարգին այս տողերը գրողը, ոչ միայն զարմանքով, այլեւ ամօթով կը սեղեկանային որ նման չարժուածք մը փոխանակ Կ. Պոլսոյ եւ ուրիշ տեղերու ղեկավար չըջաններէն եւ զարկացած երիտասարդներէն սկսելու, կը սկսէր պարզ կօշկակարներէ, դարբիններէ եւ տգէտ գիւղացիներէ:

Թէ Օրմանեան Սրբազան, այդ թուականին կարնոյ Առաջնորդը, որեւէ դեր ունեցա՞ծ է այս կաղամակերպութեան ծագումին մէջ՝ խիստ տարակուսական է. եւ սակայն թուրք կառավարութիւնը կասկածելով Օրմանեան Ս.ի վրայ, զայն ընդ հսկողութեամբ Կ. Պոլիս վերադարձուց:

Ներսէս Պատրիարքի երկարատեւ դիմումներուն եւ ջանքերուն շնորհիւ, քիչ ետք բանտէն հանուեցան եւ ներողութեան արժանացան ձերբակալեալ այս առաջին «յեղափոխական»ները եւ 1884ին Օրմանեան Սրբազան արտօնութիւն ստացաւ վերադառնալու Կարնոյ առաջնորդութեան իր նախկին պաշտօնին:

Յիշեալ կաղամակերպութիւնը այս կերպով վերջ գտաւ եւ անկէ ետք Կարնի յեղափոխական տեսակէտով իր վրայ խօսքի չտուաւ մինչեւ 1890 թուականը:

Կարնոյ մէջ այս առաջին կաղամակերպութեան երեսն գալուն առթիւ էր որ սկսաւ երգուիլ ամէն կողմ՝ հեղինակն ինծի անծանօթ՝ «Ձայն մը հնչեց էրգրումի հայոց լեռներէն» ժողովրդական երգը:

ԳՐԳԻՒՄ ԴԵՊՔ ՄԸ ՄՇՈՅ ՄԷՁ- Նոյն 80-ական թուականներուն, Մուշի Բրտի թաղին մէջ թուրքեր հայոց եկեղեցին մտնելով բռնութեամբ եւ հայ քահանային գիրկը չուն մը դնելով, կը ատիպեն վերաբերում կատարել խորանին շուրջ: Բաքաղացիները այս դէպքէն ղլղուած՝ բազմութեամբ կը խուժեն ազգային առաջնորդարան եւ կը բողոքեն Առաջնորդ Գրիգորիս Ալէքսան Սրբազանին: Սրբազանը անմիջապէս բռնէ բողոքագիր մը կ'ուղղէ Մեծ եպարքոսին, որու հետեւանքով Մշոյ մէջ կառավարական խիստ քննութիւն կը բացուի եւ սակայն բողոքողներէն ոչ մէկը կը ներկայանայ իբրեւ վկայ, ուստի Ալէքսան Սրբազան կ'ամբաստանուի իբրեւ զրպարտիչ եւ խռովարար ու ինք ալ կ'արժանանայ Օրմանեան Սրբազանի բախտին՝ ընդ հսկողութեամբ Կ. Պոլիս վը փոխադրուի եւ դարձեալ պատրիարքարանի միջ-

նորդութեամբ (Վեհապետեան Յարութիւն Պատրիարքի օրով) 1885ին կ'արտօնուի վերադառնալու իր առաջնորդական վիճակը:

Մշոյ այս ամօթալի դէպքը բարեբար հակազդեցութիւն մը կ'ունենայ քաղաքի երիտասարդութեան եւ դաշտի հայ դիւղերու ժողովուրդի քիչ-շատ դիտակից միտքերուն վրայ. եւ ասիկա նախանշան կ'ըլլայ Տարօնի ստրկացած ժողովուրդին մտքերու բարեշրջութեանը եւ յեղափոխական խմորումին:

ՀԱՅՈՑ ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ * - Նոյն 80-ական թուականներուն Հայոց Միացեալ Ընկերութիւնը Հայաստանի մէջ կը բանային բազմաթիւ վարժարաններ, որոնց թիւը հետզհետէ 40ի բարձրացաւ: Այս վարժարաններուն մէջ առաջնակարգ դիրք կը գրաւէր Վանայ Վարժարանացոյցը, որուն տնօրէնն էր մեծ հայրենասէր Մկրտիչ Փորթուգալսոն: Գրեթէ նոյնչափ կարեւորութիւն ունէին Միացեալ Ընկերութեանց Մշոյ Ներսէսեան վարժարանը եւ Աղլանուէր Հայուհեաց աղջկանց վարժարանը, որոնց, ինչպէս նաեւ ամբողջ Հայաստանի բոլոր Միացեալ Ընկերութեանց վարժարաններուն, ընդհանուր տեսուչն էր Մկրտիչ Սարգիսն եւ օգնական տեսուչը՝ Մարկոս Նաթանեան:

Միացեալի երկու տեսուչները, թէեւ պատուական հայրենասէրներ, հետի էին յեղափոխական գաղափարներ սնուցանելէ, հարազատ ներկայացուցիչները ըլլալով «նախ՝ մտաւորական զարգացում եւ յետոյ ազատագրական ձգտում» դաւանող դասակարգին, որ այն ժամանակ բացարձակ մեծամասնութիւնը կը կազմէր:

ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ ՎԱՆԱՅ ՄԷՋ- Ընդհակառակը, Փորթուգալսոն եւ իր շուրջ հաւաքուած ուսուցիչները կրակոտ հայրենասէրներ էին, տոգորուած յեղափոխական գաղափարներով, եւ ասոնք իրենց այս ուղղութեան մէջ աւելի ներշնչում եւ քաջալերանք կը ստանային Ուրբեան Հայրիկէն, զոր իրաւամբ կարելի է նկատել հայ յեղափոխական շարժումին նախակարապետն ու ռազմիրան:

Այսպէս, մինչ Սարգիսն եւ Նաթանեան իրենց կրթական գործին մէջ կը շարժէին մեծ չափաւորութեամբ եւ խոհեմութեամբ, վանայ

* - Տաւատեան «Միացեալ Ընկերութիւն Հայոց»ի մասին արտայայտուելով, կը գործածէ յոգնակի բայ, որոշ շփոթի տեղի տալով, մինչդեռ ծանօթ է քէ «Արարատեան Ընկերութիւն Հայոց»ի, «Դպրոցաւիւրաց - Արեւելեան Ընկերութիւն»ի եւ «Կիլիկեան Ընկերութիւն»ի միաձուլումով 1881 թուականին կազմուած միաստոր կազմակերպութիւն է ան: Հաւամարալ, երեք անգատ կազմակերպութիւններու միաձուլումով յիշեալ Ընկերութեան կազմուած ըլլալու իրողութիւնը գիմք մղած է յոգնակի բայածեի անտեղի կիրարկումին:

Մ.Ը.Հ.ի կազմակերպիչներն էին՝ Մկրտիչ Փոքրուգալեան, Արփիար Արփիարեան, Միմաս Զերագ եւլմ - Վ.Ղ:

Վարժապետանոցը Փորթուգալականի շունչին տակ դարձած էր յեղա-
փոխական դադափարի ճշմարիտ վառարան մը: Վարժապետանոցին մէջ
տեղի կ'ունենային բոցաշունչ ճառախօսութիւններ, զինուորական մար-
զանքի համապատասխանող մարմնակրթական տողանցքներ՝ ընկերակ-
ցութեամբ հայրենասիրական երգերու: Մինչեւ անգամ Այգլատանի բա-
ցատաններուն մէջ զինավարժութեան փորձեր տեղի կ'ունենային:

Այս սանձարձակ գործունէութիւնը աշակիսի համեմատութեան մը
հասած էր, որ Վանայ ժամանակի կուսակալ արպանացի Հասան փաշա
Սարըեան կ'իշխէր մէկ այցելութեան միջոցին հետեւեալ կերպով ար-
տայայտուած էր անոր. «Ես պուլկարական յեղափոխութեան չլինին
այնտեղ գտնուած ըլլալով, անձնական փորձառութեամբ դիտեմ թէ
խիկապէս յեղափոխական ժողովուրդ մը ինչ ընթացքի կը հետեւի ու
քիչ կը խօսի եւ շատ կը գործէ: Ես այստեղ ըլլողովին հակառակ ե-
րևուոյթը տեսնելով, միատարեւապէս համոզուած եմ որ հայերու այս
աղմկայոյդ արտայայտութեանց տակը բան մը չկայ, եւ ես ատենց կա-
րելորդութիւն չեմ ընծառեր. բայց ես վաղը կ'երթամ եւ ինծի կը յա-
ջորդէ ուրիշ կուսակալ մը, որ կարող է լուրջ նկատել այս անխմտո-
ցոյցները եւ ըստ այնմ տեղեկագրել Բարձրագոյն Դրան՝ թէ Վանայ մէջ
յեղափոխական շարժում կայ. այն ատեն ինչ կ'ըլլայ այս խեղճ ժո-
ղովուրդին վիճակը»:

Պէտք է ըսել որ Վանայ ղեկավար պատկարովին մէկ կարևոր
մասը ինք ալ հատկապէս էր այս յախուռն գործունէութեան եւ դիմաւո-
րարար այս էր պատճառը որ Վանայ մէջ պոլութիւն ունէին երկու կա-
րևոր տեղական կուսակցութիւններ՝ Պօզոսեան եւ Ապօզոսեան, առա-
ջինը՝ պահպանողական, զրուխն ունենալով Վանայ Առաջնորդ Պօզոս
Եպիսկոպոսը, եւ երկրորդը՝ ազատական, զրուխն ունենալով Խրիմեան
Հայրիկը եւ Փորթուգալեան ու իր փոխակիցները:

ՎԱՆԱՅ ԴԵՊԱՐԷ ԸՆՏՐՈՒԹԻԱՆ ՄԸ ԱՌԹԻԻՒՄ Այս վիճակը երկար
չէր կրնար տևել առանց պատակտումի. 1885 թուականին երեսփոխա-
նական բնարութեան մը առթիւ, քուէատուփերու շուրջ Պօզոսեաններու
եւ Ապօզոսեաններու միջեւ ծագեցաւ խռովութիւն մը, որուն ընթաց-
քին Պօզոս Եպ. ի հրաւերով նախ օսմանեան ոստիկանութիւնը եւ յետոյ
օսմանեան պօրքերը միջամտելով, Ապօզոսեանները զօրքերը քարկոծե-
ցին եւ խռովութիւնը այս կերպով հակակառավարական երևուոյթ մը
ստացաւ:

Այս դէպքին առթիւ Վանայ կուսակալը ՅՈՒ չափ հայեր ձերբա-
կալեց եւ Բ. Դրան հեռադրեց թէ կարևոր յեղափոխական շարժում
մը յաջողած էր գապել: Վալին այս առիթով վարձատրուեցաւ ահանա-
կութ պատուանշանով: Այս դէպքը իր ժամանակին արձապանգ գտաւ
անգլիական խորհրդարանին մէջ՝ ազատական երեսփոխանները բողո-
քելով որ օսմանեան կառավարութիւնը հայոց կրօնական ներքին գոր-
ծերուն միջամտելով իր զօրքերը գործածած է հայերուն դէմ. իսկ ա-

սոր ի պատասխան, օրուան պահպանողական նախարարութեան կողմէ Սըր Ճ. Ֆերկիսըն հաստիացուցած է թէ զօրքերը միջամտած են հայոց Առաջնորդին հրաւերովը :

Անգլիական խորհրդարանի այս փոքրիկ միջադէպը՝ այսօրուան աչքով դիտելով՝ որեւէ նշանակութեանէ զուրկ էր անշուշտ. բայց այդ ժամանակի հայ երիտասարդութիւնը մեծապէս ողկւորուեցաւ անգլիական խորհրդարանի այս շահագրգիռութենէն եւ շատեր մտածեցին թէ, ուրեմն եթէ զօրքերու միջամտութիւնը Առաջնորդին հրաւերովը եղած չըլլար, անգլիական կառավարութիւնը Թուրքիան պատասխանատու պիտի բռնէր եւ հայերու կրօնական իրաւունքներուն պաշտպան պիտի հանդիսանար :

Այսպէս թէ այնպէս, այս դէպքին առթիւ ձեռնարկուած հայերն ալ 1886-ի ամբան խմբովին ազատ արձակուեցան, շնորհիւ ազգային պատրիարքարանի միջամտութեան :

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ ԵՒ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ ՎԱՆԷՆ ԿԸ ՀԵՌԱՑՈՒԻՆ՝ Սակաճն նման դէպքերու հետեւանքով էր որ Թուրք կառավարութիւնը Փորթուգալեանը պատուաւոր կերպով վանէն Պոլիս փոխադրեց եւ անկէ քիչ վերջը Խրիմեան Հայրիկ եւս Սուրբանիս յատուկ հրաւերով Կ. Պոլիս կանուեցաւ եւ իր ճամբորդութեան ամբողջ շրջանին ամէն տեղ մեծ պատուասիրութիւններու արժանացաւ Թուրք պաշտօնականներու կողմէ եւ Կ. Պոլսոյ մէջ ալ «վարձատրուեցաւ» պետական բոճիկով :

ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ ՄԱՐՍԵՅԼԻ ՄԷՋ ԵՒ «ԱՐՄԵՆԻԱ» ԹԵՐԹԸ՝ Պրն. Փորթուգալեան ժամանակ մը Կ. Պոլիս մնալէ յետոյ, Մարսէյլ մեկնեցաւ եւ հոն հիմնեց «Արմէնիա» թերթը * : Պրն. Փորթուգալեան Մարսէյլ հասնելուն՝ արդէն իր յեղափոխական գիւնդին մէջ շատ ջուր խառնած էր, այնպէս որ իր հիմնած «Արմէնիա» թերթին ի սկզբան տրւաւ եթէ ոչ հակայեղափոխական, գրեթէ չափաւորական ուղղութիւն մը : «Իր թերթը պարզապէս պիտի ըլլար Թուրքիոյ եւ Ռուսիոյ հայերուն եւ արօտասահմանի հայերուն միջեւ յարաբերութեան միջնորդ մը եւ անոնց իւրաքանչիւրին կացութիւնը պիտի ծանօթացնէր իրարու» :

«Արմէնիա»ի այս անսպասելի ուղղութիւնը հազիւ վեց ամսուան կեանք ունեցաւ, ըստ որում նախ Ռուսիա եւ յետոյ Թուրքիա արդիւնեցին «Արմէնիա»ի մուտքը իրենց երկիրներուն մէջ : Այս արգելքէն ետք, թէեւ «Արմէնիա» թերթը աւելի քննադատական եւ յարձակողական դիրք մը բռնեց հանդէպ ռուս եւ Թուրք կառավարութեանց, սակայն դարձեալ հեռի էր յեղափոխական նկարագրի մը ունենալէ : Այս այնչափ ճիշդ է որ, երբ 1887-ի սկիզբները Ժընև հաստատուած հայ ուսանողներու խումբ մը (որ յետոյ «Հնչակի Խումբ» անունը պիտի առնէր) Պրն.

* Առաջին թիւը լոյս տեսած է 1885 Օգոստոս 11-ին (Ն.Տ.) - Վ.Ղ. :

Փորթուգալեանի առաջարկեց հայ յեղափոխական կուսակցութիւն մը հիմնել եւ այդ շարժման գլուխը անցնել: Անիկա պատասխանեց թէ ինք յեղափոխական չէ, այլ՝ խաղաղ յառաջդիմական, եւ խօսքէն դործի անցնելով, հիմնեց Հայաստանի Զաւակների Ընկերութիւն մը, որուն նպատակն էր հայաստանցի ուշիմ ուսանողներու՝ եւրոպական համալսարաններու մէջ բարձրագոյն ուսում տալ, որպէսզի անոնք յետոյ Հայաստան վերադառնալով օգտակար ըլլան հայ ժողովուրդին՝ իրերէ բխիչներ, փաստաբաններ, հողադէտներ, ուսուցչապետներ եւլն:

Ինչպէս սրիտի տեսնենք մեր պատմութեան հետապայ դրուագներէն, Պրն. Փորթուգալեան քիչ մը ուշ մնացած էր այդպիսի ծրագիր մը մէջտեղ նետելու. միւս փողմէ՝ տրուած ըլլալով հայ ունեւոր դատաւարդի համբաւեալ անտարբերութիւնը, այդ ծրագիրը վիժման դատապարտուած էր: Իրօք, Ընկերութեան կազմութենէն ճիշդ տարի մը ետք, հիմնադիրը զայն հաշուեյարդարի ենթարկեց եւ իր հաշուեկշիռէն ետեւան կու գայ թէ արդէն համալսարան յաճախող հայաստանցի ուսանողի մը միայն մէկ տարեկան ծախսերուն մէկ մասը հոգացուած է զոյացած հասոյթէն:

ՈՒՐԻՇ ՀԱՅ ԹԵՐԹԵՐ ԵՒ ԴՈՐԾԻՉՆԵՐ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԷՋ- Փորթուգալեանի զէսի յեղափոխական շարժումը այս ժխտական վերաբերումին հետեւանքով, ժընեի ոստանդաց խումբը, որուն գլուխը կը գտնուէր Պրն. Ա. Կոտիս Նազարեհի, 1887-ի Նոյեմբերին հրապարակ հանեց «Հայակեր քամելիոնը» վերնագրով խմբատիպ պարսաւագիր մը, որով կը ձաղկէր Փորթուգալեանի յեղեղուկ շնթացքը եւ ուրացումը հայ յեղափոխական զաղափարին ու կը յայտարարէր թէ շուտով հրատարակութեան պիտի ձևոնարկէ «Հնչակ» անունով յեղափոխական պարերեաթերթի մը: «Հնչակ»ի առաջին թիւը երեւցաւ Նոյն տարուայ Դեկտեմբերին:

«Արմէնիա» եւ «Հնչակ» արտասահմանի մէջ երեւցող առաջին հայ թերթերը չէին սակայն. անոնցմէ առաջ արդէն հրատարակուի սկսած էին՝ Վառնայի մէջ «Իրաւունք» թերթը, հայերէն եւ ֆրանսերէն, Յ. Պոնտուգճեանի խմբագրութեամբ, Լոնտոնի մէջ «Լը Հայաստան» *, հայերէն եւ ֆրանսերէն, խմբագրապետութեամբ զոյգ փաստարաններ ժան Պրուստլի եւ Միհրան Սըլադեանի, ու քիչ ետք դարձեալ Լոնտոնի մէջ «Արմէնիա» անդլերէն ամսաթերթը, խմբագրութեամբ Մինաս Չերադի (նախկին քարտուղար Պերլինի վեհաժողովին զրկուած հայկական պատգամաւորութեան եւ յետոյ տնօրէն Ղալաթիոյ նորահաստատ Կեղրոնտեան վարժարանին), որ Կ. Պոլսոյ մէջ կասկածի ենթարկուելով ասպատանած էր այնտեղ (Լոնտոն):

* - Յիշեալ թերթը սկսած է լոյս տեսնել 1889-ին եւ ոչ թէ «Հրնչակ»էն առաջ:

Լոնտոնի վերոյիշեալ զոյգ հայ թերթերու հիմնարկութենէն ալ տառջ, այնտեղ կը գործէր Կարապետ Յակոբեան անուն հայ հայրենասէրը, որ անգլիական թերթերու մէջ պարբերաբար հայասպաստ յօդածներ կը հրատարակէր, Արեւմտահայաստանի ժողովուրդին վրայ կատարուած հարստահարութեանց մասին զիմումներ կը վատարէր անգլիական կառավարութեան եւ ճէյմս Պրայսի նման անգլիացի հայասէրներու մօտ:

Այս վերջինին նախաձեռնութեամբ էր որ Լոնտոնի մէջ կազմուած էր Անկլիօ - Արմինիքն Էսոսիէյշըն ընկերութիւնը, որ երկար ատեն Հայկական Դատին ակոբեան հանդիսացաւ եւ որուն կարելի է ըսել թէ միակ հայ անդամը ինքը՝ Պրն. Յակոբեանն էր * . Եւ այս կը բացատրուի անով, որ, ինչպէս հայկական աւանդական սովորութիւնն է, Յակոբեան, Չերազ, Պրուսայի Ժ. Սըվալլի անհատ գործիչները չէին կրնար իրարու հետ համաձայնիլ ու միացնել իրենց ջանքերը: Պրն. Յակոբեան, այլապէս խիստ յարգելի անձնաւորութիւն մը, առանձին գործելու ցուցամոյութիւնը ունէր. Չերազ՝ Պերլինի հայ պատգամաւորութեան մօտ իր քարտուղարի նախկին հանգամանքը կ'ուղէր արժեքնէլ իրբու նոյն պատգամաւորութեան անդամի մեծագոյն զերը եւ ըստ այնմ դերակշիռ գիրք մը գրուել Լոնտոնի հայ գործիչներու շարքին մէջ, զալով ժան Պրուսալլի եւ Սըվալլիանի, ասոնք այնչափ վստահ էին «Լը Հայաստան» թերթին միջոցաւ իրենց կատարելիք դիւանագիտական աշխատութեան արդիւնաւէտութեանը, որ նոյն թերթին էջերուն մէջէն ի լուր համայն հայութեան յայտարարեցին. «Տուէք մեզի 2000 լաժանորդ, ու մենք կը խոտանանք վեց ամիսէն տալ ձեզի հայկական ինքնավարութիւն»: Արտասահմանի այս հրատարակութիւններէն «Լը Հայաստան» եւ Լոնտոնի «Արմէնիա»ն, առանց բացարձակապէս ժխտելու յեղափոխական գաղափարը, զրեթէ բացառապէս որդեգրած էին դիւանագիտական զիմումներու քաղաքականութիւնը: Փորթուգալեանի «Արմէնիա»ն երկու զաղափարներու միջեւ կը տարուերէր: Վատնայի «Իրաւունք»ը, որ անդրանիկն էր արտասահմանեան այս հրատարակութիւններուն, բայց որ թէ՛ իր ծաւալով եւ թէ՛ գտնուած միջավայրով նուազ կարեւոր դիրք մը կը ներկայացնէ, մասամբ դիւանագիտական բայց առաւելապէս հայկական գիտութեան զարթումին ձգտող կէս-յեղափոխական ուղղութիւն մը ունէր: Միայն «Հնչակ»ն էր որ ունէր տարամերժօրէն յեղափոխական ուղղութիւն՝ չէտուած ընկերովարական խիստ ցայտուն հակումներով:

Վերադառնալով Մարտէլլի «Արմէնիա»ին, Հայաստանի Զաւակ-

* - Երուանդ Մեսիայեան իր «Դրօշին տակ» գիրքին մէջ (Նիւ Եորք, 1918, էջ 159-161) Անկլիօ - Արմինիքն Միուքեան կազմութեան մէջ մեծ դեր կը յատկացնէ Միհրան Սըվալլեանի - Վ.Ղ.:

Ոսերի Ընկերութեան ձախողութենէն ետք, Փորթուզական կամայ ակամայ օրուան հոսանքէն տարուելով՝ պէտք զվաց ի՞նք ալ կազմելու Հայոց Հայրեմասիրական Միութիւնն անունով մարմին մը, որուն ծրագիրը չափաւոր յեղափոխական գործունէութիւն մը կ'ուրուակէր: Այս մարմինը թէպէտ Կ. Պոլսոյ, Պուլկարիոյ, Ռումանիոյ մէջ առկա թիւ «օթեակ»ներ ունեցաւ, բայց չկրցաւ ծաւալում գտնել եւ այս ձախողութենէն պատճառներն ալ էին՝ իր ծրագրին տարտամութիւնը, ամէն անգամի համար պարտաւորիչ պայմանը տարեկան 20 Ֆրնք. անդամավճար եւ 25 Ֆրնք. «Արմէնիա»ի բաժնեգին վճարելու, ինչպէս նաեւ ընկերութեան բոլոր գործերուն եւ գրամատկան յոյսը գործառնութիւններուն Պրն. Փորթուզականի անձին մէջ կեդրոնացումը եւ վերջապէս՝ «օթեակ»ներու գործունէութեան մասին իրմէ պահանջուած հրահանգներուն գրեթէ միշտ անպատասխանի մնալը:

Այս կերպով Հայոց Հայրեմասիրական Միութիւնը մէկ քանի տարիներ անշուք, ապարդիւն եւ գրեթէ անուանական գոյութիւն մը քաշկռտելէ ետք, լուծուեցաւ եւ «Արմէնիա» թերթը մնաց Փորթուզականի անձնական մէկ հրատարակութիւնը, որ սակայն քանի մը տասնեակ տարիներ շարունակուեցաւ, շնորհիւ իր հիմնադրին յամառ յարատւութեան եւ նոյն իսկ իր մահէն ետք ալ շարունակուեցաւ իբրեւ անհատական հրատարակութիւն մը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԵՐԵՎԱՌԱՐԱՆՆԵՐԸ- Դառնանք 1885-էն առդին Հայաստանի մէջ տեղի ունեցած այն անցքերուն, որոնց հետեւութիւնը եղաւ յեղափոխական դադարի մատիճանական ծաւալումը: Հոս Հայաստան ըսելով մասնաւորապէս նկատի ունինք Կարնոյ, Վանայ եւ Բաղլէի (Մուշ, Սասուն) վիլայէթները, գործնք կարելի է նկատել յեղափոխական դադարի խանձարուրդ. եւ այս՝ հետեւեալ պատճառներով:

Կարնէն, իբրեւ թրքական կարեւոր բերդաքաղաք, որուն վրայ կ'իշխէին չըջակայ լեռներու վրայ տեղաւորուած ահոնլի հրետանիները, յեղափոխական շարժումի տեսակէտով չատ բան կարելի չէր ակնկալել, իսկ ան կը պարունակէր պատկանելի թուով զիտակից եւ միաբան հայութիւն մը, զոր թերեւ չափազանցութիւն չըլլար նկատել հայ ժողովուրդի պատուականագոյն տարրը: Կարնի այս տեսակէտով իրապէս արժանի էր «Հայաստանի մայրաքաղաք» իր համբաւեալ տիտղոսին: Փակադծի մէջ ըսենք թէ Կարնոյ ժողովուրդը իր միաբանութիւնը կը պարտէր գէթ մասամբ այն հանգամանքին, որ ան ունէր միայն մէկ եկեղեցի:

Վան Հայաստանի ամէնէն հայաչափ նահանգը ըլլալու իր առաւելութեանը կը միացնէր իր մէջ պատրաստութիւն, զարգացած եւ եռանդուն երիտասարդութիւն մը ունենալու հանգամանքը. Վանայ հայութիւնը մշտական եռուզեռի մէջ էր, եւ տրուած ըլլալով հայ քաղաքացիներուն անմիաբանութիւնը, կարելի է ըսել որ այդ քաղաքը խռովու-

թիւններու մշտական խառնարան մըն էր, կարծես բնականէն տրամա-
դիր յեղափոխական ամենայանդուդն ձեռնարկէցութիւններու :

Մուշ - Տարօնի աշխարհը - իր դաշտի հարիւրէ աւելի զուտ հա-
յարնակ դիւղերով եւ իր կոնակն ունենալով Սասնոյ դժուարակոխ լեռ-
ները եւ անոնց քաջարի հայ բնակիչները, նոյնպէս հայկական կարեւոր
կեդրոն մըն էր : Ասկէ դատ, կարեւր է ըսել որ Մշոյ դաշտը Հայաստա-
նի ամէնէն հարստահարուած ու ճնշուած վայրն էր. չկար տեղ մը,
որուն բնակչութիւնը դարաւոր կեղեքումներու եւ հալածանքներու երե-
սէն բարոյալքուած եւ ստրկացած ըլլար ա'յնչափ, որչափ Մշոյ դաշտի
ժողովուրդը : Բայց եթէ ճիշդ է որ ծայրայեղ ճնշումը եւ հալածանքը
ի վերջոյ սուսը կը բերեն յուսահատ դիմադրութեան բուժիչ հակադե-
ցութիւնը, միւս կողմէ նոյնչափ ճիշդ է որ Տարօնի ժողովուրդը իր ե-
րակներուն մէջ կը կրէր Մամիկոնեաններու ազնուական արիւնը եւ թէ
յեղափոխական կայծ մը բաւական պիտի ըլլար այդ ժողովուրդին մէջ
վերստին արթնցնելու իր առհասական՝ ժամանակաւորապէս միայն
բնդարմացած արիութիւնը :

Ահա այս պատճառներով է որ Կարնոյ եւ Մշոյ (Բաղէշի) նա-
հանգները սկիզբէն մինչեւ վերջ հայ յեղափոխութեան զլխաւոր վառա-
րանը հանդիսացան եւ անոնցմէ է որ հետզհետէ ծաւալեցաւ հրդեհը
զէպի արեւմտեան միւս նահանգները : Այս խորհրդածութեանց շրջա-
նակէն դուրս կը մնայ անշուշտ կիլիկիան, որ բոլորովին տարբեր հան-
դամանք կը ներկայացնէր եւ որուն մասին առանձին պիտի խօսինք իր
կարգին :

ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄ ՄԸ ՄՇՈՅ ՄԷՁ- 1885ին, -
երբ այս տողերը գրողը արդէն տարիէ մը ի վեր Մուշ կը գտնուէր իբ-
րեւ. Միացեալ Ընկերութեանց վարժարաններուն տնօրէն, - Մշոյ դաշ-
տին մէջ հարստահարութիւնները իրենց պազաթնակէտին հասած էին :

Բաղէշի կուսակալ Արիֆ փաշա, Մշոյ կառավարիչ Սալիհ փա-
շա, Մշոյ եւ Սր. Կարապետի Առաջնորդ - վանահայր Դերձակեան
Արիստակէս Եպ. եւ հռչակաւոր աւագակապետ Մուսա պէյ կատարեալ
աւագակային խումբ մը կազմած էին ու երկիրը սանձարձակ եւ բացէ ի
բայց կը կողոպտէին ու կը կեղեքէին : Մշոյ դաշտին մէջ ամէն զիշնր
զանազան կէտերու վրայ շուտ բոցավառող եւ շուտով մարող հրդեհներ
կը տեսնուէին. այս հրդեհները ուրիշ բան չէին, բայց միայն հայ գիւ-
ղերու շրջակայ արտերուն մէջ դեռ նոր հնձուած ու չեղջկուտուած
ցորենի դէղերը, արդիւնք հայ գիւղացիին ամբողջ տարուան մը աշ-
խատանքին, գորոնք գաղտագողի մօտեցող քիւրտի մը մէկ լուցկիին
բողբ երկու վայրկեանի մէջ փռիլի կը վերածէր :

Չկար դատարան, չկար արդարութիւն, այլ միայն՝ կողոպուտ,
կողոպուտ : Գործը հասաւ այն աստիճանի, որ Մշոյ քաղաքի պատուա-
ւոր եւ խղճի տէր թուրք երեսելիները եւ հայոց երեսելիները ինքնա-
բերաբար, առանց որեւէ արտաքին զրդումի կամ թելադրութեան, ըմ-

բոստացան այս դժոխային կացութեան դէմ, միասնաբար Եկեղեցիներու եւ մզկիթներու մէջ ընդհանուր ժողովներ դուրսարեցին եւ Բ. Դրան ու Երեսօրի պալատին ուղղեցին լողողի բուռն հեռագիրներ բոլոր վերս-
յիշեալ բարձրաստիճան կեդիքիներուն պաշտօնանկութիւնը պահանջե-
լով, հակառակ պարագային դանդուածային զաղթի սպառնալիքով:

Հեռագիրներէն մին ունէր սա լակոնական բովանդակութիւնը.
«Մուշ օվսարնտա քուշ ուչմայոր»*: Ասկէ զատ, Մշոյ զաշտի գիւղե-
րէն 72 քահանաներու ստորագրութեամբ Հեռագիր մը ազգային պատ-
րիարքարանէն կը պահանջէր Արիստակէս Եպ. Դերձակեանի անմիջա-
պէս հեռացումը Մուշէն:

Բ. Դուռը, ըստ ընկալեալ սովորութեան, բողոքագիրներու պատճէնները հաղորդեց կուսակալութեան եւ կուսակալը՝ կատղած այս անսպասելի յանդգնութեան դէմ, հրաման արձակեց չարժուծին պարս-
դլութները, - որոնցմէ չորսը թուրք եւ երեքը հայ, - ձերբակալելու եւ
ընդ հսկողութեամբ Բաղէշ փոխադրելու:

Կիրակի օր մըն էր. հաղիւ սկսած էին ձերբակալութեանց եւ
թուրք երեսեքներէն երեքը միայն ձերբակալուած ու կառավարչատուն
տարուած էին, ահա, քաղաքին թուրք եւ հայ բնակչութեան մեծամաս-
նութիւնը, կարծես մէկ զսպանակէ չարժուած, ոտքի ելան, պաշարե-
ցին կառավարչատունը եւ ձերբակալեալներու անմիջական ազատ ար-
ձակումը պահանջեցին: Ոստիկանութիւնը ջանալով ցրուել ամբոխը,
ժողովուրդը դիմեց քաղաքին զինուորական կառավարիչ Ապուսլահ
փաշային, որ լուսամիտ եւ արդարասէր մարդ մը ըլլալով, մէկ կողմէ
մերժեց կառավարութեան իրմէ պահանջած ուժը՝ ի խնդիր ամբոխի
ցրուումին, եւ միւս կողմէ հայրական խրատներով ջանաց հանդարտե-
ցնել ժողովուրդը:

Ասոր վրայ ցուցարարները խմբովին դիմեցին հեռագրատուն եւ
Մեծ Եպարքոսը հեռագրի զուլիս կանչեցին: Պատասխան չստանալով եւ
բանտարկեալներն ալ ազատ չարձակուելով, - թէն, կառավարութիւնը
չհամարձակեցաւ չարժուծին մնացեալ մէկ լծուրք եւ երեք հայ գըլ-
խաւորներն ալ ձերբակալելու եւ ոչ ալ՝ ձերբակալեալները Բաղէշ տա-
նելու, - ժողովուրդը որոշեց յաջորդ օրէն սկսեալ չուկային բոլոր խա-
նութիւնները փակել եւ այսպէս չարունակել մինչեւ երեք ձերբակալեալ-
ներուն ազատ արձակումը:

Յաջորդ Երկուշաբթի օրը, իրօք, չուկային բոլոր խանութները
փակուեցան եւ հոն կը տիրէր զերեզմանային ամայութիւն եւ լուսթիւն,
այն աստիճան որ հոն պտըտող հետաքրքիր մը սալալատակներուն վրայ
իր քայլերուն արձագանգը կը լսէր. եւ այս՝ այնպիսի ժամանակ մը,
երբ Լղանակը աչուն ըլլալով՝ գիւղացիները իրենց ձմեռնային պաշարը

* - «Մշոյ հովտին մէջ քոչուս չի թոխ»:

ամբարեկու համար սովոր էին Մշոյ շուկաները դիմելու։ Ընթերցողը կրնայ մակարերել նիւթական այն խոշոր վնասները, զոր կրեցին շուկային խանութպանները (որոնց 95% հայեր էին) այս զործադուլին երեսէն, որ տեւեց տաս օր։

Տասներորդ օրը, Մեծ Խարքոսէն հասած հեռագրի մը վրայ, երեք ձերբակալեալ թուրքերը ազատ արձակուեցան եւ ժողովուրդին յայտարարուեցաւ որ Բ. Դուռէն զննիչներ պիտի ղրկուին՝ ժողովուրդին պանդտոները նկատի առնելու համար։ Այս կերպով ժողովուրդը հանդարտեցաւ եւ քաղաքը վերստացաւ իր բնականոն վիճակը։ Մէկ քանի շաբաթ ետք, զննիչները Բաղէշ հասան եւ շարժումին զխաւորները իրենց ժողովուրդէ ներկայացուցիչի հանդամանքով պաշտօնապէս հրաւիրուեցան Բաղէշ, իրենց դանդաղները ներկայացնելու համար։ Այս ներկայացուցիչներէն մին էր Վերին թաղի Տ. Ղեւոնդ անվահեւ քահանան։

Հայ եւ թուրք ժողովուրդէն հազարաւորներու բազմութիւն մը իր ներկայացուցիչներուն ուղեկցեցաւ քաղաքէն մինչեւ կէս ժամ հեռուն, անհուն խանդավառութեամբ։ Ներկայացուցիչները ամիսի մը չափ Բաղէշ մնացին, իրենց բոլոր պանդտոներուն իրաւացի ըլլալը հաստատուցին եւ մէկ օրուան մէջ թէ՛ կուսակալը եւ թէ՛ Մշոյ կառավարիչը պաշտօնանկ եղան ու գիշերով հեռացան իրենց պաշտօնավայրերէն։

Պալով տխրահռչակ Դերձակեան Եպիսկոպոսին, ան արդէն միւսներէն առաջ Կ. Պոլսոյ Յարութիւն Պատրիարքէն հասած հեռագրով մը պաշտօնանկ եղած ու մեկնած էր Տիգրանակերտ։

Ժողովուրդի ներկայացուցիչներուն վերադարձը եւ Մուշ մուտքը կատարեալ ժողովրդային յաղթանակի մը երևույթը ստացաւ։ Ժողովուրդը հազարներով անոնց ընդառաջ գնաց մինչեւ Ճոսու Գարեր եւ մինչեւ Մոկուսք գիւղ ու ծափերով, Երզնրով եւ խանդավառ ցոյցերով զանոնք առաջնորդեց քաղաք։ Այն օրը, Մշոյ ժողովուրդը սորվեցաւ այն միակ կերպը, որով կարելի էր արդարութիւն ակնկալել օսմանեան կատարութիւնէն։

Ճիշդ այդ օրերուն էր որ Մուշ կը հասնէր Ալէաթճեան Սրբազանը, վերստանձնելու առաջնորդական իր նախկին պաշտօնը։

Տ. ԲԱՐՍԵՂԻ ԽՆԴԻՐԸ ՄՇՈՅ ՄԵԶ- 1884-էն ի վեր Մշոյ հայ կաթողիկ հասարակութեան (քաղաքին մէջ 30 տուն, իսկ դաշտին մէջ 3 գիւղ՝ Ասինճ, Օղունք եւ Նորչէն) Առաջնորդի պաշտօնը կը վարէր Ճամճեան Գերսոյայձաւը, որ իր իմաստուն եւ հաշտարար քաղաքականութեամբ հայ առաքելականներէն եւս մեծ յարգանք կը վայելէր։ Այդ ժամանակները Մշոյ մէջ կ'ապրէր Տէր Բարսեղ անուն հայ քահանայ մը, որ խարդախ միջոցներով յաջողած էր Տիգրանակերտի համալսարանը «հրաշագործ» Մկրտիչ Եպ. Տիգրանեանէն ձեռնադրութիւն ստանալ եւ զանազան դժուարութիւններէ ու խռովութիւններէ ետք, իր բնական

Զորոյ թաղի Շէկ - Աւետարան եկեղեցւոյ քառանայից շարքին մէջ ընդունուիլ։ Այս չքահանան նշանաւոր էր իր անբարոյականութեամբ եւ թաղին մէջ՝ դայթաղութեան առարկայ։

1885-ի սկիզբը, Տէր Բարսեղ գիշերանց հայ տունէ մը դողութեան միջոցին ճանչցուած եւ իրբեւ գող թուրք դատարաններու մէջ ամբաստանուած էր։ Անխուսափելի պատիժէն զերծ մնալու համար, Տէր Բարսեղ նախ փորձեց իսլամ արձանագրութիւլ, բայց տաճկաց կրօնապետէն մերժուեցաւ մինչեւ դատին վերջանալը։ Ասոր վրայ, Տէր Բարսեղ դիմեց Ճամճեան Գերապայծառին՝ կաթողութեան ընդունուելու խընդրանքով։ Չնայելով որ Տէր Բարսեղի անարժան նկարագիրը Մշոյ բոլոր կաթողիկներուն ալ ծանօթ էր, այս վերջինները, - բացի առաջ տողերը պրողէն, որ այն ժամանակ նոյն հասարակութեան կը պատկանէր, - Ճամճեան եպիսկոպոստ զեկուցեցին անոր բարի վարույց մասին, ըսելով թէ Տէր Բարսեղ զարգացած եկեղեցական մը ըլլալով, իր սոցալտ պաշտօնակիցները առ նախանձու իրեն հուսադրելի խնամ էին։

Այս կերպով Գերապայծառը պիտի իրբեւ կաթողիկ ընդունուելու սըխալը դործեց եւ անոր արտօնեց քահանայապետը Նորչէն գիւղին մէջ։ Այս եղաւ միակ սխալը, զոր դործեց Ճամճեան Գեր. իր Մշոյ առաջնորդութեան շրջանին։ Ան քիչ անց առողջական պատճառներով Կ. Պոլիս մեկնեցաւ եւ ալ չփերադարձաւ։

Տէր Բարսեղ տարիէ մը աւելի Նորչէն գիւղը մնալէ ետք, իր անբարոյականութեամբ ծանր դայթաղութիւններու տեղի տալով, գիւղէն վռնտուեցաւ։ Ժամանակի տառջնորդական փոխանորդ Պահապանեան Անտոն Վրդ., որ առաքելի եւ խղճամբա մէկն էր, չսպասելով նոյնիսկ Կ. Պոլսէն եպիսկոպոսական հրահանդի, Տէր Բարսեղը առժամապէս արգիլեց քահանայապետը։ Ասոր վրայ, այս անգամ ալ Տէր Բարսեղ ափ առաւ առաքելական առաջնորդարանի դուռը եւ Ալեքսանդր Սըրբապանին ուղղեալ խնդրադրին մէջ յայտարարեց թէ «կաթողիկ եկեղեցւոյ մէջ զԲրիտոս պատարապետ իր խղճին հակառակ դալով, կը փերադառնայ Հայաստանեայց մայրենի եկեղեցւոյ գիրկը»։ Ալեքսանդր Սըրբապան, հակառակ դարձեալ այս տողերը գրողին եւ ուրիշներու թերադրանքին, ընդունեց Տէր Բարսեղի այս դիմումը եւ զայն դարձեալ գրիկց Զորոյ թաղի եկեղեցին։ Թաղեցիները ժամանակ մը ընդդիմանալէ ետք, խաղաղութեան սիրոյն զայն կրկին ընդունեցին իրբեւ իրենց թաղի քահանայ եւ այս կերպով առժամապէս փակուեցաւ Տէր Բարսեղի դայթաղութիւնը։ Այսպէս, Տէր Բարսեղ մնաց մինչեւ 1894-ի Սասունի ապստամբութեան վերջը։ Այդ թուականին երեք մեծ պետութեանց քննիչները Սուլ շահան Սասունի գէպէին առիթ տուող պատճառները քննելու պաշտօնով։ Տէր Բարսեղ եւ Ս. Կարապետ վանքի վաղանուն Եւսայի ու Կարապետ վարդապետները եղան միակ հայերը, որոնք քննիչներուն առջեւ զեկուցեցին ի նպաստ թուրք կառավարութեան եւ քարկարար քրեաւորուն, չարժման ամբողջ պատասխանատուութիւնը

մղելով Տաճատեանի, Խարախանեան Ներսէս Վարդապետի, Մուրատի եւ Կինճի Առաջնորդ Վարդան Վարդապետի վրայ: 1895-ին վերջապէս, հաճընցի հնչակեան զործիչ Ռուբէն խօճաւադեանի կարգադրութեամբ, վրիժառու զնդակը վերջ տուաւ այս հրէշային արարածին կեանքին: Տէր Բարսեղի ամբողջ պատմութիւնը մէկ անդամէն վերջացնելու համար է որ հասանք մինչեւ 1896 թուականը, ուստի դառնանք դարձեալ 1885 թուականի անցքերուն:

ՄՇՈՑ ԶԻՒԿ ԳԻՒՂԻ «ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԺԱՊԵՏ»Ի ԶԵՐԲԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ— 1885-86-ի ձմեռան Մուշ քաղաքին կից Զրիկ գիւղին մէջ ձերբակալուեցաւ ռուսահայ յեղափոխական զործիչ մը, որ մօտ երկու տարիէ ի վեր յիշեալ գիւղին մէջ «Յովհաննէս վարժապետ» ծածկանունին տակ (խակական անունը յիշողութենէս վրիպած է), խիստ համեստ պայմաններով ուսուցչութիւն կ'ընէր, միակ նպատակ ունենալով Ռաֆֆիի վէպերուն ընթերցումով եւ ուրիշ գաղտնի միջոցներով յեղափոխական գաղափար արծարծել զիւղացիներուն մէջ: Յիշեալը Հայոց Միացեալ Ընկ.ի Մշոյ Ներսէսեան վարժարանի պաշտօնէութեան եւ այս տողերը գրողին հետ ալ յարաբերութիւններ ունեցած էր: Իր ձերբակալուելովը՝ իր քով պահուած բոլոր գրութիւնները, որոնց մէջ գրած էր նաեւ այս յարաբերութիւններու մասին, զրաւուցան կառավարութեան կողմէ եւ քննութեան ենթարկուեցան: Բարեբախտաբար քննիչը եղած էր Սարգեան Հֆ., որ այն ժամանակ տեղական կառավարութեան բացարձակ վստահութիւնը կը վայելէր: Սարգեան Հֆ. յատենի Խտարէի (վարչութեան) ժողովին քննելով այդ թուղթերը, անոնց մէջէն երեքին բովանդակութիւնը վերին աստիճան վտանգաւոր գտած էր եւ յայտարարելով հանդերձ որ այդ թուղթերուն մէջ վնասակար բան մը չկայ, վախճալով որ մի գուցէ տարրեր անձի մը միջոցով կրկին քննութիւն տեղի ունենայ ու գործին ծայրը հասնի մինչեւ Միացեալ Ընկերութեանց վարժարանը, կ'որոշէ այդ երեք թուղթերը մէջտեղէն վերցնել: Ասոր համար կը զիմէ Խտարէի անդամ Կարապետ Հֆ. Նալպանտեանի աջակցութեան: Ընթերցողները կը յիշեն թէ այդ թուականներուն Մշոյ թուրք եւ հայ տարրերուն մէջ ի՞նչ սերտ համերաշխութիւն կը տիրէր: Նալպանտեան Հֆ. օգտուելով այս հանգամանքէն եւ Խտարէի անդամ Ֆեթհուլլահ Հֆ.ի հետ իր մտերմութենէն ու օղիի ընկերակցութենէն, քիչ մըն ալ կաշառք մէջը խաղցնելով, կը յաջողի կնքուած ծրարներուն մէջէն այդ երեք թուղթերը դուրս հանել եւ Ֆեթհուլլահ Հֆ.ի աչքին առջեւ այրելով փճացնել: Արս կերպով «Յովհաննէս վարժապետ»ի վրայ ծանր ամբաստանութիւն մը չգտնուելով, Մուշէն Կարին զրկուեցաւ եւ անկէ առաջնորդուեցաւ կովկասեան սահմանը:

ԱԼԷԱԹՃԵԱՆ ՍՐԲԱԶԱՆԻ ՄՈՒՇԷՆ ՀԵՌԱՑՈՒՄԸ— 1886-ի ամբարան Մշոյ մէջ պատահեցաւ դէպք մը, որ խորապէս յուզեց հանրային կարծիքը: Մշոյ անուանի թուրք գերպատաններէն (խաներէն) մէկուն

կը պատկանէր Թալիպ էֆ. : Ասոր հայրը՝ Սալիւ էֆ. , հայերուն կողմէ
այնչափ սիրուած էր, որ երբ 1885-ին մեռաւ, ո՛չ միայն Մշոյ բովան-
դակ հայ ժողովուրդը հետեւեցաւ անոր յուղարկաւորութեան թափօրին,
այլեւ թաղման յաջորդ առտուն հայ տէրտէրներ անոր գերեզմանին վը-
րայ հողհանդիստեան պաշտօն կատարեցին: Դժուարտարաբ աղան հօրը
հակապատկեր փ յաշտ եկաւ. և ամբողջ կեանքին մէջ հայկու ոխերիմ
թշնամի հանդիսացաւ: 1886-ին յատենի Խտարէի ժողովին, և ի ներ-
կայութեան Ալէաթճեան Սրբազանին, հայո մը դէմ բարկանալով, հա-
յոյ իաչին, միւռոնին և հաղորդութեան դէմ անլուր հայհոյանքներ
արձակեց: Ալէաթճեան Ս. այս նախատինքին վրայ անմիջապէս ժողո-
վէն մեկնելով, Մեծ Եպարքոսին բողոքի հեռագիր մը ուղղեց, որուն
հետեւանքով Թալիպ էֆ. Խտարէի ժողովի և ուրիշ ժողովներու ան-
դամակցութենէն հեռազրով կախակայուեցաւ: Մեծ Եպարքոսին կողմէ:

Թալիպ էֆ. ժի քսեի ամիս կախակայուած մնալէ ետք, միջնորդ-
ներ ձգեց Ալէաթճեան Ս. ի մօտ և յաջողեցաւ անոր ներողամտութիւնը
չահիլ ու այսպիսով վերահաստատուեցաւ Խտարէի անդամակցութեան
իր պաշտօնին մէջ: (Թալիպ էֆ. ի մասին դեռ ուրիշ ըսելիքներ պիտի
ունենանք այս յուշերու շարքին մէջ:)

Ալէաթճեան Ս. ի այս ներողամտութիւնը, որուն համար Մշոյ հա-
յերն ալ զինք մեղադրեցին, իրեն շատ արդի նստեցաւ: Թալիպ էֆ.
մութին մէջ դաւեր լարեց Ալէաթճեան Ս. ի դէմ, զայն ամբաստանելով
իրբւն խռովարար, և կարգ մը ուրիշ երկրորդական դէպքեր ալ վրայ
դալով, - որոնց վրայ ծանրանալ աւելորդ է, - Բ. Դուռը հարկ դատեց
Ալէաթճեան Ս. ն Մուշէն հեռացնել պատրիարքարանին միջոցաւ: Յա-
րութիւն Պատրիարք կրկին հեռագիրներով հրահանգ տուաւ Ալէաթճե-
ան Ս. ի Մուշէն մեկնիլ և Երթալ Վան՝ իրբւն պատրիարքական փո-
խանորդ: Սրբազանը չանսաց պատրիարքական այս հրամանին ու չու-
ղեց մեկնիլ Մուշէն, կռթնելով այն լայն ժողովրդականութեան վրայ,
զոր ունէր այնտեղ իրբւն «Տարօնոյ Թռչնիկ» (իր ատալին առաջնոր-
դութեան շրջանին այս անունով ամսաթերթ մը հրատարակած էր Ս.
կարապետ վանքի իր հաստատած տպարանին մէջ): Միայն պատրիար-
քարանի երրորդ ստիպողական հեռագրին վրայ, որով իրեն կ'ազդարար-
էր թէ չմեկնելու պարագային թուրք կառավարութիւնը ատիկներով
դիմեք դուրս պիտի հանէր Մուշէն, Ալէաթճեան Ս. որոշեց մեկնիլ: Ժո-
ղովուրդը խանդավառ ցոյցներով ճամբայ հանեց իր սիրեցեալ Առաջնոր-
դը դէպի Վան, ուր իրեն համար նոր փորձանքներ կը սպասէին:

ՎԱՆԱՅ ՄԵԶ ՇԻՐՎԱՆԵԱՆԻ ԱՌԵԻԱՆԳՈՒՄԸ- Արդարեւ, Ալէաթճե-
ան Ս. ի Վան ժամանումէն քիչ ետք, 1887-ի սկիզբի ձմեռան, Վանայ
մէջ պատահեցաւ տարօրինակ դէպք մը: Վանայ մէջ այդ թուականնի-
րուն կ'ապրէր Նշան Շիրվանեան անունով հայ մը, որ եղբայրն էր այն
Նշանաւոր բախտախնդիրին, որ Նափոյէտն Գ. ի կայսրութեան օրով փա-
րիկի մէջ Ոստանիկ Մարգարեան կեղծ անունով իր վրայ չատեցը-

նել տուած էր իբրեւ մեծաշարուստ հայ ազնուական մը, եւ որ յետոյ դիմակադերձուելով րանտի մէջ աւարտեց իր արկածախնդիր կեանքին օրերը:

Նշան Շիրվանեան Վանայ անդլիական հիւպատոսին քարտուղարն էր: 1887-ի ցուրտ ձմրան գիշեր մը, երբ հիւպատոսարանէն Ալգեստանի մէջ իր տունը կը դառնար, ծպտեալ անծանօթներու կողմէ կ'առեւանգուէ ու կը տարուի Վանայ մօտ Ակոբի ֆարի ժայռերուն մէջ, Զըմր-Զըմր Մաղարա կուռուած տեղը: Հոն անծանօթ արեւանգիչները զինք անկուր չարչարանքներու ենթարկելով՝ կը հարցաքննեն հիւպատոսարանի գաղտնիքներու մասին, մասնաւորապէս Հայկական ինքրի վերաբերութեամբ: Երկու օր զինք հոն պահելէ ետք, իր հանդերձներէն մերկացնելով, չապիկ - վարտիքով դիչելով զինք ազատ կը թողուն չարագործները ու կ'անհետանան: Հէք երիտասարդը կէս սառած վիճակի մէջ եւ իր վրայ յարձակող չուներէն ահաբեկած՝ կիսամեռ քաղաք կը վերադառնայ եւ կը հասնի տուն: Յաջորդ առաւօտ երբ այս իրողութեան լուրը կը տարածուի, Վանայ հայ ժողովուրդը ամբողջութեամբ խանութները փակելով, աղմկայոյզ ցոյցերով առաջնորդարան եւ հիւպատոսներուն կը դիմեն ու կը բողոքեն եղածին դէմ: Ռուսական եւ անդլիական հիւպատոսները միաժամանակ կը բողոքեն Վանայ վայրին եւ՝ հետադրով՝ Բ. Դուռ այս անկուր իրողութեան դէմ:

Ալէքսանդր Ս. այս եղանկերուն դէմ կրակ վտրած, իր կարգին կը դիմէ վայրին մօտ, չըջապատուած փաղաքական ժողովոյ անդամներէն եւ իր հոռեւէն ունենալով ամբողջ ժողովուրդը: Վալին փոխանակ ցաւ յայտնելու պատահած զրգոյճ եղելութեան մասին, կը մեղադրէ Ալէքսանդր Ս. ն, որ այսպէս ժողովուրդը ոտքի հանած է: Ասոր վրայ նախատական ծանր խօսքեր կը փոխանակուին վալին եւ Առաջնորդին միջեւ: Խնդիրը բնականաբար կը տեղեկագրուի Բ. Դուռ եւ պատրիարքարան: Մէկ քանի շաբաթ ետք, մինչ Շիրվանեանի դէպքին ներքին ծալքերը գաղտնի կը մնան, Բ. Դուռը պատրիարքարանին վրայ ճնշում կը բանեցնէ, որպէսզի Ալէքսանդր Ս. Վանէն հեռացուելով Պոլիս վերադարձուի: Հրամանը կը գործադրուի եւ Ալէքսանդր Ս. ա'յս անգամ ալ հակառակ պարագային սուիճներով դուրս հանուելու սպառնալիքին տակ միայն Վանէն կը մեկնի դէպի Կ. Պոլիս, ուրկէ այդեւս պիտի չկրնար վերադառնալ Հայաստանի նահանգները:

ՎԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՍ- 1884-ին իրեւ Միացեալ Ընկերութեանց ուսուցիչ Մուշ ճամբորդելիս առթիւ անցած էի Տրապիզոնէն, Բաբերդէն, Էրզրումէն եւ Խնուսէն: Մէջ մէջ առիթ ունեցած էի եւ ապագային ալ պիտի ունենայի այցելելու Բաղէ: Բնական էր որ Զերմ փափաք ունենայի տեսնելու նաեւ Վան քաղաքը եւ չըջակները, մանաւանդ որ երկրին պատմական յիշատակները, բնական գեղեցկութիւնը եւ Վանի աղալայն կեանքի եռուզեռը պատճառներ էին աւելի արծարծելու իմ հետաքրքրութիւնս:

1886 տարուան Գուլիս - Օգոստոս ամիսներուն դպրոցական արձակուրդէն օգտուելով, վանեցի պաշտօնակցին՝ Հայրապետ Ճանիկ-
եանի (որ յետոյ Տ. Մեսրոպ քննյ. Ճանիկեան անունով վարեւոր դեր
պիտի ունենար Վասպուրականի աղլային կեանքին մէջ) ընկերակցու-
թեամբ ուղևորեցայ Վան:

Մուշէն մեկնելով, մեր առաջին հանգրուանը եղաւ Դատուանը:
Մեր նպատակն էր Դատուանէն առաջաստանաւով շարունակել մեր
ճամբորդութիւնը, բայց հովը նպաստաւոր չըլլալով, տասնմէկ օր
Դատուան մնացինք՝ ամէն օր յաջորդ օրը մեկնելու յոյսով: Այս ակա-
մայ դադարէն օգտուելով, Դատուանի շրջակայքը պտոյտներ կատարե-
ցի եւ ի մասնաւորի բարձրացայ Նեմրութ հրաբխային լեռան զաղաթը,
անցնելով Ըլլաւ Գարեբէն եւ Գրգուռի ստորոտէն: Նեմրութ լեռը որ
կողմէն որ դիտուի, միակ լեռի մը պատրանքը կ'ընծայէ, բայց երբ
մարդ բարձրանայ զաղաթը, այն ատեն կը հասկնայ որ բոլորակաձեւ
լեռնաշղթայի մը մէկ վէտին վրայ կը գտնուի: Այս լեռնաշղթան կ'իշ-
խէ ամբողջ Մշոյ դաշտին, Մեղրագետի Ակի, Ռաճվայի, Բաղէշի, Ախ-
լաթի, Նազուկ լիճի, Ատլճէպաղի եւ Պուլանքի վրայ: Բոլորակաձեւ
զաղաթներուն մէջտեղը կայ մեծատարած խորութիւն մը, որ այս մա-
րած հրաբուխին հակայական բաժակը կը կազմէ: Այդ խորածորին մէջ
կան աղիւսանման կարմիր քարերու կոյտեր, որոնք հեռուն աղիւսա-
կերտ դիւզերու երեսոյթը ունին. նոյնպէս՝ այրած - ածխացած խոշոր
քարեր, որոնցմէ ոմանց երեսը ապակի կապած է: Այդ բաժակին մէջ
կան եօթը ակեր, որոնցմէ ոմանք ջերմուկներ են. իսկ անոնց մեծագոյ-
նը կը կազմէ մահճիկաձեւ լիճ մը, որմէ կը կարծուի թէ սնունդ կ'առնէ
Մեղրագետի առատաջուր Ակը: Նեմրութի օտորոտներուն առջեւ, Ռաճ-
վայէն մինչեւ Պուլանքը, կը տարածուին սև պաղաթի ընդարձակ տա-
րածութիւններ, որոնք պաղաթի վեցանկիւնաձեւ բիւրեղացումին շը-
նորհիւ կանոնաւորապէս սալարկուած դետնի մը նմանութիւնը ունին:
Իսկ Նեմրութի մէկ վտղին վրայ կը գտնուի Թեղուտ գիւղը, ուր ստէպ
երկրաշարժի ցնցումներ եւ աւերումներ տեղի կ'ունենան: Երկրաբանո-
րէն այս խիստ հետաքրքրական լեռնաշղթան էր որ ապագային իր առ-
պատակային գործունէութեան կեդրոն պիտի ընտրէր զանակցական
նշանաւոր մարտիկ Սեբոր-Ալբեր:

Այսպէս, չկարենալով առաջատանաւով ճամբորդել, Ճանիկեան
եւ ես ուրիշ մի քանի պատահական ուղեկիցներով որոշեցինք հետիոտն
շարունակել մեր ճամբորդութիւնը: Դատուանէն ճամբայ ելլալով ան-
ցանք Ուրտափ գիւղը եւ անկէ՝ Թուխ գիւղը: Երբ համանուն գետին կա-
մուրջէն անցանք, ինքնաբերաբար մակաբերեցինք որ Բաղէշի անիծեալ
կուսակալութեան սահմանէն անցած էինք զէպի տարբեր կուսակալու-
թիւն մը, որ կարծես ամէն ինչ մեղի կը ժպտէր: Ճամբաները կանո-
նաւոր էին, գիւղերը մեծատարած ծառաստաններու մէջտեղ կարծես
կորսուած, անոնց անունները գրեթէ ամբողջութեամբ հայկական էին

և. բնութիւնը արտակարգօրէն գեղեցիկ: Այսպէս անցանք վերին եւ ստորին ինձորներն զիւզերը ևւ անկէ հասանք հետզհետէ փորիս, կարճ-կանի եղեգիւս մեծ զիւզը, վանիկ, Ընձաքիտար կամ կապուտկող լեռը, Սուրբ Յակոբայ վանքը, Ընձաք զիւզը, Նանեկանց զիւզը ևւ անկէ՝ Նարեկայ զիւզը, ուր այցելեցինք Ս. Գրիգոր Նարեկացիի վանքը եւ գերեզմանը, ու այնտեղէն անցնելով, Նոր գիւղէն հասանք Ախալանք վրամ Աղթամարայ վանքին Դրսի Տունը: Այստեղ մեր աչքին առջեւ պարզուեցաւ հրաշալի համայնապատկեր մը, որուն մէկ կողմը անցնելով Մոխրաբերդէն կ'երկարի մինչև, Արճէշ, միւս կողմը կը տեսնուէր Արտաս լեռը ևւ անոր ստորոտը Ռատան մեծ գիւղաքաղաքը. իսկ մեր դէմը ծիծաղածաւ ծովուն մէջէն ևւ բարձրանային Աղթամար ևւ Առտէր կըղ-ղինները, վերջինը՝ անապատ ևւ վալլի թռչուններու միայն բնակարան:

Ձախորդ պարապայի մը բերմամբ չկրցանք այցելել Աղթամարայ պատմական մայրավանքը ևւ տնոր հոյակապ տաճարը: Ախալանքէն մեր ճամբան չարունակելով հասանք Ռատան, ուր այցելեցինք Չաղար Ս. Նշան, Եղիշի գերեզմանը: Հասնելով Հայոց Ձոր, անցանք Աթա-նանց զիւղէն ևւ հասանք Անդղ մեծ զիւզը, ուր այցելեցինք Անդղայ Ս. Աստուածածնայ վանքը, որուն ընդարձակ պարտէզին մէջն է Անդղայ գետին ջրովէր: Յաջորդ օրը բարձրացանք լեռնազաւտի մը վրայ, ուր-կէ արդէն կը տեսնուէր վան իրաւոր՝ չընապատուած անհամար այգի-ներով: Հասնելով հոշակուտը Արտամէտ զիւզը, այցելեցինք անոր դա-րարազուարճ այգիները, խմեցինք անոր բարեհամ ջուրը ևւ ճաշակե-ցինք Արտամէտի կարմիր ու հոտաւէտ խնձորը: Արտամէտէն վան այլևս ճամբորդութիւն չէր, այլ՝ հոգեպարար գրօսական պոռոյտ մը:

Վանայ մէջ մնացի միայն ութ օր, բայց այս վարճ ժամանակը բաւական եղաւ այցելելու Վանայ քաղաքին ևւ Այդեհատանի բոլոր նը-շանաւոր թաղերը, եկեղեցիները, վարժարանները եւ շուկաները: Վա-նեցի երևուելիներու ազդեցութեան շնորհիւ այցելեցի Վանայ բերդին բոլոր մասերը, սեպագիրներով չըջանակուած ևւ իրենց մէջ վիժալոր սենեակներ պարունակող քարայրները, վառօդարանը, ևւ բերդին աւէ-նէն բարձրագէտ կէտին վրայ գտնուող մինարէին գագաթէն զիտեցի չուրջանակի համայնապատկերը: Բախտն ունեցայ տեսակցելու ծերու-նազարդ իշաչատուր կաթողիկոսին հետ, որ Աղթամարայ կաթողիկոսա-կան Աթոռին վերջին գահակալը եղաւ: Նոյնպէս այցելեցի Վարդայ վանքը ևւ վերին Վարդայէն առաջին անգամն ըլլալով զիտեցի Աւագ եւ Փոքր Մասիսներու ձիւնապսակ գագաթները: Այցելեցի նաեւ Շուշանց կարմրաուր Ս. Գրիգոր ևւ Ս. Խաչ վանքերը: Վանայ մէջ ծանօթացայ յայտնի վրպասան Վրթանէս Փափագիանին, Կիտոռիկ կեղծանունով ծանօթ ժողովրդական բանաստեղծ Տիգրան Ամիրճանեանի հետ. նոյն-պէս ծանօթացայ աշպուրիկ Համբարձում Երամեանին ևւ այցելեցի ա-նոր որբանոցը: Ինձի մասնաւորապէս հաճելի եղաւ ծանօթանալ Փոր-թուղալեանի խանդուն սաներէն մէկ քանիններուն հետ: Տեսակցեցայ

հետև Պողոսեան ու Ասողոսեան երեսելիներուն հետ, որոնց ուղղած համերաշխութեան յորդորներս՝ ի սէր ազգային զերաւոյն չահերու, երկու կողմէն ալ լոկ հեղինակաւ քմծիծաղներու արժանացան. այնչափ մեծ էր այս երկու խումբերուն միջեւ տիրող հակառակութիւնը...

Վանէն ղէպի հիւսիս շարունակելով ուղեւորութիւնս, անցնելով Ակուրի Գարէն, այցելեցի Շահապղի նշանաւոր այգիներու դիւղը, Աւանց դիւղը որ Վանայ նաւահանգիստն է, եւ անցնելով Մարմէթ դիւղէն, ուր կ'որսան տառևի ձուկը, եւ համանուն դիւղէն՝ հասայ Ամենաշատ դիւղը եւ անկէ՝ Կաուց անապատի Դրսի Տունը: Կաուցի մենաստանը անցայ հետիոտն (զի ծովին տեղատուութեան փամանակն էր). իսկ վերադարձս մտիրնթացութեան ատենին հանդիպելով՝ նաւալով միայն կարելի եղաւ անցնիլ ծովեղերք: Կաուցէն անցայ Ալլուր դիւղը, շրջապատուած այգիներով (նշանաւոր է Ալլուրի դիւղին), անկէ ղէպի Փոքրիկ-Էջմիածին վանքը ճամբուս բարձունքներէն տեսայ Արջակ լիճը՝ զինք եղերոց խարակոնիս դիւղով, ուր Հայոց Միացեալ Ընկերութիւնք վարժարան մը ունէին: Փոքրիկ - Էջմիածին վանքը վը գտնուի Վանայ ծովի հիւսիսային ծայրը, ուր ծովը նեղնալով կը կազմէ առանձին ծովախորշ մը: Վանքին հանդիպակաց ծովեղերքէն կը բարձրանայ հսկայ Սիւփան լեւը, որ պատկառանք կ'ազդէ դիտողին, անոր յիշեցնելով միանգամայն հայկական առածը.

- Սիփա՛ն, առ գիւ.
- Դընա՛ Մասիս,
- Բարձր է քան գիւ:

Վանքէն շարունակելով ճամբան ղէպի լիմ անապատը, անցայ Հերերին մեծ գիւղէն, Գննդաւայր յայտնի պահպանողական Պօղոս Եպիսկոպոսին, որուն անունով կ'երգնուր խրմիսն Հայրիկի հակառակորդ Պօղոսեան փոսակցութիւնը: Հերերինի բարձունքներէն երկրորդ անգամ մ'ալ դիտեցի Արարատայ ձիւնափառ զոյգ զապաթները: Պայծառ օր մըն էր եւ փոթորկայոյզ ծովու մը վրայ իրարու ետեւէ բարձրացող տիբններու նման յեռներու դալարուն շարքի մը ետեւէն կը տեսնուէին զոյգ ձիւնափառ զապաթները՝ արեւու ճառագայթներով արծաթագօծուած: Անցնելով վերջապէս Ամուկ (Ամկայ բերդ) քրտարընակ դիւղէն, որ Վանայ բերդը յիշեցնող զոյգ հսկայ քարաժայռերու ստորոտը կը զտնուի, հայարնակ Նոր դիւղէն ու Սթիլէ հայ դիւղէն, իջայ լիմ անապատի եզրը, ուրկէ նաւալով այցելեցի վանքը, եկեղեցին եւ բացօթեայ աղօթատեղիները մենաստանի ճգնաւորներուն: Վանքին մօտ է Ճանիկ մեծ դիւղը, ուրկէ կ'անցնի գինուորական մեծ խճուղին եւ որ նշանաւոր է իր աղահանքելով: Տեսայ Տիրամօր վանքը եւ վերջին հանգրտանս եղաւ Պէնտի - Մահու պատը, որ տառևի ձկան զըլխաւոր արտադրութեան վայրն է: Վերադարձիս անցայ Կիւսնէնց մեծ

դիւղէն, որ եւս Միացեալ Ընկերութիւնք կը պահեն վարժարան մը :

Վանայ ծովու վրայ դիտած ուշադրաւ տեսարաններէս մին եղաւ կրկնեքնոյթը : Առաւօտ մը երբ ծովեզերքէն Վր ճամբորդէի, զարմանքով տեսայ որ ծովուն վրայ պտնուող առապաստանաւերը հանդիպակաց ծովեզերքին ըլլորներուն վրայ կրկին անգամ կը տեսուէին, կարծես ըլլորներու վտղերն ի վեր կը քալէին :

Վասպուրականի մէջ այս թռուցիկ ճամբորդութիւնս այնպիսի անջնջելի յիշատակ մը թողած է իմ մտքիս ու սրտիս մէջ, որ մօտ կէս դար անց կարող կ'ըլլամ տեղն ի տեղօք եւ անուններով յիշատակել իմ լուրոր տեսածներս, պարզ յիշողութեամբ միայն, առանց որեւէ արձանագրութեան դիմելու : Կը յուսամ որ ընթերցողը պիտի ներէ ինծի այս չեղումը յուշերուս դիտարոր նշանատակէտէն : Անկարելի պիտի ըլլար ինծի լռութեամբ անցնիլ ճանապարհորդական այս տպաւորութիւններուն վրայէն, որոնք ինծի համար աւելի քաղցր եղած են ու պիտի մնան քան այն բոլոր տպաւորութիւնները որ ունեցած եմ աշխարհի զանազան մասերուն վրայ իմ բազմաթիւ ճամբորդութիւններուն ընթացքին : Զո՛ւր տեղը չէ՝ որ թուրքերը կ'ըսեն. «Տիւմենաւա վամ, Ախրէթտէ իմամ»², իսկ Տոքթոր Ռէյնոլտց ըսած է. «Սի վամ պիֆոր եռ տայ»³ : Իսկ ես կը սիրեմ ըսել.՝ Վանայ Այդեատանը Ելիսեան դաշտերուն *** մանրանկարն է :

ՄԻԱՑԵԱԼԻ ՏԵՍՈՒԶՆԵՐՈՒ ՁԵՐԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ՝ 1886 թուականի ամբան, Միացեալ Ընկերութեանց ընդհանուր տեսուչ Մկրտիչ Սարբեան Այալկերտի մէջ, իսկ օղնական տեսուչ Մարկոս Նաթանեան Մուշի մէջ միաժամանակ ձերբակալուեցան : Այս կրկնակ ձերբակալութեան բուն պատճառը երբեք յայտնի չեղաւ : Ինչպէս յուշերուս նախընթաց էջերուն մէջ յայտնեցի, Սարբեան եւ Նաթանեան իրենց տեսչութեան պաշտօնին մէջ չհետեւեցան բնուական փոթութեան Վանայ մէջ ունեցած յախուռն գործելակերպին : Վանայ վարժապետանոցը եւ անոր յաջորդող Կեդրոնական վարժարանը արդէն փակուած ու փոթութեան ալ վանէն հեռացած էր, եւ կատավարութիւնը ընդհանուր առմամբ քննադատելի կամ կասկածելի բան մը չէր տեսներ Սարբեանի ու Նաթանեանի պարծունէութեան եւ զպլոցներուն տրուած ուղղութեան մէջ, մանաւանդ որ այս զոյգ տեսուչները ամէն տեղ կատավարաբան պաշտօնեաներու հետ լաւագոյն յարաբերութիւններ կը մշակէին եւ միշտ կը օգնէին անոնց համակրութեան արժանանալ : Ահա այս պատճառներով անոնց ձերբակալութիւնը արդարացնող բան մը չկար : Միայն ի

* . «Աշխարհիս մէջ՝ վամը, անդրաշխարհի մէջ՝ հաւատքը» :

** «Տե՛ս վամը մեռնելէ առաջ» :

*** Յումնական դիցաբանութեան մէջ ծանօթ ստորգետնեայ դրախտաւայր - Վ.Վ. :

լրոյ իմացած եմ, առանց կարենալ ստուգութիւնը երաշխաւորելու, թէ Փեթերպուրկի օսմանեան ղեկավարն Բ. Դրան կը ներկայացնէ զաղտնի յուշագիր մը, որուն մէջ կ'ըսէ թէ Սարբեան եւ Նաթանեան էֆենտիները վարժարաններու տեսչութեան պատրուակին տակ անընդհատ կը շրջին Հայաստանի բոլոր քաղաքներն ու գիւղերը, կ'ուսումնասիրեն բերդերու եւ ամրութիւններու յատակագծերը եւ առ հասարակ ռազմադիտական կարեւորութիւն ունեցող գիւղերը, եւ այս ամէնը՝ ի հաշիւ ռուս կառավարութեան, ու կ'աւելցնէ թէ տեղական իշխանութիւնները կը քնանան եւ չեն տեսներ այս ամէնը:

Այն ժամանակները Փեթերպուրկի օսմանեան ղեկավարն առաջնակարգ դերը մը ունէր եւ իրեն ցուցմունքները գրեթէ իրրեւ պատգամ կ'ընդունէին օսմանեան քաղաքական ու զիտանադիտական շրջանակներուն մէջ. եւ ոչտք չէ մոռնալ թէ Հայկական Հարցը - թէեւ ոչ յեղափոխութեան տեսակէտէն, որ տակաւին սաղմնային վիճակի մէջ կը գտնուէր - իբրեւ դիւանադիտական խնդիր՝ օսմ. կառավարութիւնը մտահոգող ամէնէն հրատապ հարցն էր: Կ'ենթադրեմ, ուրեմն, որ Փեթերպուրկի ղեկավարին այս զաղտնի տեղեկատուութեան հետեւանքով էր որ ձերբակալուեցան երկու տեսուչները, մանաւանդ որ տնոնցմէ մին՝ Մարկոս Նաթանեան, սովորութիւն ունէր իր այցելած վայրերուն տեղագրական նկարագրութիւնները հրատարակելու Կ. Պոլսոյ Հայ թերթերուն մէջ, իբրեւ սլարդ հետաքրքրական նիւթ մը, առանց որեւէ քաղաքական նպատակի:

Սարբեան Ալաշկերտէն ընդ հսկողութեամբ Կարին փոխադրուեցաւ եւ Կարնոյ լանտին մէջ երեք - չորս ամիս արտաքին յարաբերութենէ զուրկ եւ խիստ հսկողութեան տակ մնալէ ետք, ձմեռ ատեն փոխադրուեցաւ Չանդլըր (Քաստէմունիի վիլայէթին մէջ քաղաք մը) եւ անկէ ալ՝ Կ. Պոլիս, ուր մէկ քանի ամիս մնաց եւրոպայի լանտը: Այնտեղ Սարբեան քանիցս խիստ հարցաքննութիւններու ենթարկուեցաւ եւ հակառակ իր բացարձակ անմեղութիւնը վստահուելու իր բոլոր ճիգերուն, Սուլթանին հրամանովը աքսորուեցաւ ավերիկեան Տրիպոլիս, ուր բերդարդի վիճակի մէջ մնաց մինչեւ Օսմանեան Սահմանադրութեան հրաշակումը՝ 1908-ին: Սարբեան այս տողերը գրողին մտերիմ բարեկամը ըլլալով, թէ՛ Կարինէն, թէ՛ Չանդլըրէն եւ թէ եւրոպէն յաջողած էր իրեն նամակներ ուղղել զաղտնի միջոցներով: Եւրոպէն գրուած իր մէկ նամակին մէջ բոտ առ բոտ հետեւեալը կը գրէր. «Սուլթանի գահոյքի սրահէն 20 ոտք հեռաւորութեան վրայ կը գտնուիմ, եւ սակայն ախտեղ համոզուեցայ թէ չկայ բան մը որ այնչափ դժուարութեամբ կարենայ մոտք գործել թաղաւորներու պալատին մէջ՝ որքան Արղարութիւնը»: Սահմանադրութենէն ետք՝ իր աքսորէ վերադարձին՝ Մըկրտիչ Սարբեան, յոյնաբեկ եւ քնկճուած, հաստատուեցաւ Իգսլ'ի մէջ, ուր ժամանակ մը վարեց տեղւոյն ազգային վարժարաններու տեսչութիւնը եւ ուր մեծաւ մի քանի տարի անց:

Գալով օգնական տեսուչ Նաթանեանին, այս վերջինը Մուշէն ընդհակոցութեամբ տարուեցաւ Կարին, յետոյ՝ Տրապիզոն, եւ վերջապէս՝ Կ. Պոլիս։ Տրապիզոնէն Կ. Պոլիս ճամբորդութեան միջոցին Նաթանեան ճարպիկութիւնը կ'ունենայ աչքէ անցնելու այն հրամանագիրը, որու զօրութեամբ տեղի կ'ունենար իր Կ. Պոլիս փոխադրութիւնը, եւ անկէ կ'իմանայ թէ որոշուած է զինք Պոլսէն եմէն աքսորել։ Պոլսոյ մէջ միջոց կը գտնէ Յարութիւն Պատրիարքին իմացնելու իրեն սպասող ճակատագիրը։ Յարութիւն Պատրիարք, որ միջոց չէր ունեցած Սարքեան էֆ.ը փրկելու իր Տրիպոլիս աքսորէն, այս անգամ զօրաւոր կերպով կը միջամտէ ուղղակի Սուլթանին մօտ ի նպաստ Նաթանեանի եւ կը յաջողի Նաթանեանը փոխանակ եմէնի՝ աքսորել տալ Երուսաղէմ, Ս. Յակոբեանց վանքը։ Այնտեղ Նաթանեան երկար ժամանակ կը մնայ համեմատօրէն խաղաղ կեանք մը վարելով Ս. Յակոբեանց Միաբանութեան մէջ։ Օսմանեան Սահմանադրութեան հռչակումին՝ ինքն ալ ազատելով կը հաստատուի Կ. Պոլսոյ մէջ, ուր կը վարէ ուսուցչական եւ հրապարակապարտական զանազան պաշտօններ, իսկ Գեմալական շարժումին հետեւանքով տեղի ունեցած արտագաղթի միջոցին Կը մեկնի Փարիզ, ուր վարձանեցաւ 1933-ին։

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ ԴԷՄ ՀԱՆԱԾԱՆԲ՝ Վերագառնալով Սարքեանի եւ Նաթանեանի ձերբակալութեան թուականին, 1886, այդ զոյգ ձերբակալութիւններէն տնմիջապէս ետք ներկայ տողերս գրողը՝ առաջք առնելու համար Մ. Բ. ի կրթական դործին սպառնացող խառնաշփոթութեան ու քայքայումին, առանց իսկ սպասելու կեդրոնի հրահանգներուն, ստանձնեց վարժարանաց ընդհանուր տեսչութեան պաշտօնը եւ թուով մօտ 40 վարժարաններուն պէտք եղած հրահանգները տուաւ Մուշէն՝ յատուկ շրջաբերականներով. այս կերպով վարժարաններուն գոյութիւնը պահպանուեցաւ անընդմիջաբար եւ ըստ կարելւոյն բնականօրէն կերպով, զործին ղեկավարութիւնը կեդրոնանալով Մուշի մէջ։ Թէեւ Ընկերութեան կեդրոնական վարչութիւնը չափազանց գոհ եղաւ կատարուած այս շուտաւրոյթ եւ կտրուկ կարգադրութիւններէն, սակայն բնական է որ այս Կացութիւնը չէր կրնար երկար շարունակուիլ, ընդ որում տողերս գրողը Մշոյ Ներսէսեան վարժարանի տնօրէն դասատուի հանգամանքով ժամանակ չունէր ամբողջ Հայաստանի մէջ ցրուած վարժարանները սղարբիարար այցելելու եւ պէտք տեսնուած կարգադրութիւնները անձամբ կատարելու։ Ուստի իր իսկ առաջարկութեամբ վարժարանները երեք շրջանափնէրու բաժնուեցան. Տարօնի եւ Վասպուրականի շրջանակ՝ տեսչութեամբ Մ. Տամատեանի, Քդիի եւ Ալաշիրերտի շրջանակ՝ տեսչութեամբ Աւետիս Քաջրերուսիի, Սյուրբի շրջանակ՝ տեսչութեամբ Մելիքոն Քաջրերուսիի։

Պարզ է, սակայն, որ օսմանեան կառավարութիւնը երկու տեսուչներու ձերբակալութենէն ետք հաշտ աչքով պիտի չգիտէր Մ. Ընկերութեանց ցործին այս անխափան շարունակութիւնը եւ օրէ օր նոր

ղժուարութիւններ պիտի յարուցանէր: Այսպէս՝ 1887-ի սկիզբները, ձմրան եղանակին, Բաղէչի վալին յանակնկալա Մշոյ Ներսէսեան վարժարանն ալցիկելով հետեւեալ երեք հարցումները ըրաւ.՝ վարժարանը կառավարութենէն բացման արտօնադիր ունէ՞ր, ուսուցիչները մէլաքիֆէն (կրթական նախարարութիւն) ուսուցչական վիպյական ունէ՞ին, դասադիրքերը մէարիֆէն վաւերացուած էին: Իրեն պատասխանուեցաւ թէ Միացեալ Ընկերութիւնք իբրեւ ազգային դաստիարակութեան օժանդակ մարմին, պատրիարքարանի պաշտպանութեան եւ հովանաւորութեան տակ պտնուելով՝ իրենց վարժարանները կը նկատուէին ազգային վարժարաններ, եւ հետեւաբար միւս բոլոր ազգային վարժարանաց նման զերծ էին յատուկ բացման արտօնադիր ստանալու պարտադրութենէ: Երկրորդ, ուսուցիչները, ըստ ընկալեալ սովորութեան, Կ. Պոլսոյ Ազգային Ուսումնական Խորհուրդէն ունէին ուսուցչական վիպյականներ: Երրորդ, դասադիրքերը, ըստ օրինի, մէարիֆի արտօնութեամբ տպագրուած էին, եւ այս իրողութիւնը հաստատուեցաւ դասադիրքերու ցուցադրութեամբ:

Վալին իր առաջին երկու հարցումներուն տրուած պատասխանները անգոհացուցիչ պտաւ եւ երեք օր պայմանաւորաբար տուաւ վարժարանի բացման արտօնադիր եւ ուսուցիչներու վիպյադիր ձեռք բերելու համար մէարիֆէն: Տեսուչ Տամատեան պատասխանեց թէ ձեռք ժամանակ մայրաքաղաք յաշուելիք հեռադրի մը տեղ հասնելուն համար իսկ անբաւական է տրուած պայմանաւորաբար եւ թէ այս հանգամանքներուն մէջ աշգպիսի պահանջք մը գործնականապէս վարժարանները փակելու կը համապատասխանէ: Վալին բարկութեամբ «Թող չարաթ մը ըլլայ պայմանաւորաբար» ըսաւ ու մի կնեցաւ:

Տեսուչը ժամանակ չահելու համար, փոխանակ Միացեալ Ընկերութեանց կեդրոնին պիտելու, իրաց այս կացութիւնը հեռադրով ուղղակի հաղորդեց պատրիարքարան: Խիստ ձմրան պատճառով հեռադրական հաղորդակցութիւնները խանգարուած ըլլալով, տեսուչին այս հեռադիրը վնց օր ետք միայն կը հասնի պատրիարքարան. աշգպէս որ նիւթսովէս ժամանակ չըլլալով տրուած պայմանաւորաբար մէջ պահանջուած պայմանները գործադրելու, Կ. Պոլսոյ ազգային լրագիրները կը ծանուցանեն թէ Միացեալ Ընկերութեանց Մշոյ վարժարանները փակուած են կառավարութեան կողմէ. այս լուրը շատ ոչ չ տպաւորութիւն կը ձգէ մայրաքաղաքի հայերուն վրայ:

Յարութիւն Պատրիարք հեռադիրը ստանալուն պէս կը դիմէ Մեծ Եպարքոսին եւ հրաժարելու սպառնալիքով անկէ կը պահանջէ վարժարաններու փակման յետաձգումը անորոշ ժամանակով: Զգոհանալով Մեծ Եպարքոսին ցոյց տուած բարեացակամ տրամադրութեամբը, անկէ կը պահանջէ որ այս յետաձգումը մէարիֆին կողմէ հեռադրով ազգարարի վալին, որ Մուշ կը պտնուէր: Եօթերորդ օրը, մինչ վարժարանի պաշտօնէութիւնը եւ աշակերտութիւնը խորունկ յուզումով ժամէ ժամ

կը սպասէին վարժարանի փակումին, Յարութիւն Պատրիարքէն ուղղա-
կի Տաճատեանին քաջութիւն հետադիր մը կ'աւետէ փակման յետաձը-
ղումը, միանդամայն յայտնելով որ վալիին ալ նման հեռադիր զրկուած
է մէլաքիմէն: Այս իրադարձութիւններէն վեց ամիս ետք, Մշոյ վառա-
վարիչը միեւնոյն պահանջները պահուած թուականն՝ առաջուանէն աւելի
ստիպողական կերպով, եւ այս անգամ միայն երեք օր շնորհելով: Նոյն
հետադարձական դիմումը կ'աւտեւսուած իրադարձութեան կողմէ պատրիարքարանին,
եւ սակայն այս դիմումին մասին բոլորովին յոռետես եւ յուսահատ, տե-
սուելը պայմանաւորաբար լրացման երրորդ օրը վարժարանի ամբողջ աշա-
կերտութիւնը պատրիարքարանէն Մուշէն կէս ժամ հեռու Ս. Գորգի Ակ
դաւարապետարձ զոստաւայրը: Աշակերտութիւնն ու պաշտօնէութիւնը
զոստնելու տրամադրութիւն չունէին եւ վայրկեանէ վայրկեան կը սպա-
սէին Մուշէն հասնելիք չարաղէտ լուրին, երբ հեռուէն տեսնուեցաւ հե-
ռադարձական ցրտիչը, որ կ'ապոյտ թուղթ մը ձեռքին՝ հեւ ի հեւ կը
բարձրանար Ս. Գորգի Ակի բլուրը: Հեռագիրը այս անգամ ալ Յարութիւն
Պատրիարքին ստորագրութիւնը կը կրէր ու կ'աւետէր թէ վարժա-
րանաց փակումը անպայման յետաձգուած է Վեհափառ Սուլթանին հը-
րամանով: Ընդհանուր տրամադրութիւնը եւ յուսահատութիւնը վայրկեանա-
պէս փոխուեցան ուրախութեան ու խանդավառութեան, եւ վարժարանի
աշակերտները ուրախ երգելով եւ պարերով անցուցին մնացեալ ժա-
մանակն ու երկուցիս յաղթական գնացքով վերադարձան Մուշ:

Միացեալ Ընկերութեանց դէմ սիստեմարար յարուցուած այս խո-
չընդոտները միայն Մշոյ մէջ չէին սահմանափակուեր: Նոյն թուական-
ներուն, Կիւնճի միաբնակարան (պաւառային կառավարիչ) առանց այլու-
այլի փակել տուած էր Արշէն գիւղի Մ. Ընկերութեանց վարժարանը:

Քիչ ետք նոյն բախտին կ'արժանանար նաեւ Վասպուրականի Հա-
յոց Զորի կէմ գիւղի վարժարանը, որուն ղեաստուն՝ յետոյ անուանի
դարձած ալիբեկ Պր. Շիրառեան, վառայ բանտը փոխադրուեցաւ:
Միացեալ Ընկերութեանց Մշոյ տեսուչը՝ Տաճատեան, որ այդ թուական-
ներուն վառվառն եւ խիզախ երիտասարդ մըն էր, չկրցաւ հանդուրժել
այս կամայական տնօրինումներուն: Կիւնճի Արշէն գիւղի վարժարանը
վերաբացաւ եւ ուսուցիչը վերահաստատեց իր պաշտօնին մէջ ու իր այս
յանդուրժեց ձեռնարկին մէջ ղեկավարութեանը արժանացաւ Կիւնճի Առաջ-
նորդ քաջարի Վարդան Վարդ. ին: Նոյնպէս, երբ կէմի վարժարանի փակ-
ման լուրը ստացաւ, իր աշակերտներէն Պր. Դաւիթ Ռշտունին (որ այժմ
Պաղտատ կը գտնուի եւ կենդանի փկայ է այս պատմութեանը) Մուշէն
ճամբայ հանեց դէպի կէմ, հետը տալով երկու անտուկ ղեասագիրք եւ
զարկողական պիտոյք ու հրահանգելով որ երթայ վարժարանին դրան վը-
րայէն քակէ կառավարութեան կնիքը եւ վարժարանը բացուած հոշակէ
գիւղացիներուն. իսկ եթէ որեւէ կողմէ իրեն հարցում կամ դիտողութիւն
ըլլայ իր այս ընթացքին մասին, յայտարարէ թէ ինք չարժած է Մշոյ
Տաճատեան էֆէն հրահանգներուն համաձայն: Եւ ըսե՛լ թէ այդ երկու
վարժարանները բաց մնացին մինչեւ Տաճատեանի Մուշէն մեկնումը

1888-ին. իսկ անկէ ետք այդ վարժարաններուն վիճակուած բախտը անձանօթ է այս տողերը գորղին :

Միւս երկու տեսչութեանց չրջանակներուն մէջ ալ (Քղի - Ալաշկերտ եւ Սղերդ) կառավարութիւնը հետզհետէ աւելի կասկածով եւ խլատութեամբ սկսաւ վերաբերիլ Միացեալ Ընկերութեանց վարժարաններուն, որոնցմէ ոմանք փակուեցան, ոմանց ուսուցիչները ձերբակալուեցան, հետզհետէ Ընկերութեանց կրթական գործը խանդարումի ու քայքայումի ենթարկուեցաւ յարաճուն խստութեանց երեսն, այնպէս որ ժամանակ մըն ալ Ընկերութիւնը իր վարժարաններուն գոյութիւնը գրեթէ ամուլ եւ անուանական կերպով քաշկուտելէ ետք, 1898-ին կառավարական տնօրինութեամբ Հայոց Միացեալ Ընկերութիւնը լուծեալ հրաշակուեցաւ :

Խիստ ցաւալի է որ չգտնուեցաւ հայ զրիչ մը, որ զրի առնէր եւ հետադայ սերունդներուն հաղորդէր Հայոց Միացեալ Ընկերութեանց երկարատեւ ու խիստ արդիւնաւէտ գործունէութիւնը հայ կրթական մարզին մէջ՝ թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Կիլիկիոյ մէջ պահելով մօտ 60 վարժարաններ ու դաստիարակելով ամբողջ սերունդներ : Հոս անցողակի յիշենք Կիլիկիոյ մէջ մասնաւորապէս Զէյթունի, Հաճընի, Զուրք-Մարզպանի Միացեալ Ընկերութեանց վարժարանները, որոնք բացուեցան ուխտունական թուականներուն Կիլիկիոյ տեսուչ վաղամեծիկ Սանտալճեանի ջանքերով : Այս վարժարաններուն շնորհիւ էր որ զարգացած եւ հայախօս սերունդ մը յառաջ եկաւ Կիլիկիոյ մէջ եւ այս սերունդն էր որ մօտաւոր ապագային հայ յեղափոխական շարժումին ռազմիրաները պիտի արտադրէր իր մէջէն :

Միացեալ Ընկերութեանց կատարած դերին մասին վերոյրեալ հակիրճ ակնարկութիւնները կարեւոր նկատեցի, ցոյց տալու համար որ խաղաղ յառաջդիմութեամբ ազգը լաւագոյն օրերու առաջնորդելու չափաւորական ծրարիրը, որուն ջատագովն էր ուխտունական թուականներուն հայութեան բացարձակ մեծամասնութիւնը, եւ որուն յառաջապահ գերակատարն էր Միացեալը, թուրք կառավարութեան կողմէ անհնարին արգելքներու հանդիպեցաւ եւ ի վերջոյ ողբալիօրէն վիժեցաւ՝ հայ երիտասարդութիւնը հասցնելով այն եղրակացութեան, թէ հայկական կեանքի բարեւաւումին համար յեղափոխութենէ զատ ուրիշ միջոց չէր մնացած :

ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՃՈՒԹԵԱՆ ՌԱՀՎԻՐԱՆԵՐԸ - Կարնոյ, եւ Մուշի մէջ տեղի ունեցած աջտեղ պատմուած անցուղարձերը եւ առհասարակ թուրք կառավարութեան ու արինարբոյ քիւրտերու Հայաստանի ամէն կողմը գործադրած հարստահարութիւնները եւ վայրագութիւնները արդէն շատոնց նոյն այս եղրակացութեան հասցուցած էին շատ մը հայ երիտասարդներ, որոնց իւրաքանչիւրը իր անձուկ շրջանակին մէջ կը ջանար նոյն զաւապարները ներշնչել իր հայ հայրենակիցներուն : Անթիւ է շարանը աշպխիւր անջատ հայ գործիչներու, որոնք հայ յեղափոխութեան

ռահվիրաները հանդիսացան : Ոչ ոք պիտի կարողանար այս հայ ռահվիրաներու ամբողջական ցանկը ներկայացնել : Յիշողութեանն ներած չափով այստեղ կը նշանակեմ Մշոյ շրջանակին մէջ գործած այդպիսի ռահվիրաներէն մէկ մասին անունները - Օրկինոցոյ Յակոբ սարկաւադ, Առաքելոյ վանքի միարան եւ յետոյ Բոնաշէնի Ս. Աղբերիկ վանքի վանահայր Ղազար Վարդապետ, Սասնոյ Պատրմուտ գիւղացի հռչակաւոր Արարո, Վարդենիս գիւղի Մարդար վարժապետ, Գոմէր գիւղի Ղազար վարժապետ, զեարէթցի Նորատունկեան սարկաւադ, Ս. Կարապետ վանքի միարան եւ յետոյ Կինճի Առաջնորդ Վարդան Վարդապետ, Եղերդուտի Ս. Յովհաննէս վանքի վանահայր Առաքել Վարդապետ, Սեմալ գիւղի գիւղապետ Գորդէ, Շէնիկ գիւղի գիւղապետ Գորո եւ քարտուղար Միքայէլ, Կելիէկուղանի գիւղապետ Պետո, Մուշկէշէն գիւղացի Ասատուր, Գրգըլ Աղաճ գիւղացի Ասատուր եւյն, եւրն : Ասոնցմէ իւրաքանչիւրը Մշոյ դաշտի եւ Սասնոյ ժողովուրդի զարթոնքին ու յեղափոխական դաշակաւորի տարածումին մէջ իր ատանձին զերը ունեցած է :

Ո՞ր էր երեք պիտի գրէ կեանքի դրուստները այս անձնուէր այլ համեմատ առաջին գործիչներուն, որոնք որեւէ յեղափոխական (տակաւին անցոյ) կազմակերպութեան մը անդամակցած չըլլալնուն համար անծանօթ մնացած են, մինչ անդին յետագոյն ժամանակներու աժեմ-շաժեմ, շրտկոյ համար բոլորովին անհոգ եւ անփառունակ «ընկերներ» փառաւորուեցան ու կը փառաւորուին միմիայն կազմակերպութեան մը անդամ եղած ըլլալու իրենց հանդամանքին համար : Հայաստանի միւս դաստաներէն ու Կիլիկիայէն ինծի ալ դժուար պիտի ըլլար յիշել անուններու ցանկ մը, ինչպէս Զէյթունի դեռ վաթսուսական թուականներու հերոսները, Կիլիկիայի վարժապետ Զոհեանը - որ 1883 թուականին իր յօրինած եւ մրցանակարաւ խոթեան հանդէսին տրուած անձ «Ահա աղանին նոյեան տապանին» հռչակաւոր երգին պատճառով ձերբակալման վերահաս վտանգէն մաղապուր Կիւրոս փախած էր եւ հոն կ'ապրէր վտարանդի ու թշուառ, մինչեւ վերջին տարիներս եւ ուրիշներ ու շատ ուրիշներ, մինչեւ հռչակաւոր ժիրայրը՝ Համբարձում Պոյաճեանի երէց Եղբայրը : Այս բոլոր ռահվիրաներու փառանդին մէջէն, սակայն, հոյակապօրէն դուրս կը ցցուի պատկառելի զէմքը Խրիմեան Հայրիկին, ինչպէս Աւագ Մասիսը՝ Հայաստանի լեռնապագայութիւնուն ընդմէջէն :

Թէ Ի՞նչ ԼԱՆԳԱՄԱՆԻՐՆԵՐ ՅԵՂԱՓՈՒՄԱԿԱՆ ԴԱՐՁՈՒՑԻՆ ՏՈՂԵՐՈՒՄ ԷՆԴԻՄԱԿԱՆ - Տամատեան 1880-ին երբ Վենետիկէն կը մեկնէր շրջանաւարտ միւս աշակերտակիցներուն հետ, Այիշանի բերնէն լսած էր հայրենաշունչ խօսքեր եւ Մուրատ Ռաֆայէլեան վարժարանի նախկին վերատեսուչ Իգնատիոս Կիւրեղեան Արաբհօր ալ բերնէն հետեւեալ յատկանշական խօսքերը . «Ջաւաղներս, ասկէ առաջ Եւրոպայի թերթերուն մէջ երբ հայերու մասին կը խօսուէր, Հայկական գործեր վերնադիրը կը գնէին. հիմա հայկական լուրերը կը տրուին Հայկական խնդիր խորագրին տակ : Մի՛ մոռնաք ուրեմն, որ այսօր Հայկական ինչպիսի մը գո-

յութիւն առած է, ու դուք՝ Մխիթարեան Միաբանութեան ձեռնադրու-
ներդ պէտք չէ՛ անտարրեր մնաք այս նորածին խնդրոյն հանդէպ»։
Դեռ 18 տարեկան պատանի՝ անչուշտ անկախ չէր կրնար ըմբռնած ըլ-
լալ այս վերջին խօսքերուն ամբողջ տարողութիւնը. այնպէս որ 1880-ին
Պոլսոյ երիտասարդութեան լինկուրուսթիւններ կազմելու տենդին ինքն ալ
մասնակցելով հանդերձ, իր հայրենադիւրութիւնը շատ ուրիշներու զգա-
ցութենէն շման բռնաբռնութիւն ընդմէջ մը ունէր, եւ այնպէս ալ մնաց
մինչեւ 1884ին իր Մուշ մեկնիլը իբրեւ տնօրէն Հայոց Միացեալ Ընկե-
րութեանց Ներսէսեան վարժարանին։

Այդ թուականէն մինչեւ երկու տեսուչներուն ձերբակալութիւնը,
ինք ալ խաղաղ յառաջդիմութեան ուղեգիծին հետեւողներէն էր, զէթ
իրը նախապատրաստական շրջան ապաղայ աղառագրական շարժում-
ներուն։ Մշոյ մէջ իր տեսած անլուր հարստահարութիւնները, ինչպէս
նաեւ Մուշի եւ Վանի վերոյիշեալ անցուդարձերը եւ անոնց նմաները
աստիճանաբար յեղաշրջեցին իր մտածելակերպը. իսկ տեսուչներու ա-
նարկար ձերբակալութիւնը եւ կրթական պայքարն արմատապէս վտան-
գուիլը զինք վերջնականապէս մղեցին պէտք յեղափոխական զաւաճարը։

ՅԵՂԱԺՈՒԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՏԱՐՈՐԱԻ ՄԷՋ-
Այսպէս, 1886-ի աշնան, Տամատեան, վանեցի վարժապետ Հայրապետ
Ճանիկեան, առաջնորդարանի քարտուղար Գեղամ Տէր Կարապետեան,
Վերին թաղի Ստեփան վարժապետ եւ Ճկրաչէն թաղէն Մինասեան Խաչիկ
մէկտեղ գալով Մշոյ մէջ հիմնեցին յեղափոխական զաւուրի կազմակեր-
պութիւն մը։ Տամատեան նախ Կ. Պոլիս գտնուող իր եղբօրը եւ յետոյ
վաճառականութեամբ Պոլիս հաստատուող իր աշակերտներէն ոմանց մի-
ջոցով յարաբերութիւն հաստատեց Կ. Պոլսոյ մէջ գտնուող յեղափոխա-
կան գաղափարակիցներու հետ, նոյնպէս նորեկ ուսուցիչ հաճընցի Գէորգ
Էթմէքեան թղթակցութիւն հաստատեց Պոլսոյ մէջ իր հայրենակից բը-
ժըշկական ուսանող Համարարձում Պոյաճեանի հետ, որ յետոյ անմահ
Մուրատը պիտի ըլլար։ Հայրապետ Ճանիկեան նոյն յարաբերութիւն-
ները հաստատեց Վանայ յեղափոխական իր հայրենակիցներուն հետ։

Մշոյ այս կազմակերպութիւնը ունէր գաղտնապահութեան ուխ-
տագիր մը. տեղի զատ, անոր անդամները իրարու անձանթով պիտի մնա-
յին՝ բացի այն անդամէն, որ զիրենք արձանագրած էր։ Հակառակ պաղտ-
նապահութեան այս խիստ պայմաններուն, տրուած ըլլալով մէկ կողմէ
տեղացիներուն տգիտութիւնը եւ միւս կողմէ ատեղծուած ընդհանուր
խանդավառութիւնը՝ այս կազմակերպութիւնը բոլորովին անսպասելի
կերպով ծաւալեցաւ Մշոյ փաղերուն եւ շատ մը գիւղերուն մէջ, ու
ամէն կողմէ տասնեակներով անդամակցողներու ցանկեր կը հասնէին։

Կազմակերպութեան նախաձեռնողները այս անակնկալ երեւոյ-
թիւն հանդէպ շուարեցան եւ սկսան խորհիլ այն լուրջ վտանգներուն
միայ, որոնք վրնային ուռաջ պալ պատահական անդադունապահութենէ

մը կամ մատնութենէ մը, եւ այս՝ կազմակերպութեան նախաքայլերուն մէջ իսկ. ուստի հարկ դատեցին կազմակերպական աշխատանքները հետըզհետէ զանդաղեցնել եւ այս կերպով նուազեցնել անդամներուն թիւը: Ժամանակ չահելու համար որդեգրուած այս ընթացքը յաջողեցաւ եւ կարելի է ըսել թէ անդամակցողներէն շատերը մոռցան այսպիսի շարժումի մը դոյութիւնն իսկ: Այս կերպով, առանց վտանգաւոր պայթումի՝ մը անցաւ 1886-87-ի ձմեռը:

Զգե՛ք ուրեմն Մշոյ յիշատիսական կազմը իր այս կամաւոր քրնածութեան մէջ, ու դառնանք 1886-ին ծայր տուած այլապէս կարեւոր անցքերուն:

ՄՈՒՍԱ ՊԵՅԻ ԽՆԴՐՈՅՆ ԾԱԳՈՒՄԸ— Հռչակաւոր աւաղակաւետ Մուսա պէյի շահատակութիւններու մասին վերեւ խօսած էի Մշոյ 1885-ի անցուղարձերուն առթիւ: Այս շարագործը զինք քաջակերող վարկին եւ միւթեսարքֆիմ պաշտօնանկութենէն ետք, անպատիժ մնացած ըլլալով, սանձարձակ կը շարունակէր իր շահատակութիւնները, մասնաւորապէս Մշոյ դաշտի Զխուր կոչուած արեւելեան մասի հայ գիւղերուն դէմ: Արդէն Զխուրայ Խրենէր գիւղը իր միջնարեւոյն էր:

1886-ի աշնան իրիկուն մը, տեսչարան կը դառնայի ընթերլու համար, երբ դէպի Շէկ Աւետարան Կեկեղեցին բարձրացող սանդուխներուն վրայ հանդիպեցայ հայ քահանայի մը, որմէ տեղեկացայ թէ ինք Զխուրի գիւղերէն Արտօնքի քահանան էր՝ Տէր Դեմիտր անունով: Հարցուցի իր Մուշ գտնուելուն պատճառը. պատասխանեց թէ ինքը եւ Զխուրի չըջակայ գիւղերու (Վարդենիս, Մուշեղէն, Աւետ, Քրդագոմ, Արդաւանք եւլն.) զխաւորները միասին Մուշ եկած էին՝ առաջնորդարանի միջոցով կառավարութեան խնդրագիր մատուցանելու, որպէսզի Մուսա պէյը իրենց զաւառակիւն միւլտիք (կառավարիչ) նշանակուի: Երբ հարցուցի թէ ի՞նչպէս աւագակի մը դէմ փոխանակ բողոքելու՝ զայն վիւղեն իրենց գիւղերուն միւլտիք անուանել տալ, տէրտէրը անմիջապէս պատասխանեց. «Երբեք կրնանք ընել. այն ձեռքը զոր չես կրնար կտրել՝ համբուրէ ու ճակատող գլխը»: Այս խօսքէն զայլացած, ըսի իրեն. «Հայ Ժողովուրդին քաջած բոլոր ցաւերը քեզի պէս անարժան քահանաներու երեսն են», ու մեկնեցայ քովէն՝ երթալ ընթերիքս ընելու համար: Բարկութենէս պատառ մը հաց կոկորդէս շանցնելով, Փէսս դրի եւ ուղղուեցայ ազգային առաջնորդարան:

Հոն էին առաջնորդական փոխանորդ Յովհաննէս Վարդապետ (Առաքելոց վանքի բազմամեայ վանահայրը) եւ քարտուղար Գեղամ Տէր Կարապետեան: Անոնցմէ տեղեկացայ թէ իրօք յաջորդ օրը Զխուրի հայ գիւղացիները առաջնորդարան պիտի հաւաքուին՝ Մուսա պէյի միւլտիք նշանակուելուն խնդրագիրը ստորագրելու համար: Ներկաներուն թեւադրեցի թէ լատագոյն պիտի չըլլաւ ր փոխանակ այսպիսի խնդրագրի մը՝ բողոքագիր մը պատրաստելու Մուսա պէյի դէմ ու զայն ներկայացը-

նել կառավարութեան: Փոխանորդը կատարեալ ազգասէր պատուական ծերունի մըն էր ու Գեղամ արդէն մեզի զաշտփարակից, աշնպէս որ երկուքն ալ առանց ղժռարութեան ինծի համամիտ գանուեցան ու գիշերանց Գաղաքական Ժողովոյ անդամները զաղտնի նիստի մը հրաւիրեցին այս մասին խորհրդակցելու համար: Աշնպէս պատահած էր որ այն ժամանակի Գաղաքական Ժողովի բոլոր անդամները ազգասէր և ազատասէր անձնաւորութիւններ էին, այնպէս որ անոնք եւս, իրենց կարգին, կատարեալ համամտութիւն յայտնեցին եղած առաջարկին: Կը մընար գիւղացի երևելիները համոզել: Յաջորդ օրը երբ գիւղապետները և անոնց քահանաները հաւաքուեցան առաջնորդարան, Գաղաքական Ժողովոյ հրաւերով ևս ալ այնտեղ ներկայ դնուեցայ: Մեր համոզիչ խօսքերուն ումանք զիրար հաւանութիւն տուին և ոմանք ընդդիմացան: Ամէնէն բոռն ընդդիմութիւնը ցոյց տուողը եղաւ Արտօնքի Ռէս Միրօն, որ Եղած առաջարկը գտաւ վերջին ատիճան վտանգաւոր իրենց պիւղերուն համար, ու երբ քննարկեցինք համոզել, ինծի պատասխանեց. «Դուն խենդ մըն ես»: Բայց տեսնելով որ միւս բոլոր գիւղապետները ի վերջոյ ընդունեցին Եղած առաջարկը, Ռէս Միրօ յայտարարեց թէ այս պայմաններուն մէջ ոչ ինք կը ատորադրէ բողոքազերը և ոչ ալ անոր հակառակ կը շարժի. այլ վըր վերադառնայ իր գիւղը և այս գործին ամբողջ պատասխանատուութիւնը կը թողու միւսներուն վրայ: Վերջին անգամ իրեն ըսի. «Իէս Միրօ, դուն պիտի երթաս գիւղը հանգարտ նստիս ու բողոքողներուն շփանաս, բայց լաւ գիտցիր որ երբ Մուսա պէյ այս բողոքներուն դէմ վրէժինդրութեան գիւմէ, առաջին անգամ քու տանդ վրայ պիտի յարձակի»: Ռէս Միրօյի պատասխանը եղաւ վարձեալ. «Դուն խենդ ես», ու ժողովէն մեկնեցաւ:

Յաջորդ օրը բողոքագիրը միւս բոլոր գիւղապետներուն կողմէ ստորագրուած ներկայացուեցաւ կառավարութեան: Ճակատապրական քայլը առնուած էր: Երկար պիտի ըլլար պատմիլ այն յաջորդական անցքերը որ տեղի ունեցան այս բողոքին հետեւանքով: Առաջնորդարանին և տեղական կառավարութեան միջեւ յարաբերութիւնները ձգտեալ վիճակ մը ստացան: Բ. Դուռը, որուն հաղորդուած էին յիշեալ բողոքագիրը և անոր յաջորդած աւելի ծանր բողոքները տեղական հարստահարութեանց մասին, Բաղէշի վայրին միջոցաւ Մշոյ առաջնորդարանէն գրաւոր բացատրութիւն պահանջեց: Վալիին յիշատակադրին մէջ կ'ըսէր ի միջի ալլոց. «Հայերդ օսմանեան վարչութեան ներքեւ կը վայելէք այնպիսի կրօնական և քաղաքական առանձնաշնորհումներ, որոնք Ամբրիկայի ամէնէն ազատ նկատուած Միացեալ Նահանգներուն մէջ անգամ գոյութիւն չունին»: Ու կը պահանջուէին մանրամասն և փաստացի տեղեկութիւններ ակնարկուած հարստահարութիւններու մասին:

Այս պահանջքին բերմամբ առաջնորդարանը պէտք տեսաւ մի քանի ընդարձակ տեղեկագիրներ պատրաստելու, մի առ մի թուելով երկրին մէջ գործուած հարստահարութիւնները և հալածանքները: Այս

բոլոր տեղեկագիրներուն խմբագրութեան մէջ մաս ունենալէ զատ, անոնց տաճկերէնի թարգմանութիւնը ևս ինքս կատարեցի: Կառավարութիւնը առաջնորդական փոխանորդ Յովհաննէս Վարդապետէն վրէժ լուծելու համար, հարկ տեսաւ Առաքելոց վանքին մէջ խուզարկութիւն կատարել, և առաւ առթիւ ձիւն ձմեռով Յովհաննէս Վարդապետը ընդ հակողութեամբ Առաքելոց վանք փոխադրեց՝ իր ներկայութեան կատարելու համար խուզարկութիւնը: Աւելորդ է ըսել թէ մնասակար բան չգտնուեցաւ վանքին մէջ և այս խուզարկութիւնը պատճառ եղաւ որ առաջնորդական փոխանորդը նոր բողոքադիր մըն ալ խմբագրէ, - անոր թուրքերէնի թարգմանութիւնը ինծի վստահելով, - ու զայն շրկէ ուղղակի Բ. Դուռ:

Բողոքագրին պատճէնը բոս օրինի տեղական կառավարութեան հաղորդուելով, այս վերջինը Յովհաննէս Վարդապետէն ռացատրութիւն պահանջեց հետեւեալ լեզուն գործածելով. «Մենք յիշենք որ զուն միամիտ և բարի եկեղեցական մըն ևս իայց զուն Էտէքսիզ Բէաթիա * մը ունիս, որ իւր թուրքերէն չյիշնալէդ օգտուելով ալանդակ բաներ գրած և քննի ստորագրել տուած է: Դուն մէզի այդ Բէաթիային անունը տուր որ անոր արժանաւոր պատիժը տանք»: Առաջնորդական փոխանորդը կը պատասխանէ թէ իր Բէաթիային ով ըլլալը որեւէ նշանակութիւն չունի, քանի որ ինք ստորագրած է և ամբողջ գրուածին պատասխանատուութիւնը միայն իրեն կը պատկանի: Այս պատճառով կառավարութիւնը բնաւ չգիտցաւ թէ ով էր այդ բողոքագիրներուն թարգմանիչը, մանաւանդ որ վարժարանի թուրքերէն զասերը Կալանդուէին կառավարութեան մատահելի հայ կաթողիկոսատուի մը կողմէ և ոչ ոք տեղեակ էր որ դպրոցին տնօրէնը թրքերէն լեզուին հմուտ է:

Միւս կողմէ, Մուսա պէյի ղէմ բողոքները կը շարունակուէին Չխուրայ հայ գիւղացիներուն կողմէ և հետզհետէ աւելի սխտիմաթիք ձեւով ու անոր կողմէ կատարուած խժոժութիւններու կանոնաւոր և մանրամասն թուարկութեամբ: Բ. Դուռը, զոնէ առ երեսոյթ, չէր կրնար անտարբեր մնալ այս բողոքներուն հանդէպ: Հետեւաբար 1886-87-ի ձմեռն մէջ Կ. Պոլսէն Բաղէչի կուսակալութեան խիստ հրաման եկաւ Մուսա պէյը ողջ կամ մեռած ձերբակալելու: Մուլէն 300 զինուորներ ճամբայ հանուեցան զինք հետապնդելու համար, բայց ասոնք ուրիշ բան չըրին՝ բայց միայն դաշտի հայ գիւղերուն մէջ ցրուել և աշխտեղ առանց որեւէ գրական ձեռնարկի ապրիլի ի վնաս արդէն աղքատիկ հայ գիւղացիներուն. այնպէս որ գիւղերուն մէջ ո'չ միս մնաց, ո'չ հաւ և ոչ ալ հաց, ու զինուորները ի վերջոյ ձեռնունայն մերագործան Մուշ:

Իայց բողոքները կը շարունակուէին, հետզհետէ աւելի սուր կեր-

* Անկիւր գրագիր:

պով, ու Բ. Դուռը կը կրկնէր իր խիստ հրամանները Մուսա պէյի ձեռքակալման մասին. Կուսակալութիւնը եւ միւլքեսարքութիւնը երբ տեսան թէ հրամանները լուրջ եւ վճռական են ու անոնցմէ խուսափելու ճար չէ մնացած, այս անգամ ուղեցին եւ կրցան Մուսա պէյը ձերբակալել: Արդարեւ, միմիայն արդէն յիշուած Թալիպ էֆ.ին - որ Մուսա պէյի հետ խնամիական կապեր ունէր - առանձին, առանց որեւէ զինուորական ուժի աջակցութեան, հետապնդումի ելլելը բաւական եղաւ որ Մուսա պէյը բռնուէր եւ կառավարութեան յանձնուէր: Այսպէս, Մուսա պէյը բանտարկուեցաւ Մշոյ մէջ:

Բայց դեռ կատակերգութիւնը վերջացած չէր: Մշեցի հայեր կը հաւատէին թէ Մուսա պէյ պրիթէ ամէն պիշեր բանտէն կը հանուէր եւ Կ'առաջնորդուէր Մշոյ մէջ ունեցած իր տունը, զի այս աւազակապետը քաղաքին մէջ եւս տուն եւ բնասանիք ունէր: Մշեցի հայերու այս հաւատտումը անհաւատալի կը թուէր այս տողերը գրողին, որ չէր կրնար ըմբռնել թէ կառավարութիւն մը կրնար այսքան շնտաւան ընթացք մը ունենալ: Բայց հետագայ իրողութիւնը եկաւ ամէն բան յայտնարեւել: Մուսա պէյ՝ վարժուած բացօթեայ ազատ կեանքի եւ իր կալուածներուն մէջ իշխանավայել նիստ ու կացի, բնականաբար վը ձանձրանար նոյնիսկ ցերեկները բանտի չորա պատերուն մէջ մնալէն. ուստի իրիկուն մը, երբ ըստ սովորականին իր տունը տարուած էր, չուրջը կը հաւաքէ 30-ի մօտ իր հաւատարիմները եւ առտուան զէմ անոնց հետ մէկտեղ ձի հեծնելով առօք փառօք Մուշէն կը հեռանայ անձանթ ուղիովեամբ:

Մուսա պէյի այս փախուստը ազդանշանը եղաւ բողոքարկու հայերուն դէմ իր կողմէ վրէժխնդրական շարք մը անհաւատալի շահատակութեանց: Իր առաջին շահատակութիւնը կ'ըլլայ ստուարաթիւ զինեալ խումբով մը օր ցերեկով յարձակումը Վարդենիս գիւղին վրայ, ուր սակայն կատաղի կռիւ մը ետք, որուն հայ կիներն ալ մասնակցեցան, ետ կը մղուի՝ երկուստեք ծանր կորուստներէ ետք: Կառավարութիւնը երբ կը տեղեկանայ այս կռիւին, անմիջապէս զօրքով կը պաշարէ Վարդենիս գիւղը եւ անհնարին խտտութեամբ զինաթափ կ'ընէ հայ զինուորիկները: Զէնքի պահանջը այնչափ խիստ էր որ, գիւղացիներէն շատեր հալածանքէ եւ հետապնդումներէ ազատելու համար կ'երթային իրենց քիւրտ բարեկամներէն դրամով գէնք կը գնէին ու կը յանձնէին զինուորներուն:

Զանց ընելով ուրիշ զիւղերու վրայ ըրած յարձակումները, յիշենք հոս միայն անօրինակ խժդուութիւն մը: Մուսա պէյին դէմ բողոքարկուներու պարապլուրներէն մէկն էր Արդաանք գիւղի ռէս Օհանը, որ յաղթանդամ, թիկնեղ, տեսքով եւ նկարագրով ազնուական, արիափրտ անձ մըն էր: Մուսա պէյ Մշոյ եւ Բաղէչի միջեւ Կոտնի անուն քիւրտ գիւղի մը մէջ պատահմամբ կը հանդիպի իր այս հակառակորդին եւ հակառակ զինք հիւրընկալող քիւրտ տնեցիներու ընդդիմութեան ու

Թախանճանքին, անոր ձեռքերն ու ոտքերը կապել տալով, կը նետէ բողաւառ բուխերիկին մէջ ու դայն կ'ածխացնէ: Այս խժոժութեան լուրը Մուշ հասնելուն, առաջնորդարանին կողմէ եղած բողոքին վրայ, կառավարութիւնը ոստիկաններ եւ լսիչներ կը զրկէ եղելութիւնը ըստուգելու համար: Քննիչները վերադառնալով՝ թիւիները տեղեկագիր կու տան թէ կայծակ իջած ու ածխացուցած է զոհը: Այս ղէպերուն վրայ, աւելորդ է լսել թէ Մուշէն բողոքի հեռագիրները՝ ուղղուած Մեծ Եպարքոսին Է, մինչև իսկ ուղղակի սուլթանական պալատը, յարաճուն սաստկութեամբ իրարու կը յաջորդէին: Մայրաքաղաքին մէջ ալ մշեցիները վաղմակերպուելով տկան դիմումներ կատարել Բ. Դուռ եւ մինչև իրիկ խնդրագիրներ ներկայացնել Սուլթանին՝ սելամլըքի (բարեւտութիւն) պահանջ. եւ սակայն այս բոլորը անօգուտ անցան: Ինչպէս պիտի տեսնենք յետոյ, աւելի խուժով եւ աւելի զգայացունց ղէպերն ու հօրապոյն միջամտութիւններ պէտք էին օսմանեան կառավարութեան, քար անտարրերութիւնը շարժելու համար: Հոս վայրկեան մը թողունք Մուսսու պէյի օձիբը եւ դառնանք ուրիշ խնդիրներու:

ԽժժՈՒԹԵԱՆՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՄԸ ԵՒ ԱՆՈՐ ՀԵՐՔՈՒՄԸ— 1887-ին Մշոյ դաշտին մէջ տեղի ունեցող հարստահարութեանց մասին Ֆրանսերէն տեղեկագիր մը պատրաստեցի եւ Կ. Պոլիս կըրօրս զրկեցի՝ եւրոպական թերթի մը մէջ հրատարակուելու համար: Եղբայրս միջոց մը գտած էր դայն հասցնելու Վիեննայի «Բոքրեսպիոնտանս փուլիքիք» լրագրին, որ դայն հրատարակած էր: Բ. Դրան մամուլի գրասենեակը այդ գրութենէն ալլալած՝ անոր բովանդակութիւնը Բաղէշի կուսակալութեան հաղորդած էր: Տեղեկագրի թուականէն մօտ փք ամիս ետք, 87-88-ի ձմեռն՝ անոր հերքումը հրատարակուեցաւ Բաղէշի «Պիթլիս» պաշտօնաթերթին մէջ: Այն ժամանակի թրքական մեթոտներուն վրայ դադափար մը տալու համար ընթերցողին, հոս կը բացատրեմ թէ ինչ էր տեղեկագիրը եւ ի՞նչ էր պրտած հերքումը:

Տեղեկագիրը «Հարստահարութիւններ Հայաստանի մէջ» վերնագիրը կը կրէր եւ ի միջի այլոց կը պատմէր Մշոյ դաշտին մէջ հայերու խոտի դէպերուն հրկիզումը, Բաղէշի քիին տակ գտնուող Պուլխան գիւղին մէջ հայ ննջեցեալի մը դիակին գերեզմանէն հանուած եւ ծառէ մը կախուած ըլլալը եւ ուրիշ խժոժութիւններ: Հիմա բռնք հերքումը՝ համառօտուած:

«... Թերթին մէջ կարդացինք թղթակցութիւն մը գրուած Հայաստանէն: Քարտէսին վրայ շատ փնտռեցինք Հայաստան անունը, բայց չգտանք: Հայերը կրեմք որեւէ տեղ անկախութիւն չեն ունեցած կամ որեւէ տեղ հոծ ազգաբնակչութիւն մը՝ որ այդ տեղին Հայաստան յորջորջումը արդարացի էր: Հայերը կովկասեան տկար ժողովուրդ մըն էին. անոնք հալածուելով չըջակայ ժողովուրդներէն եւ ռուսերէն, ապաստանեցան օսմանեան կառավարութեան երկիրները, ուր աշխարհի որեւէ ուրիշ երկրի մէջ նման չտեսնուած ազատութիւն կը վայելէին:

եթէ Հայաստան ըսելով յօդուածագիրը Բաղէշի վիլայէթը կ'ուզէ հասկըցնել, - քանի որ պատմութեան դէպքերը իբր թէ այստեղուանքը պատահեր են, - այս վիլայէթին մէջ հայերը աննշան թիւ մը կը ներկայացնեն, ու թէ՛ թիւի, թէ՛ հարստութեան, թէ՛ իրենց կողմէ պետութեան վճարուած տուրքի եւ թէ՛ քաղաքակրթական մակարդակի տեսակէտէն՝ քիւրտերէն չատ վար կը մնան: Գալով հարստահարութեանց՝ անոնց բոլորովին չինծու ըլլալը ականերու է ու կ'ըսուի թէ խոտի դէզեր այրուել են: Ի սէր Աստուծոյ, քիչ մը իմաստ (անաչառութիւն), այս խտտաշունչ եղանակին, երբ դաշտին մէջ մարդահասակ ձիւն կայ եւ դիւղէ դիւզ երթեալն անդամ անկարելի է դարձած, դաշտին մէջ խոտի դէզեր դաշտինը եւ անոնց քիւրտերու կողմէ այրուիլը զրոյշն երեւակայութեան մէջ միայն կրնայ պայտթիւն ունենալ: (Իրերու թէ թղթակցութիւնը հերքումէն օր մը առաջ պրուած եւ հեռագրով հաղորդուած ըլլար եւրոպական թերթին... - Մ.Տ.։) Գալով մեռելի մը գերեզմանէն հանուելու առասպելին, դայն հերքելն իսկ ասկորդ է, ամբողջ վիլայէթի տոմարներուն մէջ փնտռեցինք եւ Պաշխան անունով գիւղ մը չգտանք:

Այս շնական հերքումը, թողունք հայերը, թո՛ւրքերն անգամ ապշեցուց, այն աստիճան որ 1888 Յուլիսին, երբ չուկային մէջ հանդիպեցայ հայերու նկատմամբ իր բարեկամութեամբ ծանօթ Քերիմ պէյին, - որ եղբայրն է նշանաւոր Պահրի փաշային եւ ազգական Մուսա պէյին, եւ իրմէ հրաժէտ առի մեկնումիս առթիւ, անիկա ձեռքէս բռնեց ու զիս իր տունը առաջնորդեց, եւ ինծի օղի մը հրամցնելէ ետք, բացառ երկաթապատ արկղիկ մը, անոր տակէն հանեց «Պիթիւս» պաշտօնաթերթի վերոյիշեալ հերքումը պարունակող համարը (հերքումին տեղի տուած յօդուածին հեղինակը ըլլալս բնականաբար չէր գիտեր), զայն ինծի յանձնեց եւ ըսաւ. «Դիմա՛, տե՛ս Կ. Պոլիս հայոց պատրիարքը եւ հայոց մեծամեծները ու անոնց ցոյց տուր այս թերթը, որպէսզի անոնք հասկնան թէ օսմանեան կառավարութիւնը ի՛նչպէս կը ներկայացնէ հայ ազգը եւ ի՛նչպէս կը վարուի անոր հետ»:

ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑԻ ՊԱՇՊԱՆՈՂԱԿԱՆ ԸՆԹԱՑՔԸ Մ'ՇՈՑ ՄԻՋՁ- 1887-ին Մուշ հասաւ Գարեգին Եպ. Սրուանձտեանց՝ ճարտնոյ առաջնորդութեան եւ Ս. Կարապետի վանահայրութեան կրկնակ պաշտօնով: Տրուած ըլլալով Գարեգին Եպ.ի վախճած մեծ համբաւը, Մշոյ ժողովուրդը մեծ յոյսերով տողորուեցաւ, կարծելով որ անոր ներկայութեամբ կացութիւնը պիտի բարւոքի, դժբախտաբար Գարեգին Եպ. բնաւ չարդարացուց իր վրայ դրուած յոյսերը. ընդհակառակը՝ իր բռնած ընթացքը կատարեալ յոստախարութիւն մը եղաւ: Ան հետեւեցաւ թրքասէր ըսուելու չափ հաշտարար ու քծնող քաղաքականութեան մը հանդէպ թուրք կառավարութեան, մինչդեռ այդպիսի քաղաքականութեան մը ժամը շատոնց անցած էր եւ օրուան պահանջն էր կորովի կեցուածք մը, որով միայն կարելի պիտի ըլլար թերեւս ամոքել

հետզհետեւ անհանդուրժելի դարձող կացութիւն մը :

Գարեգին Նպփոյն՝ միայն տկար դոնոնեցաւ կառավարութեան հանդէպ , այլ նոյնիսկ Վառլարութեան համակրութիւնը չահելու համար դադարեցնելով իրարեւրում մը ցոյց տուաւ զէպի Հայոց Միացեալ Ընկերութեանց վարժարանները , տաքնապալի չըջան մը կ'անցնէին : 1887-ի վարդապետին , երբ ըստ սովորութեան Հայաստանի և նոյնիսկ Կովկասի ամէն կողմերէն տասնեակ հազարաւոր ուխտաւորներ հասած էին Ս . Կարապետի իննակնեան վանքը , զաղանի լուր հասաւ թէ տասնի չափ զինեալ ռուսահայեր պիտի հասնէին աշտուղ ուխտաւորի դիմակին տակ՝ միշտ անձանթ նպատակով մը : Գարեգին Նպփոյն կրնար անշուշտ , ու թերեւս կրնար իրաւունք ալ ունենալ , այս եկուորները վերադարձնելու և երկիրը ենթադրուած մտանգէ մը զերծ պահելու համար հայրական միջոցներ ձեռք առնել անոնց նկատմամբ : Ինք այդպէս չըբաւ սակայն : Ինք անձամբ վանքին տարկեալը (մեծ դուռ) կեցաւ և կարգապահութեան համար աշտուղ պտուղ ուտիկաններուն մէկիկ մէկիկ ցոյց տուաւ այդ եկուորները , զանոնք զինաթափել տուաւ (այդ ժամանակ ուխտաւորներուն կարելի էր զէնք կրել) և անձամբ խուզարկեց անոնց գրպաններն ու անոնց քովէն գտաւ մէկ քանի սուլիչներ և զանոնք ցոյց տալով տախտիկաններուն , չնական ծիծաղով մը բացատրեց անոնց որ այս սուլիչները լեռնէ լեռ իրարու ձայն տալու պիտի ծառայէին : Այս կեղծ ուխտաւորները տաղավարի երեք օրերը Ս . Կարապետի մասաններէն մէկուն մէջ բանտարկեալ մնալէ ետք , յանձնուեցան տախտիկաններուն և բանտարկուեցան Մուշի մէջ : Թուրք կառավարութիւնը անոնց նկատմամբ նուազ խիստ գոնուեցաւ քան այն Նախկինպետը , որ հեղինակն էր «Թէ հայրենեակ պատկազիր» երգին ու Հաւով – հոտովի նման հայրենաշունչ երկերու , որոնց ամէն մէկ էջին վրայ կարիկ է կարգաւ «Համրո՛յր հողերուդ , համրո՛յր ջուրերուդ»ի նման նախադասութիւններ :

Յետոյ իմացանք որ այս Նախկինպետը Վանայ մէջ ալ երկդիմի քաղաքականութեան մը հետեւած էր՝ Պողոս Նպփոյն թեր կենալով ընդդէմ Խրիմեան Հայրիկի , որուն սակայն իրեն պաշտող ներկայացած էր միշտ Վանէն դուրս : Կառավարութիւնը թոյլ հարցաքննութենէ մը ետք , այս ձերբակալանքներէն թրքահայտաւորները ընդ հակողութեամբ իրենց զիւղերը զրկելով ազատ արձակեց . իսկ ռուսահայտաւորները ուղղեց զէպի ռուսական սահմանագլուխ : Անոնցմէ միայն մէկը , որ «Որսորդ» ծածկանունը կը կրէր և ճարպիկ խօսող ու գրող էր , - գուցէ և արկածախնդիր մը , - ինքզինք դաշտեցի ներկայացնելով կրցաւ ազատ արձակուիլ ու մեր պաշտպանութեան տակ ժամանակ մը Տարօնի մէջ կենալէ և Վան համբարդիլէ ետք , մեր նիւթական օժանդակութեամբ վերադարձաւ Կովկաս : Գարեգին Նպփոյն այս և նմանօրինակ քնթացքները շատ յոսի ապուրրութիւն թողուցին Մշոյ ամէնէն պահպանողական ազգայիններու վրայ իսկ և բնական էր որ այս վիթորկայոց չըջանին այսպիսի առաջնորդ մը չկարենար երկար ժամանակ պաշ-

տօնավարել այնտեղ, որով կարճ պաշտօնավարութենէ մը ետք անփառունակ կերպով մեկնեցաւ Մուշէն:

ՎԱՆԱՅ ՄԵՋ ՆՈՐ ԽՈՒՎՈՒԹԻՒՆՆԵՐ— Վանայ մէջ Ալէաթճեան Ս.ի մեկնումէն յետոյ կը շարունակէր տիրապետել խռովայոյց վիճակ մը: Փորթուպականի աշակերտները, ի զլուխ ունենալով Գարեգին Բաղէշեան, Աւետիսեան, Գուլապըզեան, Պէօղիկեան, Նաթանեան Միքայէլ, Զորայիսեան եւ ուրիշներ, տակաւին կը կազմակերպուէին, լսարաններ կը սարքէին, մինչ միւս կողմէ կառավարութիւնը իր խնամութիւնները կը բազմապատկէր: 1887-88-ի ձմեռը բաւական թուով ձերբակալութիւններ եւ բանտարկեալներու վրայ դարձուրելի խռտանգոմէնք տեղի ունեցան: Զերբակալեալներէն մին՝ Միքայէլ Նաթանեան, իբրեւ խռովարար Նիկոսէ աքսորուեցաւ: Այս բոլոր իրողութեանց մասին Մէոյ գաղտնի կազմակերպութիւնը կանոնաւոր տեղեկութիւններ կը ստանար ուսուցիչ Հայրապետ Ծանիկեանի՝ իր զաւակներէն ստացած նամակներով:

ՄՇՈՅ ՄԵՋ ԳԺՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵՒ ԿԱԹՈԼԻԿ ՀԱՅԵՐՈՒ ՄԻՋԵՒ— 1888 թուականին, Մէոյ հայկական ներքին կեանքին մէջ պատահեցան խիստ ցաւալի կարգ մը դէպքեր, որոնք խանգարեցին տեղւոյն հայ առաքելական եւ կաթոլիկ հասարակութեանց բարեօր-
րաբերութիւնները: Ծամճեան Եպ.ի իբրեւ յաջորդ Մուշ հասած էր Յովհաննէսեան Գերապայծառը: Մէոյ հայ կաթոլիկ երեւելիներէն մէկ մասը առաքելականներուն հետ սիրտը իւր համբաւի յարաբերութիւններ ունէին. բայց կային հայ կաթոլիկներ ալ, որոնք հեռու կը մնային առաքելականներէն: Պէտք է ըսել նաեւ, թէ Մէոյ հայ առաքելական-
ներուն տգէտ դասակարգը այս վերջիներէն նուազ մոլեռանդ եւ խնդրողական չէր: Դժբախտաբար Յովհաննէսեան Գերապայծառ չըջուպատ-
ւեցաւ մի քանի մոլեռանդ կաթոլիկներէ, որոնք ամէն ջանք ըրին զըր-
զըռութիւն առաջ բերելու երկու առաջնորդարաններուն միջեւ: Այս հանգամանքներու մէջ էր որ ծագեցաւ Զորոյ թաղի հայոց գերեզմա-
նատան խնդիրը: Այդ թաղի մէկ բարձրաւանդակին վրայ կը բարձրա-
նար հայոց Շէկ-Սեւտարան եկեղեցին՝ իրեն կից ծաղկոցով մը: Դի-
մացը կար Հ.Մ.Բ. Ներսէսեան վարժարանը, որուն առջեւ կը տարած-
ւէր հայոց գերեզմանատունը. իսկ անոր ետեւը եւ արեւմտեան կողմը
կային եկեղեցւոյ սեփականութիւնն եղող մշակութեամբ արտեր, որոնցմէ
ստացուած վարձքերը միակ եկամուտը կը կազմէին այդ աղքատիկ
ծաղկոցին: Գերեզմանատունը ընցուած ու խճողուած ըլլալով, եւ հայ
եկեղեցւոյ օրէնքը չթոյլատրելով փակուած գերեզմաններու կնիքը քա-
կել՝ անոնց մէջ նոր մեռելներ թաղելու համար, թաղական խորհուրդը
այդ արտերէն մէկ քանիւ յատկացուց գերեզմանատան ընդարձակման.
բայց ծաղկոցը իր եկամուտէն չզրկելու համար, որոշեց թաղին մէջ
հանգանակութիւն մը ընել եւ անոր արդիւնքով ուրիշ յարակից աւտ մը
գնել: Եւ որովհետեւ թաղին հայ կաթոլիկներն ալ նոյն գերեզմանատան

մէջ կը թաղէին իրենց մեռելները, անոնց ալ դիմուեցաւ հաղթանակութեան մատակցելու: Անոնք մերժեցին, ըսելով թէ հայ եկեղեցւոյ ու զպրողին համար դրամ չեն տար: Ասոր վրայ թաղին առաքելական հայերուն մէջ շարժում մը տկամ: Հայ կաթողիկոսներուն չթողելու որ այնուհետեւ իրենց մեռելները թաղեն ազգային պերեզմանատան մէջ: Իսկ կաթողիկ հայերը կը պնդէին թէ իրենք այդ իրաւունքը կը վայելէին սկիզբէն ի վեր:

Քանի մը անգամ կաթողիկոսներէն թաղման առթիւ վէճեր ծագեցան եւ թաղման արարողութիւնները ընդհատուեցան ու այս տողերը գրողին, որ երկու կողմերուն վրայ ալ որոշ ազդեցութիւն մը ունէր, միջնորդութեան շնորհիւ է որ թաղումը կատարուեցաւ: Ան երկու կողմին ալ կը թելադրէր որ փոխանակ աշայիսի հակաքրիստոնէական վէճեր յարուցանելու ամէն մէկ թաղումին, իւրաքանչիւր կողմը դիմէ իր առաջնորդարանը, որպէսզի երկու առաջնորդարանները բանակցելով խնդրոյն մասնաւոր լուծում մը գտնեն: Այս կերպով մէկ քանի անգամ կարելի եղաւ խռովութեանց առաջըր առնել. բայց ցաւալի էր որ ո՛չ երկու կողմերէն պատկան առաջնորդարաններուն դիմում եղաւ, եւ ո՛չ Առաջնորդներէն մէկը նախաձեռնութիւն ունեցաւ միւս Առաջնորդին հետ բանակցելու: Այս կերպով այս վտանգաւոր խնդիրը անլոյծ թողուեցաւ եւ երկու հասարակութիւններու լարուած վիճակը շարունակուեցաւ: Միւս կողմէ ժողովուրդին մէջ զրոյց կը շրջէր, թէ Յովհաննէսեան Գերապայծառ հակառակ արտայայտուած է Մուսա պէյի դէմ ձեռնարկուած բողոքներուն, ըսելով որ այդ դիմումները ազգին համար օգուտ մը չունենալէ դատ՝ մնաստակար էին. «Աւազակներ չառ կան. ի՞նչ կ'ըլլայ մէկին դէմ բողոքելով. եթէ մէկը մէջտեղէն վերնայ՝ անոր փոխարէն տասը երեւան կու գայ»: Ասիկա կարծիք մըն էր, որուն նման մտածողներ շատ կային այն ժամանակի հայ առաքելականներուն մէջ ալ:

Այսպէս թէ այնպէս, երկու հասարակութեանց մէջ ձգտեալ վիճակը երթալով կը շեշտուէր եւ Յովհաննէսեան Գերապայծառ չկրցաւ առաքելականներուն մէջ վայելել այն յարգանքն ու պատկառանքը, զորս անոնք ունեցած էին իր նախորդ Ճամհան Գերապայծառին հանդէպ: Ահա այս լարուածութեան երեսէն, 1888-ի Զատիկին՝ երկու Առաջնորդները իրարու միջիւ, շնորհաւորական այցելութիւն իսկ չփոխանակեցին - Յովհաննէսեան Գերապայծառ սպասելով որ առաքելական հայոց առաջնորդական փոխանորդը, - որ ծայրապոյն վարդապետ մըն էր, - նախ իրեն այցելէր՝ իբրեւ եպիսկոպոսի եւ տիտղոսաւոր Առաջնորդի. իսկ միւսը պնդելով որ ինքն էր նախապատիւ, նոյնիսկ յաշտ օսմանեան կառավարութեան, իբրեւ ազգին բացարձակ մեծամասնութեան հոգեւոր հովիւ, մինչ հայ կաթողիկոսները Մշոյ մէջ աննշան փոքրամասնութիւն մը կը ներկայացնէին: Հակառակ երկուստեք ցոյց տուած այս փոքրողութեանց, եւ հակառակ երկու կողմէն ծայրայեղնե-

րու եւ մոլեռանդներու կատարած տխուր դերին, այս տողերը գրողը եւ ուրիշ լայնամիտ հայեր ընաւ ձեռնթափ եղած չէին երկու կողմերուն միջեւ ընդհանուր հասկացողութիւն մը յառաջ բերելու իրենց յամառ ճիգերէն, երբ յիմարական եղեռնազորութիւն մը ամէն ինչ տակն ու վրայ դարձուց:

ՄԱՀԱՓՈՐՁ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ ԳԵՐԱՊԱՅԾԱՌԻ ԴԵՄ- Զատկի երեքշաբթի գիշերը, երեք կամ չորս յիմար «յեղափոխական»ներ, մօտակայ չէնքի մը տակ գտնուող սանդուղ մը օպտագործելով, կը բարձրանան հայ կաթողիկ առաջնորդարանին վից չէնքի մը տանիքը եւ անկէ մազլցելով կը մտնեն առաջնորդարանի պատուհանէն ներս եւ դաշոյններով կը յարձակին Յովհաննէսեան Գերապայծառին վրայ, երբ ան անկողնի մէջ էր, ու զայն տասներեք տեղէ կը վիրաւորեն: Գերապայծառը, որ հուժկու մէկն էր, կրցածին չափ կը դիմադրէ եւ ի վերջոյ «Սուրբ Աստուածածին» աղաղակելով կ'իյնայ իր անկողնին վրայ: Յարձակողները, Վարժելով որ Եպիսկոպոսը մեռած է ու լսելով վարի յարկէն վեր բարձրացող ծառաներուն յարուցած աղմուկը, իրենց մուտքին համար գործածած միջոցներով դուրս կը փախչին առաջնորդարանէն ու կ'անյայտանան: Յարձակողներէն մին՝ այն պահուն երբ Եպիսկոպոսին ձեռքէն բռնած՝ ուզած է անոր դաստակին իջեցնել իր վերջին դաշոյնի հարուածը, Եպիսկոպոսը իր ձեռքը ետ քաշելով՝ հարուածը կ'իջնէ յարձակողին դաստակին վրայ ու կը կտրէ բազկերակը: Թէեւ փախուստի ժամանակ այս վերջինը դաստակը թաչկինակով կը կապէ, բայց դարձեալ արիւնը Վաթիկ-կաթիկ կը թափթիփ փախչողներուն ամբողջ ճանապարհին վրայ, մինչեւ անոնց հանդիպած բոլոր հանգրուանները: Արշալոյսին, հակառակ գիշերը տեղացող թեթեւ անձրեւին, որ չէր կրցած արեան հետքերը անհետացնել, ոստիկանութիւնը հետեւելով այդ արեան հետքերուն՝ որոնց չէին անդարդարձած ոճրագործները՝ ամենայն դիւրութեամբ կը գտնէ անոնց տունները եւ չորս կասկածելիներու հետ կը ձերբակալէ նաեւ վիրաւորեալը: Դալով Գերապայծառին, անոր ստացած վէրքերը բարւարախտաբար ծանր չէին Բւ անոնց կապուելէն ետք, յաջորդ առաւօտ իսկ, իր Եպիսկոպոսական աթոռին վերադարձած՝ կ'ընդունէր իրեն ցաւակցութեան եկող բազմաթիւ հիւրերը եւ պաշտօնեաները: Ո՞վ էին այս ոճրափորձը երկնող ու զործադրող անձերը եւ ի՞նչ շարժառիթներէ առաջնորդուած էին:

Ասոնցմէ մին, որ թեւէն վիրաւորուած էր, այս գրողին տնօրինութեան տակ գտնուող Միացեալի Ներսիսեան վարժարանի եւ Ազգանուէր Հայուհեաց աղջկանց վարժարանի ուսուցիչներէն՝ ուրիշ առթիւ անուան արդէն յիշուած հաճրնցի Գէորգ Էթմէքեանն էր. միւսները՝ կարնեցի Ալարէկ (1880-ին Կարնոյ մէջ երևան եկած յեղափոխական մարմնի անդամներէն, որ այդ թուականէն ի վեր Մուշ սպաստանած եւ արտեղ քնակութիւն հաստատած էր), Եորդանճի Մարտիրոս եւ ուրիշ

մը, որուն անունը չէր ողորթինէս վերլուծած է: Ո՛ր միայն Գէորգ էթմէքճեանը, այլև անունը տրուած միաս երկուքն ալ անձամբ կը ճանչնայի: Գալով իրենց ոճրափորձին շարժառիթներուն, երկու քոյր հասարակութեանց յարարերութեանց լարուած վիճակին մասին վերոգրուեալ նկարագրութիւնս կարգացողը պիտի տարտի մտածելու որ ասոնք այդ վիճակէն ազդուած մոլեռանդներ էին: Իրողութիւնը սակայն, զոր ստուգելու ամէն միջոց ունեցած եմ, բուլբուլին տարբեր էր: Շարժառիթը միայն եւ միայն սխալ հասկցուած, հիւանդոտ եւ յախուռն, ամէն միջոց ներքին համարող «յեղափոխականութիւն»ն էր:

Այս շուրջ, եւ փերես իրենց մի քանի համախոհներն ալ, 1886-ին անդամակցած էին Մշոյ այն յեղափոխական անդրախիկ մարմնին, որուն կազմութեան եւ անոր մեր կողմէ քննադատեան մէջ թողուելուն պատճառներուն վրայ վերը արդէն խօսուեցաւ: Ասոնք՝ զժգոհ կազմակերպութեան նախաձեռնողներուն ըստ երևոյթին բացարձակ անգործութենէն, իրենց մէջ առանձին գործօն խումբ մը վը կազմեն եւ իրենց խորհրդակցութիւններն ու նպատակները գաղտնի կը պահեն Հայրապետ Ղանիկեանի, Գեղամ Տ. Կարապետեանի եւ այս տողերը գրողին նման «պահպանողական»ներէ: Անոնք կ'ուզեն գործել, չեմ գիտեր թէ ի՞նչ կերպով: Միայն այսչափի պիտեմ, որ ինծի ծանօթ երեքն ալ բախտախնդիրներ վամ խաչագողներ չէին, այլ՝ տաքգլուխ, անխորհուրդ եւ անհամբեր երիտասարդներ: Բայց գործելու համար՝ «փող էր հարկաւոր»: Այդ փողը ուրիշ՞ ճարել:

Ճամբեան Գերապայծառը հոյակապ առաջնորդարան մը կառուցած էր, իսկ Յովհաննէսեան Գերապայծառ կկեղեցի մը չինկու ձեռնարկած էր. հետեւաբար ան իր առաջնորդարանին մէջ առատ դրամ պէտք է ունենար. պէտք էր այդ դրամը ձեռք անցնել եւ յատկացնել «սուրբ գործին»: Եթէ նպիսկոպոսը չարթննար եւ եթէ անոր «գանձին» տեղը գտնէին, առիթ քան հաւանական է որ առանց անոր մադին իսկ դիպչելու, դրամը առնէին ու հեռանային: Զինուած էին ո՛չ թէ նպիսկոպոսը սպաննելու զիտաւորութեամբ, այլ որեւէ անակնկալի մը առջեւ իրենց ապահովութեան համար: Բայց երբ նպիսկոպոսը արթնցաւ եւ հաւանօրէն զիրենք ճանչցաւ, - զի մասնաւորապէս Գէորգ էթմէքճեան նպիսկոպոսն լաւ ծանօթ էր եւ դեռ երկու օր առաջ Զատիկի շնորհաւայտութեան առթիւ՝ ամենայն տկճամբով ձեռքն էր համբուրած, - պէտք կը տեսնէն զայն սպաննել՝ իրենց գաղտնիքը երեսն չելլելու համար:

Նոյն առաւօտուն կանուխ, վարժարանին տնտեսը զիս քունէս արթնցնելով ինծի պատմած էր զէպքը եւ քաղաքին իրարանցումը, որով ես ալ բազմաթիւ ապշահար ուրիշներու հետ՝ անձամբ տեսայ ոստիկաններու՝ միշտ արեան հեաքերէ առաջնորդուած՝ Չորոյ թաղի սանգուսներէն բարձրանալը եւ ուղղուելը զէպի ուսուցիչ Գէորգի բնակարանը, իրենց գլուխն ունենալով միւլագէմ (տեղակալ) Սատրք աղան,

որ քիչ ետք հուժկու ձայնով «սուլտում, սուլտում» * աղաղակելով Գէորգի սենեակին պատուհանէն դուրս կը նետէր արեւնաթաթախ վերարկու մը, որուն Գէորգինը ըլլալը հեռուէն տեսայ ու ճանչցայ: Ահաւոր դաղտնիքը այս կերպով պարզուած էր աչքիս, եւ ինծի համար դժուար չէր գուշակել այս յիմար եղեռնագործութեան բոլոր սարսափելի հետեւանքները:

Մինչ ոստիկանները կ'երթային Ս. Մարիանէ թաղը՝ աղջկանց վարժարանէն Գէորգը ձերբակալելու, ես պաղարիւնս պահելով հանդարտ քայլերով վերադարձայ Ներսէսեան վարժարանը, որուն մէջ անմիջական խուզարկութիւն մը դժուար չէր նախատեսել: Կացուցիւնս սոսկալի էր: Մէկ կողմէ կատարուած ոճիրը ամբողջ հողութիւն կը դատաւարտէի, միւս կողմէ արդէն կառավարութեան կասկածի ենթարկուած եւ երկիցս փակուած հազիւ աղատած Ներսէսեան վարժարանը այս անգամ ստոյլ փակումի մտանդին տակ կը գտնուէր, ու ամբողջ Միացեալ Ընկերութեանց դործը կրնար մտանդուիլ. թո՛ղ իմ եւ ինծի պէս դործին անտեղեակ պաշտօնակիցներուս անձին սպառնացող վրտանդը:

Դպրոցին մէջ կասկած հրաւիրելու բնոյթ ունեցող դասադիրերը եւ այլ առարկաները մէջտեղէն վերցուցած էի, երբ կառավարական դատական եւ ոստիկանական պաշտօնականներ հասան ու նախքան խուզարկութեան սկսիլը, ինծի հարցուցին թէ անտեղ գտնուող գոյքերուն եւ առարկաներուն պատասխանատու անձը ո՞վ է: Պատասխանեցի թէ ես եմ: Մտնարկելիս խուզարկութիւն մը կատարելցին եւ վնասակար րան մը չգտան: Տեսչարանին մէջ, առանձին առանձին դաստուրուած ու պատերէն կախուած էին դանազան քաղաքներու եւ գիւղերու Միացեալ վարժարաններուն ընթացիկ թղթակցութիւնները: Անոնց չզպան, եւ արդէն անոնց մէջ կասկածելի րան չկար: Տեսչարանին մէջ անկիւնը կար փոքրիկ պատուհան (այսինքն՝ պատին մէջ դարան) մը, որուն դուռը կղպանք չուէր: Զայն բանալէ առաջ, ինծի հարցուցին թէ մէջը ի՞նչ կայ: Ըսի թէ փոքրիկ վեցհարուածեան մը կայ (որ թէ եւ 1886-ին Մշոյ մէջ ձերբակալուած Մարկոս Նաթանեանին կը պատկանէր, բայց ինդիբր աւելի չկնճռոտելու համար՝ յայտարարեցի թէ իմս էր): Երբ դարանը բացին, անտեղ գտան վեցհարուածեանին պատեանը, իսկ մեցհարուածեանը չկար: Բարեբախտաբար ինծի համար, Գէորգին տունը խուզարկած Սատրք աղան ըսաւ. «Պու քապ՝ Գէորգուն իբրամէթ կեանքն տա պոյտուզումուդ ոճվովէրին քապը տըր» **։ Այս խօսքերէն կրողահեցի թէ Գէորգը, որ՝ ինչպէս միւս բոլոր ուսուցիչները՝ ազատ

* «Գտսյ, գտայ»:

** «Այս պատեանը Գէորգին բնակած վայրը գտնուած ատրճանակին պատեանն է»:

մուտք ունէր տեսչարանին մէջ, վեցհարուածեանը ինք վերցուցած էր աշխտեղէն: Ուստի երբ ինծի հարցուցին թէ ո՞ւր է վեցհարուածեանը, «Գողցուած է» պատասխանեցի: «Ն՞որ եւ որո՞ւ կողմէ գողցուած է» հարցուցին: Պատասխանեցի. «Նթէ ե՞րբ եւ որո՞ւ կողմէ վերցուած ըլլալը պիտանայի, գողցուած է պիտի չըսէի»: Կարծես այս վեցհարուածեանի փորձանքը բաւական չէր, նոյն դարակին մէջ վանեցի ուսուցիչ Հայրապետ Ճանիկեան դրած էր Վանէն իր աղաներէն ստացած եօթը նամակները, որոնց պահարաններուն վրայ թրքերէն գրուած էր. «Ո՞րտաւ փանլը խոճա...» հասցէն:

Այն ժամանակ Վան, Վանլը լառերը թուրքերու աչքին՝ յեղափոխութեան եւ խռովութեան հոմանիշ էին: Ուստի, կասկածելով այդ նամակներու ըզրանդակութեան, զանոնք դրաւ իւր ուղեցիին: Գիտէի թէ Ճանիկեանի ուղղուած չափ մը նամակներու մէջ Վանայ գէպերու մասին տեղեկութիւններ կային, մանաւանդ որ վերջին ձմրան Վանայ մէջ արտաքուրդ գէպեր տեղի ունեցած էին: «Ասոնք, ըսի, իբրեւ ուսուցչի մը իր տունէն ստացած նամակները՝ անկարելւոր բաներ են. եթէ կասկած ունիք՝ տարէք ու քննեցէք վարժարանին վերաբերող բոլոր թղթապատկերները»: «Ո՛չ, յայտնի է թէ անոնք պարզ դպրոցական թղթապատկերներ են, որ տղիներէ կերպով մէկտեղ գրուած են. իսկ ասոնք Վանէն եկած ու պահարանի մէջ պահուած նամակներ են» ըսին ու նամակները գրաւեցին, ինչպէս գրուած էին վեցհարուածեանին պատեանը:

Այնուհետեւ, զիս խիստ քաղաքաւարօրէն հրաւիրեցին որ իրենց ընկերանամ մինչեւ հայ-կաթոլիկ առաջնորդարանը, ուր կ'երթային հարցաքննելու Յովհաննէսեան Գերապայծառը: Երբ առաջնորդարանին դուռը հասանք, հոն խռնուած էր հայ կաթոլիկներու մեծ բազմութիւն մը: Ուսուցիչ Գէորգի ինչ պարագաներու տակ ձերբակալուած ըլլալը կայծակի արագութեամբ տարածուած լրջութիւն, բազմութեան մէջէն ուսանք ինծի պէմ լեզուադարձութիւն ըրին, եւ անոնցմէ մէկը թրքերէն լեզուով պոռաց. «Ասոնց նայեցէք, ազգին գաւազները կրթելու ելած են ու իրենք ոճիւր կը գործեն»: Այս պոռացողը Պօղոս իմաշիկեանն էր, ինքն ալ Վենետիկի աշակերտ, որ խախտ հայ-կաթոլիկներու յետադիմականներու սլաքապուստներէն մին դարձած էր եւ իբր այն ինծի ըսկիցէն ի վեր հակառակ էր: «Լռէ՛, անսիտան, չգիտցած բաներուդ վերայ վճիռ մի՛ արձակեր» պոռացի իր երեսին: Կաթոլիկ երեւելիներէն ոմանք ինծի ըսին. «Կարելորութիւն մի՛ տար անոր ըսածներուն. մենք քեզ կը ճանչնանք ու գիտենք որ դուք ասանկ գործի մը մէջ մասնակցութիւն չես կրնար ունենալ»:

Երբ վեր ելանք, թուրք պաշտօնատարները ըստ առաջնոյն քաղաքաւարօրէն ինձմէ խնդրեցին որ նախասենեակին մէջ քիչ մը սպասեմ, մինչեւ որ Գերապայծառէն ասանձին իփատէ (վկայութիւն) առնեն: Ժամանակ մը հտը զիս ներս հրաւիրեցին: Գերապայծառը նստած էր

միայն քիչ մը տժգունած : Ահր առնելով որպիսութիւնը հարցուցի եւ ցաւակցութիւններս յայտնեցի : Ընդհանուր դատախազը Գերապայծառին հարցուց թէ ինձմէ կասկած ունի՞ր : Գերապայծառը պատասխանեց թէ զիս չատլաւ կը ճանչնայ ու րացարձութեամբ կասկած չունի : Պաշտօնատարները երբ կ'առավարչատուն դարձան, դարձաւ ինձմէ խնդրեցին իրենց ընկերանալ, որպէսզի իմ ալ իֆաւէտ առնէին : Կառավարչատան մէջ զիս հիւրասրահը դրին, առանց տրտաքին յարաբերութենէ զրկելու : Քիչ ետք բերուեցաւ նաեւ Հայրապետ Ճանիկեան վանեցի ուսուցիչը, որ պարզ հարցաքննութենէ յետոյ ազատ թողուեցաւ :

Բուն ձերբակալները՝ ուսուցիչ Գէորգ, Աղաբէկ, Եորդանճի Մարտիրոս, ուրիշ մը եւ Աղաբէկիին նորայրը, անմիջապէս չզրթայակալած էին, բացի վերջինէն՝ որ անչափահաս էր : Ամբողջ օրը դանոնք կրկին ու կրկին հարցաքննութեան ենթարկեցին : Անոնք ամէն բան խոստովանած էին, ինչպէս նաեւ յայտնած էին իմ եւ Ճանիկեանի իրենց ուրարքին որեւէ մասնակցութիւն չունենալը : Զիս մէկ անգամ միայն հանեցին հարցաքննիչ ատեանին տոջէ : Իրենց հարցումներուն ի պատասխան՝ ըսի թէ ձերբակալները բոլորն ալ կը ճանչնայի, բայց տեղեկութիւն չունէի անոնց այս արարքէն, որուն շարժառիթն ալ չէի զիտել : Թէ Գէորգի՞ դպրոցին մէջ ունեցած վարքին համար միայն պատասխանատու էի ու զոհ էի թէ՛ իր վարքէն եւ թէ իր պաշտօնավարութենէն, իսկ դպրոցէն դուրս իր կեանքը զիս չէր շահադրուեց : Թէ իր եւ միւս ամբաստանեալներուն երբեմնակի հանդիպումները եւ միշտ վերադրած էի անձնական բարեկամութեան եւ թէ Գէորգը որեւէ թշնամական արտայայտութիւն չէր ունեցած իմ ներկայութեան Գերապայծառին հանդէպ, որուն կ'այցելէի ալ՝ ըլլար ինձի հետ, ըլլար առանձին :

Վեցհարուածեանի խնդրին համար ալ տեսչաբանին մէջ տուած պատասխաններս կրկնեցի : Արդէն Գէորգ խոստովանած էր որ վեցհարուածեանը «պատուահան»էն վերցուցած էր առանց իմ գիտութեան :

Երեկոյեան դէմ, չորս ամբաստանեալները մէկիկ մէկիկ, չզրթայակալ եւ ոստիկաններէ չըջապատուած՝ կեղծանական բանտը փոխադրեցին. իսկ Աղաբէկի անչափահաս եղբայրը ոստիկաններու հսկողութեամբ տարին իր մօրը յանձնեցին : Իսկ զիս փախի տալիքէսին (ոստիկանատուն) կանչելով, «Ազատ ես, բայց երաշխաւոր մը պիտի տաս» ըսին : Հոն պատահմամբ ներկայ գտնուող հայ երեւելի մը երաշխաւոր տուի ու դուրս ելայ : Դուրսը խումբ-խումբ հաբեր անձկութեամբ իմ մասին յորի կը սպասէին եւ ամէն կողմէ վրաս թափեցան՝ ազատ արձակման համար իրենց խնդակցութիւնը յայտնելով :

Այսպէս հասայ տեսչաբան ու հոն դտայ Հայրապետ Ճանիկեանը, որ իր բռնուած նամակներուն առթիւ չափազանց ընկճուած եւ մտահոգ էր : Պատահ մը հաց չկրցաւ բերանը դնել, մարդը պարզապէս կուլար ու կը հեծկտար : «Ընտանիքովս ու զաւակներովս կորսուած եմ»

կ'ըսէր: Ես նուազ մտահոյ չէի, բայց՝ աւելի պաղարին: Վեցհար-
ւածիւանի փորձանքէն աղատած էինք շնորհիւ Գէորգի խոստովանու-
թեան, բայց կը մնար ինչիւրը այս նամակներուն, զորոնք անպատճառ
թարգմանել պիտի տային ու թարգմանիչը պիտի ըլլար ինծի հակա-
ռակույդ վերոյիշեալ Պօղոս Խաչիկեանը: Ուստի ամէն զնով պէտք էր
աղատել այդ նամակները: Նախընթաց մը կար. - Զրիկի Յովհաննէս
վարժապետի նամակներուն ձերբադատումը Սարբեան էֆենտիի ձեռք
առած միջոցներով: Դիմեցինք նոյն միջոցներուն. կանչեցինք միեւնոյն
Նալպանտեան Պօղոս աղան, որ այս անգամ Խաչիկի անդամ Ֆէթհուլ-
լահ էֆենտիի հետ կաշառեց նաեւ, ընդհանուր դատախազ Տունիչ էֆեն-
տին, - Երկուքն ալ իր օղիի ընկերները, - Եւ կաշառքը կէս առ կէս ես
Եւ Զանկիեանը վճարելով՝ Դ փոխադարձ նամակները կնքուած պահա-
րանին մէջէն հանուեցան ու մեզի վերադարձուեցան, անոնց տեղ դըր-
ւելով դարձեալ Վանէն եկած ուրիշ Դ պարզ ընտանեկան նամակներ: Այս
կերպով մենք ու մեզի հետ Միացեալ Ընկերութիւնք աղատած էինք
կոսկածելի ըլլալէ եւ իրապէս մէկ քանի անհատներու գործը եղող այս
յիմարտկան ոճրափորձը կ'ազատէր ազգային լայնածաւալ դատադրու-
թեան մը Երեւոյթը ստանալու փոխուէն:

Գալով Գէորգի եւ իր ընկերակիցներուն, բնական էր որ ուրա-
նային իրենց բո'ւն «յեղափոխական» դրդապատճառը: Միւս կողմէ,
անշուշտ պիտի չուզէին ինքզինքնին հասարակ գողերու մակարդակին
իջեցնել - եւ արդէն ոչ ոք պիտի հաւատար գործին այդ մեկնաբանու-
թեան: Ուստի անոնք նախընտեցին զործին սիրային նախանձի եւ
անձնական վրէժխնդրութեան բնոյթ տալ: Գէորգ էթմէքեան, որ ա-
ռաջին հարցաքննութեան ոճրափորձի իսկական պատճառներուն մասին
լուսթիւն պահած էր, բաւականանալով ըսել թէ «նեքին անձնական
անհամաձայնութիւն մը» մղած էր զինք այդ գործը կազմակերպելու,
յաջորդ հարցաքննութիւններուն մէջ յայտարարեց որ ինք սիրահարած
էր աղջկանց վարժարանի վարժուհի Օր. Եւփիմէ Հովիւեանին, - որ ի-
րօք զեղանի աղջիկ մըն էր, - բայց տեսած էր որ Գեւրգայծառը աչք
տնկած է այդ օրիորդին եւ զայն գլխէ հանելու հետամուտ է, ուստի ո-
րոշած էր անկէ վրէժ լուծել, «ու կը ցաւէր որ ան ողջ մնացած է», իսկ
իր ընկերներուն մոլեռանդութիւնը գրգռելով զանոնք իր ետեւէն քաշած
էր:

Ասիկա բացարձակ յերիւրածոյ պատմութիւն մըն էր: Յովհան-
նէսեան Եպիսկոպոս անբասիր եւ օրինակելի եկեղեցական մըն էր:
Բայց տրուած ըլլալով որ հարցաքննութեան ժամանակ օրիորդին բա-
ցարձակ հերքումը անբաւական էր ամէն կասկած փարատելու (զի իր
պատիւը չօջայող այս խնդիրը Եթէ իրական եղած ըլլար, բնական էր
որ ան պիտի ուրանար), միւս կողմէ տրուած ըլլալով որ հարցաքն-
նիչները այսպիսի ամբաստանութեան մը առթիւ պիտի չհամարձակէին
բարձրաստիճան եկեղեցական մը հարցուփորձի ենթարկել, թուրք դա-

տաւորները՝ իրենց յայտնի մտայնութեան եւ վաւաչոտ նկարագրին բերմամբ՝ ճշմարտանման նկատեցին Գէորգին այս սուտ վերագրումը եւ զայն նկատեցին իբրեւ մեղմացուցիչ դէպք յանցանաց :

Միւս կողմէ, այս մահափորձէն յետոյ երկու հայ համայնքներու միջեւ պատահած անախորժ դէպքերը թուրք պատաստներու մըտքին մէջ յառաջ բերին արն համոզումը, թէ մեղսակիցները իրենց մոլեռանդութեամբ միայն Գէորգին զրկութեան զօժը դարձած էին : Ուրիշ պարագայ մըն ալ կար : Մշոյ մէջ առաքելական հայերը թէ՛ իրենց դիրքով եւ թէ՛ իրենց թիւով աւելի ազդեցիկ էին յաշս տեղացի թուրքերուն, որոնց ազդեցիկ դասակարգին հետ ունէին բարեկամական եւ նոյնիսկ քաղաքական կապեր, ինչպէս վերը տեսանք : Այս բոլոր պարագաները նպաստելով, - մանաւանդ որ ուրիշ յայտնի զրդապատճառ չկար, - արդէպքը նկատուեցաւ հասարակ պատահար մը եւ 1888-ի աշիւն Գէորգ պատապարտուեցաւ երեք տարուան բանտարկութեան : 1891-ին, երբ Գէորգի բանտարկութեան ժամանակը զրեթէ լրացած էր ու քիչ օրէն ազատ պիտի արձակուէր, բանտին մէջ մեռաւ ան՝ իր տկար եւ վատառողջ կազմով չկրնալով տոկալ լանտի զրկանքներուն :

Վերը ակնարկեցինք Գերայայժառի մահափորձէն ետք երկու համայնքներուն միջեւ պատահած անախորժ դէպքերուն : Թաղերու մէջ, առաքելական եւ կաթողիկէ ազգայնոց միջեւ անպակաս էին կոխներ, իրարու դաւանանքին դէմ նախատինքներ եւ հայհոյանքներ : Առաւօտ մըն ալ տեսնուեցաւ որ հայոց Ս. Մարիանէ թաղի եկեղեցւոյ դուռը աղտեղութեամբ ծեփուած էր. բան մը՝ որ աւելի մեծ զրդուութիւն յառաջ բերաւ : Հայ կաթողիկէ մը, որուն անունը չեմ յիշեր, այս դէպքին առթիւ ամբաստանուելով՝ ձերբակալուեցաւ եւ մէկ քանի ամսուան բանտարկութեան դատապարտուեցաւ : Գերեղմանատան խնդրը, որ սկիզբը միայն Զորոյ թաղին մէջ պատահած էր, միւս թաղերուն մէջ ալ տարածուեցաւ :

ՏՈՂԵՐՈՒՄ ՀԵՂԻՆԱԿԻՆ ԴԵՄ ԿԱՍԿԱԾՆԵՐ ԵՒ ԴԱՒԱՒՐՈՒԹԻՒՆ ՄԸ- Այս հանգամանքներու մէջ իմ դիրքս ալ շատ փափկացած եւ դժուարացած էր : Գտնուելով երկու համայնքներու բաժանման կէտին ճիշդ մէջտեղը, - դաւանանքով՝ կաթողիկէ, պաշտօնով՝ առաքելական վարժարաններու տեսուչ, զաղափարով՝ երկու համայնքներու համերաշխութեան ջատագով, - երկու կողմի մոլեռանդ պատակարարութիւնը աչքին հաւասարապէս կասկածելի զարձած էի : Կաթողիկէները հաշտ աչքով չէին դիտեր ազգային առաջնորդարանի եւ առաքելական երեւելիներու հետ սերտ յարաբերութիւններս, նոյնպէս՝ մոլեռանդ առաքելականներու մէջէն ոմանք տեսնելով որ կը շարունակէի կաթողիկէ եկեղեցին յաճախել եւ կաթողիկէ երեւելիներուն ու նոյնիսկ Յովհաննէսեան Գերայայժառին հետ յարաբերութիւններ ունենալ, կը կասկածէին իմ ազգասիրական զգացումներուս վրայ : Մինչեւ անգամ դտնուեցան չորս հայեր - որոնցմէ մին՝ Ներսէսեան վարժարանի իմ պաշտօնավարութե-

նէս առաջ չըջանաւարտ եղած, - իմ սաներս բառին բուն նշանակութեամբ զիս կը պաշտէին, - որոնք Ս. Մարինէ եկեղեցւոյ մէջ գաղտնի հաւաքուելով՝ Աւետարանի վրայ ուխտ ըրած էին զիս մէջտեղէն վերցնել, վառօդով օդը հանելով ներսէսեան վարժարանի տեսչարանը, ուր կը բնակէի այդ ժամանակ:

Դաւադիրներէն մին, խղճահարուելով որ մի գուցէ սխալ դատողութենէ առաջնորդուած են, իր ծանօթներու շրջանակին մէջ գաղտնի քննութիւն մը ընելով եւ բացարձակ համոզում՝ դոյացնելով իմ ուղիղ ընթացքիս մասին, եկաւ յայտնեց ինծի ամէն բան: Միեւնոյն օրուան մէջ եւ միևնոյն ժամուն, չորս դաւադիրները առանձին առանձին տեսչարան հրաւիրեցի մասնաւոր տեսակցութեան մը համար: Ձորսն ալ եկան տ շատ դարձացան զիրար հոն ներկայ գտնելով: Այնտեղ իրենց պատմեցի թէ ամէն բան տեղն է տեղօք իմացած եմ. ըսի թէ կրնայի եւ իրաւունք ալ ունէի չորսն ալ ձերբակալել տալ իմ անձիս պաշտպանութեան համար. բացատրեցի իրենց թէ ինչ սխալ ուղղութեան վրայ կը գտնուին, ու խրատեցի զիրենք: Յետոյ աւելցուցի. «Ըսելիքներս վերջացան. ես որեւէ պարագայի մէջ ձեզի դէմ կառավարութեան պիտի չըզիմեմ, տեսչարանէն ալ պիտի չհեռանամ. հիմա գացէ՛ք ու ազատ էք գործադրելու ինչ որ ձեր խիղճը ձեզի կը թելադրէ: Ձորսը միասին, կարծես մէկ զսպանակ շարժուած, ոտքի ելան, ինձմէ ներողութիւն խնդրեցին, ձեռքս համբուրեցին եւ ամօթաւոր մեկնեցան:

Մանրադէպ (անկթոտ) մը՝ հակառակ այս մասնակի կասկածներուն, Լրկու քոյր համայնքներու գիտակից դասակարգին մէջ կը շարունակէի վայելել մեծ վստահութիւն եւ համակրութիւն: Յոյց տալու համար թէ, ի մասնաւոր իմ քնակած Ձորոյ թաղին մէջ, ինչ աստիճան համակրութեան արժանացած էի, հոս կը պատեմ մանրադէպ մը, որ տեղի ունեցաւ այս վիժած դաւադրութենէն քիչ ետք, եւ որ միանգամայն յոյս կը սփռէ Մշոյ ռամիկ ժողովուրդին դէպի թուրքերը տածած զգացումներուն վրայ:

Գիշեր մը, Ներսէսեան վարժարանի տեսչարանին մէջ կը քնանայի ու վարժարանին մէջ ուրիշ մարդ չկար: Բակին մէջ չընկ մը զիս քունէն արթնցուց: Լամբարը վառելով պատուհանէն նայեցայ ու տեսայ որ չուն մը, որ բակին մէջ մնացած էր, դուրս ելլելու համար բակին տախտակէ դուռը անդադար կը խլրտեցնէր: Հարկ չտեսայ մինչեւ վար իջնել ու չունը բակէն փոխտել, եւ նորէն սպռակեցայ ու քնացայ: Կէս գիշերին, ընդոստ արթնցայ՝ այս անգամ մարդաձայնէ մը, որ «Տամա՛տեան, Տամա՛տեան» կ'աղաղակէր: Պատուհանէն նայեցայ ու հարցուցի թէ ո՞վ էր եւ ի՞նչ կ'ուզէր: Պոռացողը Ձորոյ թաղի հանրաձայնօթ գումնամի (սրնգահար) Նահապեան էր, որ ինծի հարցուց թէ ո՞վ էր որ դպրոցին դուռը կը լիւրցնէր: Ըսի թէ բակին մէջ մնացած չուն մըն էր: «Շո՛ւն մը», հարցուց անձկազին: «Այո՛, չուն մը», պատաս-

խանեցի: «Եթէ այդպէս է, մի՛ վախնար», ըսաւ ու հեռացաւ:

Քառորդ ժամ մը հազիւ տնցած էր, այս տնգամ արթնցայ վարժարանին շուրջ իրարանցումի մը աղմուկէն: Զուռնաճի Նահապետ՝ ըստ իր սովորութեան շուրջ լառը իբրեւ տաճիկ մեկնարաներ էր, դի մշեցիները սովորարար տաճիկ ըսելու տեղ շուրջ կ'ըսեն, իսկ շուրջն՝ զաւան անունը կու տան: Եթէ «Գազան կայ» ըսած ըլլայի, որեւէ թիւրիմացութիւն պիտի չզատահէր: Գլխով Նահապետը, այս թիւրիմացութեամբ, զայսով թաղին մէջ հաւաք կանչած էր. «Դպրատունին մէջ արունք կայ. թուրքեր զճամատեան կը սպաննեն»: Ասոր վրայ, 50-60 հայեր, յիբերով, զաշոյններով եւ ատրճանակներով զինուած, եկած դպրոցը պաշարած ու տապանաբարերու հտին դիրք լռեցած էին: Զիրենք համոզելու համար որ դպրոցին մէջ մարդ չկայ եւ ոչ ալ վտանգ, պէտք եղաւ որ կանթեղը ձեռքիս՝ վարժարանին քուրծր սրահները չըջիմ, ի տես հաւաքուած բաղմութեան: Ատկէ ետք միայն համոզուեցան թէ ուրիշ բան չկար՝ բայց միայն զաւան մը դպրոցին բակին մէջ:

Գազանը զաւազաններով բակէն դուրս վռնտուեցաւ եւ բաղմութեանը ցրուեցաւ: Ամբոխին զլխաւորներէն մի քանին մինչեւ տեսչարան եկան եւ ինծի խնդակցութիւն յայտնեցին աշս մտացածին վտանգէն ազատելու առթիւ:

1888-ի դպրոցական չըջանը կը լրանար Յուլիսին, եւ ես թէ՛ յողնած էի այս փութորկայոյց միջնակարգին մէջ անցուցած 4 տարուան ալիկոծ կեանքէս, թէ՛ պէտքը կը զգայի անձամբ տեղեկանալու թէ ի՞նչ կ'անցնի կը դառնայ կ. Պոլսոյ մէջ եւ այլուր՝ ազգային յեղափոխական տեսակէտով: Ուստի Յունիսին իմ հրաժարականս մատուցի Հ.Մ. Ընկերութեանց կեդրոնական վարչութեան: Հրաժարականս մերժուեցաւ, բայց ինծի 2-3 ամսուան արձակուրդ տրուեցաւ, մանաւանդ որ կ'ըսէին թէ իրենք ալ մեծ փափաք ունէին որ անձնական տեսակցութեամբ մօտէն տեղեկանան թէ՛ վարժարաններուն վիճակին եւ անոնց դէմ յարուցած դժուարութիւններուն եւ թէ Մուշի մէջ պատահած վերջին անցուցարձեքուն բո՛ւն էութեանը, - քանի որ այդ անցուցարձեքը Պոլսոյ մէջ ալ առաքելական եւ կաթողիկ հայերու միջեւ որոշ աստիճան ցըրտութիւն յառաջ բերած էին: Բայց որովհետեւ Գերապայծառին դատը վերջացած չէր, ու ես իր երաշխաւորութեան տակ կը գտնուէի, իմ մեկնումիս մասին տեղեկութիւն տուի ընդհ. դատախազին, Գերապայծառին եւ երաշխաւորիս, որոնք երեքն ալ որեւէ անպատեհութիւն չըտեսան մեկնումիս մէջ, քանի որ ամէն ամբաստանութեան կասկածէ զերծ կը գտնուէի:

Մեկնած օրս ընդհանուր եռուդեռի օր մը եղաւ Մուշի համար: Եւրոպական վարժարանի ուսուցչական կազմը, ամբողջ աշակերտութիւնը, հարիւրաւոր բարեկամներ երկու քոյր համայնքներէն մինչեւ քաղաքէն դուրս ինծի ուղեկցեցան ու ողջերթ մաղթեցին: Մուշի Գաւառա-

կան ժողովը նոյն օրը բացառիկ նիստ ունենալով՝ ի պատիւ ինծի նիստը դադրեցուց եւ երեսփոխանները իրենք ալ մասնակցեցան ողջերթի թափօրին :

Իմ մեկնումէս ետք, դժբախտաբար ժամանակ մըն ալ չարունակեցան երկու համայնքներուն միջեւ հակառակութիւնները, եւ 1889-ի դարնան Զորոյ թաղին մէջ դարձեալ վերեզմանական խնդրոյն առթիւ խռովութիւն մը ծագեցաւ. հարիւրաւոր առաքելականներ եւ կաթողիկէներ զէնքով բախում ունեցան զերեզմանատան մէջ, ոստիկանութիւնը եւ զինուորներ հարկադրուեցան միջամտել, թաղումը կատարել տալ սուրիններով, ու բազմաթիւ հայեր ձերբակալուեցան : Այս դէպքէն ետք, Մշոյ մէջ պատահած անցքերուն վրայ որոշ տեղեկութիւններ չունիմ, զի անկէ բացակայ էի եւ ուրիշ խնդիրներով համագործուած : Միայն այսչափ զիտեմ, որ վերջ ի վերջոյ երկու կողմէն ողջմտութիւնը յաղթանակեց, մանաւանդ որ բովանդակ հայութիւնը մտահոգող ծանրակշիռ խնդիրներն ու վերահաս փոթորիկները ընդհանուր համերաշխութիւնը հրամայական պահանջ մը դարձուցած էին երկու կողմին համար ալ :

Ի պատիւ Մուշի հայ կաթողիկէներուն, հոս մասնաւոր հաճոյքով կ'արձանագրեմ որ ասպաղային, թէ՛ հնչակեաններու գործունէութեան չըջանին եւ թէ անոր յաջորդող դաշնակցական գործունէութեան ժամանակ ու առհասարակ հայկական ճգնաժամի եւ ազատագրական պայքարի ամբողջ տեսողութեան, անոնք՝ Մշոյ եւ դաշտի հայ-կաթողիկէները, առաքելականներու հետ հաւասարապէս տառապեցան, մասնակցեցան յեղափոխական մարտնչումներուն եւ անոնց հետ միասին կրեցին բանտ, աքսոր, կոտորած եւ տարագրութիւն, երբեք չբաժնուելով ազգին մայր հատուածներէն : Մշոյ նահանգին մէջ հայ կաթողիկէները համեմատօրէն աւելի համակիր հանդիսացան հայ յեղափոխական շարժումին, բան հայ բողոքականները, որոնց մէջ գործող ամերիկացի միսիոնարները ամէն ջանք թափած էին անոնց ազգային զգացումները ընդարմացնելու եւ հաւատորիկցիներու պէս կտրիճ լեռնականներն անգամ առնազուրկ դարձնելու : Այս լեռնականները, որոնք բողոքական չեղած՝ առանց զէնքի չէին պարտէր, միսիոնարներու ազդեցութեամբ այլեւս միստիք կը րօնականութենէ մը զատ ուրիշ բանի վրայ չէին մտածեր : Անոնց հայ պատուելին, տարիներ ետք, երբ այս տողերը գրողը իբրեւ յեղափոխական գործիչ Տարօն եւ Սասուն վերադարձած էր, չուգեց իր գաղտնի հաւատորիկ այցելութեան առաջարկը ընդունիլ, որպէսզի՝ եթէ երբեք պատահէր որ կառավարութիւնը անոնց իրենց գիւղը գացած ըլլալուն մասին իրենց հարցում մը ուղղէր. «Միջ ըսելով սուտ խօսելու չըստիպուէին» :

Բացառութիւններ անշուշտ կային. ինչպէս՝ Գարրէլեան Յակոբ Պատուելին, որ իր հովուած Մովսէսք եւ Տերքիվանք գիւղերու ժողովուրդը կատարեալ հայ պահած էր, եւ որուն սղանները հայ յեղափո-

խութեան ջերմ համակիրներ հանդիսացան նախ երկրին մէջ եւ յետոյ՝ Ամերիկա, ուր զաղթեցին: Ուշիմ ընթերցողը կը հասկնայ թէ հայ կաթողիկէներու եւ հայ բողոքականներու միջեւ այս յաղագսութիւնը որոշ գաւառի մը եւ որոշ ժամանակաշրջանի մը կը վերաբերի: Ո՛վ չի գիտեր թէ ուրիշ շրջաններու հայ բողոքականներու մէջ ալ երեսան եկան ազատազրական դատի ախոյեաններ, ինչպէս՝ Աբրահամ Սեքէմեան Կարնոյ շրջանին մէջ, Թումայեաններ ու Գալայեաններ ի Մարգուտան, եւ անթիւ ուրիշներ՝ քիչ մը ամէն տեղ:

Դէպի Կ. Պոլիս ուղևորութեան ընթացքին, Տրապիզոնի մէջ, տեսնուեցաւ Վենետիկի աշակերտակցիս՝ Պետրոս Մարիմեանի եւ Ս. Էջմիածնայ Դէորդեան ճեմարանի նախկին շրջանաւարտ ճմայեակ Խուչալույեանի հետ, որոնք քաղաքին մէջ հայկական ախումբ մը կազմած էին՝ իրենց շուրջ հաւաքելով տեղւոյն առաքելական եւ կաթողիկ մտաւորականներուն ընտրանին, եւ որոնք տողորուած ըլլալով յեղափոխական զաղափարներով՝ յետոյ երկու առաջնորդող ղեմքերը պիտի ըլլային Տրապիզոնի Հնչակեան մասնաճիւղին:

Կ. Պոլիս Ժամանումիս, այնտեղ տակաւին Յովհաննէական Գերապայծառին մահափորձը օրուան նիւթն էր, որով ազգային ամէն շրջանակներէ ինծի կը դիմէին լուսարանութիւն ստանալու համար: Երբ Ագարեան Պատրիարքին ներկայացայ, ինծի շատ սլաղ ընդունելութիւն մը ըրաւ եւ նոյնիսկ կասկած յայտնեց իմ կաթողիկ ըլլալու մասին. ըսելով թէ Եկեղեցիներու ստմարներուն մէջ իմ անունս փնտռած եւ գտած չէր: Իրեն պատասխանեցի թէ Ս. Յակոբ Ոսկեբերան Եկեղեցւոյ սոմարներուն եթէ դիմած ըլլար՝ հոն իմ անունս պիտի գտնէր: Այնուհետեւ զիս կանոնաւոր հալցաքննութեան մը ենթարկեց եւ իր յայտնի նպատակն էր այս խնդրոյն տալ միջ-յարանուանական բնոյթ մը:

Ագարեան Պատրիարքին այս մտածելակերպին պատճառը այն էր, որ տաճիկ բժիշկ մը (անունը մտքէս ելած) ինձմէ ատաջ Մուշէն Պոլիս Ժամանելով՝ իրեն կատարեալ ճշմարտութիւն իրեն հաւաստած էր թէ այս մահափորձին մէջ իր մասնակցութիւնը ունեցած էր Մշոյ ազգային առաջնորդարանը, իր այս հաւաստումին իբր փաստ ներկայացընելով թէ առաջնորդարանի քարտուղար Գեղամ Տէր Կարապետեան ղէպփէն օր մը առաջ Գէորգ Էթմէքճեանի հետ տեսնուած էր եւ թէ ստուգած էր որ արեան հետքերը կը հասնէին մինչեւ ազգային առաջնորդարանի դուռը: Եւ յետին ուժգնութեամբ հերքեցի այս ստայօղ տեղեկատուութիւնը, զոր յիշեալ բժիշկը ըրած էր սլարգապէս անձնական չահադիտութեամբ եւ յաջողած ալ էր Ագարեան Պատրիարքի միջնորդութեամբ օսմանէն պատուանշանի մը արժանանալ:

Երբ տեսայ թէ Պատրիարքը իմ խօսքերուս հաւատք չէր բնծայեր եւ կը սղիղէր իր տեսակէտին վրայ, հետեւեալ ծանրակշիռ յայտարարութիւնը ըրի. «Եթէ տակաւին կը կարծէք թէ հայոց առաջնորդարանը եւ կամ անձնապէս Գեղամ Տէր Կարապետեանը այս գործին մէջ

մասնակցութիւն մը ունին, այդ պարտւոյսին կրնաք ապահով ըլլալ որ ես ալ մասնակից եղած եմ այդ մահափորձին»։ Այս վճռական պատասխանիս վրայ միայն Պատրիարքը թուեցաւ համոզուիլ իմ ճշմարտախօսութեանս եւ այս կերպով միջնադէպը փակուեցաւ :

Հակառակ որ Միացեալ Ընկերութեանց տնօրէն ժողովը կը պընդէր որ Մուշ վերադառնամ տեսչական պաշտօնս շարունակելու, կարդ մը պատճառներով (որոնք քիչ ետք ինքնին պիտի բացատրուին) նախընտրեցի Կ. Պոլիս մնալ եւ մատուցի վերջնական հրաժարականս :

Ճերը արդէն ըսած եմ որ Մուսս պէյի խնդիրը Կ. Պոլիս ապրող մշեցիներու կողմէ ալ սկսած էր հետապնդուիլ։ Ասոնք շուտով գիտալ իրենց մէջ առին եւ անկէ ետք ինծի հետ գաղտնի խորհրդակցութեամբ կ'ընէին իրենց դիմումները։ Մուշէն հասնող լուրերը երթալով մտահոգիչ կը դառնային։ Մուսս պէյ կատարած իրեն դէմ եղած եւ հետըզհետէ աւելի լուրջ կերպարանք ստացող բողոքի շարժումներէն, ա'լ աւելի սանձարձակ կերպով կը շարունակէր իր չահատակութիւնները։ 1888-ի աշնան, Արտօնք գիւղի քաղաքական Մալխասը քաղաքքի տանիքին վրայ հեռուէն զնդակահարած էր՝ պարզապէս իր նոր առած հրացանին լաւ նշանառութիւնը փորձելու համար։ Իսկ նոյն ձմրան սկիզբը, գիշերով իր եղբօր՝ Ծառոյի եւ գինեալ արքանեակներու ընկերակցութեամբ յարձակած էր Զիուրայ խարձ գիւղի ռէս Միրոյի (որուն բողոքի շարժումէն ձեռնադաշտ մնալը յիշած եմ) տան վրայ եւ սպաննելով անոր Աղաճան եղբայրը՝ առեւանգած էր այս վերջնոյն աղջիկը՝ Կիւլիզարը (Կուլօն), ու, զայն տանելով խուփ լեռնային գիւղերը, իր եղբօրը՝ Ծառոյին կնութեան տուած էր։

Այս խժոժութեանց լուրերը Պոլիս հասնելուն, մշեցիները քանիցքս Մեծ Եպարքոսին կառքը կեցնելով բողոքագիրներ տուին եւ պարբերաբար ամէն Ուրբաթ օր սեկամլըքի արարողութեան միջոցին Սուլթանին բողոքագիրներ կը հասցնէին։ Ոստիկանութիւնը ամէն ջանք կ'ընէր մշեցիները հեռացնելու սեկամլըքի հանդիսատեսներու շարքերէն։ Բայց մշեցիներու հնարամտութիւնը ի վերջոյ յաղթանակեց։ Սեկամլըքի օր մը, խումբ մը մշեցիներ, ամէնքն ալ պոլսեցիի տարազով, կը լուսնին հանդիսատեսներու առաջին շարքերէն մէկը եւ Սուլթանին կառքը անցած պահուն՝ իրենցմէ մէկը բարձրանալով ուրիշի մը ուսերուն վրայ, զրպանէն կը հանէ ճմովկած խնդրագիր մը եւ «Փատիլաիւմ մեքիս-մէք էյլէ» * աղաղակելով զայն վեր կը բարձրացնէ։ Սուլթանը կառքը կը կեցնէ. եսկիւրները (թիկնապահները) կը հասնին խնդրագիրը առնելու. մշեցին կը մերժէ յանձնել՝ ըսելով թէ խնդրագիրը անձամբ Սուլթանին ձեռքը պիտի տայ։ Ասոր վրայ Սուլթանը նշան կ'ընէ եսկիւրներու գլխաւորին, որ խնդրագիրը առնելով կու տայ Սուլթանին

* - «Նեքում շնորիէ', արքայ» :

ձևաբը ու կառքը կը յառաջանայ :

Այս գոյցին մասնակցած բոլոր մշեցիները կը ձերբակալուին եւ ներյոյժի մէջ խիստ հարցաքննութենէ մը հետք ազատ կ'արձակուին : Այս անվերջ զիմումները սկսած էին եւրոպական դեսպաններու ուշադրութեան առարկայ ըլլալ, եւ նոյնիսկ անպլիական դեսպանին կողմէ զիտոյգադիր մը ներկայացուցաւ Սուլթանին՝ Կիւլիզարի առեւանգման առթիւ : Սուլթանը այլեւս չէր վարող անտարբեր ձեւանալ, ռուսի եւրտորդէն խիստ հրահանգներ հաղորդուեցան Պիթլիսի վալիին՝ Կիւլիզարը իր առեւանգիչներու ձեռքէն ազատելու պահանջով : Պիթլիսի վալին խնդիրը խեղդելու համար սովէն միջոց ձեռք առնելէ հետք, ձեւականորէն խռով կը զրկէ խումբ մը զինուորներ, որոնք առանց դժուարութեան Կիւլիզարը կ'ազատեն քրտական հարէմէն եւ կը բերեն Բաղէշ :

Կիւլիզար խորամանկ աղջիկ մը ըլլալով, արդէն հարէմին մէջ իր բախտին համակերպութիւն կեղծած էր եւ իր ազատման առթիւ եւս վստահեցուցած էր քիւրտները եւ զինուորական սպաները, թէ յատենի կառավարութեան պիտի յայտարարէ կամովին ընդունած ըլլալ իսլամութիւնն ու ճաշոյի կնութիւնը : Կիւլիզար այս նախահոգ պատրաստութիւններով կը բերուի Բաղէշ : Բայց երբզայն կը հանեն իտարէի ժողովին առջեւ, որ գումարտած էր վալիին նախադաշնութեան ներքեւ, Կիւլիզար քաջութիւնը կ'ունենայ յայտարարելու թէ ինք քրիստոնեայ է եւ քրիստոնեայ պիտի մեռնի, ու այս ըսելով կը նետուի հայոց Առաջնորդին ոտքերուն առջեւ : Վալիին ուրիշ բան չի մնար ընել՝ բայց միայն Կիւլիզարը յանձնել ազգային առաջնորդարան : Գաղաքին իսլամները եւ քրիստոնեաները վերին աստիճան զրգուած ըլլալով, յանձնումը կը կատարուի ոստիկաններու եւ զինուորներու հսկողութեան տակ : Բայց յուզումը այնպիսի սպառնալից կերպարանք կը ստանայ, որ կատարութիւնը ծանր միջադէպի մը տեղի չտալու համար, խռնութիւն կը համարի զիւրեանց ջոկատ մը ցործով Կիւլիզարը քաղաքէն հանել եւ զրկել Կարին :

Կիւլիզար Կարին հասնելուն կը յանձնուի հայոց առաջնորդարանը, ուր տնօրէնական հիւպատոսը անոր կը նուիրէ թանկարժէք ոսկի խաչ մը : Կիւլիզար այսպէս ժամանակ մը կը մնայ Կարնոյ մէջ : Կիւլիզարի առեւանգման այս դէպքը ո'չ միայն խորապէս յուզեց բոլանդակ հայութիւնը, այլեւ արձագանգ գտաւ եւրոպական մամուլին մէջ : Ոնման Կլատսթոն Հայկական Խնդրին ի նպաստ իր անդրանիկ նամակը գրեց Կիւլիզարի այս դէպքին առթիւ . « Տէյլի Նիւզ »-ի մէջ երեւցած այդ յուզիչ նամակը արտատպեցին աշխարհի բոլոր քաղաքական թերթերը : Մէկ կողմէ հասարակաց կարծիքի այս յուզումին եւ միւս կողմէ անպլիական կառավարութեան ճշուումին առջեւ էր որ Սուլթանը վերջապէս ստիպուեցաւ 1889-ի դարնան հրաման հանել որ Ռուսապէյր զատուի Կ. Պոլսոյ մէջ :

Ռուսապէյր ձերբակալուելով Պոլիս բերուցաւ . իսկ անոր դէմ

բողոքողները, որոնց շարքին մէջ քանի մը քիւրտեր ալ կային, ինչպէս նաեւ Կիւլիզարը, ընդամէն 70 հոգի, Սուլթանին անձնական ծախսով Կ. Պոլիս փոխադրուեցան եւ հոն տեղի ունեցաւ Մուսա պէյի հրապարակային դատաստանը, ընդհանուր տենդոտ հետաքրքրութեան մէջ տեղ: Թուրք դատաւորները ամէն ջանք ըրին վկաները չփոթեցնելու եւ անոնց վկայութիւններուն մէջ հակասութիւններ պատրուակելով Մուսա պէյը անսլարտ հռչակեցին: Կիւլիզարի առեւանդումը ոչ իսկ դատարանի առջեւ հանուելու չափ կարեւոր բան մը նկատուեցաւ:

Այսպէս իր քսամանի ռճրագործութիւններով տարիներէ ի վեր Մշոյ դաշտի հայութեան պատուհասը դարձած այս թշուառական անսլարտ մնաց: Այդ օրն էր որ սնդիկական դեպքերը սա լակոնական հեռագիրը կ'ուղղէր իր կառավարութեան. «Օսմանեան արդարութիւնը այսօր պոռնիկացաւ մայրաքաղաքին մէջ. Մուսա պէյ ազատ արձակուեցաւ»: Այսպէս դիմակազերծ կ'ըլլար Սուլթանին կառավարութիւնը եւրոպայի առջեւ: Նոյն օրը հայ ժողովուրդն ալ վերջնականապէս կը համոզուէր թէ որքան յիմարտիքին է միմիայն օրինաւոր միջոցներով թուրքէն արդարութիւն խնդրելու քաղաքականութիւնը: Այդ օր հայ յեղափոխական դադարարը կ'ունենար իր գոյութեան անժխտելի պատճառը եւ իրաւունքը:

Եւրոպայի հանրային կարծիքի յուզումը ասլարդին շանցաւ: Անգլիական կառավարութիւնը Սուլթանին կորույթի յիշատակագիր մը ներկայացուց՝ պահանջելով Մուսա պէյի դատաստանին վերաքննութիւնը՝ այս անգամ դեպքանկար թարգմաններուն ներկայութեանը: Սուլթանը տեղի տուաւ այս պահանջին եւ դատական նախարար Ճիւտէթ փաշային հրահանգ տուաւ, ալլ պայմաններով դատը վերականգնու: Դատական նախարարը իրաւամբ առարկելով թէ Եղիւնական դատերու մէջ մէկ անգամ անսլարտ արձակուած ամբաստանեալ մը չի կրնար անգամ մըն ալ դատուիլ՝ առանց նոր փաստերու եւ վկայութիւններու ի յայտ գալուն, հրաժարական տուաւ իր պաշտօնէն: Սուլթանը, տեսնելով որ կարելի պիտի չըլլայ Անգլիոյ պահանջքին գոհացում տալ՝ առանց Օսմանեան Օրինագիրքին հիմնական սկզբունքները եղծանելու, դիմեց տարբեր միջոցի մը, որ օսմանեան աւանդական խորամանկութեան անհրապառ դիտերէն մին էր:

Երբեմնի Բերայի կառավարիչ, իսկ այդ թուականին Կ. Պոլսոյ Սկիւտար թաղի կառավարիչ քուրտ Պահրի փաշան Մուսա պէյի ազդականն էր: Ան օր մը Մուսա պէյը իր մօտ հրաւիրելով, անոր կ'ըսէ թէ որքան առեն որ Պոլսոյ մէջ մնայ, հայերու իրեն դէմ գրդուութիւնը վերջ պիտի չգտնէ, եւ իրեն խորհուրդ կու տայ դառնալ իր երկիրը, քանի որ դատարանը զինք անսլարտ արձակած էր: Մուսա պէյ անսալով իր ազդականին այս «բարի» խորհուրդին, Պոլսէն կը մեկնի՝ Պրուսայի ճամբով իր հայրենիքը վերադառնալու համար: Անոր մեկնումէն անմիջապէս յետոյ կառավարութիւնը կը տարաձայնէ թէ Մուսա պէյ, որ

կայսերական իրաւտէով (հրամանագրով) Պոլիս բերուած էր, առանց նոյնպէս իրաւտէով մեկնումի արտօնութեան՝ Պոլսէն փախուժած տուած է, հետեւաբար զայն կը յայտարարէ Սուլթանին ու կառավարութեան զէմ ըմբոստ մը և հրաման կ'արձակէ զինք ձերբակալելու:

Մուսա պէյ կը ձերբակալուի և Պոլիս կը բերուի ու «իր այդ ըմբոստութեան ի պատիժ» Սուլթանին իրաւտէով կ'աքսորուի Եմէն: Միւս կողմէ՝ անպիսկան կառավարութեան կը պատասխանուի, թէ իր պահանջը զոհացնելու համար՝ Մուսա պէյ ցկեանս Եմէն աքսորի դատապարտուած է: Իրողութիւնն այն է՝ թէ Մուսա պէյ դատապարտուած չէր իր հայերու զէմ գործած անպատմելի ոճիւրներուն համար: Մէջիները կատարեալ յուսախաբուութեամբ և դառնութեամբ լեցուած կը դառնան իրենց հայրենիքը, օսմանեան արդարադատութեան նկատմամբ իրենց առած այս նոր դստը պատմելու իրենց հայրենակիցներուն:

Մէջիներու Պոլսոյ մէջ բնակութեան ամբողջ տեւողութեանը, Պոլսոյ նորակազմ յեղափոխական խմբակներէն յատկապէս մէկը, - որուն մէջ կը գտնուէին Համբարձում Պոյաճեան, Յարութիւն Ճիհանկիւլեան, այս տողերը գրողը և ուրիշներ, - զանոնք իր մասնաւոր գուրդուրանքին առարկան ըրաւ. ի նպաստ անոնց հանդանակութիւնները՝ բաւ Պոլսոյ բոլոր թաղերուն մէջ և այլ կարելի միջոցներով ջանաց անոնց կացութիւնը մեղմել, ինչպէս նաև անոնց բարոյականը բարձր պահել ու անոնց մէջ արծարծել յեղափոխական տրամադրութիւններ: Յիշեալ խումբը հրապարակ հանեց այս տողերը դրողին «Կիւլիպար» փերնազրուած մէկ ոտանաւորով շրջանաւորած կիւլիպարի պատկերը, որ ծախուեցաւ հարիւրաւոր օրինակներով: Այս պատկերներէն որոշ թիւ մը զերուեցաւ նաև Թիֆլիսի «Մշակ» լրագրի խմբագիր Գրիգոր Արծրունիին, որ զանոնք սուղ գիներով ծախելով՝ հասցիւթ գրկեց նախաձեռնող մարմինն, որ իր կարգին զայն յատկացուց մէջիներու նըպաստին:

Մուսա պէյ Եմէն աքսորուած մնաց մինչեւ Օսմանեան Սահմանադրութեան հռչակումը 1908-ին, երբ օգտուելով ընդհանուր ներուածէն՝ Պոլսոյ ճանապարհով վերադարձաւ իր հայրենիքը:

Հոս չեմ կրնար ինքզինքս զսպել և յուսթեամբ անցնիլ դէպքի մը վրայէն, որ եղբականօրէն իրարու կը կապէ Մուսա պէյի այս երկար ողիսականին անփառունակ նախարանք և անոր նոյնքան անփառունակ վերջաբանք, անգամ մըն ալ ի յայտ բերելով սա ցաւալի ճշմարտութիւնը, թէ դարերու առաջ բերած ստրկամտութիւնը գիւրին չէ ի սպառ արմատախիլ ընել ժողովուրդի մը հոգիէն:

1909-ին, Օսմ. Սահմանադրութեան երկրորդ տարին, արձակուրդով Կ. Պոլիս կը գտնուէի. այդ թուականին, հակառակ նոր ռեմիսի (մարչակարգի) շոնթալից կերպով հռչակած ազատութեան, հասարութեան ու եղբայրութեան փայլուն նշանաբաններուն, հայաս-

տանի եւ ի մասնաւորի Մշոյ շրջանին մէջ վերսկսած էին հայերու դէմ հարստահարութիւնները եւ հողային բռնազրաւումները: Այդ թուականին, առաւօտ մը, «Ազատամարտ»ի մէջ կարդացի Մուշէն գրուած փոքրիկ թղթակցութիւն մը, որ առանց մեկնաբանութեան՝ իրբւ սովորական իրողութիւն մը՝ կու տար հետեւեալ լուրը. «Այսօր Մշոյ դաշտի Զխուր գիւղամասին զանազան հայ դիւղերու երեւելիները խմբովին Մուշ դաւով ազգային առաջնորդարան հաւաքուեցան եւ հոն ստորագրելով կառավարութեան մատուցին աղերսագիր մը, որով կը խնդրէին որ Մուսա պէյի եղբայրը՝ Ճաջօն, միւստիք անուանուի իրենց գլխուն»: Եւ ըսել թէ Մուսա պէյի խնդրոյն ծաղումէն մինչեւ այդ թուականը անցած էին 20 տարիներ. տարիներ, որոնք արձանագրած էին Սասնոյ կրկին ապստամբութիւնները եւ երկրին բնիկ հերոսներու, ինչպէս նաեւ հընչակեան ու դաշնակցական անձնուէրներու ա՛յնքան քաջագործութիւնները: Եւ այս բոլորը՝ կարծես հափնելու համար այն կէտին, որմէ սկսուած էր...

ԶՈՒԽ ԿԵՏԻԿԻ ԿՈՒԻԴԸ. — Արդէն առիթ ունեցանք ակնարկելու Մկրտիչ Փորթուգալեանի նախկին աշակերտներուն Վանայ մէջ ունեցած հռահուհուն դործունէութեան: Ասոնք տեսնելով իրենց ազմկայոյզ եւ անդոյշ, դործունէութեան միասնելը, 1888-ին արդէն ձեռնարկած էին զազոտի կազմակերպութեան մը*, որուն անուն տուած էին Արմէնական. ի յարպանս իրենց ուսուցչին, որ Մարտէլի մէջ 1885-ին հիմնարկած էր «Արմէնիա» թերթը: Պատմեցինք նաեւ, որ Փորթուգալեան՝ խոհեմ ու գրեթէ սլահայանողական դարձած՝ համաձայն չէր իր սաներուն յեղափոխական նպատակներուն եւ հետո անոնց ուղղութիւն տալէ, կը խորչէր նոյնիսկ անոնց հետ յարաբերութիւն հաստատելէ, հակառակ անոնց կողմէ հղած դիմումներուն եւ առաջարկներուն: Պոլսոյ մէջ այ կային Վանայ արմենականներէն բոլորովին անջատ փոքրիկ յեղափոխական խումբեր, որոնք Արմէնական անունով հրապարակ ելած էին եւ որոնց հանդէպ նոյն սառն վերաբերումն ունեցաւ Փորթուգալեան:

1889-ին Վանայ արմենականներէն Գուլազարզեան եւ Ագրիպասեան ու մի քանի ուրիշներ, իրենց հետ ունենալով նաեւ Վարդան Գուլաշեան (Յարութիւնեանց) անունով կովկասահայ մը, կազմած էին զինեալ խումբ մը՝ ասպատակային կամ թրեւս տարբեր կարգի յեղափոխական նպատակով մը, զոր իրենք կը բացատրէին «պանրի գողութիւն» անուան տակ: Այս փոքր խումբը Պաշալէի Զուխ - Կետիկ կիրճին մօտ յանկարծական յարձակում կրելով թուրք հեծեալ ոստիկաններէ, քաջութեամբ կը պաշտպանուի եւ իրմէ երկուքը զոհ տալէ

* - Ակնարկուած զազոտի կազմակերպութիւնը հիմնուած էր 1885-ին եւ ոչ թէ 1888-ին - Վ.Վ.:

ետք, կը յաջողի փախչիլ: Դէպքին մանրամասնութիւնները հակասական են ու զանոնք ձշգէլու առիթ չեմ ունեցած: Ինչ որ ալ եղած ըլլան, սակայն, այդ դէպքին իրական պարագաները, սա յայտնի է թէ իր ժամանակին մեծ ցնցում եւ ողբերգութիւն առաջ բերաւ ան՝ շնորհիւ Վանայ կուսակալ Պալիլ պէյի աղմկայոյց մէկ հեռագրին, որ ամբողջութեամբ հրատարակուեցաւ Կ. Պոլսոյ թերթերուն մէջ եւ որու հրատարակութեան յաջորդ օրն փակ յիշեալ կուսակալը Օսմանիէ ականակուռ պատուանշանով վարձատրուեցաւ Սուլթանէն:

Սպանուածներէն մէկուն գրպանէն ելած էր օրագիր մը, որմէ քաղուածներ կը պարունակէր վերոյիշեալ հեռագիրը: Օրագիրը այսպէս կը բացատրէր խումբին կազմութեան պատճառը. «Տասնեւիններորդ դարու մէջ ապրող մարդուն համար Ազատութենէ զատ չկայ ուրիշ միջոցորտ մը, յորում կարենայ շնչել»: Օրագրողը, իրադեկ այսպիսի ձեռնարկի մը սպառնացող վտանգներուն, կ'ըսէր. «Ուրախութեամբ կ'երթամ մեռնելու. իսկ դուն, քաղցր հայրենիք, սրբէ՛՛ արտասուք եւ ինծի համար սուգ մի՛ բռներ»:

Այս դէպքը, որուն թուականը կը զուգահէտէր Մուսա պէյի դայթակղեցուցիչ դատաստանին, ըստ իմ յիշողութեանս, վերջին անջատ դէպքն էր, եւ առիթ կ'ընծայէր ժամանակի ազատաշունչ երիտասարդութեան մտածելու, թէ այլեւս ժամանակն հասած էր լըրջօրէն խորհելու յեղափոխական կանոնաւոր եւ ընդհանուր կազմակերպութեան մը անհրաժեշտութեան վրայ, տրուած ըլլալով որ ժողովուրդին սրտէն պոթկացող այս անջատ եւ անյարակից շարժումները ապարդիւն պիտի ըլլային եւ նոյնիսկ մնասակար:

ԳԼՈՒԽ Բ .

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԾՆՈՒՆԴԸ ԵՒ ԱՆՈՆՑ ՋԵՒԱՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ինչպէս տեսանք նախորդ գլուխին մէջ, 1880-1889 պատահած զէպքերը աստիճանաբար վարդացուցած էին յեղափոխական տրամադրութիւնները քիչ մը ամէն կողմ: Թէպէտ նախորդ էջերուն մէջ առաւելապէս ծանրացած էմ Կարնոյ, Մուշի եւ Վանի անցքերուն վրայ, իբրեւ մօտէն ծանօթ կամ անկանաւոր եւ մասամբ զերակատար այդ անցքերուն: այդ չի նշանակեր, սակայն, թէ Հայաստանի արեւմտեան մասերուն (Երզնկա, Խարբերդ, Սերասոյի, Տիգրանակերտ իրենց դաւաճակներով, ինչպէս՝ Արարիկի, Տիւրիկ, Արմտան, Շապին Գարահիսար եւլն-), Փոքր Հայքի (Մարզուան, Ամասիա, Թոգատ, Կեսարիոյ եւ Խոզդատի շրջանները) եւ Կիլիկիոյ շրջաններուն մէջ կը պակսէին նմանօրինակ զէպքեր կամ նոյն ձգտումներով տողորուած զէմքեր, եւ թէ ամէնէն խաղաղիկ շրջաններուն մէջ իսկ չէին արձագանգեր արեւելեան նահանգներու եղելութիւնները, արծարծելու համար այդ վայրերուն մէջ ալ յեղափոխական դիմադրութիւններ:

Մայրաքաղաքին մէջ անկամ, ուր մինչեւ այն ատեն հայերը երջանիկ կ'ապրէին եւ ո՛չ մէկ դանդաղ ունէին օսմանեան վարչութիւնէն, Հայաստանի նահանգներու զէպքերը խոր տպաւորութիւն կը ձգէին, չնորհիւ այն հանգամանքին՝ որ Կ. Պոլիս ամբողջ արեւմտահայութեան մշակութային եւ վարչական կեդրոնն էր ու պաշտօն ունէր ամոքելու գաւառի հայերուն ցաւերը: Առաջնորդարանները իրենց գաւառներու անցուղարձէրը կը տեղեկապրէին ազգային պատրիարքարան. ասկէ զատ, Կ. Պոլսոյ մէջ դռնուելով ամէն դաւաճ եւ քաղաքէ հոծ թիւով ազգա-

յիններ, որիւէլ զաւառի մէջ պատահած աննշան դէպք մ'անդամ չուտով կը լսուէր աշտոեղ եւ անոր լուրը բերնէ - բերան կը տարածուէր մայրաքաղաքի բոլոր հայերուն մէջ: Թո՛ղ այն պարագան, որ արտասահմանի հայ թերթերը ամէնէն առաջ կը ստացուէին Պոլսոյ մէջ եւ անկէ էր որ կը տարածուէին գաւառները: Հայկական ինդերոյ շուրջ դասականական միջամտութիւնները նոյնպէս տեղի կ'ունենային Պոլսոյ մէջ: Այս հանգամանքներուն մէջ, յեղափոխական ընդհանուր կազմակերպութեան մը ձեռնարկը բնական էր որ Պոլսէն պիտի սկսէր ու ճառագայթէր գաւառները. եւ այդպէս ալ եղաւ:

Կ. Պոլիս վերադարձէս անմիջապէս ետք, իմ մշեցի աշակերտներուն միջոցով ծանօթութիւն հաստատեցի հաճընցի Համբարձում Պոյաճեանի հետ, որուն անունը լսած էի Մուշէն հետը յարարերող Գէորգ էթմէքճեանէն՝ նոյնպէս հաճընցի: Պոյաճեան, իր կարգին, ինծի ծանօթացուց իր խորհրդակիցները: Մեր զաղափարակիցներուն թիւը հետըզհետէ ընդլայնելով՝ կազմեցինք կանոնաւոր ժողով մը, որուն անդամներն էին՝ Համբարձում Պոյաճեան, Յարութիւն Զիհանկիւլեան (վանեցի), Գրիգոր Ալքքպաչեան (արարելիւցի), Գրիգոր Գլըճճեան (տիփրիկցի), Գրիգոր Ամպարճեան (պոլսեցի ?), Յակոբ Դազանճեան (արտանուցի) եւ ես՝ որ այլեւս Կրնայի նկատուիլ մշեցի:

Եօթը հոգիներէ բաղկացեալ այս վարչութեան քիչ ետք եկաւ միացաւ նաեւ Հայաստան հետազոտական պետոյտէ մը դարձաւոր Մարգար Վաճան (որ կեղծ անունով յետոյ եղաւ Ատոմ Ասլանեան): Այս վարչութիւնը, ըստ յարմարութեան, երբեմն մէկ երբեմն ուրիշ թաղի մէջ կանոնաւոր ժողովներ գումարելով՝ մշակեց ծրագիր - կանոնադիր, ձեւակերպից զապտի կադմսկերպութեան ուղեգիր մը՝ տասնապետական դրութեամբ: Շնորհիւ իր մէջ զանազան գաւառներէ անդամներ ունենալուն, մեր մարմինը շուտով կանոնաւոր յարարերութիւններ հաստատեց Կարնոյ, Վանայ, Մշոյ, Արաբկերի, Տիփրիկի եւ ուրիշ քաղաքներու հետ ու կարճատեւէն Պոլսոյ զխաւոր յեղափոխական մարմինը եղաւ:

Պոլսոյ բոլոր թաղերուն մէջ կային փոքրիկ անջատ խումբեր, ինչպէս նաեւ Զաքրեան, Արմենակաճ եւ այլ անուններով խումբեր, որոնց կարգին՝ հաճընցի Տոքթ. Թերզեանին: Մեր ջանքը եղաւ բոլոր այս փոքրիկ խումբերը միացնել մեր խումբին: Այս նպատակով երկար բանակցութիւններ ունեցանք իւրաքանչիւր խումբի հետ: Շատեր կըրցանք համոզել. իսկ ոմանց կողմէ հանդիպեցանք չկամութիւններու:

Արմենական, Զապրեան եւ Թերզեան խումբերը մեզմէ անջատ մնացին, բայց Գոմ Դափուի ցոյցէն (1890 Յուլիս 15) ետք, արմ-

նականներէն ոմանք ձերբակալուեցան, ոմանք շէշուքացան եւ ոմանք ալ մեզի հետ ձուլուեցան: Նոյն բախտը ունեցան միւս անջատ խումբերն ալ:

Մենք արտասահմանի բոլոր հայ թերթերուն (Մարտէլիի «Արմէնիա»ն, Լոնտոնի «Հայաստան»ը եւ Մինաս Զերադի «Արմենիա»ն կամ «Լ'Արմենի»ն, ու Ժընեւի «Հնչակ»ը) հետ յարաբերութիւն հաստատեցինք եւ մեծ թուով ստանալով այդ թերթերը, կը կարգացնէինք մեր կազմին անդամակցողներուն, իրրեւ անոնց ազատասիրական զգացումները արծարծելու եւ վառ պահելու միջոց. բայց այդ թերթերէն որեւէ մէկուն ուղղութեան չէինք հետեւեր եւ արտասահմանեան որեւէ խումբէ անկախ էինք: Մեր նպատակը չէր, սոսկայն, յիպոփոխական պործը մեզի մենաշնորհ դարձնել: Ընդհակառակը, կը զգայինք թէ մենք անփորձ երիտասարդներ էինք, ու կը մտածէինք թէ՛ քանի որ Հայկական ինդիքը այլեւս միջազգային հարց դարձած է, անշուշտ Պոստոյ բարձր դասակարգի հայերուն մէջ պէտք է դտնուէր լուրջ եւ բանիրուն անձերէ կազմուած զաղտնի մարմին մը, որ յարաուեօրէն զրազէր այս հարցով: Պէտք էր որ զտնէինք այդ մարմինը եւ անոր խորհուրդներուն համաձայն շարժէինք, անոր տրամադրելով մեր համեստ ուժերը եւ մեր զոհարերութեան տրամադրութիւնները:

Ոչինչ գտանք: Այս եղաւ մեր առաջին եւ մեծագոյն յուսախաբուքիւնը:

Ազգային կեդրոնական վարչութիւնը (պատրիարքարան եւ Ազգային Ժողով) սիսթեմաթիք (կանոնաւոր) կերպով Հայկական Հարցով չէր զրազեր եւ մտքէն իսկ չէր անցնէր յեղափոխական մարմին կազմել ու դայն զեկալարել: Ներսէս Պատրիարքի կենդանութեան իսկ՝ Սան - Սթեֆանոյի եւ Պերլինի դիմումներուն մէջ իրեն պործակից եղողներուն եւ իր միջեւ ծայր տուած էին ծանր անհամաձայնութիւններ, մինչեւ այն աստիճան որ իր մահուընէ (1884) միայն երկու ամիս առաջ, իրեն այցելած Միացեալ Ընկերութեանց տեսուչ Սարքեան էֆենտիին, - ինչպէս վերջինը խորին հիասթափութեամբ ինծի պատմած է, - յուսահատ այս լեզուով արտայայտուած է. «Վեհափառ Սուլթանին հաւատարիմ հպատակութիւնը պէտք է հիմնակէտը ըլլայ մեր ազգային քաղաքականութեան. ազգին զաւակները պատրիարակեցէ՛ք այս ուղղութեամբ»:

Այսպէս, Հայկական ինդիքը կարծես ձգուած էր իր բախտին, անոնց իսկ կողմէ՝ որոնք անոր դիւանագիտական սեղանի վրայ դրուելուն նախաձեռնողները եղած էին: Ազգային իշխանութիւնները ա՛յլապէս կարեւոր մտադրադուսներ ունէին. - տիրացուի, վարժապետի, առաջնորդի եւլն. սովորական եւ անճաշ խնդիրներ...»

Կային անշուշտ դադափարով յեղափոխական անհատներ, որոնք սակայն որեւէ տրամադրութիւն չունէին շարժում մը ստեղծելու եւ կամ այլպիսի շարժումի մը ղեկին անցնելու եւ անոր ուղղութիւն տալու: Յեղափոխականներու բարեկամ անձնատրուիթեանց մէջ, հասկնալի է, առաջին դիրքը կը զբաղէր Ուրիմեան Հայրիկ, այն ժամանակ Քուզկուսնուքի քարոզիչը, որ ամէն տեղ՝ հակառակ լրտեսներու ներկայութեան՝ ազատաշունչ քարոզներ կը խօսէր: Հայրիկ կ'արծես ըսէր կ'ուզէր. «Ոստը ինծի, գործը ձեզի»: Մօտաւորապէս նոյն դիրքին մէջ կը գտնուէին, - քիչ մը աւելի վերադաշ, - Իզմիրեան եւ Ալէսթեան:

Որքէն Եպիսկոպոս Նարպէյ կրօնաշունչ քարոզներու մէջ կը փայլեցնէր իր պերճախօսութեան տաղանդը, իսկ Հայկական Սնդուոյ չորք բոլորովին լուռ էր, - թէ եւ ճիշդ է թէ հրեման պաղտնի թղթակցութիւններ կ'ուղղէր արտասահման եւ նոյնիսկ տեղեկադիրներ՝ օտար դեսպանութեանց, ինչ որ կարելի է նկատել դիւանագիտական աշխատութիւն, բայց ոչ՝ յեղափոխական գործ:

Կրցա՛նք գտնել միայն տասնի չափ անձեր, որոնք թէեւ չէին գործեր՝ բայց յեղափոխականներուն համակիր էին եւ իրենց նիւթական ու բարոյական աջակցութիւնը չէին պտտար անոնց, պայմանաւ որ իրենք չվտանգուէին: Այս անձերու շատընի զծին վրայ կը գտնուէր Տոքթ. Թիրեաքեան, որ Կեսիկ Փաշայի իր բնակարանին մէջ կ'ընդունէր մեզմէ մէկ քանին, պայմանաւ որ ամէն անգամուն մէկ անձ միայն ներկայանար իրեն: Կար նաեւ Արփիար Արփիարեանի խումբը-Արփիար, Լեւոն Բաշալեան եւ մէկ քանի ուրիշներ, որոնց հետ նոյնպէս մեր խումբէն միայն մէկ հոգի կը յարարէր: Կար երրորդ խումբ մըն ալ, գոյցէ երկրորդ խումբին հետ գաղտնի կապեր ունեցող, որ կը բաղկանար Երուանդ Շնորհքեանէ, Տիրան Գէլյէկեանէ, Ալլըզումեանէ (Ուլատուփեան) եւ մեզի անձանցի մի քանի ուրիշներ: Ասոնք ալ զաղտնի մնալ կ'ուզէին եւ հեռուէն հետեւ միայն մեզ քաջալերող վը հանդիսանային: Ասոնցմէ եւ ոչ մէկը խիզախութիւն կամ քաղաքացիական արիւթիւն ցոյց կու տար անվերապաօրէն լծուելու յեղափոխական գործին եւ ձեռք առնելու այդ գործին ղեկավարութիւնը: Այն ժամանակ յեղափոխականութիւնը դիւրապիսի փառքի տխրոյս մը չէր, այլ փուշէ պսակ մը:

Գրիգոր Զօհրապ զրոյ մըն էր, միանգամայն ապրող մը, որ իր դիրքը չինելու հետամուտ էր եւ բոլորովին հեռու յեղափոխականներուն մօտենալու կամ անոնց աջակցելու գաղափարէն: Հրանդ Առաքունի, - թէեւ զգացումով հայրենասէր եւ պատուական անձնատրուիթեւ, - քաջութիւնը գաղտնապէս Փորթուգալեանի «Արմէնիա»ին հետ յարաբերելով կը սահմանափակուէր ու հոն վը վերջանար: Արդէն ինք թուրք փաստաբանի մը հետ ընկերակցած ըլլալով, իր գրասենեակը անմատչելի դարձած էր յեղափոխականներու համար, որոնցմէ մէկը միայն,

Հազիւ երբեմն, իրեն հետ երկու բառ կարենալ փոխանակելու համար պէտք էր հազար զգուշութեամբ մօտենար իրեն, Պօլաճը գիւղի իր բնակարանին մէջ։ Այս դատարարը չէր բնականաբար մեր փնտռածը եւ մենք ամիսներ շարունակ Դէպքինէսեան Լապտերով մարտ փնտռեցինք ի դուր, ու մնացինք մենք միգի։

Այս տեղերը կը գրեմ ո՛չ թէ մեր արժանիքը բարձրացնելու, այլ՝ ընդհակառակը՝ ողբալու համար Հայկական Հարցը եւ հայ յեղափոխական զործը, որոնք անտէր մնացած էին, նման՝ առանց նաւապետի ալիքներուն յանձնուած նաւու մը, որուն զեկաւարտութիւնը պիտի ստանձնէին անփութ նաւաստիներ, որքան ալ անձնուէր ըլլային անոնք եւ օժտուած ամէն բարի կամեցողութեամբ։

Իմ ներկայացուցած այս ահաւոր ամայութեան պատկերը եւ այս տողերուս բոլորն ողին պիտի լրմրեն անշուշտ ուշիմ ընթերցողը, որ ի՛նչ տարիքի ալ պատիւանի, երբ Հայկական ինքզինքնազան փութերուն եւ նոյնիսկ մեր այսօրուան իրականութեան վրայ անդրադարձութիւն մը ընէ, ցատով պիտի նկատէ որ այս եղած է մեր ազգային կենսական գործերուն ճակատագիրը զրեթէ ամէն ժամանակ եւ նոյնն է այսօր եւս, - եթէ իբր բացառութիւն սեպտի վերջին պատերազմի շրջանը * , յորում պահ մը ազգին բոլոր խաւերը եւ բոլոր կարգի զեկավար ուժերը համախմբուեցան Ազգային Պատուիրակութեան շուրջ, ազգային համերաշխութեան եւ միահամուռ գործակցութեան առաջին եւ վերջին սխրալի երեւոյթը ի հանդէս բերելով։

Ո՛րչափ ատեն որ յարատեւէ ազգային կենսական շահերու շուրջ մեզմէ շատերուն այս անտարբերութիւնը, հեղգութիւնն ու այլուրու-թիւնը, տեղի ունեցած եւ տեղի ունենալիք սոցալական, անհաշիւ եւ յախուռն գործունէութիւններուն ու ազգամիջառարկածութիւններուն պատասխանատուութիւնը կը ծանրանայ եւ պիտի ծանրանայ ո՛րչափ այդ գործերու ղեկավարներուն, նո՛յնչափ եւ թերեւս աւելի՞ անտարբերներուն, հեղգամիտներուն, երանաւէտ այլուրութեան մէջ յօրանջողներուն կամ մետասանհրորդ ժամու երեմիաներուն եւ Լաստիվերտացիներուն վրայ...։

Հակառակ Պոլսոյ հայ մտաւորականութեան եւ առաջնորդող դասակարգին կատարեալ անտարբերութեան ղէպի ազգային դատը, արտաքին երեւոյթները՝ անխոհեմ եւ յիմարական կոչուելու աստիճան՝ ողբերկէ էին։ Պոլսոյ մէջ կը տիրէր նոյն այն խանդավառութիւնը՝ որ կար ութսունական թուականներուն՝ կրթասիրական ընկերութիւններու կազմութեան շրջանին։ Հայկական սրճարաններու պատերը տակաւին պարզարուած վը մնային «Հայկական զինանշան»ով եւ «Բարբարք Ազգիս Հայոց» անուան տակ հայ թագաւորներու խմբանկարով։ Դպրոց-

* - Նկատի ունի Համաշխարհային Ա. պատերազմը - Վ.Ղ.։

ներու մէջ կ'ըզուէին հայրենասիրական երգեր: Պարզևարաշխութեան հանդէսները՝ զպրոցական հանդէսներ ըլլալէ աւելի՝ ազգասիրական ցուցադրութիւններ էին. իսկ Ազգային Ոսմանադրութեան տարեկարձ-ները, Ետիգուէի Ազգ. Հիւանդանոցի լոյնարձակ շրջափակին մէջ ու դուրսը, ներկայութեամբ տասնևակ հազարաւորներու լազմութեան՝ ուր սնամէջ ազգասիրական ճառեր ու երգեր ոչը կը թնդացնէին՝ դը-րեթէ հակակառավարական ցոյցի կերպարանք կը ստանային:

Կիրակի օրերը, հեռաւոր թողելէ հաղարաւոր հայեր, մեծամաս-նութեամբ հայաստանցի * , կը գլխիւն այն եկեղեցին, ուր պիտի քա-րոզէր Խրիմեան Հայրիկ, լսելու համար անոր հայրենաշունչ ճառերը: Սրճարաններու, զբօսավայրերու. և գլինատներու մէջ հայ երիտա-սարդներ համարձակ կը խօսէին Հայաստանի անցուդարձերուն, Մու-սա սէյի դատին և Նոյնիսկ յեղափոխական դործունէութեան մը ան-հրաժեշտութեան վրայ, և այս ամէնը չէր վրիպեր օսմանեան կառա-վարութեան աչքէն, մանաւանդ որ լրտեսական դրութիւնը արդէն ծայր տուած էր: Ոչ ոք կը խորհէր այս կացութեան հետևանքներուն վը-րայ....:

Քաջարձակ անգործունէութեան և տանիքներու վրայ թմրկա-հարութեան այս երևույթը մեր հայկական թեթևամտութեան կարծես անսրբադրելի մէկ գիծը եղած է միշտ, ու նոյնը այսօր ալ կը շարու-նակուի...: Այս մասին յիշեմ մանրադէպ մը:

1891-ին, երբ Սասուն կ'ուղևորուէի, Մարաշի մօտ, Քերթանի իր վեհարանին մէջ տեսակցութիւն ունեցայ Կիլիկիոյ հոգևոյց Մկրտիչ Քէյֆօսիդեան կաթողիկոսին հետ, որ ինծի հետեւեալ պատմութիւնն ը-րաւ.

Ութսունական թուականներուն, երբ ինք Պոլիս կը գտնուէր՝ Կի-լիկիոյ իր թեմերուն ինքնաւարութիւնը պաշտպանելու ընդդէմ Սահմա-նադրութեան պիտակին տակ Պոլսոյ Ազգ. Կեդրոնական Վարչութեան ի դօրձ դրած ոտնձգութիւններուն, Ներսէս Պատրիարքին համակիրնե-րը իրեն դէմ պայքար կը մղեն: Մինաս Չերազ, այն ատեն Ներսէս Պատրիարքի անձնական քարտուղարը, օր մը՝ բազմաթիւ ականաւոր հայերու ներկայութեան՝ կը յայտարարէ թէ Մկրտիչ կաթողիկոս ազ-գին զաղտնիքները կը մատնէ թուրք կառավարութեան: Մկրտիչ կաթո-ղիկոս երկու օր ետք կը հանդիպի Մինաս Չերազին ու անոր կ'ըսէ. «Չերազ, քու յայտարարութիւնդ պիտի չհնարեմ. պիտի ընդունիմ որ ես ազգին զաղտնիքները կառավարութեան կը մատնեմ. միայն դուն ինծի ըսէ թէ ազգը մէկ հատիկ զաղտնիք մը ունի՞, և ո՞րն է այդ զաղտնիքը զոր ամէն մարդ շօխտայ և որու մասին հրապարակներու վրայ չխօսուի»: Աւելորդ է ըսել թէ Չերազ կը պապանձի այս իրաւա-

* - Հոս նկատի ունի Արեւմտահայաստանը- Վ.Ղ.:

յի գիտողութեան վրայ :

Հոս յիշեմ՝ մեր թեթեամտութիւնը եւ անդադտնապահութիւնը յատկանշող ուրիշ փկայութիւն մըն ալ :

1890-91-ին Աթէնքի մէջ Մուրատ եւ ես առիթ ունեցանք քանիցս տեսնուելու տնտեսական «Տէյլի նիւզ»ի թղթակից եւ իրականին մէջ անգլիական քաղաքական գործակալ Մր. Ֆիցճերալտի հետ - այն ժամանակի Սրբ Մարք Սայքսը կամ աւելի ճիշդը՝ Քոլոնէլ Լորէնսը - որ Մերձաւոր Արեւելքի բոլոր յեղափոխական կազմակերպութեանց հետ չփման մէջ էր, եւ որ՝ իր բաղմամբիւ ճամբորդութեանց շնորհիւ՝ մօտէն ուսումնասիրած էր Պոյսոյ, Թիֆլիսի եւ ուրիշ գիւղերու հայերը : Սր մը Ֆիցճերալտ մեզի ըսաւ. «Դուք՝ հայերդ, շատ կը խօսիք եւ շատ կը գրէք : Իսկ կը գործէք : Պէտք է կտրել հայոց լեզուները եւ կոտորել անոնց գրիչները, որպէսզի չխօսին ու չգրեն, այլ՝ միայն գործեն» :

Վերի պատկերէն կրնայ մակարերութիւլ, թէ Պոսոյ մէջ յեղափոխական մարմին կազմելու մեր ձեռնարկը դիւրին գործ էր : Բարձրագոյն մատուցողականութիւնը անտարբեր էր կամ վախկոտ. ժողովրդային դասակարգերը՝ անկարգապահ ու անդադտնապահ. իսկ կառավարութիւնը սկսած էր աշխարհըրէն հսկել հայերու շարժումներուն վրայ : Այս բոլոր դժուարութեանց մէջ, ստեղծել, յաջողեցանք ստեղծել վազմակերպութիւն մը, որուն հիմնական պայմանը կը կազմէին զաղտնապահութիւնը եւ կարգապահութիւնը : Թուրք կառավարութիւնը այլեւս կատարելապէս գաղտնի կազմակերպութեան մը հանդէպ կը գտնուէր : Ըստ առաջնոյն սրճարաններուն մէջ դատարկախօսութիւն ընողները դիւրութեամբ կը ձերբակալուէին թուրք եւ հայ լրտեսներէ, մինչ մեր կազմակերպութեան անդամները անծանօթ ու անմատչելի կը մնային : Ձերբակալութեան, լանտարկութեան եւ աքսորի վտանգը աստիճանաբար հրապարակէն հեռացուց եւ լռութեան դատապարտեց անխոհեմ չաղակրատները, եւ ասպարէզը մաքրագործուեցաւ կարելիութեան սահմանին մէջ :

ԱԳԵՐՍԱԳԻՐ ԳԵՐՄԱՆԻՑ ԿԱՅՍԵՐ - 1889-ի աշնան, Գերմանիոյ Վիլհելմ Կայսրը, ընկերակցութեամբ Կայսրուհին, Պոլիս եկաւ Սուլթանին այցելելու : Գիտնալոյ հանդերձ իր թրքաէր տրամադրութիւնները, եւ հակառակ քիչ արժէք ընծայելուս դիւանագիտական գիմումներուն, մեր կազմակերպութիւնը չուզեց որ Քայզրը՝ չլացած իրեն ի պատիւ եղած մեծաշուք հանդիսութիւններէն՝ Պոյսէն մեկնէր լաւագոյն տպաւորութիւններով եւ ամէն ինչ վարդապոյն անանէր Թուրքիոյ մէջ : Պատրաստեցինք աղերսալիւր մը, որուն մէջ ոգեկոչելով իր մայրաքաղաքին մէջ ստորագրուած դաշնագրին 61-րդ յօդուածը, հայաստանի մէջ տիրող ծանր կացութեան վրայ կը հրաւիրէինք իր ուշադրութիւնը ու կը շնորհակալ խոստացուած բարենորոգումներու գառանց այլեւս յապագամանք գործադրութեան անհրաժեշտութիւնը :

Այս աղերսագիրը՝ մեր կաթովիկ ընկերներուն գիմումով՝ գեր-

մաներէնի թարգմանեց Վիեննայի միլիթարականներէն լալայնի լեզու-
դէտ շ. Սերովրէ Վրդ. Տէրփիշեանը, և նոյն միլիթարականներու Բան-
կալթիի վարժարանին գերման ուսուցիչը զայն գիտնազիտական լեզուի
վերածելով՝ գեղադրեց իր իսկ ձեռքով: Կիրակի օր մը, երբ Քայզըրը
մեծաշուք թափօրով Այադ Փաշայի գերմանական զեպանատունը կը
դառնար, մեր բնկերներէն երեսուն հոգի ճամբուն եղերքի զինուորական
շղթան կտրելով՝ կայսերական կառքը կեցուցին և վայելուչ հագած հայ
երիտասարդ մը աղերսագիրը յանձնեց Վիլհելմ Կայսեր ձեռքը, ու
խումբը ցրուեցաւ բաղմոթեան մէջ: Թուրք սուրկանոթիւնը շատ
փնտռեց, բայց չկրցաւ գտնել հեղինակները օտմանեան մայրաքաղաքին
մէջ կատարուած այս դիմումին, որմէ վերաւորուած էր Վեհափառ Սուլ-
թանին արժանապատուութիւնը:

Վիլհելմ Կայսեր Պոլիս այցելութեան առնչութեամբ հոս յիշեմ
մանրագէտ մըն ալ, ուր կը ցոյանայ իրիմեան Հայրիկի անսպառ սը-
րախօսութիւնը (էսփրի) և դուարթարանութիւնը (հիւմըր):

1890-ին, յիշեալ այցելութենէն քիչ ժամանակ ետք, Պոլսոյ մէջ
կ'ամուսնանար Վանայ երեւելիներէն Սահակ - Պէյեան Վարդան, Բան-
կալթիի մէջ, Նշանեան գերդաստանի աղջիկներէն մէկուն հետ, հան-
գիստագրութեամբ իրիմեան Հայրիկի, որ սլակի արարողութենէն ետք՝
հետեւեալ հարսանեկան ճառը կը խօսի.

«Երբ Աստուած Աղամը ստեղծեց, ան դրախտին մէջ առանձնու-
թենէ կը ձանձրանար: Ուստի, որպէսզի Աղամ իրեն համար ընկեր մը
ընտրէ, - ճիշդ ինչպէս որ մեր Վեհափառ Սուլթանը Վիլհելմ Կայսեր
ի պատիւ դորահանդէս մը կատարելով անոր առջեւ ցուցադրեց իր հե-
տեւակ, հեծեակ, քնդամօքաձիգ և ցնդակաւոր դորագունդերը, - Աստ-
ուած Աղամին առջեւէն անցուց բոլոր արջերը, գայլերը, բարեմիճերը և
վագրերը. իսկ Աղամ անոնցմէ ոչ մէկը հաւնեցաւ ... Ասոր վրայ,
Աստուած ստեղծեց կինը»:

Մեր ԽՈՒՄԲԻՆ ՍԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ՀԱՅԵԱՑՔՆԵՐԸ - Ապագայ
հայ կուսակցութեանց մէջ պատահած իրադարձութիւնները և մասնա-
ւորապէս 1896-ի հնչադեան մեծ պառակտումը ընթերցողին հասկնալի
դարձնելու համար, խիստ կարևոր է որ այստեղ պարզեմ թէ ինչ էին
մեր խումբին տիրապետող սկզբունքները և քաղաքական հայեացքները:

Մեր խումբը բաղկացած ըլլալով միմիայն արեւմտահայ յեղա-
փոխականներէ, - թէև քանականաբար չէինք թխտեր կովկասի մեր հայ
եղբայրներուն մեզի հետ գործակցութեան դադափարը, - մեր նպատա-
կըն էր Արեւմտահայաստանի և Կիլիկիոյ մէջ, յեղափոխական գործու-
նէութեամբ, ապահովել Պերլինի դաշնագրով խոստացուած բարենորոգ-
մանց գործադրութիւնը՝ այս արդիւնքը առաջին հանգրուանը նկատելով
ազգային ազատագրութեան չարժումին, որ հայ ժողովուրդը հանգըր-
ուանէ հանդրուան պիտի առաջնորդէր դէպի ազգային ինքնավարութիւն
և ազգային անկախութիւն, որոնք կը կազմէին մեր իտէալը կամ հե-

ռաւոր նպատակը: Դիւանագիտական աշխատանքները չէինք արհամարհեր, նոյնիսկ կը գնահատէինք. լայն զանոնք կը նկատէինք իրեւեւ երկրորդական միջոցներ, բնաւ համամիտ չըլլալով անոնց, որոնք կը կարծէին թէ միմիայն գիւանագիտական միջոցներով կարելի էր հասնիլ բազմադաս ձեռնարկին: Միանգամայն ուրախ էինք որ դիւանագիտական հողի վրայ աշխատող բաւական թուով հայեր կային արդէն Լոնտոն ու Փարիզ, եւ մենք անոնց հանդէպ մեծ յարգանք ունէինք, ըստ ժողովրդական առածին՝ թէ հեռաւոր սուրբը զօրաւոր կ'ըլլայ: Մեր այդ յարգանքը ա՛յն աստիճանին կը հասնէր որ, երբ Աշգեհան Պատրիարք իր դահակալութեան քիչ և տք անվիրական կառավարութեան յղեց հեռալիւր մը, որ կ'ըսէր. «Թրքահայութեան միակ ներկայացուցիչը ես ըլլալով՝ կարապետ Յակոբեան որեւէ հանգամանք չունէր յանուն թրքահայութեան դիմումներ կատարելու բրիտանական դաշինքին մօտ», մենք Աշգեհանի այդ արարքը, - որ անշուշտ քննադատելի էր, - նկատեցինք շայկական Դատին դէմ անարդարանալի դաւաճանութիւն մը:

Մենք մեր մտքէն անգամ չէինք անցընել զսակարգային կամ դաւանական որեւէ խտրութիւն: Կը հաստատայինք որ ազգը կրնար ազատիլ միմիայն իր դիւանագիտական դաւանութեան միահամուռ գործակցութեամբը եւ հաւաքական ճիգովը, կղերական թէ աշխարհական, հարուստ թէ աղքատ, մտաւորական թէ տղետ գիւղացի՝ ամէն հայ հասարակ էր մեր աչքին: Մեր ծրագրին մէջ չկար որեւէ քաղաքական կամ տնտեսական աշխարհայեացք կամ դաւանանք: Մենք բնաւ չէինք չահարկուել թէ ապագայ ազատագրութեամբ Հայաստանը թաղաւորական պիտի ըլլայ թէ հանրապետական, թէ երկրին մէջ ի՞նչ տնտեսական կարգեր պիտի հաստատուէին: Մեր հայեացքով այդ բոլորը ապագայ ազատագրութեամբ հայ ժողովուրդին գերիշխան կամքէն ու քուէն եւ դուրսէ մեր ազատագրութեան պայմանները տնօրինող պետութիւններու կարգադրութիւններէն կախում ունեցող խնդիրներ էին:

Շատ քիչ պաշտօնական ունէինք լեկերիւմարութեան վրայ, քանի որ Եւրոպայի մէջ ուսանող արեւմտահայ երիտասարդներէն պրիթ ոչ մէկը կը հետեւէր ընկերային գիտութիւններու, որոնց այնքան առաջնակարգ կարեւորութիւն կ'ընծայէին սոսկայն մեր կոմկապսաճայ համալսարանականները: Մենք մեր ազատագրական պայքարին իրեւեւ նախատիպար ունէինք Յունաստանի, Ռումինիոյ, Սերպիոյ, Գարատաղի, Պուլկարիոյ եւ Կրետիի օրինակները: Ասոնք բոլորը միակ նպատակ ունէին թրքական լուծէն ազատումը իրենց հայրենիքին եւ ոչ թէ այնտեղ ապագային հաստատութիւն քաղաքական եւ տնտեսական իրաւակարգերը:

Մեր մտքերու այս կուսութեան մէջ, մեր խանգաւառ միամտութեան մէջ, մենք չէինք ալ կրնար ըմբռնել որ հայ ազգին ազատագրութեան միակ նպատակը կարելի եւ ներկի է մէկէ աւելի յեղափոխական

կուսակցութիւններու անջատ - անջատ զործունէութիւններով հետապնդել. որով մեր սեւեռուն զաղափարն էր այս նպատակը որդեգրած բոլոր առանձին խմբակները միացնել և ի մի ձուլել միակ լեղափոխական կազմակերպութեան մը մէջ: Այսպէս, մենք և մեզի հետ զրեթէ բոլոր արեւմտահայ լեղափոխականները հայ լեղափոխական զորքը կ'ըմբռնէինք իր ամենալճիտ պարզութեանը մէջ, առանց անոր պատուաստելու օտարոտի և բռնադրօսիկ զաղափարարանութիւններ:

ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ԿՈՎԿԱՍՍԱՅՈՑ ՄԷՋ- խորդ գլուխին մէջ առիթ ունեցանք խօսելու ուստահայ հետապոխչներու կամ անջատ զործիչներու երբեմնակի այցելութեանց և կամ ուսուցչութեան և ուրիշ պատրուակներով Արեւմտահայաստանի զանազան կողմերը ժամանակաւոր ընակութեան ու զաղափարատարածութեան մասին: Այս հակիրճ ակնարկութիւնն իսկ բաւական է եզրակացրնելու համար, թէ 1880-1890 տասնամեակին կովկասահայութեան մէջ ևս զոյգութիւն առած էին, - թէ և նուազագոյն չափով, - հայ լեղափոխական նոյն խմբումները, ինչ որ տեսանք արեւելեան Արեւմտահայաստանի մէջ: Բայց կովկասահայ լեղափոխական շարժումին բնոյթը և զրդապատճառները մեծապէս կը տարբերէին արեւմտահայ լեղափոխական շարժումին հիմունքներէն:

Այստեղ անհրաժեշտ կը նկատեմ այդ տարբերութեան վրայ ծանրանալ, տրուած ըլլալով որ մտայնութիւններու և տեսակէտներու այս խոր տարբերութիւնն էր որ զլիսաւոր ազգակը եղաւ հայութեան երկու մեծ հատուածներու լեղափոխականներուն միջև: ապապային յատաճ պայիք անհասկացողութիւններուն, բաժանումներուն ու պառակտումներուն, և թէ այս նոյն տարբերութիւնն է որ մինչև այս օրերս կը դժւարացնէ երկու հատուածներու ընդհանուր հասկացողութիւնը Հայկական Դատի կոթեան և անոր հետապնդման միջոցներուն կիրառութեան վերաբերութեամբ:

Կովկասահայերը իրենց ընակած հողամասին մէջ բառին բուն նշանակութեամբ «Հայկական Խնդիր» չունէին: Գոնէ անորոշ տեւողութեամբ, բայց յամենայն զկպս երկա՛ր ժամանակաշրջանի մը համար Ռուսահայաստանի ազատագրութեան հարց զոյգութիւն չունէր: Ոչ ոք մտքէն կ'անցնէր որ հնարաւոր էր հայկական ճիգերով Ռուսահայաստանի ձերբազատել ձարերու մեծագոր կայսրութեան լուծէն. այն կայսրութեան՝ որուն քաղաքական սեւեռուն նպատակն էր ընդհակառակը՝ իր հարաւային տաճմանները երկարել, մինչև Արեւմտահայաստան, մինչև Փոքր Ասիա, մինչև Ռիջերկրական ծով:

Այս հանգամանքներու մէջ ուստահայ ազգայնական մտաւորականութեան աչքին ևս Հայկական Դատը ուրիշ բան չէր կրնար ըլլալ, բայց միայն Արեւմտահայաստանի ազատագրումը: Պարզ է որ եթէ կովկասահայերը ուստ մտաւորականութեան ազդեցութենէն բացարձակապէս զերծ մնացած ըլլային, անոնց լեղափոխական զաղափարարանու-

թիւնը եւ Հայկական Դատի էութեան ըմբռնումը մօտաւորապէս նոյնը պիտի ըլլար ինչ որ էր արեւմտահայերունը: Դժբախտաբար, սակայն, անոնք ապրելով բոլորովին տարբեր միջավայրի մը մէջ, նոյնքան տարբեր ազդեցութիւններու ներքեւ կը գտնուէին:

Ութսունական թուականները կը գուգադիպէին Ռուսիոյ մէջ ներքին յեղափոխութեան ամէնէն փոթորկալից մէկ շրջանին: Ռուս մտաւորականութեան այն ժամանակի տիրապետող իտէալն էր ձարական ըռնապետական ռեժիմին տապալումը: Այս նպատակին համար ամբողջ Ռուսիոյ մէջ ակազմուած էին դանազան յեղափոխական, ընկերավարական, անիշխանական եւ ոչնչական (նիհիլիսթ) գաղափար կազմակերպութիւններ: Ռուս համալսարանները, որոնց մէջ կ'ուսանէին բազմաթիւ հայ երիտասարդներ, զլիաւոր վառարանն էին այս աւելի կամ նուազ ծայրայեղ հոսանքներուն, որոնց ազդեցութենէն բնականաբար չէին վրնար զերծ մնալ անոնք: Նոյնիսկ Եւրոպայի համալսարանները յաճախող ռուսահայ երիտասարդները, նախապէս տոգորուած ռուսական այս ծայրայեղ տրամադրութիւններով, կը նախընտրէին ընկերային գիտութիւններու դասընթացներուն հետեւիլ եւ գրեթէ միշտ շրջապատուած ռուս դասընկերներէ, վերջի վերջոյ իրենք ալ կը դառնային ծայրայեղ յեղափոխականներ՝ ռուսական իմաստով: Այսպիսիներուն յեղափոխական գաղափարաբանութիւնը վերածել արեւմտահայերու զուտ ազգային ազատագրական գաղափարաբանութեան՝ անկարելիաց կարգէն էր: Մատի վրայ կը համընկէին այն ռուսահայ գործիչները, որոնք կարող ըլլալին ըմբռնել արեւմտահայ դատը իր գուտ պարգուութեանը մէջ:

Արեւմտահայ եւ ռուսահայ ըմբռնումներու այս քառսը զլիաւոր արգելքն էր անոնց ընդարձակ եւ կատարեալ հասկացողութեանը Հայկական Դատի ո՛չ միայն նպատակներուն, այլեւ միջոցներուն ու գործելակերպի ընտրութեան շուրջ: Իրերու այս վիճակին մէջ, հասկնալի էր որ ռուսահայ մտաւորականութեան մեծագոյն մասը երթար խառնըւէր ռուսական մեծ չարժամին, բոլորովին անտեսելով Հայկական առանձին Հարցը եւ նոյնիսկ ժխտելով անոր գոյութիւնն անգամ: Ուրիշներ՝ խառնուածքով աւելի ազգայնական՝ կ'ընդունէին այդ Հարցին գոյութիւնը եւ տրամադիր էին անոր նուիրելու իրենց ճիշդը, բայց այդ Հարցին վրայ կ'ընդունէին իրենց ստացած ռուսական յեղափոխական գաղափարաբանութեան տկնոցով:

Անուրանալի է, սակայն, որ Հայկական ինքնորոշ շահագրգռող այս ռուսահայ մտաւորականները ընդհանրապէս համալսարանականներ եւ ընկերաբանական ուսումնարաններ հետեւողներ ըլլալով, զարգացման տեսակէտով աւելի րարձր էին քան արեւմտահայ մտաւորականները. թո՛ղ արեւմտահայ անուս դաստիարակ յեղափոխականները, որոնք, սակայն, ապագայ յեղափոխական կուսակցութեանց զլիաւոր տարրն ու դանդուածը ըլլալու սահմանումն էին: Ռուսահայ յեղափոխական

մտաւորականութեան՝ զարգացման տեսակէտով՝ այս գերազանցութիւնը անխուսափելիօրէն պատճառ պիտի ըլլար որ անոնք ստանձնէին ապագայ յիշատիւնական շարժման գլխաւոր զեկալարութիւնը, չնայելով ալն հանգամանքին որ անոնք չառ քիչ տեղեակ էին տեղական պայմաններուն ալն երկրին, որուն մէջ տեղի պիտի ունենար այդ շարժումը:

Հայկական կեանքի այս վերջին յիշամեակի փոթորակից իրագործութիւնները խորապէս ուսումնասիրողներէն խիստ քիչերն են, - և այս տողերս գրողը վերջինը պիտի ըլլար անոնց, որ կը ժխտեն հայ յեղափոխական շարժումին պատմական պահանջը և անհրաժեշտութիւնը: Բոլորովին տարբեր խնդիր է, սակայն, քննել՝ թէ ո՞րքան նպատակայարմար կերպով տեղի ունեցաւ այդ շարժումը: Արդ, վստահօրէն կարելի է ըսել, թէ եղած հաշիւի սխալներուն, չեղումներուն և սայթախումներուն զլխաւոր աղբիւրը և բանալին պէտք է փնտռել այս երկու տրամապծակ տարբեր մտայնութիւններուն խառնուրդին մէջ:

ՀԵՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿԵՈՒԹԻՒՆ— Ահա այսպիսի տարասեւ և իրերամերժ մտայնութիւններու առաջին բռնադրօնի խառնուրդը եղաւ Հնչակեան Կուսակցութեան կազմութիւնը:

Ըսինք արդէն որ «Հնչակ»ի առաջին թիւը երևցաւ 1887-ի Դեկտեմբերին, ժընեւի մէջ խումբ մը ուսանշայ ուսանողներու կողմէ, որոնք ինքզինքնին կոչեցին «Հնչակեան խումբ»: 1888-ին «Հնչակ» հրատարակուեցաւ 12 թիւ, այսինքն՝ ամիսը մի անգամ: Այդ 12 թիւերուն մէջ մշակուեցաւ ծրագիր մը, որուն ամփոփումը յետոյ պիտի կազմէր Հնչակեան Կուսակցութեան ծրագիրը:

1889 թուականին, զբամական նեղութեան պատճառով, «Հնչակ» հրատարակուեցաւ ընդհատ կերպով, մէկ քանի ամիսը մէկ անգամ, և իր պարունակութիւնը գլխաւորաբար կը բաղկանար ընկերվարական մանուածապատ տեսութիւններու պարզումէն ու մասամբ ալ Արեւմտահայաստանի վիճակը պատկերացնող թղթակցութիւններէ: Պոսոյ նորակազմ յեղափոխական խումբը, որ ամբողջ Թուրքիոյ կարևորագոյն խմբակցութիւնը զարձած էր արդէն, «Հնչակ»ը և արտասահմանեան միւս հայ թերթերը կը գործածէր միալն իրրեւ. բնթերցանութեան նիւթ և փրփականութի միջոց, առանց այդ թերթերէն մէկուն պաշտօնաբերուն յաբելու:

Հնչակեան խումբի պարագլուխներն էին՝ Աւետիս Նազարբեկեան, Մարօ, որ քիչ ետք եղաւ Տիկին Նազարբեկեան, Գարբիէլ Կաֆեան (Շմաւոն), Մոնփելիէի երկրագործական վարժարանի ուսանող Սաղօ, Ռուբէն Խան-Ազատեան (Նշան Կարապետեան) և մէկ քանի ուրիշներ: Ասոնք անշուշտ մի քանի պաշտօնաբաղիցներ ալ ունէին Կովկասի մէջ:

✓ 1889-ի վերջերը Հնչակեան խումբը նախաձեռնութիւնը ունեցաւ իր և ուսնդուն անպամենքէն մի քանի Թուրքիա զրկելու, աշխուղ գաղափարակիցներ փնտռելու և մասնաճիւղեր կազմելու զիտաւորութեամբ անոնցմէ կազմելու համար կանոնաւոր Կուսակցութիւն մը: Այս գործիչ-

ները յաջողեցան կարնոյ մէջ կազմել մասնաճիւղ մը, գլխաւորութեամբ կարնոյ ազգային վարժարաններու ուսուցիչ Զիլինկիրեանի, եւ մասնաճիւղ մըն ալ Տրապիզոնի մէջ, որուն անդամներն էին մեզի արդէն ծանօթ Հմայեակ խուչպուլեան (չրջանաւարտ էջմիածնի Գէորգեան ճեմարանի) եւ Պետրոս Մարիմեան (Տամատեանի աշակերտակիցը, շրջանաւարտ Վենետիկի Մուրատ Ռաֆայէլեան վարժարանի)։ Տրապիզոնի խումբին կը պատկանէր նաեւ Յակոբ Մեղաւորեան։

Հնչակեանները Տրապիզոնի խումբին առջի օրէն «Երկրի Կեդրոն» անունը տուած էին, բայց այդ խումբը պարզ մասնաճիւղէ մը անդին չանցաւ, զործնականապէս միայն իր շրջակայից եւ կարնոյ Հետադարձերեւոյժ իսկ զործնականին մէջ Երկրի Կեդրոնի գեր պիտի կատարէին Պոսոյ մեր մարմինը՝ հնչակեաններու հետ ձուլումէն ետք, եւ Մարգուսանի Կեդրոնական Վարչութիւնը, մինչեւ իր կազմալուծումը եափքաներու գործին* հետեւանքով։

Այս երկու մասնաճիւղերու կազմութենէն ետք, հնչակեան գործիչները՝ յանձինս Ռուբէն Խան-Աղատեանի, Գարրիէլ Կաֆեանի, Մեղաւորեանի եւ պարսկաստանցի Ռաֆայէլի, Պոլիս եկան, այնտեղ ալ յեղափոխականներ կոնկրետ եւ իրենց խումբին միացնելու յառաջադրութեամբ։ Ասոնք մի քանի պրպտումներէ եւ անշնչան խմբակներու հետ ամուլ րանակցութենէ ետք, որոնց ընթացքին հանդիպած էին նաեւ Արիիարեանի խումբին, որ այդ թուականին յեղափոխականներու համակող էր միայն եւ ո՛չ գեղ իրապէս յեղափոխական, - վերջապէս չփման մէջ մտան մեր վազմին հետ։

Հնչակեան գործիչները մեկի ներկայացուցին նաեւ, իբրեւ արդէն իրենց զաղափարակից, Մամբրէ վարդապետը, որ այդ միջոցին Այաշկերտէն իրրեւ յեղափոխական ձերբակալուած եւ Պոլիս բերուած էր։

Երկար եղան մեր րանակցութիւնները Հնչակեան խումբին ու մերինին միջեւ միութիւն եւ ձուլում յառաջ բերելու համար։ Հնչակեանները ապաւայ յեղափոխական կազմակերպութիւնը կ'ուզէին դնել ընկերվարական հիմունքներու վրայ եւ որչափ որ իրենց ծրագրին մէջ սոցիալիզմը (ընկերվարութիւնը) դրած էին իբրեւ հեռաւոր նպատակ, բայց իրականին մէջ իրենց ամբողջ ծրագիրը սոցիալումընէն էր սոցիալիստական զաղափարներով։ Ասկէ դատ՝ իրենք կ'երազէին Արեւմտահայաստանը յեղափոխութեամբ ազատելու ետք, նոյն կերպով ազատել նաեւ Ռուսահայաստանն ու Պարսկահայաստանը եւ անոնցմէ կազմել հայկա-

* - Հնչակեան կեդրոնի որոշումով 1892 Գեկտ. 15-ի գիշերը Փոքր Հայքի գլխաւոր քաղաքներուն եւ գիւղաքաղաքներուն մէջ պատերում փակցուեցան քրքրէն յայտարարութիւններ, որոնք Սուլթանը տապալելու կոչեք էին՝ Վ.Ղ.։

կան ղառնակցային հանրապետութիւն մը, որուն վերջնական իրաւա-
կարգը պիտի ըլլար սոցիալիզմը, «որ մարդկութեան գերագոյն իտէալն
է և արդի պիտութեան և քաղաքակրթութեան վերջին խօսքը»: Իսկ ի-
րենց գործակալերը պիտի ըլլար՝ փրոփակաճառ (քարոզչութիւն),
սկիստացիա (յուզագրգուծութիւն), տեռոր (ահաբեկչութիւն):

Արեւմտահայերէս համար, որոնց՝ հայկական ազատագրութեան
եւ անոր առաջնորդող միջոցներուն մասին ունեցած պարզ, վճիռ ըմ-
բռնումները վերը պարզեցինք, այս ծրագիրը բոլորովին անհասկնալի
և անմարտելի էր: Դժբախտաբար, սակայն, մեր ընկերներուն մեծա-
դոյն մասը, թէև անհունապէս խանդավառ, չատ հեռու էր ռուսահայ
գործիչներու մտաւոր զարդացումէն և բարձր մշակոյթէն. միւս կող-
մէ՝ այս վերջինները, - մանաւանդ Գարրիէլ Կաֆեան, - վերին աստի-
ճան համոզիչ լեզու և յրաւիչ ճարտարախօսութիւն ունէին: Ասոնք
չաբաժնեւորուի մեր գլխուն սոցիալիստական աւետարան կարդացին, և
արդիւնքը եղաւ այն՝ որ մեր ընկերները մեծ մասամբ հրա-
պուրուած բոլորովին նոր այս վարդապետութեան կրկենբերութեան
հեռադատելիքն, ամբողջութեամբ ընդունեցին հնչական ծրագիրը և
եղան նորագործ սոցիալիստներ:

Ամէնէն աւելի քիմօրէն սոցիալիզմի յարող մեր ընկերները և-
ղան Գրիգոր Գլրճճեանն ու Համբարձում Պոյաճեանը, որոնք երկուքն
այ մինչև վերջը մնացին սոցիալիստ, թէև երկուքն այ հեռու էին սո-
ցիալիստ տեսարաններ ըլլալէ: Այստեղ փակագծի մէջ ըսեմ թէ Պոյաճ-
եան (Մուրադ) Սասնոյ մէջ ո՛չ միայն սոցիալիզմ բառը անգամ մը իսկ
բերնէն չհաննց, այլ մտքէն իսկ չանցուց. բայց և արդէս մնաց այն-
քան սոցիալիստ, որ երբ Ափրիկեան Տրիպոլիս երկար տարագրութենէ
ետք յաջողեցաւ փախչիլ, անվարան յարեցաւ հին Հնչական Կուսակ-
ցութեան, չնայելով որ նոր հնչականներու մէջ ունէր ամենամօտիկ
ընկերներ, որոնց առաջին կարգին վրայ՝ Տամատեանը:

Մեր մէջէն միայն փոքրամասնութիւն մը, որուն մէջ էին տողե-
րու հեղինակը և արտանուցի Յակոբ Գաղանճեան (որոնք պետք էին
Բերայի խումբին, որուն անդամներուն մէկ մասը կը կազմէին իրենց
գաղափարէն ու կադապարէն հայ կաթողիկոսներ), մինչև վերջ մերժե-
ցին հնչական ծրագրի բովանդակութիւնը և նախընտրեցին հրաժա-
րի յեղափոխական գործէն: Հրաժարիլ կ'ըսեմ, որովհետեւ մեր այն
ժամանակի մտայնութեամբ՝ մեզի աններելի բան մը կ'երեւար նոյն
նպատակին համար տարբեր կուսակցութիւն մը կազմել և սարբեր
գործունէութիւն մը ունենալ: Թէ՛ հնչական գործիչները և թէ՛ Պոյ-
սոյ կազմակերպութեան մեր ընկերները մերժելով մեր հրաժարակա-
նը՝ անպատահութիւն մը չտեսան որ մեր փոքրամասնութիւնը առանց
սոցիալիստ դառնալու շարունակէր գործակցել իրենց հետ: Ասոր վրայ
մենք ալ չկրցանք կանխատեսել այդպիսի անբնական գործակցութենէ
մը ասպայային ծագելիք անպատահութիւնները, և ի սէր գործին՝ որ

այնքան մօտիկ էր մեր սրտին՝ միացանք իրենց, մասնաւանդ որ մեզի համար դժնդակ բան մըն էր բաժնուիլ ո՛չ միայն մեր Պոլսոյ ընկերներէն, որոնց հետ մօտ երկու տարւոան սերտ զործակցութիւն ունեցած էինք, այլև Մարիմեանէն, Խուլպուլեանէն ու Մեղաւորեանէն, որոնց առաջին երկուքին հետ մեր ընկերական եւ զաղափարակցական կապերը աւելի հին էին։ Իսկ վերջինը ի՛նք աւելի մօտիկ յարաբերութիւն մը չակած էր տաղերս զրոյին հետ՝ իր երուսաղէմ մնացած տարիներուն մէջ հոն արտօրական Մարկոս Խաթանեանէն նպաստաւոր տեղեկութիւններ առած ըլլալով անոր մօտին։

Ահա այսպէս Պոլսոյ մեր արդէն կազմակերպուած խմբակցութեան ձուլումովը Հնչակեան խումբին հետ՝ կազմուեցաւ Հնչակեան Կուսակցութիւնը 1889-ի վերջերը *։

Պոլսոյ մեր խումբը բաւական նիւթական միջոցներ ունէր. ուստի մեր միացումէն ետք, մեր առաջին զործը եղաւ «Հնչակ»ի կանոնաւոր հրատարակութիւնը ապահովելու համար զուար մը զրկել ժընկէ։ Այսպիսով էր որ 1890 թուականի սկիզբէն «Հնչակ»ը դարձաւ ամսօրեայ հրատարակութիւն եւ պաշտօնական օրկան Հնչակեան Յեղափոխական Կուսակցութեան։ Իսկ 1890 Յուլիս 15-ի Գում-Գափուի ցոյցէն ետք, «Հնչակ»ը հրատարակուեցաւ նոյնիսկ իբրեւ շաբաթաթերթ։

Մեր միամտութիւնը, «իմը» եւ «քուդը» չփնտռելու անշահախնդրութիւնը եւ անվերապահ անխտրակաճութիւնը այն աստիճանի էր, որ չնայելով որ մեր միացումովը Հնչակեան Խումբին կը բերէինք արդէն կազմակերպուած խումբերու ցանց մը Պոլսէն մինչեւ Կիլիկիա ու Փոքր Հայք եւ անկէ մինչեւ Մուշ ու Վան, քիչ - շատ նիւթական միջոց ու հնարաւորութիւններ, մեր խումբին համար որեւէ իրաւասութեան խտրի չհանեցինք, որեւէ պայման չդրինք, - ո՛չ իսկ Կեդրոնի մէջ ձայն ունենալու անհրաժեշտ պայմանը, - այլ կատարեալ մասնաշաղկապ եւ բարեմտութեամբ անձնատուր եղանք ու ենթարկուեցանք Կեդրոնին՝ հնչակեաններու պարզ այն հաւաստումին վրայ, թէ Կեդրոնի անդամներ Աւօ, Մարօ եւ Սադօ առաջնակարգ ուժեր ու անձնուէր յեղափոխականներ էին։ Այս եղաւ մեր մեծագոյն պիտաւր. կարելի է ըսել՝ մեր սկզբնական մեղքը, որ անկէ ետք ալ, զեռ մինչեւ վերջին օրերս, շարունակուեցաւ մնալ մեր յեղափոխական կազմակերպութեանց ու հանրային կեանքին կարծես ճակատադրական եւ անբուժելի սկզբնական մեղքը՝ կամովին ու կուրօրէն յանձնուիլ զեկամարութեանը մեր միջավայրին, պայմաններուն ու պահանջներուն անձանօթ կողմասա-

*. Տամատեան հասարակարար ըսել կ'ուզէ քէ ալ Պոլսոյ մէջ Կեանքի Կոչուեցաւ հնչակեան կամեմաւոր մասնաճիւղ մը (?) - Վ.Ղ.։

Հայ առաջնորդներու, երբեք չխրատուելով պատմութեան դասերէն:

Այսպէս, ուրեմն, 1890 թուականէն սկսեալ Հայ իրականութեան մէջ երևան կու գար իրապէս կազմակերպեալ եւ ճիւղաւորեալ Հայ յեղափոխական կուսակցութիւն մը - Հնչակեան կուսակցութիւնը - իր կեդրոնով, օրկանով եւ մասնաճիւղերով, որոնց ցանցը պիտի տարածէր ո՛չ միայն Հայաստանի, Փոքր Հայքի, Կիլիկիոյ եւ Թուրքիոյ այլեւայլ Հայաշատ քաղաքներու եւ գիւղերու մէջ, այլեւ Կովկասի, Պարսկաստանի ու Եւրոպայի մէջ եւ մինչեւ հեռաւոր Ամերիկայի Միացեալ Նահանգները:

Փոքր եւ անջատ խումբերը, - ինչպէս Չադրեանական խումբը, Փորթուղալիսնի Հայոց Հայրենասիրաց Միութեան ցանցառ հետեւորդներու խումբը, որ ինքզինք «Արմենական» կը կոչէր եւլն, - աստիճանաբար կը ձուլուէին Հնչակեան կուսակցութեան մէջ, ի բաց առեալ Վանայ Արմենական կուսակցութիւնը, որ 1888-ին կազմուած նախ քան Հնչակեանութիւնը*, միշտ նոյն շրջանակին մէջ ամփոփուած մնալով, պահեց իր առանձին դոյութիւնը անջատ յեղափոխական կազմակերպութեան մը ձևին տակ՝ Վանայ մէջ Հնչակեան եւ յետոյ զաշնակցական մասնաճիւղերու կազմութենէն ու ծաւալումէն ետք այ:

Այս գլուխին մէջ նպատակ չունենալով կուսակցութեանց զործունէութեան մասին խօսիլ, անցողիկ կը յիշեմ որ Հնչակեան կուսակցութեան առաջին գործերը եղան 1890 Մայիսի էրզրումի ցոյցը, նոյն տարուան Յուլիս 15-ի Գում-Գափուի ցոյցը եւ անոր հետեւող մէկ քանի տեռորական գործերը Հայ յայտնի դաւաճաններու ղէմ: Այս դէպքերը իրենց խորունկ ազդեցութիւնը ունեցան ո՛չ միայն Թուրքիոյ Հայ յեղափոխական տարրին, այլեւ Կովկասի Հայ մտաւորականութեան յեղափոխական դասակարգին վրայ:

Վերը պարզեցինք թէ ինչ յեղափոխական տրամադրութիւններ ծայր տուած էին Կովկասի ազատասէնչ Հայ երիտասարդութեան մէջ, արդէն վերոյիշեալ դէպքերէն առաջ՝ իսկ այս դէպքերէն ետք, Կովկասի մէջ ալ պահանջ զգացուեցաւ ազգային դատով չահագորդուող Հայ յեղափոխական անջատ տարրերը միացնելու եւ միաձոյլ կազմակերպութեան մը վերածելու: Որչափ կը յիշեմ, այս խմբակներէն մին կը կոչէր Երիտասարդ Հայաստան, մէկ ուրիշը՝ Դրօշակ խումբ. եւ դեռ ուրիշ մանր խումբեր գոյութիւն ունէին:

Թուրքիոյ վերոյիշեալ դէպքերուն յառաջ բերած ոգեւորութեան ազդեցութեան տակ, այս խումբերը իրարու քով եկան եւ կազմեցին 1890 թուականի տմբան Հայ Եեղափոխականներ Դաշնակցութիւնը, որ

* - Դրանք է թէ Արմենական կազմակերպութիւնը կամ կուսակցութիւնը հիմնուած է 1885-ին Վանայ մէջ. մինչ Հնչակեան կուսակցութիւնը 1887-ին ի Փրննի- Վ.Ղ.:

իր կարգին մշակեց իր ծրագրերն ու քաղաքական դաւանանքը: Որքան
կը յիշեմ, այս ծրագրին հիմնական կէտերը եւ անոր ծնունդ տուող
ընդհանուր մտայնութիւնը մեծ տարբերութիւն մը չունէին Հնչակեան
Կուսակցութեան տեսակէտներէն: Նպատակը Արեւմտահայաստանի ա-
զատագրութիւնն էր, միջոցները յար եւ նման էին Հնչակեաններուն,
կազմակերպութիւնը կ'որոշեալէր ապակեդրոնացում՝ ի տարբերութիւն
Հնչակեաններու Կեդրոնացման դրութեան: Իսկ տնտեսական Հայնաց-
քը՝ Հակառակ պատէ պատ դարձուածքներուն եւ վերապահումներուն՝
Հաղիւ քողարկեալ ընկերավարութիւն էր:

Ըստ երեւոյթին զժուար չէր, ուրիմն, Հնչակեան Կուսակցու-
թեան եւ այս նորակազմ Կուսակցութեան միջեւ ձուլում յառաջացը-
նել՝ այնուհետեւ մէկ ճակատով վարելու համար Հայ յեղափոխական
գործը:

Ծիւղ պոլ միջոցներուն Կովկաս կը գտնուէին մի քանի Հնչակեան
գործիչներ, ինչպէս՝ Ռուբէն Խան-Աղատեան, Զիլինկիրեան եւ ուրիշ-
ներ, Հնչակեան Կուսակցութիւնը զօրացնելու նպատակով: Շուտով այս
գործիչներուն եւ նորակազմ մարմնոյն միջեւ սկսան միութեան բանակ-
ցութիւններ, որոնց ընթացքին, որքան դիտեմ, դիտուող վիճաբանու-
թեան նիւթերն էին՝ կեդրոնացում - ապակեդրոնացում, թունդ սոցիա-
լիզմ-չափաւոր սոցիալիզմ, Կեդրոնի եւ պաշտօնաթիւրթի ժընեւ, զըտ-
նըւելու կամ Թիֆլիս փոխադրուելու հարց, նոր հրատարակուիլիք
«Դրօշակ» թերթը մարտական օրկան դարձնելու եւ «Հնչակ»ը գաղափա-
րական օրկանի վերածելու առաջարկ:

Այս վիճելի կէտերը երկար բանակցութիւններու եւ ժընեւի
Կեդրոնին հետ հեռագրական փոխանակութիւններու տեղի տալէ ետք,
Թիֆլիսի մէջ բանակցութիւնները յանդեպան լաճող արդիւնքի մը, եւ
երկուստեք ստորագրուեցաւ միութեան հիմնապիւր մը, գոր սակայն
Հնչակեան Կեդրոնը չվաւերացնելով, ամբողջ բանակցութիւնը ապար-
դիւն անցաւ: Թէ ի՞նչ էին միութեան պայմանները եւ ի՞նչ պատճառ-
ներով Կեդրոնը իր հաւանութիւնը չտուաւ՝ մեզի համար անծանօթ մը-
նաց. ըստ սրում՝ այդ ժամանակ Աթէնք գտնուելով Պոլսէն փախուսա-
կան մի քանի ընկերներու հետ, մենք այնտեղ գործնական հողի վրայ
յեղափոխական ձեռնարկներ որոճալու վրայ էինք ու մեզմէ միայն Մու-
րատը (Համարարձում Պօյաճեան) կը գտնուէր ժընեւ, իբրեւ Պոլսոյ
Կեդրոնական մասնաճիւղի լիազօր ներկայացուցիչը:

Մուրատի հակիրճ նամակները կը թուէին իրաւունք տալ Նա-
զարեկեաններու տեսակէտին՝ որով մերժուած էր միութիւնը, եւ
մենք (Ալըզպաշեան, ես եւ Խորհրդակաշներ) առժամապէս բաւական
նացանք Մուրատի կցկտուր տեղեկութիւններով:

Միութեան խզումը, սակայն, բոլորովին անհետեւանք չանցաւ:
Կովկասի մէջ նախ քան խզումին լուրը՝ Հնչակ - դաշնակ միացեալ
մարմինը ընդհանուր Հանդանակութեան ձեռնարկած եւ կարեւոր գու-

մարներ հանդանակած էր յանուն հայ յեղափոխութեան: Գումարները միութեան իրզմէն ետք ամբողջապէս մնացին դաշնակցականներու ձեռքը: Ասկէ զատ, միացեալ մարմնոյն կողմէ արտասահման փութացած էին մի քանի գործիչներ, որոնք Պուլկարիոյ եւ Ռումանիոյ կողմերը կազմակերպութեան եւ հանդանակութեան ձեռնարկած էին: Խնդումին լուրը հասնելուն՝ այդ գործիչներուն միջեւ երկպառակութիւն յառաջ եկաւ եւ հնչակեաններէն ոմանք յարեցան Դաշնակցութեան, իսկ ոմանք ալ իրենց սեփական կուսակցութեան կողմը անցան:

Դիւտար Բանագնացը եւ միութեան վայացման պատասխանատուն՝ Խան-Աղատեան, այս իրադարձութիւններուն վրայ՝ Կովկասէն ժընեւ վերադարձաւ եւ Կեդրոնի հետ փոխադարձ բացատրութիւններէ ետք, ինք ալ յարեցաւ Նադարեկեաններու տեսակէտին, եւ ըստ առաջնոյն պահելով հնչակեան գործիչի իր հանդամանքը, 1891-ի սկիզբները Աթէնք եկաւ:

Որչափ որ այս կերպով միութեան ինչպէր մեղի համար փակւած էր, ի պատիւ Խան-Աղատեանի պէտք է ըսեմ որ ան՝ հակառակ թուղթի վրայ միութեան պայմանագրի մը չգոյութեան, միշտ ջերմօրէն ջատագով մնաց երկրի մէջ եւ գործակալան հողի վրայ հայ յեղափոխականներու անխտիր ու տերտ գործակցութեան, եւ 1891-ի Օգոստոսին, երբ Աթէնքէն Սասուն կը մեկնէի, նոյն համերաշխական ուղղութեամբ խօսեցաւ ինծի, թէ եւ ես արդէն այդ խրատին պէտք չունէի:

Թէ ի՞նչ հանգամանքներու մէջ Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւնը փոխուեցաւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան եւ թէ ի՞նչ աստիճանական փոփոխէ անցաւ ան մինչեւ իր կազմակերպութեան լրացումը, այդ բոլորը ինծի անձանթի մնացին՝ երկրին մէջ գտնուելուս պատճառով: Միայն պիտեմ թէ 1891 տարուան փոստին Վիեննայի մէջ հրատարակուեցաւ Դաշնակցութեան օրկան «Դրօշակ»ի առաջին թիւը:

Առանց կողմնակցական ոգիի կրնամ ըսել, սակայն, թէ որքան ատեն որ հնչակեան կուսակցութիւնը կուտ գործունէութեան մէջ էր եւ ինք իր մէջ համերաշխ՝ Դաշնակցութեան ծաւալումը ըլլալ՝ Արեւմտահայաստանի եւ ըլլալ մայրաքաղաքին մէջ շատ դանդաղ եղաւ: Կրնամ ըսել Վոնայ եւ Կարնոյ մէջ Դաշնակցութիւնը 1893-ին միայն գոյութեան նշան ցոյց տուաւ: Մուշի մէջ՝ Սասունի 1894-ի ապստամբութենէն ետք միայն. Պոլսոյ մէջ՝ 1894-ին, երբ հոն հասան Իսուֆեան եւ Աւետիք Լալայեանց, որոնց միացաւ Կեդրոնականի ուսանող Օննիկ Դերձակեան, որ յետոյ Ա. Վառմանը պիտի ըլլար: Փոքր Հայքի մէջ Դաշնակցութեան անունն անպամ գոյութիւն չունէր նախքան 1896-ի հնչակեան մեծ պառակտումը. իսկ Կիլիկիոյ մէջ Դաշնակցութիւնը ընդհանուր առմամբ ընդունելութիւն չգտաւ եւ մինչեւ 1908-ի Օսմանեան Սահմանադրութիւնը հազիւ մի քանի տեղեր դաշնակցական կոմիտէներ կազմուած էին. հակառակ դաշնակցական յայտնի գործիչ

Մարի և ուրիշներու անձնուէր ջանքերուն, - և անոնք ալ զրեթէ բոլորովին քայքայուած էին «կոմիտական նախագծի» հրապարակումէն ետք, որով Ղաչակցութիւնը բացէ ի բաց ինքզինք կը յայտարարէր ընկերավարական կազմակերպութիւն:

Ըսել չէմ ուզեր թէ նախքան 1896 թուականը Ղաչակցութիւնը որեւէ յեղափոխական գործ չկատարեց հայկական իրականութեան մէջ: Այդ գործունէութեան պիտի անդրադառնամ յաջորդ գլխուն մէջ, որ նուիրուած պիտի ըլլայ հայ կուսակցութիւններու, գործունէութեան: Եռօրէն կարելի չէ ուրանալ կազմակերպական այն յարատեւ ու և՛ ռանդուն ջանքերը, զորս հանդէս բերաւ Ղաչակցութիւնը, աստիճանաբար հասնելու համար այն զիրքին, որով ան կրցաւ հնչական պառակտումի վաղորդայնին զրեթէ քացառապէս իր ուսերուն վրայ առնել հայ յեղափոխական գործը, իրբեւ յաջորդը և շարունակողը Հնչական կուսակցութեան կիսատ լծուած գործին:

ՀՆԶԱԿԱՆ ՊԱՌԱՏԱՑՈՒՄԸ— 1890-էն մինչեւ 1896 Հնչական կուսակցութիւնը ունեցած էր տենդոտ գործունէութիւն մը, յառաջ բերելով յեղափոխական գործերու երկար շարք մը, ինչպէս՝ Կաթնոյ դէպքը, Գում-Գափուի ցոյցը, տեւորական գործողութիւններ, Փոքր Հայքի յայտարարութիւնները (Եաֆթա), Սասունի ապստամբութիւնը, Պապը Ալիի ցոյցը, Զէյթունի ապստամբութիւնը:

Այդ երկար ժամանակաշրջանին տեղի ունեցած էին կուսակցութեան գործիչներուն միջեւ կարեւոր պաղափարական տարակարծութիւններ, զլխաւորաբար ռուսահայ և արեւմտահայ մտայնութեանց տարբերութիւններու և սոցիալիզմի կոտախնձորին երեսէն: «Հնչակ»ի և «Դրօշակ»ի միջեւ անընդհատ շարունակուող սոցիալիստական բանակրոխները մասնաւորապէս արեւմտահայ գործիչները ջղագրգռած էին: Ամբողջ այս ժամանակաշրջանին հնչական Կեդրոնը, յանձինս Աւետիս և Մարօ նաղարբեկեաններու, միահեծան ու անհակադիմ վարած ըլլալով կուսակցութեան գործերը, ծանր դժուարութիւններու տեղի տուած էր: Մասնաճիւղեր, գործիչներ ամէն կողմէ րոպքի ձայներ կը բարձրացնէին և բնդհանուր պահանջ մը դարձած էր Հնչական կուսակցութեան անդրանիկ պառպանաւորական ժողովին գումարումը՝ կուսակցութեան գործերը կարգի բերելու և անոր յեղափոխական գործնական պր վերադնշատութեան ենթարկելու նպատակով:

Թէ այդ դժգոհութիւնները ո՛րքան խորունկ պատճառներէ յառաջ եկած էին, ինքնին ի յայտ պիտի գայ յաջորդ գլխուն մէջ, ուր քննութեան բովէն պիտի անցնենք Փոքր Հայքի Եաֆթաներու յիմարական գործը, Սասունի ու Զէյթունի ապստամբութեանց ներքին ծալքերը, Գարակէօղեանի Պոլսոյ մէջ սպանութիւնն ու այդ ոճիրին ջատագովութիւնը կուսակցութեան պաշտօնական օրկանին մէջ (Արփիար Արփիարեանի գրչով), ինչպէս նաեւ վարչական ու հաշուական ուրիշ կարեւոր խնդիրներ:

Նազարբեկեանները այս բնդհանուր պահանջին դռնացում տալու իբրեւ նախաքայլ, կուսակցութեան կեդրոնը (Լոնտոն) Հրաւիրեցին Տամատեանն ու Անտոն Ռչտունին (Երկուքն ալ Աթէնքէն)։ Արփիար Արփիարեանը Պոլսոյ մէջ գտնակցական տեղորդի ենթարկուելէ ետք, արդէն Լոնտոն ապաստանած էր։ Նոյնպէս Լոնտոն կը գտնուէին կիւրեղեցի Սուրէն Սուրէնեան (Կոյուկեան) և Զէյթունէն դարձաւոր զործիչներ Աղասի, Ապահ ու Հրաչեայ Մարալ։ Գարեգին Զիթճեան Ամերիկայի հնչական մասնաճիւղերուն կողմէ յատուկ պաշտօնով նոյնպէս հասած էր Լոնտոն, ուր կը գտնուէր նաեւ հնչական ուսանայ գործիչ Արտաւազդ Օհանջանեան (Արթիւր)։

Աւետիս Նազարբեկեան այս բոլոր զործիչները հրաւիրեց Կեդրոնի ժողովներուն՝ իբրեւ խորհրդակիցներ, բնդհանուր պատգամաւորական ժողովի նախապատրաստական աշխատանքները միտքին տանելու համար։

Առաջին նիստերէն իսկ Նազարբեկեանները սարսափով տեսան թէ այս բոլոր զործիչները՝ անոնց բացառութեանը նոյնիսկ միակ ուսանայ Արտաւազդ Օհանջանեանին, ո՛չ միայն կեդրոնի նախորդ զործունէութիւնը քննադատողներ էին, այլև բոլորն ալ սոցիալիզմի հակառակ էին ու կը պահանջէին անոր բարձու մը հնչական ծրագրէն։ Մինչդեռ սոցիալիզմը միտն ու ոսկորն էր Նազարբեկեաններուն, որոնք եթէ նոյնիսկ այդ մասին անկարելի գիշողութիւն ընելու արամադիր ըլլային՝ համոզուած էին որ կուսակցութեան կողմակաւ հատուածը անվերածելի պիտի հանդիսանար այդ մասին, որով կուսակցութեան երկուքի բաժանումը անխուսափելի կ'երեւար։

Միւս կողմէ՝ արեւմտահայ զործիչներու մէջ եւս համաձայնութիւնը կատարեալ չէր։ Արփիար և Սուրէնեան կը ձգտէին դաւադրական միջոցներով տապալել Նազարբեկեանները։ Միացեալները կ'ուզէին քալել օրինական շարժում և եթէ հնարաւոր էր՝ առաջը առնել կուսակցութեան պառակտումին, թէև իրենք ալ յոյս չունէին յաջողութեան։

Այդ միջոցին Պոլսոյ հնչական մասնաճիւղին մէջ, որ կուսակցութեան ամէնէն կարեւոր մասնաճիւղն էր, - երկու տարբեր հոսանք յառաջ եկած էր։ Մեծամասնութիւնը՝ թէև կուսակցութեան տաքնապին շուրջ խորապէս մտահոգ՝ հանդարտօրէն կը սպասէր Լոնտոնի խորհրդակցութեանց արդիւնքին։ Փոքրամասնութիւնը՝ բաղկացած ծայրայեղ և կրակ ու բոց յեղափոխականներէ, որոնց պարագլուխն էր Ալիքսան Արզուման, իրեն արրանեալ ունենալով Զարեհ Քոչեանը, Լեւոն Լարենցն ու Վահան Շարքիմանը՝ Լոնտոն գտնուող Սուրէն Սուրէնեանի և Արփիար Արփիարեանի իրենց ուղղած դաշտին տեղեկադրերէն Նազարբեկեաններու դէմ գերագործուած, անօգուտ կը նկատէ ըստպատշաճ կերպի մէջ մնալը և կ'որոշէ դադարի դաւադրութեամբ մը Աւետիս Նազարբեկեանը մէջտեղէն փերցնել։

Մասնաճիւղին մեծամասնութեան պատկանող անդամներէն ու մանր տեղեկանալով այս ելերական դաւադրութեան, Կեդրոն դռնուող գործիչներէն ոմանց կը տեղեկագրեն եղելութիւնը: Դաւադիրներուն կողմէ Լոնտոն հասնող Ալեքսան Արզուման եւ Ջարեհ Քոչեան՝ շնորհիւ իրադեպ գործիչներուն ձեռք առած միջոցներուն ու նախազգուշութիւններուն՝ իրենց նպատակէն կը վրիպին եւ Կովկասը կը վերադառնան Պոլիս: Այս միջադէպին հետևանքով, Նազարբեկեան եւ անոր ղեմ օրինաւոր միջոցներով միայն պայքարող գործիչները, միասնաբար, Արփիար Արփիարեանը եւ Սուրէն Սուրէնեանը կուսակցութենէն արտաքսուած կը հռչակեն:

Մինչ այդ, օրերը կ'անցնէին եւ Նազարբեկեան կը տատամսէր ընդհանուր ժողովի հրաւերները ուղղելու մասնաճիւղերուն: Գործիչներուն պնդումին վրայ՝ Նազարբեկեան խնդիր կը հանէ թէ հրաւերները պէտք է ուղղուին միայն ներկրի եւ Կովկասի մասնաճիւղերուն, բայց ոչ արտասահմանի մասնաճիւղերուն, որոնք ըստ իրեն պարզ օժանդակ մասնաճիւղեր կը նկատուէին: Գործիչները, ընդհակառակը, Վը պնդէին որ զոնէ այս առաջին ընդհանուր ժողովին պէտք է հրաւիրուէին ոչ միայն ներկրի, Կովկասի ու արտասահմանի բոլոր մասնաճիւղերն անխորաքար, այլեւ բոլոր այն գործիչները, որոնք կուսակցութեան կազմութեան եւ յեղափոխական գործունէութեան մէջ առաջնակարգ դեր կատարած էին, եւ թէ պատգամաւորական ժողովին կը մնար ապագայ ընդհանուր ժողովներու կազմին նկատմամբ կանոնադիր մը հակել:

Բացառապատ կերպով որոշ էր թէ Նազարբեկեան կը խրտչէր գործիչներէն եւ արտասահմանեան մասնաճիւղերէն, որոնք բոլորն ալ սոցիալիզմին հակառակ էին, եւ կ'ուզէր միայն ներկրէն ու Կովկասէն պատգամաւորներ հրաւիրել՝ յուսալով սոց կերպով սոցիալիզմի կուսակիցներուն թիւը ստուարացնել, քանի որ ներկրէն պատգամաւորներու հասնիլը թէական էր եւ Կովկասի մասնաճիւղերուն թիւն անձանօթ ըլլալով գործիչներուն՝ ինք ազատ պիտի ըլլար ուզած մարդիկը իրելու պատգամաւոր հրաւիրել: Բաւական էր որ անոնք համոզեալ եւ անվերածելի սոցիալիստներ ըլլային:

Այս կէտին շուրջ Նազարբեկեան եւ խորհրդական գործիչները չկրնալով համաձայնիլ, Նազարբեկեան հրաւիրեց միայն ներկրի եւ Կովկասի պատգամաւորները. իսկ գործիչները Մ. Տամատեանէ, Անտոն Ռշտունիէ եւ Գարեգին Զիմեանէ յաղկացած մասնախումբի մը միջոցաւ հրաւիրեցին նաեւ բոլոր արտասահմանի մասնաճիւղերը:

Երբ պատգամաւորները ամէն կողմէ հասան Լոնտոն, տեսնուեցաւ որ անոնց մեծամասնութիւնը ազգայնական էր. միայն Տրապիզոնէն Պետրոս Սարգիսեան, Պաթումէն Լազո եւ Կովկասէն մէկ երկու ուրիշներ, որոնց անունը չեմ յիշեր, սոցիալիստներ էին: Կիլիկիոյ պատգամաւոր Յակոբ Օհանջան, Կիպրոսի պատգամաւոր Միհրան Սըլաւըր-

լան, Ամբերիկայի պատգամաւոր Կարապետ Փափազեան սոցդայնականներն էին. ասոնցմէ զատ՝ եղիպտոսէն պատգամաւոր ընտրուած էր Անտոն Ռչտունի, Պոլսոյ մասնաճիւղէն՝ Ս. Տամատեան եւ Ամերիկայէն իրբեւ երկրորդ պատգամաւոր՝ Գարեգին Զրթնեան: Բացի ասոնցմէ՝ ըստ խորհրդական գործիչներու տեսութեան, պատգամաւոր չընտրուած Կարեւոր գործիչներն ալ իրաւունք պիտի ունենային մասնակցելու պատգամաւորական ժողովի նիստերուն եւ քուէարկութեանց:

Նաղարբեկեան բոլորովին նեղը մնացած՝ ժընեւէն կանչեց Հմայեակ Խուշպուլեանը, որ այդ միջոցին հիւանդ վիճակի մէջ աշտուղ մեկուսացած էր, եւ երուանդ Պալեան նախկին դաշնակցական բնկերփորականն ու Ռուսաճուղէն Պարոտ Գալֆայեանը: Գործիչներու խումբէն միայն Հրաչեայ Մարաշն էր որ յարեցաւ Նաղարբեկեաններուն: Ասոնցմէ զատ՝ Նաղարբեկեան «Հնչակ»ի գրաշարները եւ սաշտօնեաները ռոնադրօսիկ կերպով այս կամ այն քաղաքի պատգամաւոր հռչակեց:

Ժողովի բացումէն առաջ, երկու կողմի պատգամաւորներէն ոմանք (մանաւանդ անոնք՝ որ իրարու նախաձանօթ էին, ինչպէս՝ Տամատեան, Մարիմեան եւ Խուշպուլեան) ամէն ջանք թափեցին ընդհանուր հասկացողութեան մը գալու. բայց այս ջանքերը ապարդիւն անցան՝ տեսակէտներու խրամատը անանցանելի դարձած ըլլալով:

Երբ ժողովին թուականը հասաւ, սոցդայնական խումբը սրահանջեց Նաղարբեկեանէն որ պատգամաւորները հրաւիրէ եւ ժողովը բացւած հռչակէ: Անոր մերժումին վրայ, գործիչներու յանձնախումբը ինք հրաւիրեց անխափր բոլոր պատգամաւորները եւ գործիչները, ինչպէս նաեւ Նաղարբեկեանները, որոնցմէ օտկայն առցիլալիզմի կողմնակից վերողբեալ անձերը չպատասխանեցին հրաւերին. իսկ միւսները ամբողջութեամբ ներկայ գտնուեցան պատգամաւորական ժողովին, որ դումարուեցաւ Ֆրիթովի Կարտընդ փողոցի սուներէն մէկուն մէջ: 14-ի կը հասնէր թիւը ժողովի անդամներուն, որոնց մեծագոյն մասին անունները արդէն յիշուած են վերը:

Առգայնականներու պատգամաւորական ժողովին բացումէն մէկ երկու օր ետք, Նաղարբեկեան ինք ալ իր կուսակիցները ժողովի հրաւիրեց Շեփերտ'ց Պըշի իր բնակարանին մէջ: Ասոնց թիւը, մէջը ըլլալով Աւօ եւ Մարօ, մօտաւորապէս 10-ի կը հասնէր: Անոնց անուններն ալ, բացի գրաշարներէն եւ սաշտօնեաներէն, վերը յիշուած են:

Երկու ժողովներն ալ իրենք զիրենք կը նկատէին բուն հարազատ հնչակեաններ եւ օրինաւոր տէրերը Հնչակեան կուսակցութեան, ու փոխադարձաբար միւս ժողովի անդամները կուսակցութենէն արտաքսեալ հռչակեցին: Քիչ ժամանակ անց, սակայն, Նաղարբեկի հետեւորդները պիտի որակուէին Հին Հնչակեաններ. իսկ առգայնականները՝ Վերակազմեալ Հնչակեաններ:

Նաղարբեկեան իրեն հակառակորդ խումբը անուանակոչեց Ալֆարիակամ: Շատեր կարծեցին թէ այս անուանակոչութիւնը կը նշա-

նակէր Արփիարական, մինչդեռ իրականութիւնն այն է որ գործիչներու յանձնախումբը ինք իր հասցէին տուած էր Անտոն Ռչտունիի անուան յունական սկզբնատառերով Ալֆարի (փոխանակ Ալֆառօ-ի) անուանումը:

Վերակազմաւորներու առաջին ժողովին իսկ խնդիր ծագեցաւ ժողովին հրաւիրելու նաեւ Արփիար Արփիարեանն ու Սուրէն Սուրէնեանը, որոնց՝ կուսակցութենէն արտաքսումին շուրջ Նազարբեկեանի հետ համամիտ դառնալու էին նաեւ խորհրդական գործիչներէն ոմանք, ինչպէս վերը յիշեցինք: Այս բանը պահանջըն էր Պոլսոյ եւ Եգիպտոսի մասնաճիւղերուն, ինչպէս նաեւ Ամերիկայի մասնաճիւղերէն ոմանք: Այս երկուքին արտաքսման վճռին մասնակցած գործիչները յանուն համերաշխութեան ստիպուեցան տեղի տալ պահանջին, այն մտահոգութեամբ որ՝ հակառակ պարագային՝ կուսակցութիւնը կրնար ոչ թէ երկուքի, այլ երեքի բաժնուել, ինչ որ պիտի ըլլար լրումն չարեաց: Ահա ա՛յս փրկումը Արփիարեան եւ Սուրէնեան եւս հրաւիրուեցան մասնակցելու ժողովին:

Ժողովի ամբողջ ընթացքին պատգամաւորներուն միջեւ կը տիրէր կատարեալ համերաշխութիւն եւ կարծիքներու նոյնութիւն, որով կարելի է րսել թէ սկիզբէն մինչեւ վերջ բոլոր որոշումները տրուեցան զրիթէ միաձայնութեամբ: Կուսակցութիւնը կը դուրէր զուտ ազգայնական հիմունքներու վրայ՝ մերժելով զբաղիլ ուրեւէ տնտեսական ու ընկերային հարցով: Գործելակերպի տեսակէտով՝ Վր մերժուէր ամէն ցուցական գործունէութիւն, նպատակ ունենալով երկարաշունչ եւ համընդհանուր աշխատութեամբ ամենանպաստաւոր պահուն (ինչպէս՝ Թուրքիոյ պատերազմի բռնուած մէկ մայրկեանին) յառաջ բերել ընդհանուր ապստամբութիւն, որու ընթացքին գոնէ մի քանի ռազմագիտական կամ հայաչափ կէտեր, - ինչպէս՝ Կիլիկիոյ մէջ Զէյթուն, Հաճըն, Զորք Մարզպան, Հայաստանի մէջ Սասուն, Վան եւլն, - ի վիճակի ըլլային երկարատեւ դիմադրութիւն մը հանդէս բերելու եւ այդպիսով պարտադրելու եւրոպական միջամտութիւն:

Շւրտպայի մէջ փրոփականտն ու դիւանագիտական աշխատութիւնները ընդունուեցան իբրեւ երկրորդական եւ լրացուցիչ գործ, զոր կատարելը պաշտօնը պիտի ըլլար կեդրոնական վարչութեան՝ օգտուելով այն ազգային գործիչներէն եւ օտար հայասէրներէն, որոնք արդէն արտասահմանի մէջ կ'աշխատէին այդ ուղղութեամբ:

Անդին, հին հնչակեանները նմանապէս կը շարունակէին իրենց նիստերը՝ իրենց հայեացքներուն համաձայն ուղղութիւն տալու համար կուսակցութեան ապաղայ գործունէութեան: Որչափ որ երկու հատուածներու որոշումները իրարմէ զաղտնի կը պահուէին, սակայն մասնաւոր տնտեսական հարաբերութիւններէ եւ ի վերջոյ հին հնչակեաններու պաշտօնական յայտարարութիւններէն ի յայտ եկաւ որ անոնք ալ հրաժարած էին ցուցական գործունէութենէն, որ այնքան աղիտաբեր եղած

էր անցեալին մէջ:

Վերահասարակելու հնչակեանները դաշնակցականներուն նկատմամբ սրեւէ կանխակալ վարժիք չունէին եւ ի նպաստ արտաբարձութեան անոնց հետ միութեան կամ համերաշխ զործակցութեան գաղտնիարին, տրուած ըլլալով որ դեռ այն ժամանակները Դաշնակցութեան մէջ անցիլիստական ուղղութիւնը վերջնականապէս չհաստատուած է: Իրերի անյալի սկզբունքը որդեգրուած չէր, մնալով միայն սեփականութիւնը աշխատանքի վարժութեան ուսանալու թելին, մինչ արեւմտահայ հաստատուած ընդհանրապէս աշխատանքի վարժութեան չէր հետեւեր, այնպէս որ յուսալի կը թուէր երկուստեք անկողմ բանակցութիւններով համաձայնութեան եզր մը գտնել անոնց հետ, սոյնմանս որ անոնք ալ այսուհետեւ հրաժարէին ցուցական գործունէութիւնէն:

Յետոյ տեսնուեցաւ, սակայն, թէ որքան միամիտ էին Դաշնակցութեան հետ հասկացողութեան այդ անկախութիւնները: Դաշնակցականները, ընդհակառակը, հնչակեան երկու հաստատուածներու այս պարտաւորութիւնը իրենց համար եղական առիթ մը նկատեցին՝ երկու հաստատուածները միանգամայն վարկաբեկելու յաջա հայ ժողովուրդին՝ հաւասարապէս օգտուելով երկու հաստատուածներուն իրարու դէմ պարսաւական յայտարարութիւններէն ու թուողիկներէն, միակ կէտ նպատակի ունենալով հնչակեան պառակտումը օգտագործել ի նպաստ իրենց կուսակցութեան գործընթացին՝ Հնչակեան կուսակցութեան աւերակներուն վրայ հաստատուելու համար իրենց միահեծան տիրապետութիւնը հայ խղափոխական գործին: Եւ իրօք, մէկ կողմէ պառակտումին իրր հետեւեալ հնչակեան երկու հաստատուածներուն տկարացումը եւ հին հրեշտակեաններէն ոմանց Դաշնակցութեան յարումը, միւս կողմէ թէ՛ հին եւ թէ՛ նոր հնչակեաններու ցուցական գործունէութիւնը հրաժարումը մեծապէս նպաստեցին Դաշնակցութեան զօրեղացումին եւ գործնականապէս յեղափոխական սուպարէզը բաց թողուցին անոր առջեւ երկար ժամանակաշրջանի մը համար:

Այսպէս, ուրեմն, ի՛նչ որ ալ եղած ըլլային Դաշնակցութեան կազմակերպական աշխատութիւններն ու գործունէութիւնը մինչեւ 1896 թուականը, այդ ամէնը ա՛յնքան աննշան էին բաղդատմամբ Հնչակեան կուսակցութեան ծաւալումին, ժողովրդականութեան եւ լայնածաւալ գործունէութեան, որ առանց կուսակցական նեղմիտ տեսակէտներու՝ կարելի է ըսել թէ Դաշնակցութեան իրական գործունէութեան շրջանը եւ անոր աստղին փայլիլը կը սկսին այն օրէն, երբ ընդհատուեցաւ Հնչակեան կուսակցութեան գործունէութիւնը եւ մթագնեցաւ անոր աստղը:

Կարելի է ըսել թէ մեծ պառակտումէն ետք, թէ՛ հին եւ թէ՛ նոր հնչակեանները իրենց սաքի կռուանը կորսնցուցին արեւելեան Արեւմտահայաստանի մէջ, ի բաց առեալ Վանէն, ուր դաշնակցական հետզհետէ գորացող կազմին առընթեր կը շարունակէին իրենց գոյութիւնը պա-

հել հնչակեան մարմին մը եւ մտնաւանդ Արմենական գաղտնի կազմակերպութիւնը, որ յետոյ պիտի միանար վերակազմեալ հնչակեաններուն :

Փոքր Հայքի հնչակեան մասնաճիւղերը, որոնք արդէն ծանր կերպով հարուածուած էին եափքաւերու յիմար գործին երեսէն, եւ որոնց մէկ մասը հին հնչակեաններուն կապուած իսկ մեծագոյն մասը յարած էր նոր հնչակեաններուն, իրենց գոյութիւնը կը քաշկուտէին: Կիլիկիոյ մէջ եւս հնչակեան մասնաճիւղերու մեծագոյն մասը անցած էր նոր հնչակեաններուն կողմը եւ թէպէտ անոնք ալ տկարացած՝ դեռ բաւական ուժեղ էին ասպարէզ չթողելու համար զաշնակցականներու Կիլիկիոյ մէջ ծաւալումին ու գործունէութեանը: Իսկ Պոլսոյ մէջ թէ՛ հին եւ թէ՛ նոր հնչակեանները ունէին միշտ իրենց կեդրոնական մասնաճիւղերը, ի հարկէ նուազ կարեւոր քան դաշնակցական անհոգուն կազմակերպութիւնը. բայց եւ այնպէս նոր հնչակեաններու Պոլսոյ մասնաճիւղը քանի առիթներով խօսիլ տուաւ իր վրայ՝ ինչպէս յետոյ պիտի տեսնենք:

Որքան որ Դաշնակցութիւնը կը զօրանար բուն երկրին մէջ՝ բաղդատմամբ հնչակեան երկու հատուածներուն, ու կը գործէր մինակը՝ մանաւանդ շնորհիւ այս երկու հատուածներուն ցուցական գործունէութենէ լացարձակ ձեռնթափութեան, նոյնը չէր բոլորովին պատկերը արտառահմանի մէջ. Հոն, մասնաւորապէս Ամերիկայի ու Եգիպտոսի մէջ, հնչակեան երկու հատուածները փութոյ պնդութեամբ կը շարունակէին կազմակերպուել եւ իրենց ուժերը ստուարացնել ի նախատեսութիւն ասպաղայ գործունէութեան: Եւ հոն՝ արտասահմանի մէջ ալ նոր հնչակեանները աւելի կենդանութեան նշան ցոյց կու տային՝ քան հիները, որոնց սցիլախիզմը բանուկ ասրանք մը չէր արեւմտահայութեան համար:

Ըսելու հարկ չկայ որ արտասահմանի մէջ ալ Դաշնակցութիւնը երթալով աւելի կը զօրեղանար եւ կը յայտնարերէր աւելի կուռ ու ներդաշնակ կազմակերպութիւն մը: Իսկ Կովկասի մէջ մրցակցութեան անհաւասար պայքար մը տեղի կ'ունենար մի միայն հին հնչակեան համեմատութիւն տկար ու դաշնակցական յարաճուն ուժերուն միջեւ: Այնտեղ զրեթէ գոյութիւն չունէր նոր հնչակեան կազմակերպութիւն մինչեւ ասպաղայ ժողովրդական Կուսակցութեան կազմութիւնը եւ ի վերջոյ գործակցութիւնն ու միաձուլումը նոր հնչակեանութենէ բխած իրաւակալար Կուսակցութեան հետ:

ՆԵՐՓԻՆ ՎԷՃԵՐ ՎԵՐԱԿԱԶՄԵԱԼ ՀՆՁԱԿԵԱՆՆԵՐՈՒՆ, ՄԷՋՎԵՐԱԿԱԶՄԵԱԼ ՀՆՁԱԿԵԱՆ Կուսակցութեան ընդհանուր պատգամաւորական ժողովը՝ իր աշխատութեանց աւարտելուն՝ կեդրոնական վարչութիւն ընտրած էր հետեւեալ անձերէն՝ Միհրան Սըլաւադը, Լեւոն Մըկըրտիչեան, Միհրան Տամատեան, Արփիար Արփիարեան եւ Սուրէն Սուրէնեան, Կուսակցութեան կեդրոնատեղին մնալով Լոնտոն: Բայց

Մկրտիչեան եւ Սըլվազիան՝ անձնական կարեւոր պաշտօններով համապատասխանաբար եղիպտոս ու Կիպրոս գտնուելով, չկրցան Կեդրոն պալ եւ թղթակցութեամբ միայն կը յարաբերէին իրենց Լոնտոնի պաշտօնակիցներուն հետ, որոնցմէ մէկն ալ՝ Սուրէն Սուրէնեան, հարկ եղաւ որ մեկնէր Ամերիկա կազմակերպական եւ կուսակցութեան նիւթական անձուկ վիճակին բարեօրոշման վերաբերեալ խնդիրներով։ Ահա այսպէս, Կեդրոնին մէջ կը մնային միայն Արփիար Արփիարեան եւ Միհրան Տամատեան, որոնք թէեւ իրարու զէմ անձնական հակառակութիւն չունէին, բայց նկարագրով, խառնուածքով եւ հայեցակէտներով իրարմէ ասիւման հեռու էին՝ որքան հիւսիսային ու հարաւային բնոյթներն իրարմէ։

Վերը յիշեցինք թէ վերակազմեալներու ընդհանուր ժողովին գումարման թուականին (1896), Պոլսոյ հնչակեան մասնաճիւղին մէջ երկու հակընդդէմ հոսանք յառաջ եկած էր, եւ թէ ծայրայեղ հոսանքին ղուլին էր Ալեքսան Արզուեան։ Արզուեան եւ իր համախոհները, որոնց անունը յիշեցինք, յետապնդողութեան համար ամէն միջոց ներքի եւ գործադրելի կը դառնէին։ Ինչպէս՝ սպառնալիքով եւ ի հարկին սպանութեամբ հարուստներէն մեծաքանակ գումարներ պահանջել ու ամէն կարգի արկածախնդրութեանց մէջ նետուիլ։

Չափաւորականները, որոնց միշտ Զեմօրէն գաղափարակից գտնուած է այս տողերս գրողը, կը դաւանէին թէ կայ սահման մը, որմէ աւելին չի կրնար անցնիլ յետապնդողութիւնը՝ առանց չիփթուելու յայտարարութեան, աւազակութեան եւ ոճրագործութեան հետ։ Այս երկու տարրեր ըմբռնումները անհաշտելի էին։ Ուստի ծայրայեղները իօսքէն դործի անցնելով՝ իրացուցած էին կուսակցութեան Պոլսոյ մասնաճիւղին կնիքն ու դրամարկղը եւ սկսած էին ինքնազուխ ու սանձարձակ կերպով աջ եւ ձախ հարուստներուն սպառնալիքներ ուղղել ու դրամ հաւաքել, գործեր՝ որոնց մասին մասնաճիւղին մեծամասնութիւնը տեղեկացրած ու բողոքած էր Ընդհանուր ժողովին։

Ընդհանուր ժողովը խնդրին էութիւնը երկարօրէն ուսումնասիրելէ եւ երկու կողմին այս առթիւ Լոնտոն փութացուցած ներկայացուցիչները լսելէ ետք, միաձայնութեամբ պախաբակած էր ծայրայեղներուն գործերակերպը եւ մեծած էր որ փոքրամասնութիւնը պաշտօնէն իր ապօրէն ձեռնարկներն ու կնիքը եւ դրամարկղը յանձնելով մասնաճիւղի մեծամասնութեան՝ համակերպէր անոր կարգադրութիւններուն, հակառակ սլարազային՝ անսաստողները կուսակցութեանէն արտաքսեալ սլիտի հռչակուէին։

Ծայրայեղները թէեւ կնիքը ետ տուին օրինաւոր հռչակուած մասնաճիւղին, որ զայն զրկեց Կեդրոն՝ ինք արդէն ուրիշ կնիք մը չինել տուած ըլլալով, բայց համանման կնիք մը չինել տալով՝ շարունակեցին իրենց լռելի դրամահաւաքութիւնները յանուն Հնչակեան Կուսակցութեան տեղի տալով մեծ զայթակրութեան եւ վարկաբեկումի։

Ասոնք, ի միջի այլոց, հռչակաւոր մանկաբարձ Տոբթ. Մատթէոսեանը
զիշերանց՝ իբրեւ թէ ստիպողական ծննդաբերութեան մը կանչելով՝
տարին տուն մը, ուր դիմակաւոր մարդիկ իրմէ երեք հարիւր օսման-
եան ոսկիի մուրհակ մը կորզեցին եւ յաջորդ օրը գանձեցին: Նոյնպէս՝
հայ կաթողիկոսներու պատրիարքին եղբայր եւ հայերու մէջ իր բարի
համբաւով ու առատաձեռնութեամբ ծանօթ Արիստակէս էֆ. Աղաբեա-
նէն սպառնալիքով 300 օսմանեան ոսկի առին: Խեղճ մարդը վախճալով
որ այս դաղտնիքը երեւան կու դայ եւ թուրք կառավարութեան կողմէ
հալածանքի կ'ենթարկուի, Պոլսէն փախուստ կու տայ դէպի Իտալիա
եւ չոզնաւին մէջ կաթուածահար կը մեռնի:


Նոյնպէս՝ փաստարան Գոլլուեանէ սպառնադրով կը պահանջեն
դումար մը 24 ժամէն վճարելի: Պայմանաժամին երբ մի քանի ահաբե-
կիչներ կ'երթան դրամը դանձելու, տան դուռը պահպանուած կը գտնեն
երկու ոստիկաններէ, որոնց մին սպաննելով փախած ժամանակնին կը
ձերբակալուին: Հա՞րկ է ըսել թէ ասոնք սլարզ րախտախնդիրներ եւ
բառին բուն նշանակութեամբ դրամաւորներ չէին, այլ՝ կ'երազէին
այսպիսի ազազակող ապօրինի միջոցներով հաւաքուած դրամները
յատկացնել իրենց բոլորքած ազգեղներէն ծնած նոյնքան ծայրայեղ եւ
անխորհուրդ յեղափոխական ձեռնարկներու:

Արդարեւ, վերը յիշատակուած անուններէն իւրաքանչիւրը յայտ-
նի մտաւորական էր եւ իրեն հետ ունէր ուրիշ մտաւորականներ ալ,
ինչպէս՝ վաղամեռիկ Կունծիկ Արեղան (մեռած Գահիթէ եւ Թաղուած
Մարմինայի գերեզմանատունը) եւ ուրիշներ, ինչպէս նաեւ Փարիզի,
Մարսէյի ու Վառնայի մէջ իրենց համախոհները:

Հայ յեղափոխութեան պատմութիւնը ուսումնասիրողները, դժ-
բախտաբար, շատ անգամ եւ շատ պարագաներու մէջ, միմչեւ այս օրե-
քըս, հանդիպած են ու պիտի հանդիպին ամէնէն բարձր մտաւորական-
ներ ճանչցուած անձերու մօտ իսկ այսօրինակ մտքի խոտորումներու,
որոնք հոգեբանական ախտաժէտութեան կարծեւ անմեկնելի երեւոյթ-
ներ են:

Մեծագոյն դժբախտութիւնը այն էր, որ այս անխորհուրդ խմբա-
կը կը գործէր Հնչակեան Կուսակցութեան անունով, չնայելով որ թէ
հին եւ թէ նոր հնչակեանները կը դատապարտէին անոնց այս գործու-
նէութիւնը, զոր ստիպյալ խափանելու միջոցներէն զուրկ էին: Կեդրո-
նը, մասնաւորապէս այս տողերը գրողը, լուրջ մտահոգութեան մատ-
նուած էր այս կացութեան հանդէպ.....

(Հաս կ'ընդհատուի շարադրամբը:)



Հ. Բ. Լ. Մ. Ի Պէյրուքի Մասնաժողովը 1930-ին

Նստած, ձախէն աջ՝ Տոքթ. Յակոբ Թոփնեան, Միհրան Տումառ-
եան (ստեփնապետ), Վեր. Ննով Կէօկէօզեան եւ Կարապետ Քաջախ-
եան: Ուրի, ձախէն աջ՝ Տոքթ. Պաղտատար Մելիքեան, Հմայեակ
Կրանեան եւ Հարիւրապետ Պողոս Թուրսարգիւսեան:

ՏԱՄԱՏԵԱՆԻՆ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ՅՈՒՇԵՐՈՒՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Ժամանակ մը ետք եգիպտոս հասաւ անգլիական շրջուն գործիչ նշանաւոր Սըր Մարք Սայքս զեղապետը, որ հայ վուսակցութեանց պետերուն հետ տեսակցութիւններ ունեցաւ: Ի միջի ալոյց Գահիրէի Շէփըրտց պանդոկին մէջ տեսնուեցաւ Ռամկաւար Կուսակցութեան պետերէն Տամատեանի հետ: Այս տեսակցութեան ընթացքին Սըր Մարք Սայքս դանդաղեցաւ անճարակութենէն կարգ մը հայերու, որոնք Ալեքսանտրէթի նախկին անգլիական հիւպատոս Մր. Քաթոնի կողմէ եգիպտոսէն կիլիկիա զրկուած էին լրտեսութեան յանձնառութիւնով: Բայց անոնք կամ ձերբակալուած էին և կամ տեղացի կարգ մը հայերու ձերբակալուելուն և կախուելուն պատճառ եղած, առանց նշանակելի լրտեսութեան դօրծ մը կատարել կարենալու: Տամատեան պատասխանեց որ ըստ լախտի փողոց հաւաքուած կօշիկ ներկողներ ու բախտախնդիրներ ատկէ աւելի դօրծ չէին կրնար կատարել, թէ լուրջ արդիւնքի մը հասնելու համար դանակիցները պէտք էր դիմէին հայ կուսակցութիւններէն որեւէ մէկին, որ կրնար իրենց ներկայացնել կարգապահ և փորձառու մարդիկ:

Յետոյ Տամատեան խօսքը դարձնելով հայերու կողմէ առաջարկուած և աննկատ թողուած կիլիկեան արշաւանքին վրայ, ցաւ յայտնեց այդ առաջարկին անտեսուելուն համար: Ան ըսաւ որ, առաջարկուած այդ արշաւանքը թուրքիան սրտէն պիտի դարնէր և պիտի փըրկէր կիլիկիոյ հայերը, որոնք հիմա մեծ մասամբ տարագրութեան ճամբաներուն վրայ կը գտնուին սպառուժի ենթակայ: Յետոյ աւելցուց, հիմա որ կիլիկիա արշաւելու ծրագրերը մէկ կողմ թողուած է, բայց դաշնակիցները իրենց համար չափաւոր կը նկատեն թուրքիոյ ներսերը անցած դարձածին տեղեկանալ ու թուրք լանսկներուն շարժումները լըրտեսել, Դանակիցներուն կը մնայ իսթինտիրունի հարաւը, Ռասխնգիր

Հրուանդանին մօտերը Մուսա լեռան վրայ ցամաք հանել փոքր զինուորական ուժ մը, բառականաչափ պաշարով ու ոսղմամթերքով եւ այդ ուժին ընկերացնել հայ յեղափոխականներու խումբ մը: Այդ զիւրքին վրայ կը գտնուի Սուէտիոյ հայ գիւղախումբը Եւ հազար բնակիչներով: Ասոնք իսկոյն կը միանան արշաւող զինուորական ուժին ու տըրւած ըլլալով տեղւոյն անառիկ դիրքը, Մուսա լեռը զաշնակիցներուն համար երկրորդ ձիւրալթար մը կը դառնայ Թուրքիոյ ծովեզերքին վրայ: Սուէտիոյ մէջ Մուսա տաղի շուրջը եւ Որոնդէսի գետաբերանին մօտ կը բնակին Ալիի աղանդին հետեւող տեսակ մը մահմետականներ, որոնք կը կոչուին «Ֆելլահ» եւ որոնք Թուրքերուն թշնամի եւ հայերուն բարեկամ են: Այս Ֆելլահները երկրին մինչեւ ներսերը ազատ երթելու ունենալով, դաշնակից արշաւախումբին կրնան ծառայել լրտեսելով Թուրքերուն բոլոր շարժումները:

Սըր Մարք Սայքս, որ Ասիական Թուրքիոյ ամբողջ չըջանը ըրած ըլլալով Հայաստանէն մինչեւ Կիլիկիա բոլոր հայաբնակ վայրերը մասնաւորաբար ուսումնասիրած էր, լսելով Տամատեանի խօսքերը Սուէտիոյ հայերու մասին, պատասխանեց. «Թուրքիոյ հայաբնակ մասերը Իսթանբուլի մօտ կը վերջանան: Իսթանբուլի հարաւը հայ բերանակշութին չկայ»: Տամատեան վրայ բերաւ. «Ո՛չ միայն Մուսա լեռան կողերուն վրայ հայ չեն գիւղեր կան, այլեւ Որոնդէսի գետաբերանին հարաւը ձիւլէյ Աքրա կոչուած հրուանդանին վրայ կան Գեսայի հայ գիւղերը, որոնք բնակիչները Սուէտիոյ հայերուն հետ միասին 10,000էն աւելի թիւ մը կը կազմեն: Այստեղին եւ Կիպրոսի միջեւ հազար 75 մղոն հեռաւորութիւն կայ, որով այդ կողմ կիպրական զօրք փոխադրելը մէկ գիշերուան գործ է»: Սըր Մարք Սայքս շնորհակալութիւն յայտնեց սրտած այս տեղեկութեանց համար, զորոնք խնամով նոթագրեց՝ պէտք եղած տեղերը հաղորդելու զանոնք:

Սըր Մարք Սայքս հազիւ Անգլիա հասած էր, երբ Եգիպտոս լուր հասաւ որ Թուրքերը Սուէտիոյ եւ Քեսապի հայերն ալ ուզելով տեղահան ընել, 1915 Յուլիսի վերջերը, Սուէտիոյ գիւղերու հայերը Մուսա լեռան վրայ ապաստանելով՝ քառասուն օրուան հերոսական ինքնապաշտպանութենէ մը ետք, Քրանսական մարտանաւերու միջոցաւ ազատուած՝ Փորթ Սալիտ հասնելու վրայ էին:

Սուէտիայի հայերը հասան ու տեղաւորուեցան Փորթ Սալիտ: Քրանսական մարտանաւերու նաւազները ասպետական վիհանձնութեամբ զանոնք խնամած էին ծովագնացութեան ընթացքին: Փորթ Սալիտի մէջ անպիտան զինուորական իշխանութիւնները փութացին զանոնք պատասպարել հապճեպով պատրաստուած հանգստաւէտ վրաններու մէջ: Գահրիբի եւ Աղեքսանդրիոյ հայերը իրենց կարմիր խաչերով, Զ.Բ.Ը. Որիթիւնը իր նպաստներով եւ կրթական օժանդակութեամբ հոգացին ու խնամեցին զանոնք: Իսկ սուէտիացիները վրանաբաղաքին մէջ իրենց օրինակելի ընթացքովը բոլորովին ապացուցին թէ իրենք արժանի էին

թէ՛ Դաշնակիցներուն եւ թէ՛ իրենց ազդակիցներուն իրենց նկատմամբ ցոյց տուած ամբողջ դուրդուրանքին։ Իրենց հերոսական դիմադրութիւնը թուրքերու վայրալ յարձակումներուն՝ արդէն յաւաքոյն տը-պաւորութիւնը թողած էր Ֆրանսացիներուն եւ անգլիացիներուն վը-րայ՝ թէ ասոնք անընդճելի ժողովուրդի մը արժանաւոր զաւակներն են։

1916-ին, սուէտիացի քաջները հանրադիրներով դիմում ըրին ա-զատարար Ֆրանսային, որ զիրենք զինէր ու վերադարձնէր իրենց հայ-րենիքը՝ թուրքերուն դէմ իրենց կռիւը շարունակելու համար։ Ֆրան-սա եւ Անգլիա, որոնք պատերազմի սկիզբէն հայերու կողմէ եղած դի-մումներուն հանդէպ խուլ մնացած էին, այս անգամ արձապահ տուին կրակի փորձէն ելած այս կտրիճներուն դիմումին։ Եւ ահա, 1916-ի աշնան, երբ Աղեքսանդրիոյ հայերը ի նպաստ Համաձայնական եւ Ե-դիպտահայ կարմիր խաչներուն մեծ ֆերմէս մը կազմակերպած էին թա-ղապետական պարտէզներուն մէջ, նոյն ֆերմէսի ընթացքին անակնկալ ալքերութիւնը ընդունեցան Ֆրանսական զինուորական առաքելութեան մը, որ դէպի Հիճազ եւ Եմէն իր ուղեւորութեան ճանապարհին վրայ եկած էր հայերուն աւետելու թէ Ֆրանսա որոշած էր հայերէ լեզուն մը կազմել, որպէսզի անոնք երթան զինու զօրութեամբ ազատեն իրենց հայրենիքին արեւմտեան հողամասը՝ Կիլիկիան։

Նոյն գիշեր եւ յաջորդ օրը՝ ռամկավար պետերէն Լեւոն Մկրտիչ-եան եւ Մ. Տամատեան՝ Աղեքսանդրիոյ ազգային իշխանութեան թե-յաւրութեամբ՝ տեսակցութիւններ ունեցան Ֆրանսական հիւպատոսին եւ առաքելութեան պետին հետ։ Այս վերջինը Գլոնէլ Պրեմոնէն էր, որ յայտնելով Ֆրանսայի մտադրութիւնը, զեղեցիկ խոստումներ կ'ընէր յանուն Ֆրանսական կառավարութեան եւ յոյս կը յայտնէր որ հայերը մեծ եռանդեամբ պիտի կամուր արձանագործին։ Մկրտիչեան եւ Տա-մատեան պատասխանեցին թէ, թէպէտ հայերու հայրենասիրութիւնը եւ զէպի Ֆրանսան եւ իր դաշնակիցները համակրութիւնը ամէն կասկա-ծէ վեր են, յայց կամաւորական այսպիսի ձեռնարկի մը հայերու կող-մէ միահամուռ որդեգրումին ամենամեծ երաշխիքը կրնայ ըլլալ Ազ-գային Պատուիրակութեան փարիզ դռնուող նախագահ Պօղոս Նուպար վաչայէն ընդհանուր հայութեան ուղղուած կոչ մը։ Ուստի, կ'ըսեն, Ֆրանսական կառավարութիւնը լաւ կ'ընէ ռաւակցիլ այս մասին նորին վսեմութեան հետ։

Դոյնէլ Պրեմոն կը պատասխանէ թէ, զէպի Արաբիա ճամբուն վրայ ինք միայն անցողակի եկած է հայերուն աւետելու Ֆրանսայի բարի տրամադրութիւնները իրենց նկատմամբ, բայց իրմէ հտք պիտի դալ ուրիշ առաքելութիւն մը։ Եւ սակայն հնորհակալութիւն կը յայտնէ եղած զիտողութեան վրայ, որ միանպամայն թելադրութիւն մըն էր, ու ինք ալ փոխադարձաբար կը թելադրէ իր խօսակիցներուն, որ իրենք ալ իրենց կողմէ անմիջապէս զրին Պօղոս փաշային՝ որպէսզի այս մը-տօք յարարերութեան մէջ մտնէ Ֆրանսական արտաքին գործոց նախա-

բարութեան հետ :

Մկրտիչեան եւ Տաճատեան անմիջապէս պէտք եղածը կը գրեն Պօղոս փաշային, որմէ շուտով պատասխան կը ստանան թէ Փրանսական արտաքին գործոց նախարարութեան հետ բանակցութեան մտած է կամաւորական ձեռնարկին շուրջ :

Ռամկավարները, որոնք այդ միջոցին բուռն պայքարի մէջ էին դաշնակցականներու դէմ, անմիջապէս բանակցութեան կը մտնեն անոնց հետ ու շուտով երկուստեք կը համաձայնին համերաշխ զործակցութիւն մը հաստատել իրարու մէջ, ինչպէս նաեւ հնչակեաններու հետ, որոնց հետ անմիջապէս կը յարարեօին երկու կողմերը միասին ու կ'առնեն անոնց ալ համաձայնութիւնը : Երեք կուսակցութեանց մասնաճիւղերը նախ կը կազմեն միջկուսակցական մարմին մը, բայց քիչ ետք աւելի քնդարձակելով համերաշխութեան սահմանները, կը համաձայնին Գաճիւրէի եւ Աղեքսանդրիոյ երեք հայ յարանաւանութեանց պաշտօնական մարմիններուն եւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան հետ : Եւ բոլորը միասին կը կազմեն եզիպտահայ Ազգային Միութիւնը :

Մինչ այդ, Պօղոս Նուպար փաշա կը շարունակէ իր բանակցութիւնները նախ Փրանսական նախարարութեան եւ յետոյ Փրանսական ու անգլիական կառավարութեանց պաշտօնական ներկայացուցիչներուն հետ, եւ վերջապէս Լոնտոնի Փրանսական դեսպանատան մէջ Յրանստայի ու Անգլիոյ ներկայացուցիչներուն եւ Ազգ. Պատուիրակութեան նախագահ Պօղոս փաշայի միջեւ կատարեալ համաձայնութիւն գոյանալով, այս վերջինը Լոնտոնէն կը հեռադրէ Եզիպտոսի Ազգային Միութեան Վարկի կողմին չափ մեծ թուով կամաւոր արձանագրեցէք :

Արդարեւ, երկու դաշնակից պետութեանց ներկայացուցիչները, որոնց մէջ էին Լոնտոնի Փրանսական դեսպան Մ. Գամպոն եւ Ժերուստական ժոնար, իսկ Անգլիոյ կողմէ սպայակոյտի պետը եւ Սըր Մարք Սայքս, կը խոստանան որ պատերազմի յաջող վախճանին՝ հայերու կողմէ դաւաճած կիլիկեան շրջանին Դաշնակիցներուն կողմէ պիտի տրուի վարչական եւ քաղաքական կատարեալ ինքնավարութիւն, եւ թէ Հայկական Լեզգոնին մասնակցող կամաւորական խումբը պիտի ծառայէ իրեն կորիզը ինքնավար կիլիկիոյ հայկական բանակին :

Ազգային Միութիւնը՝ զօտեպնդուած Հայկական Պատուիրակութեան նախապահէն եկած տեղեկութիւններէն ու Զրահանգներէն, նախ կը դիմէ Փորթ Սայթի սուլթիպաններու քեմալը, ուր վիշուորական տարիքի մէջ գտնուող բոլոր կտրիճները մեծ ոգևորութեամբ կամաւոր կ'արձանագրուին : Նոյնպէս Աղեքսանդրիայէն, Գաճիւրէէն ու Եզիպտոսի դաւառական քաղաքներէն բաւական մեծ թուով հայեր կը փութան կամաւոր արձանագրուիլ : Նոյնպէս կ'արձանագրուին Պաղեստինի թուրք բանակէն անպիտանացող ձեռք գերի ինկած հայերը, որոնք Գաճիւրէի եւ Աղեքսանդրիոյ մօտերը կ'եզրոնացուած էին :

Եղիսյոտոսի Ազգային Միութիւնը խորհելով որ այս կամաւորական շարժումին մեծ ծաւալ ստանալուն համար անհրաժեշտ էր Ամերիկայի հայոց մասնակցութիւնը, կ'որոշէ երեք կուսակցութեանց մէջմէկ ներկայացուցիչներէն կազմել Եղիսյոտոսի պատգամաւորութիւն մը եւ զայն ղրկել Ամերիկա: Պօլոս Նուպար փաշա, որուն տեղեկագրուած էր այս պատգամաւորութեան կազմութիւնը, հեռագրով կը հրահանդէ որ պատգամաւորները ղէպի Ամերիկա իրենց ճամբուն վրայ Փարիզ հանդիպին:

Ազգային Միութեան կազմած պատգամաւորութիւնը հետեւեալ անձերէն կը բաղկանար. -

Հ. Յ. Դաշնակցութեան կողմէ՝ Արտաւազդ Հանրմեան,

Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան կողմէ՝ Ս. Սալահգիւլեան,

Հայ Սահմ. Ռամկաւար Կուսակցութեան կողմէ՝ Միհրան Տամատեան:

1916 Դեկտ.ի վերջին օրերը Արտաւազդ Հանրմեան եւ Ս. Սալահգիւլեան Աղեքսանդրիայէն ճամբայ ելան ղէպի Փարիզ: 1917 Յունուար 3-ին Մ. Տամատեան ճամբայ ելաւ Փորթ Սալիտէ: Փորթ Սալիտի մէջ տեսակցեցաւ Փրանսական նորակառուութեան պետ Քոլոնէլ Ռոմիէօ-ի հետ, որ արդէն այնտեղ սկսած էր մարդկու եւ զինուորական կարգապահութեան վարժեցնելու սուէտիայի ասպետանեալներէն, Եղիսյոտոսի հայերէն ու Պաղեստինի թրքական բանակէն դերի ինկած հայ զինուորներէն կազմուած կամաւորական առաջին խումբերը, սպասելով որ ասոնց թիւը ստուարանար Պաղեստին - Պաւրայի ճակատին վրայ թուրք բանակէն զերի ինկած հայ զինուորներով, որոնք Հնդկաստան զրկուած էին եւ որոնց մէջ կամաւորական շարժումը նոյնպէս սկիզբ առած էր:

Դերմանական սուղանաւերը արդէն Միջերկրականի մէջ ալ ըսկըսած էին Համաձայնական նաւեր ընկղմել: Տամատեանի մեկնումէն երեք օր առաջ անոնք ընկղմած էին անգլիական փոխադրանաւ մը, որուն նաւապետը Տամատեանի միեւնոյն շոյեանաւ առած էր Անգլիա փրադառնալու համար: Վտանդր ակներեւ էր: Բայց պէտք էր զայն գիմարաւել: Տամատեան մեկնումի պահուն կատակելով կ'ըսէր իրեն ողջերթ մաղթողներուն. «Ամերիկա պիտի երթամ անպատճառ, կա'մ ծովուն վրայէն, կա'մ ծովուն տակէն»:

Շոյեանաւին ուղեկցեցաւ անգլիական հակաթորփիլանաւ մը մինչեւ Մալթա. իսկ Մալթայէն մինչեւ Մարսէլլ ուղեկցեցաւ Փրանսական հակաթորփիլանաւ մը: Մարսէլլէն Փարիզ հասնելով՝ Տամատեան հոն գտաւ իր ընկեր պատգամաւորները: Պօլոս Նուպար փաշա երեքը միասին տարաւ ներկայացուց արտաքին գործոց պաշտօնատունը՝ Արեւելեան Գործերու Գրասենեակի պետ Մ. Կուին: Այս պաշտօնատարը Արտաւազդ Հանրմեանի եւ Մ. Տամատեանի անունները առաւ՝ իրենց Փը-

րանսական անգագիրները տալու համար: Սապահգիրական պարսկական հպատակ ըլլալով՝ պէտք չուենցաւ Ֆրանսական անցագրի: Ս. Կու պատգամաւորներուն յայտնեց թէ Նիւ-Եորքի Ֆրանսական ընդհանուր հիւպատոսին եւ Ուաշինկթընի Ֆրանսական դեսպան Մ. Ժիւսըրանին յանձնարարական գիրեր կը ղրկուին իրենց մասին:

1917 Յունուար 15-ին պատգամաւորները Փարիզէն մեկնեցան, բայց փաշային եւ ուրիշ լարեկամներու խորհուրդով փոխանակ Ֆրանսայէն դէպի Նիւ - Եորք չողենաւ առնելու, չողեկառքով ուղեւորեցան Սպանիա, ուր Վիկո նաւահանգիստէն նստան «Ալֆոնս ԺԲ» սպանական անդրատլանտեան չուանաւը, որ Քուպա կղզին հանդիպելէ ետք, Միացեալ Նահանգաց ծովեկերփները քերելով պիտի երթար Նիւ - Եորք: Այս ճանապարհը ամէնէն ապահովը կը նկատուէր՝ նախ որովհետեւ չողենաւը չէզոք պետութեան մը կը պատկանէր, եւ երկրորդ՝ որովհետեւ իր ուղեգիրը դէպի Մեքսիքոյի ծոցը կ'ուղղուէր. ուղղութիւն մը՝ ուր գերմանական սուլաւաւորութիւնը հանդիպելու վտանգը հաւանական չէր: Եւ սակայն Ասորեան կղզիներուն մօտերը կը տեսնուի որ առանց դրօշակի չողենաւ մը կը հետեւէր սպանական անդրատլանտեանին: Ասորեանները տնցնելէ ետք, տակաւին նոյն չողենաւը բաւական ժամանակ անոր հետքին վրայ բալելէ ետք կ'անյայտանայ: Պատգամաւորներու նաւադնայութենէն չարաթ մը ետք, Պերլինի ամերիկեան դեսպան Մր. Ճերայտ նոյն ուղեգիրծով Ամերիկա վերադարձին՝ նոյնպէս Ասորեան կղզիներուն մօտերը կը տեսնէ առանց դրօշակի չողենաւ մը, որ կը հետեւէր իր չողենաւին եւ որ հաւանօրէն միեւնոյնն էր: Այս ուրուական չողենաւին երեւումը բաւական կասկած ներշնչած էր թէ՛ առաջին տնդամին՝ Հայ պատգամաւորներուն, եւ թէ՛ երկրորդ անգամին՝ ամերիկեան դեսպանին:

Պատգամաւորներուն Վիկոյէն մինչեւ Քուպա ճամբորդութիւնը կը տեւէ 18 լման օր: Հաւանայի առջեւ նաւը կը կենայ երեք օր: Փետրուարի վերջին օրերն էին, բայց օդը այնչափ տաք էր որչափ Եղիպտոսի մէջ ամառուան կիսուն: Պատգամաւորներուն կ'ըսեն թէ Նիւ - Եորքի ճամբուն առաջին կէսը պիտի ճամբորդին կըլֆ-Սթրիմի վրայ, իսկ միւս կէսը՝ նոյն հոսանքէն դուրս: Արդարեւ, առաջին օրը նոյն ամառնային հեղձուցիչ տաքն էր՝ ինչ որ Հաւայիի մէջ: Գիշերը կարելի էր վերմակին տակ պառկիլ: Կէս գիշերին պատգամաւորները կ'արթննան ու կը զգան որ կիսով չափ սառած են: Կլիմայի այս յանկարծական փոփոխութեան պատճառը այն էր, որ չողենաւը կըլֆ-Սթրիմէն դուրս ելած էր: Այդ սառցային օդով կը ճամբորդեն մինչեւ Նիւ - Եորք ու հոն հասնելուն՝ կը տեսնեն որ կատարեալ ձմեռ է, դետիւնները ձիւնով ծածկուած, ու դեռ անընդհատ կը ձիւնէր:

Շոգենաւը երբ Ազատութեան արձանին առջեւ հասաւ, կանգ տուաւ: Ոստիկանութենէն, գաղթային զբաւեւեակի պաշտօնեաներէն, լրբիչներէն առաջ չողենաւ մտաւ ռիփորթըր մը, որ առաջին անգամ

Սապահգիրլեանին հանդիպելով՝ սկսաւ զայն հարցաքննել։ Անիկա իմանալով որ «Պետութիւնները եւ Թուրքիա» տրտղուով զիրք մը հրատարակած է, որուն մէջ դրած է թէ եթէ պետութիւնները Թուրքիան չստիպեն Արեւելեան Խնդիրը կարգադրելու, ընդհանուր պատերազմ պիտի ծաղի, անոր կ'ըսէ. «Ուրեմն միջազգային պատերազմ մը մարդարէացեր էք»։ Յետոյ կ'ուզէ մօտենալ միւս պատգամաւորներուն, բայց անոնք կը խուսափին իր ներկայութենէն։ Շոգենաւը Ազատութեան արձանին առջեւ կեցաւ մօտ երկու ժամ։ Այդ միջոցին առտուան թերթերը հասնելով՝ պատգամաւորները զարմանքով կարդացին «Նիւ - եորք թայմզ»ի մէջ զգայացունց լուր մը՝ խոշոր տառերով վերնագրուած.

«Այս առաւօտ «Ալֆոնս Ժի.» չոգենաւով Նիւ - եորք հասաւ պատերազմի մարդարէ մը»։ Այս վերնագրին տակ դրուած էր թերթին ռիփորթըին տեսակցութիւնը Սապահգիրլեանի հետ։

Երբ չոգենաւը մաքսատան առջեւ հասաւ եւ պատգամաւորները մօտանալու արահը, տեսան որ հեռուէն արագ քայլերով դէպի իրենց կողմը կու գայ երկայնահասակ, անսպիւ, անմօրոս մէկը, որ ամերիկացի ռիփորթըրի մը երեւոյթը ունէր կատարելապէս։ Մինչ անոնք կը մտածէին այս նոր փորձանքէն խուսափիլ, մարդը հասաւ իրենց մօտ եւ մաքուր հայերէն արտասանութեամբ անոնց ըսաւ. «Ես Ռուբէն Հերանն եմ, հայ կուսակցութիւններու կողմէ եկած եմ ձեզի բարի գալուստ մաղթելու»։ Այսպէս, ռիփորթըրի մզմաւանջը փարատեցաւ ու պատգամաւորները Հերանի ընկերակցութեամբ դուրս ելան մաքսատան սրահէն ու հասան չորս կուսակցութիւններու Նիւ - եորքի մասնաճիւղերուն ներկայացուցիչներուն մօտ, որոնք եկած էին զիրենք դիմաւորելու։

Պատգամաւորները կուսակցութեանց ներկայացուցիչներուն հետ կարճ տեսակցութենէ մը ետք՝ գացին Փրանսական ընդհանուր հիւսպատոսին քով, որ իրենց հաղորդեց թէ Ուաշինկթընի Փրանսական դեսպանը իրեն լուր դրկած է որ հայ պատգամաւորները երբ հասնին, նախքան որեւէ դործի ձեռնարկելը, անմիջապէս Ուաշինկթընը երթան զինք տեսնելու։ Ի հետեւութիւն այս պատուէրին՝ պատգամաւորները նոյն օրն իսկ մեկնեցան Նիւ - եորքէն եւ երեկոյին հասան Ուաշինկթըն։ Յետոյ առաւօտ գացին Փրանսական դեսպանատունը, ուր տեսակցեցան դեսպան Մ. Ժուլիտանի հետ։ Այս վերջինը իրենց ըսաւ. «Թէեւ արտաքին գործոց նախարարութիւնը ձեզի յանձնարարած է Միացեալ Նահանգաց հայերուն մէջ կամաւորներ արձանագրել, բայց Փարիզի մէջ չեն գիտեր այս երկրին մէջ տիրող մտայնութիւնը եւ այն անպատեհութիւնները, որոնց կրնայ տեղի տալ ձեր կողմէ առնուելիք այդպիսի քայլ մը։ Միացեալ Նահանգաց կառավարութիւնը Գերմանիոյ դէմ գրկուած է ո՛չ միայն սուգանաւերու ամերիկեան չոգենաւեր ընկղմելուն համար, այլեւ Ամերիկայի մէջ անոր ունեցած ապօրէն

վարժունքներուն պատճառաւ : Համաձայնական պետութեանց չափը կը պահանջէ Ամերիկայի՝ Գերմանիոյ դէմ այս պրոպագանդան օգտուիլ, զայն Գերմանիոյ դէմ պատերազմի մղելու համար : Եթէ Ամերիկա տեսնէ որ մենք ալ իր հերիքին մէջ օրէնքով արգելուած արարքներ կը գործենք, կը դժկամակի մեր կողմը հակել եւ մենք մեծապէս կը տուժենք : Մեծ յոյս ունիմ որ չուտով Ամերիկա պատերազմ պիտի յայտարարէ Գերմանիոյ դէմ. ահա ա՛յն ատեն է որ դուք կրնաք ադատօրէն ձեռնարկել հայ կամաւորներ արձանագրելու, առանց որեւէ դիտողութեան տեղի տալու ամերիկեան իշխանութեանց կողմէ : Առ այժմ դուք բաւականացէ՛ք Ազգային Միութիւն յառաջ բերելով, կամաւորական խնդրին մասին ակնարկութիւն ընելով միմիայն ամենալստահելի անձերու, բայց չընելով որեւէ հրապարակային արտայայտութիւն կամ պորձնական ձեռնարկ» :

Պատգամաւորները, թէեւ մի քիչ հիասթափուած՝ խոստացան այս տրուած հրահանգներուն համաձայն շարժիլ ու մեկնեցան :

Ուսչինկոթքէ վերադարձին, Պոսթոն կու դան ու հոն տեսակցելով չորս կուսակցութեանց Ամերիկայի կեդրոնական մարմիններուն, ինչպէս նաեւ Հայ Առաքելական ու Աւետարանական Եկեղեցիներու հոգեւոր իշխանութեանց եւ Հ.Բ.Ը. Միութեան ներկայացուցիչներուն հետ, ու րաւատրելով անոնց վայրկեանին հրամայական պահանջները, կ'առաջարկեն որ, ինչպէս Եգիպտոսի մէջ եղած է, իրենք ալ Ամերիկայի մէջ կազմեն Ազգային Միութիւն :

Ամերիկայի կուսակցութեանց, յարանուանութեանց եւ Բարեկրօնականի ներկայացուցիչները կը պատմեն Լորք պատգամաւորներուն ամերիկահայ կեանքի բոլոր անցքերը, որ տեղի տնեցած էին Թուրքիոյ պատերազմի մտնելէն սկսեալ մինչեւ այն թուականը, ուր կազմուած է նախ միջկուսակցական խորհրդաժողով, որուն նպատակն էր աջակցիլ հայ ազատագրութեան համար ներկայ պատերազմին առթիւ ըլլալիք համագործին ջանքերուն՝

ա. - Օղնելով Երկրի մէջ կռուող խումբերուն,

բ. - Զինեալ շարժում առաջ բերելով՝ երբ կարելի ըլլայ Դաշնակից պետութեանց հաւանութիւնը եւ օժանդակութիւնը ստանալ,

գ. - Դիւանագիտական հետապնդումներ կատարելով :

Ապա կը պատմեն թէ ինչպէս Ամերիկահայ Երեսփոխանական Ժողովին կողմէ ընտրուած յանձնախումբ մը 1914 Դեկտ. 16-ին միջկուսակցական խորհրդաժողովին հետ խորհրդակցելէ ետք, կ'որոշուի որ միջկուսակցական մարմինը ընդարձակուի եւ ըստ այնմ չորս կուսակցութեանց եւ Երեսփոխանական Ժողովի ներկայացուցիչներով կը կազմուի Ազգային Պաշտպանութեան Ամերիկայի Յանձնախումբ, որուն նպատակը ըլլալով միջկուսակցականի նպատակին յար եւ նման, որոշուած էր դադրեցնել հատուածական բոլոր մասնակի հանգանակութիւնները եւ սկսիլ ընդհանուր հանդանակութեան՝ ի նպաստ ազգային

դատին հետ կապ ունեցող բոլոր հարցերուն՝ մէջն ըլլալով Կովկասի հայ կամաւորական շարժումին օդնելու խնդիրը եւ արեւմտահայ փախըստականներուն նպաստ հասցնելու գործը:

Թէ ինչպէս, այս Եանձնախումբին կազմութիւնն ու գործի ըսկրկնէն քիչ ետք, դաշնակցական ներկայացուցիչներ, յայտնելով թէ ըստ Կովկասէն իրենց հասած լուրերուն՝ այնտեղ արդէն կազմուած է «Ազգային Պիւր» մը, որ կը մարէ կամաւորական շարժումը, կ'առաջարկեն կատարուելիք հանգանակութեան յիստն առ հարիւրը (փոխանակ 25 առ հարիւրէն՝ որուն համար կանխաւ համաձայնութիւն գոյացած էր) յատկացուի կամաւորական շարժումներուն եւ ուղղակի զրկուի Ազգային Պիւրոյին, բայց յանձնախումբը մերժելով այս առաջարկը, կ'որոշէ կամաւորներուն սահմանուած բաժինը զրկել պարբերաբար Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ոչայմանով որ միմիայն ներկրմանող կամաւորներուն յատկացուի: Թէ այս հանգամանքներու մէջ Դաշնակցութիւնը կը զատուի Ազգ. Պաշտպանութեան Եանձնախումբէն եւ առանձին հանգանակութիւն կը բանայ ի նպաստ կամաւորական շարժումներուն՝ հաւաքուած գումարները Ազգային Պիւրոյին զրկելու առաջադրութեամբ:

Թէ ինչպէս Դաշնակցութեան բաժանումէն ետք՝ Ազգ. Պաշտպանութեան Եանձնախումբին մնացեալ շորս հատուածները իրենց հետ գործակցելու կը հրաւիրեն Հայ Աւետարանական Եկեղեցին եւ Հայկ. Բարեգործ. Ընդհ. Միութիւնը, եւ այս վեց կազմակերպութեանց ներկայացուցիչներով կը կազմուի Ամերիկայի Ազգ. Պաշտպանութեան Միութիւնը, որ կ'որոշէ կամաւորներու եւ կարօտեալներու ի նպաստ կատարուելիք հանդանակութեան արգիւնքը գործածել Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ Ազգ. Պատուիրակութեան նախագահ Պօղոս Նուպար փաշայի միջոցաւ:

Թէ ըստ այնմ, Ազգ. Պաշտպ. Միութեան անդրանիկ հանգանակութիւնը կը բացուի Պոսթոնի մէջ անհախընթաց խանդավառութեամբ եւ խիստ քաջադերական արգիւնքով: Քիչ Դաշնակցութիւնը կը շարունակէ իր առանձին գործունէութիւնը եւ կամաւորական շարժումին ի նպաստ իր առանձին հանդանակութիւնը:

1915-ին առաջ եկած այս խանդավառ գործունէութիւնը եւ հաւաքական ու առանձին հանգանակութիւնները երկար տեւողութիւն չեն ունենար սակայն: Արեւմտահայերու զանդուածային տարագրութիւնները, հայկական ճակատին վրայ ոռո բանակներու յաջորդարկան նահանջները, Կովկասի հայ կամաւորախան շարժումներուն կասումը, ինչպէս նաեւ Համաձայնական պետութիւններուն հայ տառապանքին ու բնաջնջումի վտանգին հանդէպ ցոյց տուած անտարբերութիւնը, եւ այս ամէնուն հետ՝ Համաձայնականներուն ալ զանազան ճակատներու վրայ ունեցած ծանրակշիռ անյաջողութիւնները՝ ամերիկահայութեան մէջ ընդհանուր յուսաբեկութիւն առաջ բերած ըլլալով՝ թէ՛ Ազգային

Պաշտպանութեան Միութեան և թէ Դաշնակցութեան գործունէութիւններն ու հանգանակութիւնները ոչ միայն դանդաղած, այլ նոյնիսկ դադարած էին:

Այսպիսի տարաւոր գրութեան մը մէջ էր ամերիկահայութիւնը, երբ կը հասնէր եզրիպատահալ պատգամաւորութիւնը, որուն բերած աւետիսը ի մասին Եզրիպատահալ մէջ Ազգային Միութեան մը կազմութեան և Ֆրանսայի նախաձեռնութեամբ, Հարկական Լեզնի մը կազմակերպութեան ձեռնարկին, ընդհանուրին մէջ նոր ողբերգութիւն մը առաջ բերաւ, եւ բոլոր կազմակերպութիւնները սրբաօթար յանձն առին աւելի քան երբեք համերաշխական ոգով գործի լծուիլ:

Դաշնակցականները, որոնք Ազգային Պաշտպանութեան Միութենէն բաժնուելէ ետք որոշած էին անդամ մըն ալ չհամերաշխիլ ազգային միւս կազմակերպութիւններուն հետ՝ առանց իրենց տեղական Ընդհանուր Ժողովին հաւանութեանը, նկատի առնելով սակայն գործին բացառիկ կարեւորութիւնն ու ստիպողականութիւնը, առանց Ընդհանուր Ժողովի գումարելու ձեւակերպութիւններով ժամաւաճառ ըլլալով՝ իրենց վարչական մարմիններու կարգադրութեամբ և անոնց պատասխանատուութեան տակ՝ վճեղքին իրենց բոլորանուէր մասնակցութիւնը բերել կազմուելիք Ազգային Միութեան և անոր միջոցաւ գործակցել Փարիզի Ազգային Պատուիրակութեան հետ՝ կրիկեան ճակատի կամաւորական գործին շուրջ:

Ահա այսպիսի խանդավառ տրամադրութիւններով նախ իրարու քով եկան չորս քաղաքական կուսակցութեանց Ամերիկայի ղեկավար մարմինները և 1917 Մարտի 16-էն մինչև 26-ը խորհրդակցելով՝ համաձայնութեան եկան հիմնական սկզբունքներու շուրջ, և յետոյ՝ Ապրիլի սկիզբները՝ հրապարակելու հայ յարաւումանութեանց և Հ.Բ.Բ. Միութեան լրագոր ներկայացուցիչները, և բոլորը միաձայնութեամբ որոշեցին կազմուած հռչակել Ամերիկայի Հայ Ազգային Միութիւնը:

Ազգ. Միութիւնը իր զիւանը կազմեց հետեւեալ եօթն անդամներով, որոնք միեւնոյն ժամանակ պիտի ըլլային Միութեան Գործադիր Մարմինը. -

Միհրան Սըլաւլը (վեր. հնչակեան) ատենապետ
Վեր. Կ. Մանուէլ (հայ աւետարանական) փոխ-ատենապետ
Մանուկ Համբարձումեան (դաշնակցական) Ա. ատենադպիր
Ե. Միւրադ (Ս.Դ.Հնչակեան) դեր-ատենադպիր
Սարգիս Մալիմէզեան (սահմ. ռամկավար) դեր-ատենադպիր
Գարեգին Կիրակոսեան (Հ.Բ.Բ.Մ.) գանձապետ
Մարկոս Տէր Մանուկեան (հայ առաքելական) հաշուապահ

Ազգային Միութեան մնացեալ անդամները, որոնք վերողբեալ դիւանի անդամներուն հետ միասին պիտի կազմէին Միութեան Ընդհանուր Ժողովը, իրենց պատկանած մարմիններու կարգով հետեւեալներն էին. -

Հայ Առաք. Եկեղեցի
 Մուշեղ Արք. Սերոբեան
 Շահէ Ծ. Վրդ. Գասպարեան
 Ս.Դ. Հնչակեան
 Յակոբ Բարեջանեան
 Դաշնակցական
 Միրիճան Օզանեան
 Զաւէն Նալպանտեան
 Վեր. Հնչակեան
 Տոքթ. Յովհաննէս Ծովիկեան
 Սահմ. Ռամկավար
 Արմենակ Ն. Նազար
 Միքայէլ Յովհաննէսեան
 Հ.Բ.Է.Ը. Միլիթիւն
 Բարդէն Եսս. Կիւլէսէրեան
 Յակոբ Դերձակեան

Չորս կուսակցութեանց ներկայացուցիչները Մարտ 26-ին Ամերիկայի Հայ Ազգային Միութեան կազմութեան շուրջ իրարու միջեւ ստորագրած էին համաձայնագիր մը, որ կը բովանդակէր հետեւեալ բանաձեւը.

«Ամերիկայի Հայ Ազգ. Միութիւնը յարաբերութիւն պիտի պահէ Եղիպտոսի Հայ Ազգ. Միութեան հետ եւ իր գործունէութիւնը պիտի համաձայնեցնէ Ազգ. Պատուիրակութեան ընդհանուր ուղղութեան, կանոնաւոր յարաբերութիւն պահելով անոր հետ. միւս կողմէ՝ Միութիւնը պիտի նկատուի Ազգ. Պատուիրակութեան ներկայացուցիչ մարմինը Ամերիկայի մէջ»։

Միութիւնը իր կազմութենէն անմիջապէս ետք՝ 1917 Ապրիլ 4-ի նիստին մէջ՝ հետեւեալ ձեւով կ'ընդլայնէ վերոյիշեալ բանաձեւը.

«Այն անհամաձայնութիւնները, որոնք հայերը պառակտուած կը պահէին մինչեւ վերջերս, ազդեալեալ եղան իրենց դատին եւ առիթ ընծայեցին իրենց թշնամիներուն ճարտարօրէն օգտուելու անոնցմէ՝ հայութեան ազգային բնոյթը ժխտելու եւ զայն վարկաբեկելու համար յաջա քաղաքակիրթ աշխարհի՝ հայերը ներկայացնելով իբրեւ անընդունակ համերաշխ գործակցութեան՝ հետեւեալ անատակ ինքզինքնին կ'առաջարկուի.

«Միւս կողմէ, այն ճշմարտական վայրկեանին ուր կ'ապրինք պատմութեան այն անկիւնաքարին՝ ուր ազգերու, ի մասնաւորի հայութեան ճակատագիրը խնդրոյ տակ է, ազգային ճիգերը իրենց բոլոր արդիւնքը տալու համար՝ պէտք է ներդաշնակօրէն համագործած ըլլան եւ ստանան ընդհանուր եւ համերաշխ գործունէութեան մը քնայթը։

«Հետեւեալը, Ամերիկայի Հայ Առաքելական եւ Աւետարանական Եկեղեցիներու, չորս քաղաքական կուսակցութեանց եւ Հայ

Բարեկ . Ընդհ . Միութեան ներկայացուցիչները՝ համաձայնած Ազգային Պատուիրակութեան հետ, վերջ դնելու համար այն կացութեան որ այնքան վնասարեւր է ազգային շահերու :

«Կ'որոշեն .

«Ա. - Կազմել Ամերիկայի մէջ միութիւն մը՝ «Հայ Ազգային Միութիւն Ամերիկայի» անուան տակ, լայկացած վերոյիշեալ կազմակերպութիւններու եւ հաստատութիւններու ներկայացուցիչներէն, առանց դաւանանքի եւ կուսակցութեան խտրութեան, նպատակ ունենալով հաստատել, ամրացնել եւ պահպանել բոլորին միութիւնը եւ աշխատիլ՝ առանց քաղաքական կամ կուսակցական մասնաւոր մտահոգութեան՝ Հայկական Դատի յաջողութեան համար՝ ամէն միջոցներով եւ բոլոր մարզերու մէջ :

«Բ. - Իրենց կարելի բոլոր ճիգերը տրամադրել այդ նպատակին իրագործման համար՝ իրականութիւններու կռուանին վրայ՝ ապագային եւ աւելի բարեպատեհ ժամանակներու ձգելով տնտեսական այն ամէն խնդիրները, որոնք զիրենք բաժնուած կը պահէին մինչեւ հիմա :

«Գ. - Նկատի ունենալով ներկայ հանգամանքներու մէջ Ազգային Պատուիրակութեան պաշտօնին եւ գործին աւագ կարեւորութիւնը, Ամերիկայի Հայ Ազգային Միութիւնը յարաբերութեան մէջ պիտի մտնէ անոր հետ՝ իր աշխատութեան զայն տեղեակ պահելու, անոր հետ համաձայնութեամբ գործակցելու եւ այս կերպով համընթաց գործունէութիւն մը ստեղծելու համար» :

Ազգային Միութիւնը կ'որոշեցրէ հետեւեալ գլխաւոր նպատակները .

ա. - Հայկական ազատագրութիւն, կիլիկիան կամաւորական ձեռնարկ,

բ. - Հայաստանի վերաշինութիւն եւ երկրի կարօտեւոց անմիջական օգնութիւն,

գ. - Դիւանագիտական ձեռնարկ եւ հայամաստ պրպակամը :

Ազգային Միութիւնը կազմուելէ ետք Պոսթընի մէջ, շուտով կազմուեցան անոր մասնաճիւղերը Միացեալ Նահանգաց միւս կարեւոր եւ հայաշատ քաղաքներուն մէջ, այնպէս որ քիչ ատենէն Ազգային Միութեան մասնաճիւղերուն թիւը հասաւ 187-ի : Մինչ Ազգ. Միութիւնը կը տեղադրէ իր գլխաւոր հանգանակութեան, արդէն Ամերիկան պատերազմ յարաբարած էր Գերմանիոյ եւ Աւստրիոյ դէմ : Ուստի, եղիպատահայ պատգամաւորներն անգամ մըն ալ գացին Ռաշինկթըն, Ֆրանսական դեսպանին մօտ : Այս վերջինը զոհ եղաւ իմանալով որ հայերը միարանած եւ կապած են Ազգային Միութիւն, եւ յայտնեց թէ՝ հիմա որ Ամերիկան մտած է պատերազմի մէջ, անպատեհութիւն չկայ որ հայերը սկսին կամաւորներ արձանագրել Արեւելեան Լեզգոնին համար : Ասոր վրայ, Ազգային Միութիւնը ոչ միայն աւելի մեծ թափ տը-

լաւ սկսուած հանդանակութեան՝ ամենուրեք գումարելով հրապարակային ժողովներ, այլեւ անմիջապէս ձեռնարկեց կամաւորներու արձանագրութեան: Ամենուրեք հայ երիտասարդութիւնը մեծ խանդավառութեամբ պատասխանեց Միութեան կամաւորական կոչին: Չնայելով որ արձանագրուող կամաւորներուն խստիւ կը պատուիրուէր չթողուլ իրենց անձնական գործը եւ համբերութեամբ սպասել Ազգ. Միութեան հրաւերին, կամաւորներէն շատերը վայրկեան առաջ պարտականութեան պաշար մեկնելու անհամբերութեամբ կը թողուն իրենց գործերը եւ կ'երթային նիւ - եւրօ՝ հոն սպասելու որ Միութիւնը զիրենք ճամբայ հանէ դէպի Արեւելք: Այս կերպով նիւ - եւրօի մէջ կամաւորներու խճողում յառաջ կու գար, քանի որ շարքով մէկ անգամ միայն կարելի էր կամաւոր փոխադրել Փրանսական թղթատար շոգենաւով՝ միակ տրամադրելի փոխադրութեան միջոցը հայ կամաւորին համար, բոլոր փոխադրանաւերը յատկացուած ըլլալով ամերիկեան բանակի զինւորներուն: Ֆրանսական թղթատար շոգենաւը հայ կամաւորները կ'առնէր իրբեւ երրորդ կամ չորրորդ կարգի ճամբորդներ, ամէն անգամին 70-80 հոգի միայն. այսպիսով Ա ամսուան մէջ կարելի եղաւ Ֆրանսա փոխադրել միայն 1200-ի չափ կամաւորներ: Մնացեալ կամաւոր արձանագրուածները՝ ճարահատ՝ պացին խառնուեցան Փրանսական ճակատ մեկնող ամերիկեան բանակի կամաւորներուն մէջ: Ազգային Միութիւնը քանիցս զիմու՝ ըրաւ Փրանսական դեսպալտին եւ Ազգ. Պատուիրակութեան խողովակով՝ Փրանսական արտաքին գործոց նախարարութեան՝ հայ կամաւորներուն տրամադրելու համար մէկ երկու պատերազմական փոխադրանաւ, բայց այս զիմումները ապարդիւն մնացին:

Թէ՛ հանդանակութեանց եւ թէ՛ կամաւորներու արձանագրութեան համար ելլալու հայ պատգամաւորները հինգ ամսուան ժամանակամիջոցին մէջ չըլեցան քաղաքէ քաղաք եւ հրապարակային ժողովներուն մէջ բանախօսութիւններ ըրին: 1917 Յուլիսի վերջերը Հանրմեան եւ Տամատեան իրենց առաքելութիւնը լրացած համարելով՝ Ամերիկայէն մեկնեցան ու պացին Փարիզ, Ազգ. Պատուիրակութեան մօտ. իսկ Սապահգիւլեան մնաց Ամերիկա, Շիքակոյի մէջ «Երիտասարդ Հայաստան» խմբագրութեան գլուխը անցնելով: Արդէն Սապահգիւլեան Ամերիկա հասնելէն քիչ ետք կարծես Եգիպտահայ Ազգ. Միութեան պատգամաւորի իր հանգամանքին միացուց Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան Ամերիկայի գործիչի հանգամանքը եւ ամէն տեղ այս երկակենցաղ դիրքը բռնեց ու շատ անգամ նոյնիսկ նախընտրաբար Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան հատուածական շահերուն ծառայեց՝ փոխանակ Հայ Ազգային Միութեան հաւաքական շահերուն ծառայելու: Այն քաղաքներուն մէջ որ ինք առանձին չըլեցաւ, Ազգ. Միութեան կազմութիւնը աւետելով ու պանծացնելով հանդերձ՝ ջանալ այդ առթիւ առաջ եկած խանդավառութիւնը չահագործել՝ Հնչակեան հրապարակային ժողովներու մէջ հանդանակութիւններ ընելով եւ անոնց արդիւնքը յատկացր-

ներլուր իր կուսակցութեան սնտուկին, հակառակ որ Այդալին Միութիւնը իր կաղմութեան օրէն որոշած էր ձեռնարկել իր հաշուոյն ընդհանուր հանգանակութեան եւ ալդ առթիւ կարգադրած էր որ երկը ամսուան ընթացքին՝ մինչեւ Յունիսի վերջը, պիտի դադրին բոլոր հաստատեալ հրապարակային ժողովները՝ հանդանակութեան բնոյթ կըրեն անոնք թէ ոչ։ Սապահգիւրեանի ներկայութեամբ ու նախագահութեամբ աջալիսի ապօրինի հանդանակութիւններ կատարուած էին Սենթրըլ Ֆոլսի, Սենթ Քեթրըլինի, Նիակարա Ֆոլսի եւ Միլֆորտի մէջ։ Միութեան 1917 Մայիս 8-ի եւ Յունիս 26-ի նիստերուն մէջ իրենց բոլոր առարկայ եղան այս հանգանակութիւնները՝ եւ որոշուեցաւ որ հաստատուած գումարները յանձնուին Միութեան գանձատեղին։ Այս որոշումը չյարդուեցաւ հնչակեաններու կողմէ։ Հնչակեան մասնաճիւղերէն մին, Լինի՞ էր թէ Չըլսի՞ լաւ չեմ յիշեր, պատրաստած էր թատերական ներկայացում մը, որ տեղի պիտի ունենար իր ֆիլալին մէջ եւ որուն հասոյթը պիտի յանձնուէր Այդալին Միութեան անուակին՝ ըստ որոշման յիշեալ մասնաճիւղին, որ ուզած էր յարկէ դրամական խնդիրներու շուրջ Միութեան վերոյիշեալ կարգադրութիւնը։ Ներկայացման յայտագիրը տպագրութեան համար կը գրուի Շիրակո, «Երիտասարդ Հայաստան»ի տպարանը։ Եւ, ահա, մասնաճիւղին կը հասնի տպագրուած յայտագիրը, որուն մէջ փոխանակ «ի նստատ Ազգ. Միութեան»ի՝ դրուած էր «ի նստատ Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան»։ Մասնաճիւղը միանգամայն կը ստանայ պաշտօնական յանդիմանագիր մը՝ ստորագրուած Սապահգիւրեանի նախագահած Շիրակոյի Գործադիր Յանձնախումբէն, որով մասնաճիւղը կը կշտամբուէր թէ ինչպէս «Հնչակեան տաղանդի արդիւնք ներկայացման մը՝ որ կը կատարուի Հնչակեան ֆիլալի մը մէջ Հնչակեան դերակատարներով» արդիւնքը կ'ուզէին յատկացնել Այդալին Միութեան, փոխանակ յատկացնելու Հնչակեան կուսակցութեան։ Յանդիմանագիրը կ'աւելցնէր. «Ազգ. Միութիւնը միթէ քիչ հասոյթի աղբիւրներ ունի, որ կ'ուզուի այս հասոյթն ալ իրեն սեփականացնել»։ Մասնաճիւղին ատենապետը, գայթակղած այս հատուածամուլ յանդիմանագրէն՝ անոր վաւերական բընագիրը կը բերէ կը յանձնէ Այդալին Միութեան ատենադպրին։ Ազգ. Միութեան նիստին մէջ մէջտեղ վը բերուի այս խնդիրը, բայց հնչակեան ներկայացուցիչները՝ հեռի՝ այգանելէ իրենց Գործադիր Յանձնախումբը, ընդհակառակը՝ կը մեղադրեն Ազգ. Միութեան դիւանը, որ՝ իրենց խօսքով՝ լրտեսներ զբաժնէ Հնչակեան մասնաճիւղերու մօտ՝ անոնց մէջ անցած դարձածին տեղեկանալու համար։

Հնչակեանները ընտրութիւններու առթիւ ալ նոյն հատուածական ոգին ցոյց տալով՝ ի վերջոյ բոլորովին հրաժարեցան Ազգ. Միութենէն։

Պաշտակցութիւնը եւ միւս երկու քաղաքական կուսակցութիւնները, ընդհանուր առմամբ, աւելի ուղղամիտ ընթացք ունեցան Ազգա-

յին Միութեան մէջ. զո՛նէ աշդպէս էր կացութիւնը մինչեւ Հանրմեանի
և. Տամատեանի մեկնումը: Բայց անկէ ետք կացութիւնը կ'ենթոտեցաւ՝
վրայ հասնելով հետզհետէ կռիվասեան Սէյմի կազմութիւնն ու լուծու-
մը, Ամենայն Հայոց կաթողիկոսին իրբււ իր ներկայացուցիչը Ամերիկա
ղրկելը Տօքթ. Գարեգին Փաստրմաճեանը, Հայաստանի Անկախութեան
Յայտարարութիւնը, Հայաստանի Հանրապետութեան պատգամաւորու-
թեան փարիզ ժամանումը, Միացեալ Անկախ Հայաստանի Աքթին հը-
րատարկումը Հայաստանի Հանրապետութեան կողմէ, Հայաստանի
դաշնակցական կառավարութեան և Աղլային Պատուիրակութեան մի-
ջև առաջ եկած տեսակէտներու և քաղաքականութեան տարբերութիւնը,
և յիշ. և ինչ: Այս պարապմունքուն և յարակից կնճռոտութեանց հանդէպ
Ամերիկայի Աղլային Միութեան դաշնակցական ներկայացուցիչները
չարունակ հետեւեցան Հայաստանի և արտասահմանի դաշնակցական-
ներուն տեսակէտներուն ու բռնած դիրքին, մինչ Աղլ. Միութեան մը-
նացեալ բաղկացուցիչ տարբերը հաւատարիմ կը մնային իրենց սկզբնա-
կան ուղղութեան, պահելով միշտ իրենց համերաշխութիւնը Աղլ. Պատ-
ւիրակութեան հետ:

Ասկէ դատ, Ամերիկայի հայ առաքելական համայնքին ներքին
խնդիրներուն շուրջ՝ տեղւոյն դաշնակցականները բռնեցին դիրք մը
որ չէր համապատասխաներ նոյն համայնքին, Բաբելոնականին և
քաղաքական միւս կուսակցութեանց ներկայացուցիչներուն բռնած
դիրքին: 1917 Փետր. 18-էն ի վեր իր առաջնորդական պաշտօնէն հը-
րաժարեցուած Վեհօնի Արսէն Վարդապետը մինչեւ վերջը պաշտպան-
ւեցաւ դաշնակցական երեսփոխաններէն և երկու տարի ետք հրաժարուե-
ցաւ անոնց կողմէ՝ դաշնակցականներու համակիր անձերէ գումարել և
երեսփոխանական ծովով մը ի փրօվիտենս. ստեղծուեցաւ այդ ժողովը, որ
ոչ միայն վերահաստատեց Արսէն Վարդապետը իր նախկին պաշտօնին
մէջ, այլ նաև ընտրեց կեդրոնական վարչութիւն մը Փրովիտենսի
մէջ, երբ անդին Ռուսթի մէջ կային օրինաւոր առաջնորդարանն ու ա-
ռաջնորդական տեղապահը: Եւ օր մըն ալ, 1918 Հոկտեմբերին, Աղլ.
Միութեան ներկայացուցիչները ներկայացուցիչներ Փրովիտենսի ա-
ռաջնորդարանին կողմէ, զորոնք սակայն մերժեց Աղլային Միութիւնը,
բայտ որում Միութեան մէջ արդէն կային Հայ Առաքելական Եկեղեցւոյ
ներկայացուցիչներ՝ բնորոշած Ռուսթի առաջնորդարանին կողմէ: Ա-
սոր վրայ Աղլ. Միութեան դաշնակցական ներկայացուցիչները առա-
ջարկեցին երկու առաջնորդարաններուն ներկայացուցիչներն ալ
չընդունիլ Միութեան մէջ ու միւսնոյն ատեն միջոցներ ձեռք առնել
խառն երեսփոխանական ժողով մը գումարել տալով՝ համայնքին մէջ
տիրող երկպառակութիւնը մէջտեղէն բռնալու: Հաջար: Սակայն դաշ-
նակցականներու այս առաջարկին ալ մերժուեցաւ՝ Միութիւնը չուզելով
միջամտել Հայաստանեայց եկեղեցւոյ վարչական ներքին գործերուն:

Դաշնակցութիւնը, դժուո՛ր Աղլ. Միութեան ընթացքէն, հեռա-

դառնալու և վերադառնալու համար պայման առաջարկեց որ Միութեան անդամները ընտրուին ժողովուրդին քուչարկութեամբ :

Միութիւնը, մղուած ազգային համագործակցութիւնը պաշտպանելու իր նախաձեռնողութենէն, դիմում բրաւ փարիզի Ազգ. Պատերազմական, որպէսզի ան իր ազդեցութիւնը բանեցնէ երկու տարախոհ կուսակցութիւններուն վրայ՝ զանոնք վերստին բերելու համար իր մէջ . բայց Միութեան այս դիմումն ու քննարկը որեւէ դրական արդիւնքի չյանկեցան՝ Ս.Դ. Հնչակեան հաստատած յամառելով մնալ իր մեկուսացումին մէջ և Դաշնակցութիւնը աշխատելով դժուարութիւններ ու խոչընդոտներ հանել Միութեան դէմ :

Օրինակ, Ազգ. Միութիւնը ձեռնարկեց բժշկական առաքելութիւն մը կազմակերպելու . Դաշնակցութիւնը զայն խաչածեւեց՝ նման մարմնի մը կազմութեան ձեռնարկելով ինք ալ : Ազգ. Միութիւնը ուժ տուաւ Զօրավար Անդրանիկի Փրկութեան Հանդանակութեան . Դաշնակցութիւնն ալ մէջտեղ հանեց Բանակի Հանդանակութիւն մը :

Դաշնակցութիւնը տակաւին չէր բաժնուած Ազգ. Միութենէն, երբ՝ Մեծ Պատերազմին վերջանալէն անմիջապէս յետոյ, Ազգ. Պատերազմութիւնը սէտր տեսնելով Փարիզի մէջ գումարել Ազգային Համագումար մը, Միութեան հրահանգ զրկեց Ամերիկայէն չորս պատգամաւորներու, համագոյային ընտրութեան ձեռնարկելու :

Այս համագոյային ընտրութեան առթիւ չորս կուսակցութիւններ իրարմէ տարբեր ընթացք բռնեցին : Ս.Դ. Հնչակեանները ընտրութեանց հանդէպ դաջ վերաբերում ունեցան, շատ տեղեր ալ ձեռնպահ մնացին : Վերակազմաւորները գլխաւորապէս աշխատեցան իրենց երկու թեկնածուներուն ընտրութիւնը յաջողցնելու : Ռամկավարները իրենց քուէները տուին Եւրոպա գտնուող հայ գործիչներու : Իսկ դաշնակցականները իրենց բոլոր քուէները կեդրոնացուցին իրենց չորս թեկնածուներուն անուններուն վրայ, որոնցմէ երեքը իրենց ընկերներն էին, մինչ չէզոք կամ անկուսակցական ազգայիները՝ անտեղեկութեամբ չորս համագոյային ընտրութեան մը առաջ, ցրուեցին իրենց քուէները : Այս հանդիմանքներու մէջ, Դաշնակցութեան թեկնածուները թէև ունէին յաջողութեան զօրաւոր հաւանականութիւններ, բայց ցայտիկ ըսել որ ընտրութեանց ընթացքին դաշնակցականներու կողմէ տեղի ունեցան գեղծումներ, մանաւանդ հեռուոր անկիւններու մէջ՝ ուր հակոցութիւն չունէր կամ քննութիւններ կատարելու քիչ կարելիութիւններ կային : Դաշնակցութիւնն յաջողեցաւ իր թեկնածուներն ընտրել տալու . բայց այս յաջողութեան համար ի դուրս գրուած դեղձումներն այնքան դաշնակցեցուցիչ եղան որ, Միութիւնը պարտաւորուեցաւ կազմել զատական յանձնախումբ մը, որուն քննութեան արդիւնքը հաստատեց այդ գեղձումներուն կիրարկութեան կերպն ու չափը (Տես՝ Ազգային Միութեան Տեղեկագիրը) :

Զեղծումներով խառն այս ընտրութեան շնորհիւ, իբրեւ Ամերի-

կայի պատգամաւոր Փարիզ ղրկուեցան հետեւեալ երեք դաշնակցականները - Մանուկ Համարձուեան, Արսէն Միքայէլեան, Զատիկ Մաթիկեան, չորրորդ պատգամաւորն ըլլալով երուանդ Աղաթօն պէյ *, որ արդէն եւրոպա կը գտնուէր :

Ազգ. Միութիւնը իր ծրարքին մէջ ունենալով նաեւ դիւանագիտական ձեռնարկներ եւ հայանպաստ սլոնալիմնոյ, այս նպատակով իր ատենապետ Միհրան Սըվազլըին պաշտօն տուած էր Ուաշինկթընի մէջ հայանպաստ քաղաքականութիւն վարելու համար ղրասենեակ մը բանալու : Միւս կողմէ, Պօղոս Նուպար փաշա նոյն Սըվազլըն իր կողմէն ներկայացուցիչ նշանակած էր Ուաշինկթընի կառավարութեան մօտ : Միութիւնը նաեւ Նիւ - Եորքի մէջ կազմած էր Մամլոյ Գրասենեակ մը, որուն վարիչ նշանակած էր հանգուցեալ Վահան Գարտաշեանը : Այս վերջինը, որ պարտաւոր էր Ազգ. Միութեան հրահանգներուն համաձայն չարժեքու, բլի ատենէն չեղելով իր ուղղութենէն, կը սկսի Ալլապին Պատուիրակութեան եւ Ազգային Միութեան ուղղութեան հակառակ շարժիլ : Միութիւնը դայն կարգի բերելու ապարդիւն փորձերէ ետք, կը դադրեցնէ իր ղրտմական օժանդակութիւնը Մամլոյ Գրասենեակին եւ Նիւ - Եորքի մէջ կը ստեղծէ նոր մարմին մը՝ Փապլիսիքի Քաւիքի անունով, որուն անդամ կը նշանակուին Վեր. Միհրան Գալաճեան, Տօքթ. Ռաֆայէլ Կոստանեան, Վարդան Մալքոմ, Տօքթ. Մովսէս Յովսէփեան, Վեր. Խ. Պէննէեան եւ Վահան Քիւրճեան : Այս մարմինը Միութեան կ'առաջարկէ ազդեցիկ եւ հայտնէր ամերիկացիներէ կազմել յանձնաժողով մը, որ հետեւէր Ազգ. Պատուիրակութեան քաղաքականութեան՝ համախորհուրդ Ազգ. Միութեան ու գործակցելով Պատուիրակութեան ներկայացուցիչին հետ :

Ազգ. Միութիւնը կը կազմէ այդ մարմինը Արմինիքն - Էմբրիքն Սոսայիքի անունով, նախագահութեամբ հայտնէր իրաւագէտ Մր. Ուոթըր ճորճ Սմիթի եւ քարտուղարութեամբ Մր. Ճորճ Մոնթկոմըրի : Այս ընկերութիւնը վր ձեռնարկէ իր աշխատութեանց՝ իրեն խորհրդատու ունենալով Նիւ - Եորքի հայ յանձնախումբը : Այս մարմինն եւ Ուաշինկթըն համախմբուած հայ գործիչներու աշխատութեանց շնորհիւ, կառավարական եւ ծերակուտական չըջանալներու մէջ տլ որոշ հետաքրքրութիւն առաջ կու գայ դէպի Հայկական Դատը : Արդէն նախապահ Ուիլսոն Հայաստան ղրկած էր Զօրավար Ճոն Հարպըտի գլխաւորութեամբ քննիչ յանձնաժողով մը : Միւս կողմէ, Եւրպակոյտի Արտաքին Յարաբերութեանց ենթալանձնաժողովը 1918 Սեպտեմբրին, առանձին յանձնախումբի մը մէջ ունկնդրութիւն մը կը շնորհէր

* - Երուանդ Աղաթօն պէյ ելած է հիմնադիր անդամ թէ՛ Հ.Բ.Ը. Միութեան եւ թէ Հայ Սահմանադրական Ռամկավար Կուսակցութեան վ-Ղ. :

Հայ ներկայացուցիչներուն և Հայասէր ամերիկացիներուն: Այս ուն-
կընդութեան միջոցին կը լսուին՝ Ազգ. Միութեան ատենապետ Միհ-
րան Սըվազլը և իր գործակիցը՝ Վարդան Մալքում, զանազան Հայասէր
ամերիկացիներ և Նիւր Իսթի բարձր պաշտօնէութիւնը, Զօրավար
Թորոքոմ, Յովհաննէս Քաջազնունի՝ Հայ Հանրապետութեան անդրա-
նիկ նախարարապետը, որ կը խնդրէ Հայ Հանրապետութեան ճանա-
չումը Ամերիկայէն և անոր նիւթական ու բարոյական անջակցութիւնը,
վերջապէս Տորթ. Գ. Փաստրմաճեան՝ Հայ Հանրապետութեան դիւա-
նագիտական ներկայացուցիչը, եւ Վահան Գարտաշեան, որոնք Պեր-
լինի ամերիկեան նախկին դեսպան Մր. Ճերայտի կողմէ յիշատակա-
գիր մը ներկայացնելով կը շնորհակալանքներ անցնեն:

Ինչպէս կը տեսնուի, Ուաշինկթըն հաւաքուած Հայ գործիչները
իրարու հետ համաձայն չէին: Անոնցմէ ոմանք Ազգ. Պատուիրակու-
թեան և Ազգ. Միութեան քաղաքականութեան կը հետեւէին, որ էր
Արեւմտահայաստանի ազատագրութիւնը ապահովել՝ Հայ Հանրապե-
տութեան ճանաչման հետ միասին, իսկ մնացեալները կը հետեւէին
Դաշնակցութեան քաղաքականութեան, որուն հիմնադէտն էր Հայաս-
տանի Հանրապետութեան իբրեւ իրողական կառավարութիւն ճա-
նաչումը և օլնութիւն այդ կառավարութեան:

Երեսուցիտի Էնթայանձնախումբին միակ տեմոքրաթ անդամը կը
բանաձեւէ որոշմնագիր մը ի նպաստ Ազգային Միութեան պաշտպա-
նած հիմնակէտին, բայց այս որոշմնագիրը կը զրկուի ոչ թէ Արտաքին
Յարաբերութեանց Յանձնաժողովին, այլ Էնթայանձնաժողովին, ո-
րով իր կարեւորութիւնը կը կորսնցնէ ու մէկ կողմ կը ձգուի: Միւս
կողմէ, Էնթայանձնաժողովին նախագահը՝ ծերակուտական Հարտինկ
(Հանրապետական), կը գծէ տարբեր որոշմնագիր մը, զոր կը զրկէ
Խրախոյսին, որ զայն կը վաւերացնէ 1920 Մայիս 12-ի իր նիստին
մէջ: Այս որոշմնագիրը մէկ կողմ կը թողու Ազգային Միութեան տե-
սակէտը, այսինքն Հայկական Դատը իր էութեան մէջ, ու կը ճանչնայ
միայն Հայաստանի Հանրապետութիւնը իբրեւ իրողական կառավարու-
թիւն:

Ազգային Միութիւնը Հայկական Դատի ոյրոսկանդին համար
կը հրատարակէ 15-ի Հափ գիրքեր, կ'օգնէ Տիւր Նիւ Արմիթիա Թեր-
թին, ի Նիւ - Յորք, խմբագրութեամբ Արշակ Մահտեսեանի:

Գլխաւորաբար իր թելադրութիւններուն վրայ է որ նախագահ
Ուիլսոնին կը մատուցուին երկու աղէքսագրեր, ստորագրուած 15.000
աւետարտական և կաթոլիկ եկեղեցականներէ, 75 եպիսկոպոսներէ,
35 նահանգներու կառավարիչներէ, 200 քոյէճներու և համալսարան-
ներու նախագահներէ, որոնք կը խնդրեն որ նախագահը իրազեկուի
ժողովին մէջ թափէ իր վերջին ճիգը՝ անկախ Հայաստանի մը կազ-
մութեան համար:

Միութիւնը իր իրաւաւորութիւնն ու օժանդակութիւնը կ'ընծայէ նաեւ Ամերիկահայ Տիկնանց Միութեան այն ձեռնարկին, որուն նպատակըն էր Ամերիկայի քուէատու կանանց հասկցնել ու լուսաբանել Հայկական Դատին հակառակ տեղերը եւ անոնց միջոցաւ ազդել Գոնկրէսին վրայ, որպէսզի անոր որոշումները համապատասխան ըլլան հայոց բաղձանքներուն:

Ազգային Միութիւնը հինգ տարուան ընթացքին ընդհանուր մուտք ունեցած է շուրջ 930.000 տոլար: Այս գումարները ծախսած է հետեւեալ նպատակներու համար.-

կարօտեալներուն (կլոր հաշուով)	503.000
Ազատագրութեան	217.000
Պրոպագանդի	125.000
Վերաշինութեան	20.300
Գրասենեակի	64.700

	930.000

1917 Օգոստոսին Արտուազդ Հանրմեսն եւ Միհրան Տամատեան Ամերիկայէն վերադարձած էին Փարիզ: Հանրմեսն ուզած էր ընտանեօք Փարիզ հաստատուիլ, իսկ Տամատեան պիտի վերադառնար Եգիպտոս՝ իր ընտանեաց մօտ: Բայց Ազգ. Պատուիրակութեան նախագահ Պօղոս Նուպար փաշա փափաքելով այս երկու գործիչները իր մօտ ունենալ իրբեւ Պատուիրակութեան խորհրդատուներ, Տամատեան ինք ալ հարկադրուեցաւ Փարիզ մնալ: Արդէն Պօղոս փաշային մօտ կը գտնուէին Մասեհեան խան՝ անդամ Ազգ. Պատուիրակութեան, Եգիպտահայ Ազգային Միութեան նախկին տնտեսապետ Տօթթ. Նեւրուզ, Միքայէլ Վարանդեան, Լեւոն Շանթ՝ դաշակցական գործիչներ:

1917 տարին Ընդհանուր Պատերազմի ամէնէն ծախող տարին եղաւ Համաձայնական պետութեանց համար: Ռուսիոյ մէջ պատերազմի ծախողութիւններուն հետեւանքով ներքին յեղափոխութիւն առաջ եկած էր, որ յանդեպէս ձախող միապետութեան տապալումին եւ ի սկզբուն սահմանադրական . ռամկավար ռեժիմի մը հաստատութեան՝ Միւլաքօֆի նախագահութեան տակ: Այս ռեժիմին քիչ ետք կը յաջորդէ Գերեշաքի ընկերավարական յեղափոխական ռեժիմը, որու շրջանին մէջ Լենին, Թրոքսքի եւ իրենց արբանեակները Զուիցերլանդէն Ռուսիա առցիկով՝ հոն կը պայթեցնեն ընկերային յեղափոխութիւն ու կը հաստատեն սովշեփ (մեծամասնական) սովիէթական (խորհրդային) ռեժիմ: Յաջորդական յեղափոխութիւններու ազդեցութեան տակ՝ ռուս բանակը, որ արդէն զժուարաւ կը գիմարուէր զերմանական խուժումին, բոլորովին բարոյալքուեցաւ, ու Լենին եւ իր համախոհները ուղիով վերջ գնելու բռնապետական ռեժիմի շրջանին սկսուած պատերազմին

և արևմտեան պուրժուազիական պետութեանց հետ կնքուած տրակտատի (Էմփերիալիս) դաշինքներուն, Գերմանիոյ հետ զինադադար կնքեցին ու Պրէսթ - Լիթովսքի մէջ կնքեցին վերջնական հաշտութիւն, տեղի տալով գերմանական բոլոր պահանջներուն առջև: Բոլոր ճակատներուն վրայ, ուստի բանակի բարոյալքուած զօրքերը ինքնարեւաբար վար դրին իրենց գէնքերը և սկսան նահանջել դէպի իրենց հայրենի օճախները: Այս ընթացքը բռնեցին նաև Արևմտահայաստանի մէջ յաղթականօրէն մինչև Երզնկա յառաջացած ռուսական բանակները՝ իրենց բոլոր զէնքերը, սրաշարը և սպամամթերքը պատերազմի դաշտին վրայ ձգելով:

Գերմանիա՝ ուստի բանակին այս յանկարծական քայքայումին և Ռուսիոյ հետ զինադադարի ու հաշտութեան կնքումին շնորհիւ իր արևելեան ճակատին վրայ ծանրացող ճնշումէն ազատուած՝ իր արևելքի բոլոր բանակները շուտով փոխադրեց արևմտեան ճակատ և իր ճնշումը սաստկացուց Ֆրանսական ռազմաճակատին վրայ, դէպի Փարիզ ուղղելով իր յարձակողական ուժերը:

Ռարերախտաբար Ամերիկայի Միացեալ Նահանգները պատերազմ յայտարարած էին Գերմանիոյ դէմ, բայց Ամերիկա իր կամաւորական ուժերը Ֆրանսական ճակատը կեղծոնացնելու համար ժամանակի կը կարօտէր: Այս մղձուսանջային շրջանին մէջ էր որ Ֆրանքօ - անգլիական բանակները իրենց գլխավորական ամբողջ ճիգը թափեցին և Վերտէօն մանուսանդ զիւցադնական գլխավորութեան ամենափայլուն զրուսացներ արձանագրեց:

Փարիզ միշտ վտանդի տակ էր, այնպէս որ Ամերիկա վերջ ի վերջոյ գերապոյն ճիգը քրտ օրական 33.000 զինուոր ճամբայ հանելու դէպի Ֆրանսա, որ է Եսկը՝ ամբար մէկ միլիոն զինուոր:

Այս ստանապարի շրջանին, Ազգ. Պատուիրակութիւնը կը շարունակէր մշտական յարարերութիւն պահպանել համաձայնական պետութեանց հետ և ջանաց անոնց խոստումները ապահովել՝ պատերազմի յաղթական վերջաւորութեան պարագային համար, ինչպէս նաև խնդրել անոնց նիւթական օգնութիւնը Հայաստանի ճակատին վրայ կոտոր հայ կամաւորական ուժերուն համար, որոնք ուստի բանակներուն յանկարծական մեկնումովը մինակ մնացած էին նոր թափով իրենց վրայ յարձակող թուրք բանակներուն դէմ:

Անգլիոյ՝ սպառնալի Հայկական Լեյզնի հայ կամաւորները Ֆրանսացի սպաներու հրամանատարութեան տակ կը մարզուէին Կիպրոսի մէջ:

Անգլիա Միջազգայնի ճակատին վրայ յաղթական կը յառաջանար, իսկ Եգիպտոսի ու Պաղեստինի ճակատին վրայ՝ Սուէզի ջրանցքին վերայէն թրքական յարձակումը յաղթականօրէն ևս մղելէ ետք՝ Զօրավար Արմաթիի բանակը կը յառաջանար դէպի Պաղեստին, իրեն օգնական ունենալով Շերիֆ Հուսէյնի արարական ուժերը՝ առաջնորդուած անոր

Ֆէյսալ որդիէն:

1918-ին Հայկական Լիգէոնը Կիպրոսի մէջ իր մարդումը աւարտած՝ նոյն տարուոյ Օգոստոսին ճամբայ հանուած էր դէպի Պաղեստինի ճակատը, ու վերջապէս Սէպտ. 19-ին ան ստացաւ կրակի միտրութիւնը՝ Արարայի բլուրին վրայ թրքական ամրացուած դիրքերուն վերայ հերոսական յարձակումով մը: Հայկական այս անդամադրեալի գրոհին առջեւ տեղի կու տան թրքական ուժերը և իրենց անխորտակելի համարուած դիրքերէն փախուստ կու տան խուճապահար: Արարայի այս հերոսամարտը Դաշնակից զօրքերուն առջեւ կը բանայ Սուրիոյ ճամբան ու այս յաղթութենէն ճիշդ ամիս մը ետք Դաշնակից բանակը կը հասնի ու կը զբաւէ Հաթայը:

Պաղեստինի ճակատին ընդհանուր հրամանատար Զօրավար Ալենպիի այս փառաւոր յաղթանակը կ'աւետէ Փարիզի Ազգային Պատուիրակութեան հետեւեալ հեռագրով.

1918 Նոյս. 12

Հայարտ եմ յայտնելու որ ձեր հայրեմակիցները գործնական մասնակցութիւն ունեցան մեր կռիւներուն եւ յաղթութեան մէջ:

Արեւելեան Լիգէոնի փրանսացի հրամանատարը եւս գոված է տղամուրթիւնն ու եռանդը հայ զինուորներուն, որոնց հաւատարմութիւնը Դաշնակիցներուն հանդէպ ամէն կասկածէ վեր է:

Զօրավար Ալենպիի հետեւեալ հեռագրով կը պատասխանէ եգիպտոսի Հայ Ազգային Միութեան շնորհաւորութիւններուն:

Ջերմապէս շնորհակալ եմ ձեր շնորհաւորութիւններուն համար, եւ հայարտ եմ այն իրողութեամբ, որ Արեւելեան Լիգէոնի ձեր հայրեմակիցները գործօն բաժին մը վերցուցին կռիւն մէջ, եւ մտնակից եղան մեր յաղթանակին:

Իսկ Հայ Ազգային Պատուիրակութեան շնորհաւորութիւններուն կը պատասխանէ հետեւեալ հեռագրով.

Իմ անկեղծ շնորհակալութիւններս ձեր եւ հայերուն՝ շնորհաւորութեան ձեր հանձնակալ հեռագրին համար: Ես հրապարտ եմ իմ հրամանատարութեան տակ հայ զօրամաս մը ունենալու: Անոնք կուսեցան փայլուն կերպով եւ մեծ բաժին մը ունեցան յաղթանակին մէջ:

Զօրավար Ալենպի

Հայկական Լիգէոնը կը բաղկանար 3000 հոգիէ, վերածուած Երեք դամարտակի:

Արարայի ճակատամարտին մէջ ինկած հայ նահատակները 23 հոգի էին :

Անոնց անիւնները տեղւոյն վրայ թաղուելէ ետք, Եդիպտոսի Ռամկավար (Աղատական) Կուսակցութեան նախաձեռնութեամբ հանդանուութեան մը արդիւնքով՝ 1927-ին * փոխադրուեցան Երուսաղէմ եւ ամփոփուեցան փառաւոր յուշարձանի մը տակ :

Արարայի ճակատամարտին մէջ հայ վիրաւորեալներուն թիւն էր շուրջ ութսուն :

Լեզէոնականներէն շատեր զնահատուեցան իրենց հրամանատար Ռոմիւօ-էն ու զիրենք առաջնորդող սպաններէն եւ պատուուեցան Փրանսական «Պատերազմի խաչ»ի պատուանշաններով :

Թուրքերը իրենց պարտութիւնը խոստովանած էին եւ զինադադարը կնքուած :

Լեզէոնը Պէյրութ կը հասնի Նոյեմբերի * վերջերը . իսկ 1919 Յունուարին Փրանսական փոխադրանաւերով կը հասնի Մերսին ու հետզհետէ կ'առաջանայ Տարսոն, Ատանա եւ Կիլիկիոյ միւս քաղաքները :

1918 Սեպտեմբերին Ազգ. Պատուիրակութիւնը յարմար կը դատէ Իտալիոյ կառավարութեան մօտ պատուիրակ անուանել Միշօրնի Տամատեանը, անոր պաշտօն տալով նաեւ Իտալիոյ հայերուն մէջ Հայաստանի անկախութեան համար կազմուած Բոմբիքէիցիցը ղեկավարել եւ անոնց հետ միասին հայանպաստ պրոպականդ կազմակերպել Իտալիոյ մէջ : Տամատեան Սեպտ. 1-ի մէջ կը հասնի Թորին, ուր կը տեսնուի «Արմէնիա» չարաթաթերթի տնօրէն խմբագիր Տոքթ. Նշան Տ. Ստեփանեանի եւ Տոքթ. Փաղարճեանի հետ, որոնք Իտալիոյ հայկական Քոմիթէին անդամներէն էին, եւ անոնց հետ միասին կ'անցնի Միլան, ուր կը տեսնուի նոյն քաղաքին մէջ կազմուած Հայաստանի Անկախութեան Քոմիթէի միւս անդամներուն հետ, որոնք էին Տեարք Կարպիւ Տիլիգեան, Հայկ Ղազարոսեան եւ ուրիշ ազգային մը : Քոմիթէին հետ խորհրդակցութեան իբր հետեւանք, Միլանի մէջ գտնուող հայ ազգակիցները կը հրաւիրուին ընդհանուր ժողովի մը, որուն մէջ կ'որոշուի Հայկական Դատին համար պրոպականդը զօրացնել Իտալիոյ մէջ եւ այս նպատակին համար կը ձեռնարկուի նաեւ հանդանուութեան մը, որուն եռանդով կը մասնակցին ներկաները՝ իւրաքանչիւրը իր նիւթական կարողութեան շահով :

Անցնելով Լոռի, Տամատեան յարաբերութեան մէջ կը մտնէ Հայաստանի անկախութեան համար նոյն քաղաքին մէջ կազմուած Իտալական Քոմիթէին հետ, որուն նախագահն էր Քոնթէ Քոլոննա Տէ Ան-

* - Ընկեր Տիգրան Յ. Պոյաճեանի «Հայկական Լեզէոնը-պատմական յուշագրութիւն» (Պոսքոն, 1965) գիրքին մէջ կը նշուին այլ քուականներ, որոնք աւելի ճիշդ կը քուին ըլլալ - Վ.Ղ. :

դարձ. նոյնպէս մօտիկ յարարերութիւն կը հաստատէ նախկին նախարար, նշանաւոր հայասէր Լուիճի Լուծածաթիի հետ:

Երթալով արտաքին գործոց նախարարատունը, հոն ի դիմաց տրտ. գործոց նախարար Սիտիի Սոննինոյի կ'ընդունուի նոյն նախարարութեան ենթաքարտուղար Մարքիզ Պորսարելլէն: Յիշեալը մեծ յարգանքով կ'ընդունի անծանօթ հիւրը՝ ընդունելութեան պաշտօնական դահլիճին մէջ, և իրեն կ'ուղղէ այնպիսի յատկանշական հարցումներ, որոնցմէ ի յայտ կու գայ որ քնք ո'չ միայն անտեղեակ էր Հայկական Խնդրին, այլ նոյնիակ հայ ազգին ինչ ժողովուրդ ըլլալուն եւ Հայաստանի ուր գտնուելուն մասին պաշտօնար հունէր:

Արդարեւ, կը հարցնէր թէ Հայաստան եւրոպայի՝ թէ Ասիոյ մէջ կը գտնուի, թէ հայերը քրիստոնէական են թէ մահմետական, եւն., եւրն.: Տամատեանի պատասխանները իրեն այն ատիճան հետաքրքրական կը թուէին որ, վերջապէս խնդրեց իրմէ որ միասին անցնին իր պատեհեակը, այնտեղ շարունակելու համար իրմէ քաղկիք տեղեկութիւնները: Գրասենեակին մէջ կը բանայ փաստաւոր արկում մը, որուն մէջ երկու հանդիպակաց մեծադիր էջերու վրայ նկարուած էին՝ ձախ կողմը Պալքանեան թերակղզին ու եւրոպական թուրքիան, իսկ աջ կողմը Ասիական թուրքիան, ու կը հարցնէ թէ այս էջերէն ո՞ր մէկին մէջ կը գտնուի Հայաստանը: Տամատեան զոյգ կու տայ Ասիական թուրքիոյ արեւելեան հատմանները և իրը մարաքաղաք կը մատնանշէ երգումը: Բայց ն. Պայծառափայլութիւն Մարքիզը կատարեալ համոզում չի գոյացներ ու վարանոտ քննում մը կ'աւելցնէ. «Կարծեմ Հայաստանի մէկ մասն ալ եւրոպական թուրքիոյ մէջ պէտք է ըլլայ»: (Այս րոտած պահուն աչքերը Ռումանիոյ վրայ դարձուցած էր. յայտնի էր որ Արմէնիան կը զփոխէր Ռումանիոյ հետ:)

Երբ իմացաւ որ հայերը քրիստոնէական են, հարցոց թէ բոլոր հայերը քրիստոնէական են թէ ոչ մահմետական հայեր ալ կան: Երբ իմացաւ որ մահմետական հայեր չկան և չեն կրնար գոյութիւն ունենալ, այն ատեն հարցոց թէ քրիստոնէական հայերը կաթոլիկ են: Տամատեան պատասխանեց. «Կաթոլիկ հայեր ալ կան թէև, ինչպէս նաև աւետարանական հայեր, բայց հայ ազգին բացարձակ մեծամասնութիւնը Հայոց Ազգային Եկեղեցիին կը պատկանի»: Մարքիզը ուզեց հասկնալ թէ ինչ է «Ազգային Եկեղեցիին» և ինչ է անոր տարբերութիւնը Հռոմէական Եկեղեցիին: «Դասական տեսակէտով, ըսաւ Տամատեան, տարբերութիւնը մեծ բան մը չէ: Գլխաւոր տարբերութիւնը այն է, որ Հայոց Եկեղեցին Հռոմէական Աթոռին զխաւորութիւնը չի ճանչնար: Բայց մեծադոյն տարբերութիւնը եկեղեցիին վարչական զբոլթեան մէջ է»: Մարքիզին թախանձազին ստիպումին վրայ, Տամատեան կը լացատրէ թէ Հայ Եկեղեցին քրիստոնէութեան նախնական դարերէն ըսկրսեալ մինչև մեր օրերը ռաճկալարտական վարչաձև մը ունի, թէ հասարակ քահանայէն սկսեալ մինչև եպիսկոպոսներն ու կաթողիկոսը

կամ ընդհանրական հայրապետը՝ ժողովուրդին կողմէ կ'ընտրուին. թէ՛ եկեղեցիին վարչաովթեան մէջ աշխարհականները ձայն ունին, եւ չն. եւ չն.։ Մարքիդը կը հարցնէ. «Հայ եկեղեցականները կուսակո՞ւն են թէ՛ ամուսնացեալ»։ Տամասեան կը բացատրէ թէ՛ երկու տեսակէն ալ վան, բայց անոնց պաշտօններն ու պարտականութիւնները իրարմէ մեծապէս կը տարբերին. թէ՛ ամուսնացեալ եկեղեցականները մշտապէս ժողովուրդին մէջ կ'ապրին. թէ՛ անոնք հն որ հաւատացեալները կը խոստովանեցնեն, տուններ կ'այցելեն, հիւանդներուն հոգեւոր միջոցաւ թաղուած լին կու տան, կնոնք, պապականութիւնն հի թաղում կը վատարեն. այս ամուսնացեալ եկեղեցականները ժողովուրդին կողմէ կ'ընտրուին թաղին բարեպաշտ եւ առաքինի անձերուն մէջէն ու միայն զիրենք ընտրողներուն թաղին մէջ կրնան եկեղեցական պաշտօն վարել. ասոնք կը մնան միշտ քահանայ եւ եպիսկոպոս, պատրիարք կամ կաթողիկոս չեն կրնար ըլլալ։ Գալով կուսակրօն եկեղեցականներուն, ասոնք Հայ եկեղեցիին բարձրաստիճանի կղերը կը կազմեն. ասոնք վանքերու կամ զպրեկանքերու մէջ կ'ուսանին Վրօնագրատութիւն եւ աստուածաբանութիւն ու երբ ձեռնադրուին՝ եկեղեցիին մէջ քարոզելու իրաւունք կը ստանան, նստել այս կուսակրօն զարկացեալ եկեղեցականութիւնն է որ ժողովուրդին առաջարկովը աստիճանի բարձրացում կ'ունենայ, կ'ըլլայ եպիսկոպոս, արքեպիսկոպոս, պատրիարք եւ մինչեւ իսկ կաթողիկոս կամ ընդհանրական հայրապետ։ Մարքիդը մեծ հետաքրքրութեամբ լսելէ ետք Տամասեանի այս եւ նման բացատրութիւնները Հայաստանեայց եկեղեցւոյ կազմին եւ անոր մէջ տիրող ռամկավարական կարօ ու սարքին մերարեւմամբ, «Այս բոլորը, բնաւ, ինչպէս կը տեսնեմ, մեր կաթիլոյի եկեղեցւոյ կարօ ու սարքէն պերազանց են», եւ զարմառք յայտնել հայ ժողովուրդին մէջ տիրապետող ռամկավարական ոգիին համար։

Տամատեանի՝ Պորտաբեյլի Մարքիզին հետ յաջորդ տեսակցու-

թիւները աւելի դործնական եւ արդիական խնդիրներու շուրջ տեղի ունեցան՝ հետզհետէ աւելի օգտակար եւ արդիւնաւոր եղբակացութիւններով :

Տամատեան այցելեց Նափոյի, ուր տեւտեցաւ իշխան Տ'Ապրօ Բաղրատունիի հետ (Եղիպտոսի Տիգրան փաշա տ'Ապրոյի Լղրայրը), որուն վիլլան կը գտնուէր բաղաբին Սանթա Լուչիա թաղամասին քովն ի վեր բարձրացող ծովագերեայ Փոպլի'րիփօ բլուրին վրայ, որուն անունը յաճարէն վաւսի'լիփսօ (ցաւութեակ) բառին ազաւաղումն է : Տ'Ապրօ իշխանը խալացի բարձր դասէ կնոջ մը հետ ամուսնացած էր եւ այդ միջոցին սուգի մէջ էր իր մէկ հատիկ զաւակը Ալպեան ռազմաճակատին վրայ զոհ տուած ըլլալով : Տամատեանի այս այցելութիւնը ինչպէր թեւումն էր Պօղոս Նուպար փաշային, որ իրեն յանձնած էր իշխանին ուղղեալ նամակ մը : Իշխանը անձամբ ներկայացուց Տամատեանը մէկ քանի ծերակուտականներու եւ ուրիշ ծերակուտականներու եւ երեսփոխաններու ալ յանձնարարեց զինք նամակով :

Նափոյէն վերադարձին, Տօքթ. Նշան Տէր Ստեփանեանի հետ այցելեց Ֆիորենցէ, ուր շարաթ մը մնալով եւ հոն հանդիպելով փոլոնիացի ներկայացուցիչի մը, այս վերջնոյն հետ միասին այնտեղ կազմակերպեց փոլոնո - հայկական պրոպալանդի հաւաքոյթ մը : Այս հաւաքոյթի կազմակերպութեան համար՝ Տամատեան եւ Տ. Ստեփանեան հրաւիրեցին նաեւ Կոստան Ջարեանը, որ այդ միջոցին ընտանեօք կը բնակէր Ֆիորենցէի մօտակայ Ֆուճճիա ամառանոցը : Ջարեան ինք ալ հայանպաստ պրոպալանդի համար աշխատած էր իտալացիներու մօտ, իսկ իր դժուարին ընտանիքով վերջ ի վերջոյ իրեն եւ հայերուն հակառակ դարձուցած էր անոնք որ ի սկզբան հայասէր էին պարձած իր ջանքերովը : Այդպիսիներէն մէկն էր Կուքիճմօ Ֆերրերօն, որ Տամատեանի ու Տ. Ստեփանեանի հրաւերն ալ մերժելով բացակայ գտնուեցաւ Ֆիորենցէի հաւաքոյթէն : Ջարեան ինք ալ զանազան պատրուակներով ներկայ չգտնուեցաւ հաւաքոյթին, որ սակայն չատ յաջող անցաւ : Ընտիր հանդիսականներու խումբն ներկայութեամբ :

Աւիթէն օգտուելով՝ Տամատեան այցելեց Ֆիորենցէի Սանթա Բրոս (Ս. Խաչ) Եկեղեցին, որուն մէջ կը գտնուին Իտալիոյ մեծագոյն զրապէտներուն եւ արուեստագէտներուն դամբարանները :

Դառնալով Կրեին Հռոմ, Տամատեան ստացաւ Պօղոս փաշայէն նամակ մը, ուր ներփակած էր Աղգային Պատուիրակութեան մէկ շնորհակալութեան զիբը, ուղղուած Ս. Պապին, յանձնարարելով զայն անձամբ տանիլ Վատիկան : Տամատեան՝ իրեն առաջնորդ ունենալով Հռոմի հայ կաթողիկէ եկեղեցականութեան մեծաւոր Գոյունեան Գերայաձառը եւ Վենետիկի մխիթարեաններէն Գերայաղբի Շ. Յովհաննէս Ծ.Վ. Թորոսեանը, յատուկ ժամադրութեամբ զնաց Վատիկան, ուր ընդունուեցաւ Սրբ. Քահանայապետին արտաքին գործոց նախարար Կարտինալ Կասիարրիի կողմէ : Տամատեան ընդունալով

մը վեր հանելով Սրբազան Քաճառայապետին նիւթական նպաստները Միջպետքի սուխտանք հայ տարազրեալներուն, ինչպէս նաեւ Ն. Սրբութեան՝ ի նպաստ Հայկական Դատին բարեխօսութիւնները Դաշնակից պետութեանց մօտ, արտայայտեց հայ ազգին երախտագիտական զոհացումները եւ յարկանօք մատուց պաշտօնափայլ կարտինալին՝ Ազգ. Պատուիրակութեան քննադին շնորհակալական գիրը առ Ս. Պապին։

Կարտինալ Կասփարի պատասխանելով ըսաւ, թէ Սրբ. Քաճառայապետը խորապէս զգածուած հայերու կրած անհնարին տառապանքներէն, կը բաղձար ամենալայն շափով անոնց հասցնել իր նիւթական օգնութիւնները, բայց դժարաստարար պարագաները չնպաստեցին, այնպէս որ Ն. Սրբութիւնը շատ քիչ կը գտնէ այն նպաստները, զորոնք կրցաւ հասցնել հայ տառապեալներուն։ Բայց այն քիչը որ տրուեցաւ Ս. Աթոռին կողմէ, կատարեալապէս սրտաբուխ նուէր մըն էր։ Յետոյ աւելցուց. «Եւ թէպէտեւ բոլոր հայերը կաթոլիկ չեն, բայց Սրբ. Քաճառայապետը այդ կէտին կարեւորութիւն չընծայելով՝ ամէնուն համար անխտարար տուաւ ինչ որ կրցաւ»։ Յետոյ անդրադառնալով Հայկական Դատին, յայտնեց իր հաւատքը, թէ Ս. Պապին միջնորդութիւնը ապարդիւն պիտի չանցնի եւ թէ հայերը ա'լ այս անգամ պիտի ունենան իրենց անկախութիւնը, որուն արժանի են։

Տամատեան պատասխանելով բարձրաշնորհ Կարտինալին, կըրկին յայտնեց հայերու երախտագիտութիւնը դէպի Ս. Աթոռը, եւ վեր առնելով Ն. Սրբազնութեան զործածած բառերը, աւելցուց. «Եւ թէպէտեւ բոլոր հայերը կաթոլիկ չեն, սակայն բոլորն ալ հաւատացաւ քրիստոնեաներ են, եւ այն ազգը որ նիւթապաշտ ու անհատատ այս դարուս մէջ տնեան մեծ թիւով նախառակներ տուած է քրիստոնէութեան հաւատարիմ մնալուն համար, սմբողջ աշխարհի հիացումին ու յարգանքին արժանի է, ինչպէս որ Սրբ. Քաճառայապետը այդ յարգանքին առաջին ապացոյցն ինք տուաւ՝ իր հայրական օգնութիւնը լիովին ընծայելով կաթոլիկ եւ ո'չ կաթոլիկ բոլոր հայերուն հաւասարապէս»։

Յաւարտ ունկնդրութեան, երբ դուրս կ'ելլէին Վատիկանէն, Գոյունեան Գիւր. եւ Դերյարդեւի Մ. Վարդապետը շնորհատրեցին Տամատեանը իր այս պատասխանին համար, որով փափկանկատօքէն քարը տեղը դրած էր, քիչ լայն թէ արդարեւ հայերու դաւանական տարբերութեանց մասին Կարտինալին ակնարկութիւնը չէր համարատասխաներ պարագային լրջութեանը։

Արարայի հերոսամարտէն քիչ ետք, Ազգ. Պատուիրակութեան նախագահ Պօղոս Նուպար փաշան Դաշնակից պետութեանց եւ անոնց ընկերակցող Ամերիկայի Միացեալ Նահանգաց արտաքին գործոց նախարարութեանց ներկայացուց յուշագիր մը, որով խօսելով Թուրքիոյ պարտութեան եւ հաշտութիւն խնդրելու մօտաւոր հաւանականութեան

վրայ՝ անհրաժեշտութիւնը վը մատնանշէր կատարուելիք զինադադարի պայմաններուն մէջ ներմուծելու Հայաստանի շուրջ մէկ քանի էական պայմաններ, ինչպէս՝ Արեւմտահայաստանի եւ Կիլիկիոյ ռազմա-զիտական կէտերուն անմիջական զբաւումը Դաշնակից զօրքերուն կողմէ, Հայ տարագիրներու անմիջական վերադարձը իրենց ծննդավայրը՝ Դաշնակից զօրքերու հովողութեան տակ, Հայաստանի եւ Կիլիկիոյ մէջ տեղական առժամեայ վարչութեանց անմիջական կազմութիւնը՝ Դաշնակիցներու պաշտպանութեան տակ: Այս միջոցները պիտի ծառայէին իբրեւ երաշխաւորութիւն Հայերու ազատագրութեանը եւ ինքնօրէն Հայաստանի մը կազմութեանը: Այս մասին Իտալիոյ ուղղեալ յուշագիրը փաշան զրկած էր Տամատեանին, որ անձամբ յանձնած էր զայն արտաքին զործոց նախարարութեան:

Դաշնակից պետութիւններու մէջէն միայն Իտալիան էր որ պատասխանեց Ազգ. Պատուիրակութեան յուշադրին, ըսելով որ ի նկատի ունի անոր բովանդակութիւնը:

1918 Հոկտ.ին, Ազգ. Պատուիրակութեան ներկայացուցիչ Տամատեան եւ Իտալիոյ Հայկական Քոմիթէն միասնաբար թէյասեղան մը կազմակերպած էին Հռոմի «էքսելիոր» մեծ պանդոկին մէջ, որուն հրաւիրած էին նախարարներ, նախկին նախարարներ, ծերակուտականներ, երեսփոխաններ, հրապարակապիւրներ եւ օտար թերթերու թղթակիցներ: Այս հաւաքոյթին նախագահութիւնը ստանձնած էր Լուիճի Լուծծաթի: Չնայելով որ նոյն օրը Հռոմ հասած էր Թրիէսթէի իտալացիներուն կողմէ գրաւման հեռադրական լուրը եւ ամբողջ մայրաքաղաքը պաշտօնական հանդիսութիւններու եւ հանրային խրախճանութիւններու մէջ էր, հրաւիրեալներուն մեծամասնութիւնը փութացած էր ներկայ գտնուիլ: Հոն էին երկու նախարարներ Նիթթի եւ Մետա, բազմաթիւ ծերակուտականներ ու երեսփոխաններ եւ երկու սեռէ խլմբազիրներ ու թղթակիցներ:

Լուծծաթի այնտեղ խօսեցաւ իր ամէնէն հոյակապ ու ցնցիչ ճառերէն մին: Խօսեցաւ նաեւ նախարար Մետա՝ հայոց նկատմամբ ջերմագոյն շեշտերով: Հայերու կողմէ խօսեցան Տիար Կարպիս Տիւրքեան (Իտալիէն) եւ Տիար Տամատեան (Ֆրանսերէն): Այս վերջինին բանախօսութիւնը ներշնչուած էր առջի իրիկունը հասած հեռագրալուրէն, որ թուրք կառավարութեան խնդրանքին վրայ անդլիացի ծովակալին եւ Թուրքիոյ ներկայացուցիչներուն միջեւ Մուտրոսի մէջ զինադադարի կնքումը կ'աւետէր, տալով զինադադարի պայմաններուն ամբողջական պատճէնը: Զինադադարը կնքուած էր առանց բնաւ նկատի ունենալու Ազգ. Պատուիրակութեան ծանօթ յուշագիրը. ընդհակառակը՝ անոր պայմաններէն ի յայտ կու գար որ Հայկական Դատը գրեթէ անտեսուած էր եւ Հայաստանի ազատագրութիւնը վտանգի ենթարկուած: Արդ, Տամատեան այս անարդար զինադադարին վրայ խօսելով,

ծառեր քննադատութեան ենթարկեց անոր պայմանները եւ յետոյ աւելցուց. «Մենք՝ Հայերս, կը բողոքենք այս զինադպարին դէմ, որ մեր արդար պահանջները երկաթի վրայ կը թողու: Մենք պիտի դիմենք լուրջ Դաշնակից պետութիւններուն եւ արդարութիւն պիտի պահանջենք: Եթէ կառավարութիւնները մեզի չլսեն, պիտի դիմենք անոնց երեսփոխանական ժողովներուն. եթէ ասոնք ալ չլսեն, պիտի դիմենք միջազգային մամուլին, ժողովուրդներուն, համայն մարդկութեան խղճատանքին, աշխարհի հանրային դատաստանին. եւ եթէ նորէն դուհացում չստանանք, այն ոտեն... մի՛ մոռնաք յարգելի հանդիսականներ, թէ Հայաստան հրաքիսային երկիր մըն է, այնտե՛ղ պիտի բռնկի հրաբուխը ու ան պիտի չմարի՝ ցորչափ մեր պահանջներն ու բողոքները անտեսուած մնան»:

Տամատեան, որ մինչեւ այն օրը կատարեալ հանդարտամտութեան եւ պաղարիւնի սպացոյցը սուած էր, իր այս հրաշունչ ճառով անակնկալի առաջ դրաւ հանդիսականները, ինչպէս նաեւ դորժակից հայ ընկերները, որոնց հետ տեսնուած չէր զինադպարի յորն հասնելէն ի վեր:

Հանդիսականներուն մէջ կար անձնաւորութիւն մը, որ սոյն կենսադրականը կարգացողներուն արդէն ծանօթ է - Սըր Մարք Սայքսն էր ան: Ասիկա, որ պատահամբ նոյն օրը Հռոմ կը գտնուէր, թէյասեղանէն կէս ժամ առաջ «էքսեկսիոր» պանդոկին մէջ հանդիպելով Տամատեանին, անկէ տեղեկացած էր օրուան հանդիսութեան եւ ինքն ալ ուզած էր ներկայ գտնուիլ: Տամատեանի ճառախօսութենէն ետք, յանկարծ ներկաներուն անձանցով այս հանդիսականը նախադա՛հն ձայն ուղեց ու տրուած արտօնութեան վրայ՝ սկսաւ խօսիլ հետեւեալ պարզ բառերով.

«Այս պատերազմին մէջ մենք ամէնքս տառապեցանք: Անգլիա տառապեցաւ, Ֆրանսա տառապեցաւ, Ռուսիա, Իտալիա՝ նմանապէս, Պելճիւրս, Սերպիա, Ռումանիա տառապեցան, բայց Հայաստանը...»:

(Ատենախօսը չգործնակեց: Անոր այս լռութիւնը ո՛չ միայն խորհրդաւոր եւ նշանակալից էր, այլեւ ամէն խօսքէ աւելի պերճախօս ու սրտայոյզ: Այս լռութիւնը խորունկ սարսուռ մը առաջացուց ընդհանուր հանդիսականներուն մէջ:)

Վայրկեան մը ետք, տարբեր շեշտով խօսքը շարունակելով՝ ատենախօսը նկարագրեց Հայերուն մարտիրոսադրութիւնը: Յետոյ խօսելով հայերուն հայրենասիրութեան եւ անոնց դէպի Դաշնակիցները հաւատքին ու հատուրմութեան վրայ, պատմեց թէ ինչպէս Մուսա լերան հայ կտրիճները՝ որոնք յուսահատ դիմադրութենէ մը ետք յաջողած էին Ֆրանսական նաւատորմին օժանդակութեամբ Փորթ-Սալիս ապաստանիլ, ամէնքը՝ առանց րացառութեան՝ փութացին կամաւոր արձանագրուիլ, երբ Ֆրանսացի եւ անգլիացի սպաներ իրենց աւետեցին լիքէ Հայկական Լեզէոն մը պիտի կազմուի: Պատմեց նոյնպէս թէ

ինչպէս Միջադեպի թրքական բանակէն գերի բռնուած և, Հնդկաստանի քաղաքի մը մէջ փեղդոնացուած հայ զինուորները, երբ իրենց իմաց տրուեցաւ Հայկական Լեզէոնի մը կազմութեան ձեռնարկը եւ յայտարարուեցաւ թէ՝ Լեզէ իրենց մէջէն փափաքողներ կան՝ կրնան կամաւոր արձանագրուիլ, ամէնքը միահամուռ, առանց որեւէ բացառութեան, արձանագրուեցան, չեայելով որ օսմանեան բանակի մէջ իրենց զինուորութեան շրջանին անհնաքին զրկանքներու ենթարկուած էին ու իրենցմէ ոմանք դեռ իրենց վէրքերը վը դարմանէին, իսկ ոմանք ալ հիւանդ ու տկար էին: «Ահա, աւելցուց, այս անձնուէր հայ կամաւորներէն կազմուած Հայկական Լեզէոնն էր որ՝ զեկաւորութեամբ Փրանսացի սպաներու՝ մասնակցեցաւ Պաղեստինի ճակատի կռիւներուն՝ Զօրավար Ալենպիի անգլիական բանակին փողքին: Եւ երբ նկատի առնենք կողկասեան ճակատի ոռւս բանակին մաս կազմող 150.000 հայ զինուորները եւ բանակներու կողքին բացէն կռուող 30-40.000 հայ կամաւորները, որոնք Արեւմտահայաստանի վրայ ոռւսական արշաւանքին յաջողութեանը մեծապէս նպաստեցին իրենց քաջագործութիւններով, այլեւս ոչ մէկ տարակոյս կը մնայ թէ հայերը յիշկին արժանի են այն ազատութեան եւ անկախութեան, որուն կը բաղձան»:

«Իքսէլիտի» պաղտոկի այս հաւաքոյթէն մօտաւորապէս տասն օր ետք, Տամատեան Աղեքսանդրիոյ իր ընկերներէն մէկն եղող Լեւոն Մըկըրտիչեանէն կը ստանար նամակ մը, որուն մէջ յիշեալը կը պատմէր թէ օսմանեան զինավազարի կնքման լուրին օրը ինք սպանական տենդէ բռնուած՝ 39 աստիճան տաքութեամբ անկողին ինկած էր, Երբ իր տիկինը լրացրին մէջ կարդալով պատճէնը զինադադարին, որուն առաջին յօդուածին մէջ հայ տարագիրներու քուրք վորքերու հսկողութեան տակ Կ. Պոլիս վերադարձուիլը պայման դրուած էր, եւ հետեցնելով որ այդ գաշինքին պայմանները հայերու նպաստաւոր պէտք է լըլան, լրագիրը կը բերէ իրեն որ կարդայ և ուրախանայ: «Կարդացի եւ ըզզացի որ հայերս դաւաճանուած ենք Դաշնակիցներուն կողմէ ու հէօնքիւր հէօնքիւր լացի: Տաքութիւնս իսկոյն 41 աստիճանի բարձրացաւ, եւ հրաշք էր որ ողջ մնացի եւ ապաքինեցայ»:

Տամատեան եւ Տ. Ստեփանեան իտալական բոլոր գլխաւոր թերթերուն խմբագրատունները ալցելելով, զանոնք Հայկական Հարցով չազդրգոեցին: Տ. Ստեփանեան Երեւմէն Երեւմէն հայոց մասին յօդուածներ կը գրէր գլխաւոր թերթերուն մէջ, մանաւանդ Օրլանտոյի Վառավարութեան թերթը Եղող «Էփոքա» թերթին մէջ: Նոյն այս թերթին կանոնաւորապէս հայկական լուրեր կը հաղորդէր Պր. Արտաշէս Օրագեան, Վենետիկի Մուրատ - Ռաֆայէլեան վարժարանի շրջանաւարտ եւ ճարտարագետութեան ուսանող Պոլոնիայի համալսարանին մէջ, որ անձնուիրարար Հայկական Անկախութեան Գովիթէին եւ Ազգ. Պատւիրակութեան ներկայացուցիչին քարտուղարութեան պաշտօնը ստանձնած էր:

Տամատեան և Տ. Ստեփանեան մասնաւորապէս յարարեցութիւն կը մշակէին ծերակուտականներու և երեսփոխաններու, կուսակցութեանց գլխաւորներու և Հասարակական Անկախութեան Իտալական Վոմիքէի անդամներուն հետ: Իտալիոյ Ընկերավարական Կուսակցութիւնը երկուքի բաժնուած էր պատերազմին առթիւ: Կուսակցութեան մեծամասնութիւնը, իր ղեկին ունենալով Թուրքիի, Մատիլիանո եւն., պատերազմին հակառակ էր, իսկ Մուսոլինի և իր սակաւաթիւ արբանեակները պատերազմին կողմնակից ըլլալով՝ առանձին խմբակ մը կազմած էին եունիոն Սոցիալիսքիֆա Իրալիանա անունով: Տամատեան այցելեց այս խմբակին ակումբն ալ, խեղճօրէն կահաւորուած փոքրիկ հասարակար մը, ուր համակիր ընդունելութեան մը արժանացաւ: Մուսոլինիի գլխաւոր հետեւորդները ներկայ էին ընդունելութեան: Միայն Մուսոլինի վը պակսէր, նոյն օրը Հռոմէն բացակայութեան պատճառաւ: Իր ընկերները խնդրեցին Տամատեանէն անդամ մըն ալ այցելել իրենց ակումբը՝ հանդիպելու համար իրենց պետին: Տամատեան, որ լուրջ ապաւորութիւն մը չէր ունեցած այս խմբակէն, պատասխանեց թէ քիչ օրերէն Միլան և ուրիշ քաղաքներ կը մեկնի: Այն ատեն Ֆաշիօն այն չէր ինչ որ եղաւ. պատերազմէն ետք: Ֆաշիօն համախմբումն էր բոլոր պատերազմին կողմնակից կուսակցութեանց, որոնց մաս կը կազմէր նաև եունիոն Սոցիալիսքիֆան, Մուսոլինիի խմբակցութիւնը:

Տամատեանի և Տ. Ստեփանեանի, ինչպէս նաև Հայկական Վոմիքէի միւս անդամներուն ամէնէն աւելի յաճախած կեդրոնական անձնաւորութիւնը Լուիճի Լուծծաթին էր, որ իտալական կառավարութեան մօտ միջնորդութիւններ կ'ընէր ի նպաստ Հայկական Դատին և որ հայերուն խնդրանքին վրայ՝ հայասիրական հոյակապ յօդուածներ գրեց «Էփոքա»ին և «Բորրիէրա Տելլա Սերա»ին մէջ:

1918 Նոյեմբեր 10-ին իտալացիք Վիթթորիօ Վենետիկո-ի մէջ տարած էին Զախլախիչ յաղթանակ մը աւստրիական բանակին վրայ, որ զործնականապէս քայքայուած ու ցրուած էր, իտալացիոց ձեռքը թողլով բազմահազար գերիներ, հազարաւոր թնդանօթներ ու խորտընկէցներ և ուրիշ պատերազմական աւարներ:

Աւստրիոյ վրայ այս իտալական մեծ յաղթանակին, որուն մասին գրեթէ լուրթեամբ անցան Փրանսական և անգլիական թերթերը, որոնք սակայն այնքան ազմուկ հանած էին Քափուրեթթոյի իտալական ձախողութեան շուրջ, յաջորդ օրը Գերմանիա Փրանսական ճակատին վրայ պարտութիւն յայտարարեց, որով 1918 Նոյեմբեր 11-ին պատերազմի բոլոր ճակատներուն վրայ դինադադար հռչակուեցաւ:

Այս փառաւոր առիթով, Տամատեան յանուն հայութեան շնորհաւորական հեռագիրներ ղրկեց Իտալիոյ Թագաւորին, Զօրավար Տիաօնին, նախարարապետ Օրլանտոյին, որոնք պատշաճ հեռագիրներով իրենց շնորհակալութիւնները յայտնեցին:

Այսպէս, կռուանը պատրաստուած էր աւելի ընդարձակ գործունէութեան եւ պրապանդի մը համար:

Ճիշդ այդ միջոցին իտալական իսքիքութեամբ Քոմունիստները «Փալաժո Վենետիկ»-ի մէջ համաժողով մը կը գումարէր՝ յաղթանակին առթիւ իտալիոյ տնտեսական եւ դադիւնային պահանջները ձեւակերպելու համար: Այս համաժողովին նախաձեռնողներէն մէկ քանին արդէն Հայաստանի Անկախութեան իտալական Գումիքէին ալ անդամ էին: Ասոնք հրաւիրեցին Տաճարեանը եւ Տ. Ստեփանեանը հիւրարար ներկայ գտնուիլ իսքիքութեամբ Քոմունիստները համաժողովին նիստերուն: Այդ նիստերէն մէկուն մէջ քուէարկուեցաւ Հայաստանի քաղաքական եւ տնտեսական անկախութեանը պահանջող բանաձեւումը, որուն խմբագրութեանը մասնակցեցան Տաճարեան եւ Տ. Ստեփանեան:

Այս համաժողովէն քիչ ժամանակ ետք, Հայաստանի Անկախութեան իտալական Գումիքէին նախաձեռնութեամբ՝ իտալական խումբ մը երեսփոխաններու կողմէ պատրաստուեցաւ Հայաստանի անկախութեան ի նպաստ բանաձեւ մըն ալ, որ տարբեր խորհրդարանական կուսակցութեանց երեսփոխաններու հաւանութեան հնթարկուելէ եւ 333-է աւելի երեսփոխաններու, ստորագրութիւններով ծածկուելէ ետք, ներկայացուեցաւ երեսփոխանական ժողովի այն նիստին, որուն մէջ կը վիճարկուէր Կառավարութեան արտաքին քաղաքականութիւնը: Երբ յիշեալ բանաձեւը կարդացուեցաւ, ժողովին ներկայ երեսփոխաններուն թիւը բանաձեւը ստորագրողներուն թիւէն նուազ էր: Ներկայ երեսփոխանները ամէնքը մէկ ոտքի ելան ու ծափահարութիւններով ընդունեցան ներկայացուած բանաձեւը «Կեցցէ Անկախ Հայաստան» աղաղակներու մէջ, որոնց վր ձայնակցէին վերնատուններու մէջ բազմած ունկնդիրները: Լուիճի Լուծժաթի յանձն առած էր բանաձեւը ժողովին մէջ պատշաճանկու համար ճառարարութիւն մը ընել: Թէպէտեւ առաջ եկած միահամուռ հաւանութեան նշանները, խանդավառ ծափահարութիւններն ու կեցցէները բնաձեւին պաշտպանութեանը առանձին պէտք մը չէին ձգեր, սակայն եւ այնպէս, Լուիճի Լուծժաթի բոմ բարձրացաւ եւ կարգաց բանաձեւը պաշտպանելու սահմանում իր հոյակապ ճառը, որուն շատ մը մասերը ծափողջոյններով ընդմիջուեցան, եւ երբ ճառը վերջացաւ, երկարատեւ ծափահարութիւններէ ետք, բոլոր ներկայ երեսփոխանները կարգաւ Լուծժաթի նստարանին մօտենալով՝ ձեռքի սեղմումներով դիմեցին Գումիքէին շնորհակալութեան: Նախարարական նշտարարաններէն ալ ծափահարութիւնները անպակաս եղած էին: Երբ Լուծժաթի մօտեցաւ նախարարական նստարաններուն, այնտեղ նշտտող բոլոր նախարարները ոտքի ելլելով սեղմեցին իր ձեռքը: Այդ միջոցին Տաճարեան եւ Տ. Ստեփանեան՝ որոնք ժողովասրահին հիւրերու յատուկ մէկ վերնատան մէջ էին, տեսան որ արտաքին գործոց նախարար Ստեփան Լուծժաթի հետ կը խօսակցէր բուն կերպով ու իր դէմքին վրայ կը նշտարուէին խոժոռ ու ծամածռ արտայայտութիւն-

ներ: Յայտնի էր որ Սոննինո բանէ մը դժուո՛հ էր ու այդ դժուո՛հութիւնը կ'արտայայտէր իր խօսակցին: Երկու հայերը սկսան կասկածիլ որ Սոննինո դժգոհութիւն կը յայտնէր Լուծծաթիի՝ կառավարութեան արտաքին քաղաքականութիւնը խանդարող ճառ մը խօսած ըլլալուն համար: Ուստի երկրորդ օրը Տամատեան եւ Տ. Ստեփանեան իրենց գործակից միւս հայրենակիցներուն հետ երբ գացին Լուծծաթիի բնակարանը՝ շնորհակալութիւն յայտնելու իր խօսած հիանալի ճառին համար, միջանկալ հարցուցին թէ Սոննինո ի՞նչ դժուոհութիւն կը յայտնէր, երբ խոժոռ դէմքով կը խօսակցէր իրեն հետ: Լուծծաթի պատասխանեց. «Սոննինո իմ ճառիս մասին իր գնահատանքը յայտնեց, բայց միեւնոյն ժամանակ իր դայրոյթը կը յայտնէր որ միւս Դանիակից պետութիւնները Թուրքիոյ հետ ղինադադար կնքած էին առանց Խոսլիոյ հաւանութիւնը ունենալու, մինչդեռ Խոսլական կառավարութիւնը Փարիզի Հայկական Պատուիրակութեան զբաւոր խոստում ըրած էր Թուրքիոյ հետ ղինադադար կնքելու ատեն նկատի ունենալու իր յուշագրին մէջ առաջ բերուած հայկական պահանջները»:

Երեսփոխանական ժողովի յաջորդ նիստին մէջ, նախարարպետ Օրլանտո պատասխանեց արտաքին քաղաքականութեան չուրջ տեղի ունեցած հարցումներուն, քննադատութիւններուն ու պահանջի որոշմանդրերուն: Այս պատասխաններու շարքին մէջ, դառնալով Լուծծաթիին, անոր լրաւ թէ դիւանագիտական բանապնդի իր համաւեալ ճարտարութիւնը անգամ մըն ալ երեւոյն բերաւ հայերու անունով իր ներկայացուցած պահանջներուն մէջ, եւ աւելցուց. «Գացէք ըսէք ձեր փոխանորդեալ հայերուն, թէ Խոսլական կառավարութիւնը ամբողջութեամբ կ'իրադէնէ իրենց նուիրական դատը»:

Միխիթարեան հայերը, որոնք Վենետիկի պատերազմական դատի հռչակուելուն առթիւ թողած իրենց վանքը եւ Մուրատ - Ռաֆայէլեան վարժարանը՝ Հոռոմ ապաստանած էին, Հոռոմի մէջ պատուոյ ճաշ մը տուին Տամատեանին՝ իբրեւ իրենց նախկին աշակերտին: Այս ճաշին՝ Տամատեանի քովն ի վեր նստած էր Հայր Մինաս Նուրիխան ծերունազարդ Վարդապետը. որ 1874-80 թուականներուն՝ անոր աշակերտութեան շրջանին՝ Մուրատ - Ռաֆայէլեան վարժարանի ուսումնապետը հրաժար էր, միանգամայն՝ ընդհանուր պատմութեան դասատուն: Ճաշկերոյթի միջոցին, Տամատեան գոյարթախօս ու կատակախառն ճառի մը մէջ, վերջէլումեալ ըրաւ իր աշակերտական շրջանէն: Ի միջի այլոց, յիշեց թէ ի՞նչպէս Հայր Մինաս Հայաստանեայց եկեղեցւոյ պատկանող հայերը կ'անուանէր «Էջմիածնական», իսկ աւետարանական հայերը՝ «Նորդադանդ», եւ թէ Ֆրանսայի պատմութեան իր դասերուն մէջ խօսած էր մեծ «խոսովութեան» մը մասին, որուն ձեռնարկող «Իւրոսովարար»ները Լուդովիկոս ԺԶ. առաքինի թագաւորը եւ իր բարեպաշտ թագուհին կիլոքիմով (կառափնատով) գլխատած էին ու դեռ ուրիշ անլուր անգղամութիւններ էին գործած: Եւ աւելցուց. «Ու պա-

տահնեցաւ որ Հայր Մինասէն ներշնչուած այս զաղափարներով երբ Պոլիս դարձանք ու ակսանք Հայ Եկեղեցւոյ զաւակներուն «դուք էջմփածնականներդ» ըսել եւ աւետարանական հայերն ալ յորջորջել «Նորադանդ», տեսանք որ այս յորջորջումները ծանրապէս վիրաւորական կը նկատուէին ենթականերէն ու սորվեցանք որ Հայր Մինասի «էջմփածնական» անուանածները իրենք զիրենք կը նկատէին «Առաքելական հայեր»։ Կամ, աւելի ճիշդը, «Հայաստանեայց Եկեղեցւոյ զաւակներ», իսկ Հայր Մինասին «Նորադանդ» կոչածները ուրիշ բան չէին՝ այլ «հայ աւետարանականներ»։ Սորվեցանք որ կենդանողի-տուժիւնը առնուազն կը պահանջէ որ մարդիկ կոչենք իրենց որդեգրած անունով եւ ոչ թէ մեր անձնական ըմբռնումներով տանք անոնց անուն մը, զոր իրենք նախատական կը նկատեն։ Օր մըն ալ տեսանք որ մայրաքաղաքին բոլոր Քրիստոսական հաստատութիւնները, ակսալ եկեղեցիներէն, վանատուներէն, Երեսնականներու, Ֆրէրներու եւ Գրեթութեան Գոյրերու վարժարաններէն մինչեւ դեպքանատունն ու հիւպատոսարանը, մինչեւ անհատ Քրիստոսացիներու բնակարաններն ու առևտրական տուները՝ Քրիստոսական եռադոյն դրօշը պարզած էին, ու մեզի բտուեցաւ որ անոնք կը տօնէին Յրանսայի ազգային տօնը, Յուլիս 14-ը։ Այն ատեն սորվեցանք որ Հայր Մինասի բառերով Քրիստական «մեծ խռովութիւնք» Քրիստոսական մեծ յեղափոխութիւնն է եղեր, թէ «խռովարար» կոչուածները յեղափոխականներն են եղեր, թէ արքայապանութիւնը յեղափոխութեան մէկ ճակատագրական միջադէպն է եղեր, եւ թէ Յուլիս 14-ի ազգային տօնը ուրիշ բան չէր, եթէ ոչ Պատմիչի առումին պատմական դէպքին փառաւորումը։ Ու պատահեցաւ որ օր մըն ալ մենք մօտեց չարժու մը մէջ, զոր թուրք կառավարութեան հետ մեր պաշտօնական մարմինները խռովարարութիւն կ'անուանէին, բայց որ իրականին մէջ Հայ Զեղափոխութիւնն էր կամ Հայ Ազաւոյրալիք Պայքարը։ Թող գերայդեմին Հայր Մինաս ընդունի այս քանի մը վերջուլումները իրրեւ ի հակառակէն արտայայտութիւնը իմ երախտապիտական անկեղծ զպացումներուս դէպի այն անձնուէր խնամքները, զորոնք ամբողջ վեց տարիներ ունեցաւ իմ եւ աշակերտակիցներուս կրթութեան եւ զարգացմանը համար»։

Տամատեան եւ Տ. Ստեփանեան ձմեռնային անձրեւոտ օր մը միասին այցելեցին Հոսմի գետնադամբանները։ Մուտքին վրայ գլխինք դիմաւորեց լատին արեգայ մը, որ ձեռքը մոմպատ մը բռնած, գլխինք առաջնորդեց նեղ եւ օձապտոյտ սանդուխներէ վար։ Սանդուխներուն երկու կողմերը կային քարակոփ դամբարաններ, ու տեղ տեղ ալ դէպի աջ եւ դէպի ձախ կը բացուէին խցիկներ, որոնք մէյմէկ մատուռներ էին։ Մութ ու խոնաւ այդ գետնադիններուն մէջ բաւական թափառելի ետք, հասան գետնադամբաններուն էն խորունկ ծայրը եւ հոն մատուռի մը մէջ կանգ առին։ Այդտեղ երկու այցելուները իրարու հետ մէկ քանի լատին փոխանակեցին։ Լատին արեգան հետաքրքրուած՝ հար-

յոյց թէ ի՞նչ լեզու կը խօսէին: Անոնք պատասխանեցին թէ հայերէն էր: Արեղան՝ կոնակը տուած դամբարանապատին, մոմպատը ձեռքին բարձր բռնած՝ վրայ բերաւ. «Ուրեմն դուք հայեր էք... Ուրախ եղէք ուրեմն որ դուք պիտի ունենաք շուտով ձեր ազգային անկախութիւնը»: Դամբաններու այդ մուծ խորշին մէջէն այդ խորհրդաւոր վայրկեանին բարձրացող այդ ձայնը երկու այցելուներուն թուեցաւ ըլլալ ձայնը հայ նախահօր մը, որ յանկարծ յարութիւն առած իր դամբանէն՝ իր հեռաւոր թոռներուն կու տար աւետիսը իրենց հայրենիքի մօտաւոր վերականգնումին: Անոնք լուռ մտիկ ըրին արեղային մարդարեւան ձայնը ու երեոնին խաչակնքեցին: Սարսուռ մը քալած էր իրենց ոսկորներուն մէջէն, ու երբ գետնադամբաններէն դուրս ելան, դուրսի օդին ցրտութիւնն աւելցուց իրենց սարսուռը: Քաղաք վերադառնալով, մտան առաջին թէյատունը՝ իրենց երթիքացած մարմնոյն տալու համար ջերմութիւն եւ կազդոյր:

Ձինադադարի կնքումէն ետք, Միացեալ Նահանգաց նախագահ Ռիլսըն Եւրոպա հասած էր: Իտալական կառավարութեան յատուկ հրաւերով ան այցելեց Իտալիա: Հայերը կանխաւ տեղեկացած այս այցելութեան, ամէն տեղ բարի դալուստի եւ երախտագիտութեան ուղեւորներով ոմարկոծեցին մեծանուն նախագահը: Հոռմի մէջ նախագահը ստացաւ Հայկական Անկախութեան Քոմիթէին եւ Հայ Կոնանց Միութեան սրտառուչ ուղերձները, ինչպէս նաեւ Հայաստանի Անկախութեան Իտալական Քոմիթէին եւ Հոռմի ամերիկեան ու անգլիական պալատներուն հայանպաստ խնդրագիրները: Հայ Կոնանց Միութեան ուղեւոր իրր նախագահ ստորագրած էր Քորիւնալի Կոմսուհին՝ զուտարը Բարեխիւտակ Քէօզէ-օղլու Յակոբ Էֆենտիի:

Վերջապէս, Տամատեանի նախաձեռնութեամբ հայերը Հոռմի մէջ ձեռակերպեցին «Իտալահայ Գաղութին Քոմիտէին»: Այս Քոմիտէին անունով Հայաստանի անկախութեան ի նպաստ Իրկար հեռագիրներ քաշուեցան Դաշնակից եւ ընկերակից պետութեանց արտաքին գործոց նախարարութեանց, Իտալիոյ թագաւորին, Սրբ. Պապին, Քենթրպլըրի Արքեպիսկոպոսին եւ Ազգային Պատուիրակութեան: Լուիճի Լուի-Ժաքի միջնորդութեամբ այս բաղմաթիւ հեռագիրներուն ծախքերը վճարուեցան իտալական կառավարութեան կողմէ:

Վերսայլի մէջ բացուեցաւ ինքնագլուխ վեհաժողովը: Այս վեհաժողովի բացման նիստին՝ Դաշնակից եւ ընկերակից պետութեանց ներկայացուցիչները հանդիսաւոր յայտարարութիւններ ըրին: Այս յայտարարութեանց կարգին, Յրանսայի Հանրապետութեան նախագահ Ռէյմոն Փուանքարէի ճառը, ի միջի այլոց, կը բուխեցաւ հետեւեալ պարբերութիւնը. «Արարիս, Արմէնիա (Հայաստան), Լիբանան - Սուրիա, Պաղեստին, Փոլոնիա, բոլոր ճշուած ազգութիւնները Դաշնակիցներուն դիմեցին իրենց ազատագրութեան ի խնդր»: Ռէյմոնը եւ Աթեֆամի գործակալութեանց հեռագիրները Փուանքարէի յայտարար.

րութեանց այս պարբերութիւնը ամբողջութեամբ արտագրած էին, բայց Հառաւսի գործակալութիւնը չեղադրին մէջ «Արմէնիա» բառը զանց առած էր: Այս պարապան Տամատեանի ուղադրութենէն չվրիպելով՝ Տ. Ստեփանեանի եւ ուրիշներու հետ աչքէ անցուեցան Փրանսական թերթերու նոյն օրերու հաղորդագրութիւնները եւ տեսնուեցաւ որ անոնց բոլորին մէջ նոյնպէս զանց առնուած էր Հայաստանի անունը: Յայտնուեցաւ, որ Ֆրանսայի մէջ խեցեվճիւռ մը տրուած էր «Հայաստան» եւ «Հայ» անուններուն դէմ: Արդարեւ, դիտուած է որ ատենէ մը ի վեր Ֆրանսայի պաշտօնական հաղորդագրութեանց եւ լրագրական տեղեկութեանց մէջ Հայաստանի եւ հայոց անուններուն դէմ պոլիսթ յայտարարուած էր: Տամատեան եւ իր գործակիցները դացին Լուիճի Լուծծաթիլի մօտ եւ այս իրողութիւնը պարզելով ըսին թէ այս մասին պիտի երթան բացատրութիւն ուղեն շտաբի Ֆրանսական ղեսպան Մ. Պառէրէն: Լուծծաթիլ անմիջապէս հեռագրեց ժամագրութիւն մը առաւ ղեսպանէն՝ հայերու ունկնդրութեան համար: Որոշեալ ժամուն, Տամատեան, Տ. Ստեփանեան, Օրագեան եւ ուրիշներ դացին Փալացցոյ Ծառնելէ, ուր զիրենք ընդունուեցաւ Մ. Պառէր, որ ասիայի անոնց կողմէ դրուած հարցին չկրցաւ դոտկան սրտառիտան մը տալ, ըսելով որ եղածը պարզ մոռացում մը պէտք է ըլլայ: Տամատեան այս առթիւ Մ. Պառէրի տուաւ բուսարանութիւն մը հայերու Ֆրանսայի հանդէպ ունեցած դիրքին նկատմամբ: Ըսաւ. «Հայերը մասնաւոր հիացում մը ունին Ֆրանսայի նկատմամբ, որուն երախտապարտ են եւ զոր կը սիրեն այնպէս ինչպէս կրտսեր քոյր մը կը սիրէ իր երիցագոյն քոյրը: Բայց այս կրտսեր քոյրը իր մեծ քրոջ սիրոյն համար չ'ուրանար իր ինքնութիւնը: Մենք Ֆրանսան սիրելով հանդերձ, հայ ենք եւ հայ կը մնանք: Մեր Փրանսասիրտութիւնը պէտք չէ չփոթել լիբանանցի եւ սուրիացի քրիստոնեաներու Փրանսասիրտութեան հետ: Անոնք ինքզինքնին ուրանալու աստիճան Փրանսասէր են եւ ինքզինքնին Փրանսացի կը յայտարարեն: Անցեալ տարի Սորպոնի ամփիթատրոնին մէջ ճշուած ազգերու ներկայացուցիչները հաւաքոյթ մը գումարած էին, ուր փոլոնացիներ, հայեր եւլն. խօսեցան իրենց ազգային պահանջներուն վրայ: Տոքթ. Սամնէ եւ Շուքրի Ղանէմ իրենք ալ խօսեցան Լիբանանի եւ Սուրիոյ կողմէն, բայց փոխանակ խօսելու իրենց ազգային պահանջներուն մասին, յայտարարեցին թէ իրենք Փրանսացիներ են, եւ իրենցմէ մէկը իր ատենախօսութեան մէջ յիշեց թէ ինչպէս լիբանանցի քահանայ մը, զոր թուրքերը կտրուողան կը հանէին Պէյրութի մէջ, մահաբերմին տակէն արտասանեց իր սա վերջին բառերը. «Մենք ապրեցանք Փրանսացի ու կը մեռնինք Փրանսայի: Կեցցէ Ֆրանսան»: Մենք հայերս ալ տուինք նահատակներ, որոնց թիւը միլիոնը կ'անցնի: Ասոնց ամէնուն վերջին խօսքը եղաւ. «Մենք ապրեցանք հայեր ու կը մեռնինք հայեր»: «Կեցցէ Հայաստան»: Զինադադարը հրատարակուեցաւ թէ ոչ, լիբանանցիները իրենց գաղտը յանձնեցին Ֆրանսայի ձեռքը ու փա-

բիղի եւ Մարտէյի մէջ սուրիացիներու եւ լիւանանցիներու անուշով կազմակերպուեցան քննարկներ, որոնց անդամակցողներուն մեծմասնութիւնը բուն Փրանսացիներ էին: Խալ Հայերը, որոնց Հարցը ըսկիզբէն ի վեր միջազգային դիւանագիտութեան առջեւ էր դրուած, Ճրանսան սիրելով Հանդերձ, իրենց դատը առանձնապէս Ճրանսայի ձեռքը չյանձնեցին, այլ զայն յանձնեցին Դաշնակից պետութեանց Հաւաքական որոշումին: Ինչպէս կ'երեւի, սուրիացիներու եւ Հայերու Ճրանսայի Հանդէպ բռնած դերքերուն այս տարբերութիւնը Հայերու նկատմամբ սխալ մեկնարանութիւններու տեղի տուած է Ճրանսայի մէջ»:

Թուրքիոյ Հեռ գինադադարը կնքուած էր ամիսներէ ի վեր, բայց Արեւմտահայաստան մեծ մասամբ Հայերէ թափուր կը մնար եւ այն սակաւաթիւ Հայերը որ չէին տարազրուած կամ իրենց թագստոյներէն դուրս ելած էին՝ սկսած էին ըստ առաջնոյն խոշտանգուիլ տեղացի թուրքերէն կամ պատերազմէն դարձող զինուորներէն, որոնք աւազակներ դարձած էին: Այսպէս, նորէն Հնդկաստանի ձայնը կը հասնէին Հայաստանէն, ու է. Պոլսոյ Հայ թերթերը յետոյն էին Հայահայած Հարստահարութեանց կսկծեցուցիչ լուրերով: Սրին մէկը Տամատեան այս տխուր լուրերու ազդեցութեան տակ կը գլմէ Խալիլոյ արտաքին գործոց նախարարատունը եւ Մարքիզ Պորաբարլիին կը նկարագրէ Հայերուն նորագոյն տառապանքները, եւ իր խօսքը կը վերջացնէ սա Հարցումով. «Ասկէ առաջ Հայերը կը տառապէին, զի թուրքերը տակաւին չէին պարտուած եւ ինքզինքնին ազատ վը զգային Հայերը կեղեքելու եւ ջարդելու: Բայց Հիմա որ ոչ միայն թուրքերը, այլեւ աւտոնց զինակից պերմանները պարտուած են, ինչո՞ւ կը բացատրուի Հայերու դէմ Հայածանքներու այս դայթակղական վերսկսումը: Հայերուն շարունակուող այս վատթար կացութեան երկինքի եւ երկրի Հանդէպ պատասխանատուութիւնը որո՞նց վրայ կը ծանրանայ»: Պորաբարլի Մարքիզը այս Հարցումին դէմ ինք ալ սկսաւ Հարցումներ ընել Տամատեանին: «Դո՛ւք բռնէք թէ որո՞նք են պատասխանատուները: Անգլիացիները (Տամատեանի պատասխանին վրայ թէ ի՞նք է Հարցումին տէրը, չարունակեց), Խալացիները (Տամատեան. «Եթէ Խալացիները մեղադրող ըլլայի՝ Ձերդ Պայծառափայլութեան այդ Հարցումը բնիկ չափ անփափկանկատ պիտի չգտնուէք», ասոր վրայ Մարքիզը լանկարծ ոտքի ելլելով ու Տամատեանի ձեռքը ամուր սեղմելով), Փրանսացիները»: Մարքիզին այս խորհրդանշական ժեսը տարակոյսի տեղ չէր թողուր որ ինք այդ Հարցումին մէջ կը գնէր իր բուն պատասխանը: Արդարեւ, Գերմանիոյ եւ Աւստրիոյ Հեռ զինադադարին կնքումէն ետք, Խալիլոյ մէջ Հանրային կարծիքը բոլորովին լարուած էր մասնաւորապէս Ճրանսայի դէմ: Այս Հանգամանքներու մէջ զարմանալի չէր որ յաջս Խալիլոյ Ճրանսան էր ամէն չարեաց պատճառ:

Ձինադադարի կնքումէն ի վեր, արտաքին գործոց նախարարու-

Թիւնը գիւնը ցերեկ կ'աշխատէր իտալիոյ պահանջները բանաձեւելու՝ Հաշտութեան Խորհրդաժողովին ներկայացնելու համար։ Այս աշխատութեանց կարգին մէջ էր նաեւ Հայաստանի անկախութեան մասին բանաձեւումը իտալիոյ տեսակէտին։ Այս վերջին բանաձեւի պատրաստութեան համար արտաքին դործոց նախարարութեան մէջ կազմուած էր յատուկ յանձնաժողով մը, որուն անդամներն էին նախկին հիւպատոսներ կամ դեսպանական դիւանագէտներ Կոռինի, Տէ - Մարթինո, Կոմս Գոռինալուի եւ ուրիշներ։ Գանձնաժողովը իրեն անպաշտօն աշխատակցութեան հրաւիրեց Տամատեանը, որ անոր կարեւոր տեղեկութիւններ ու լուսարանութիւններ տուաւ Ռուսահայաստանի, Արեւմտահայաստանի* ու Կիլիկիոյ մասին, մասնաւորապէս ծանրանալով այս վերջին նահանգին վրայ, ուր հայերը ունեցած էին իրենց վերջին փոքր Հայաստանի կամ Հայակիլիկիոյ թագաւորութիւնը, որ ոչ միայն Խաչակիրներուն հետ զինակից եղած էր այլազգիներու դէմ, այլև առեւտրական երկարատեւ յարաբերութիւններ ունեցած էր Վենետիկի, Ժնևովայի եւ Ամայֆիի իտալական հանրապետութիւններուն հետ։

1919-ի Փետրուարի սկիզբը Ազգ. Պատուիրակութեան նախագահ Պօղոս Կոպար վաղա Տամատեանը ետ կանչեց իտալիայէն՝ մասնակցելու համար Փարիզի մէջ կայանալիք Հայկական Համագումարին։

Սոսեիլ առաջ Փարիզի Հայկական Համագումարին վրայ, չարունակնք կովկասեան անցքերու պատմականը այն կէտէն՝ ուր թողած էինք։

1917-ին Կովկասի մէջ վրացիներ, տուրքէյճանցիներ եւ հայեր իրր հետեւանք ռուսական յեղափոխութեան եւ ռուսերու կողմէ կովկասեան ճակատի լքումին, մէկտեղ դալով կազմած էին Անդրկովկասեան Սէյմը (Համադաշնակցութիւնը)։ Թրքական ճակատին վրայի հայ կամաւորական ուժերուն մէկ մասը՝ ընկերանալով ռուս զօրքերու նահանջին՝ դարձած էր Կովկաս։ Մնացեալ գրիւ ուժերը՝ մեծ մասամբ բաղկացած սաճկահայ կամաւորներէ, յառաջացող թուրք բանակին քայլ առ քայլ դիմադրելով՝ հետզհետէ կորսնցուցած էին Երզնկան, Մամախախունը, Կարինը (1918 Փետր. 28-ին) եւ Բասէնը (Հասան - դալէ), ու թուրք բանակները դեռ կը յառաջանային։ Ատուրքէյճանի թաթարները տրամադիր էին պատերազմելու թուրքերուն դէմ, որոնց հետ կապուած էին կրօնական եւ ցեղակցական կապերով։ Վրացիները որիւմ չէին տեսներ թշնամութիւնները թուրքերուն դէմ չարունակելուն մէջ։ Միայն հայերն էին որ ինքզինքնին ստիպուած կը

*. Տամատեան բառացիօրէն գրած է. «Թուրքիոյ արեւելեան հայաբնակ նահանգներուն»։ մեմֆ, սակայն, նախընտրեցիմք գործածել «Արեւմտահայաստան» եզրը - Վ.Ղ.։

ղգային պատերազմը շարունակելու, քանի որ իրենց համար կռուիլը առ նուազն ինքնապաշտպանութեան, ազգին նիւթական գոյութեան պահպանման խնդիր էր, իրենց յայտնի ըլլալով թրքական դադանաբարոյ վայրադուծիւնը եւ անոնց հայաջինջ միջոցառական ոգին: Աս ալ ճիշդ էր սակայն, որ հայ զինուորները մեծ մասով լարույալքուած էին եւ զինուորական սեւտերը՝ անմիարան: Այս հանգամանքներու մէջ էր որ Սէյմը 1918 Ապրիլ 22-ին նախ կը յայտարարէ Անդրկովկասի անջատումը Ռուսիայէն, եւ քիչ ետք՝ 1918 Մայիս 26-ին՝ պատերազմի կամ հաշտութեան խնդիրներու շուրջ երեք բաղկացուցիչ տարրերուն միջեւ արդող տարակարծութեան եւ անհամաձայնութեան պատճառով՝ Սէյմը լուծուած կը հռչակէ Անդրկովկասեան Դաշնակցային Հանրապետութիւնը: Նոյն օրը, միացիւններու Ազգային Խորհուրդը կը յայտարարէ Վրաստանի Հանրապետութեան անկախութիւնը: Հետեւեալ օրը, Մայիս 27-ին, Ատրպէյճանի կառավարութիւնը նոյնպէս ինքզինք կը յայտարարէ անկախ հանրապետութիւն: Այս երկու կատարեալ իրողութեանց հանդէպ հայերուն ուրիշ բան չէր մնար ընել, եթէ ոչ միայն հետեւիլ միասնեան օրինակին: Որով հայոց Ազգային Կեդրոնական Խորհուրդը 1918 Մայիս 28-ին կը մճռէ Հայաստանը հռչակել անկախ հանրապետութիւն:

Անդին թուրք բանակը Վեհայ փաշայի հրամանատարութեամբ հասած էր Սարղարապատի եւ Ղարաբելիսէի շրջակայքն ու կը սպառնար Երեւանի: Այս երկու տեղերուն վրայ հայկական բանակը յաղթական կերպով կը կասեցնէ թուրք յառաջխաղացութիւնը: Ահա այն տուն թուրք բանակը եւ հայ կառավարութիւնը Պաթմաի մէջ կը սկսին հաշտութեան բանակցութեանց եւ 1918 Յունիս 4-ին կը ստորագրուի հաշտութեան դաշինքը:

Հազիւ թուրքերու հետ հաշտութիւն կնքած՝ Հայաստան սահմանային մէջներով կռուի կը բռնուի Վրաստանի հետ, ու նաեւ ներքին կոռուներ կ'ունենայ թուրք եւ թաթար բնակիչներու հետ: Ի վերջոյ թուրք բանակը թաթարներու հետ միացած՝ Հայաստանի վրայով կը յարձակի Բագուի վրայ եւ հոն կը կոտորէ 150.000 հայեր:

Ամբողջ Հայաստանը շրջապատուած էր թշնամիներէ, զորի արտաքին աշխարհի հետ հաղորդակցութենէ, երկաթուղիներու գլխաւոր ճամբաները գրաւուած թուրքերէն: Ատրպէյճան կը մերժէր նախ տալ Հայաստանի: Վրաստան ամէն տեսակ դժուարութիւններ վը հանէր Հայաստանի կառավարութեան գէմ: Երկիրը խճողուած էր դադիականներով: Սով եւ համաճարակ հազարաւոր զոհեր կը խլէին հայ ժողովուրդէն:

Անդին՝ Զանգեզուրի մէջ Անդրանիկ իր կամաւորներով կը շարունակէր կռուիլ թուրք բանակներուն դէմ, առ ոչինչ համարելով թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ կնքուած հաշտութիւնը:

Այս էր կացութիւնը Հայաստանի մէջ, երբ Համաձայնական պե-

սուբիւնները յաղթելով Գերմանիոյ՝ ընդհանուր զինադադար կը կըն-
քուի 1918 Նոյեմբեր 11-ին: Գերմաններ եւ թուրքեր կը քաշուին Ան-
գլիոյ կողմէն, Դաշնակից զօրքեր Կը զբաւեն Անգլիոյ կողմէն: Հայաս-
տանին կը հասնին պաշար եւ դեղորայք Ամերիկայէն ու ռազմամթերք՝
Անգլիայէն: Այսպիսով Հայաստան կը փրկուի բնաջնջումի անմիջական
վտանգէն:

Հայաստանի վառարարութիւնը յոյս դրած Դաշնակիցներու հա-
յանպաստ խոստումներուն վրայ, զէսիւ Եւրոպա ճամբայ կը հանէ
պատուիրակութիւն մը՝ բաղկացած Աւետիս Ահարոնեանէ, Միքայէլ
Պապաջանեանէ եւ Տոքթ. Համարասպ Օհանջանեանէ, որոնք 1919-ի
սկիզբները կը հանին Փարիզ:

Եւր ընդհանուր Պատուիրակութիւնը հասաւ Փարիզ, այնտեղ
Աղգային Պատուիրակութեան կողմէ հրաւիրուած Հայկական Համա-
գումարը արդէն սկսած էր իր նիստերը զուարթել: Համագումարի ա-
ռաջին նիստերուն՝ դաշնակցականները, թուով 14, ժողովին մեծամաս-
նութիւնը կը կազմէին, մնացեալ ժողովականները՝ ռազմավար, հըն-
չակեան եւ անկուսակցական, ըլլալով ընդամենը 13 անձեր, որոնք
իրարու հետ գաղափարական կամ իմաստական կապ չունէին: Դաշ-
նակցականները իրենց թուական այս առաւելութիւնը ջանացին օգտա-
գործել ի նպաստ իրենց կուսակցական տեսակէտներուն եւ այնպիսի
այլաբանութիւններով ընթացք մը բռնեցին որ, վերջապէս թիւերը տար-
բեր հատուածները ստիպուեցան միարմարել եւ համեմատել զանգուած
մը կազմել՝ պաշտպանելու համար իրենց համահայկական տեսակէտ-
ները: Քիչ յետոյ, անկուսակցական ուրիշ պատգամաւորներ ալ հասնե-
լով՝ ասոնք եկան ստուարացուցին համագումարին շահերու պաշտպան
զանգուածին թիւը, որով ժողովին մէջ հոսանքներու հաւասարակը-
նութիւնը հաստատուեցաւ եւ նոյնիսկ կշիռը հակեցաւ ոչ-դաշնակցա-
կան զանգուածին կողմը: Հայաստանի Պատուիրակութեան անդամնե-
րէն միայն Ահարոնեան եւ Տոքթ. Օհանջանեան ներկայ ըլլալով այդ
միջոցին Փարիզ, կը մասնակցէին Համագումարի նիստերուն: Համա-
գումարը քննութեան առաւ եւ վաւերացուց Աղգային Պատուիրակու-
թեան պատրաստած հայկական պահանջագիր-յիշատակագիրը՝ որ
արեւմտահայ դատի ամբողջական մէկ պատկերացումն էր եւ որուն
կցուած էր պատերազմի յաջողութիւններէն ծնունդ առած եւ մարմնա-
ւորուած Հայկական Հանրապետութեան իրողապէս գոյութեան հարցն
ալ:

Դաշնակից պետութիւններու թելադրանքով՝ Համագումարը նա-
եւ պատրաստեց պատերազմի եւ տեղահանութեանց ու ամէն կարգի
խփփութեանց երեսէն հայ ազգին վրած ահաւոր կորուստներուն եւ
վնասներուն տեղեկագրութիւնը՝ վնասուց հատուցումի պահանջով:
Հայաստանի հոգատարութեան խնդիրը կարեւորութեամբ վիճարանու-
թեան նիսթ եղաւ եւ Համագումարը սկզբունքով ընդունեցաւ հոգատա-
րութիւնը Ամերիկայի Միացեալ Նահանգներուն յանձնելու պարագան:

Դաշնակիցներու կողմէ կիլիկիոյ գրաւման առթիւ, Ալեքսանտրէթի մէջ հայ լեզէոնականներու եւ արձերիացի Ֆրանսական զօրքերու միջեւ տեղի ունեցած միջադէպը, ինչպէս նաեւ լեզէոնականներու Չորրորդ Գումարտակին զինաթափութեան խնդիրը Համագումարի մէկ քանի նիստերու զրաւմանց նիւթ եղան: Նոյնպէս Էմիր Ֆէյսալի արար զօրքերուն Հալէպի մէջ հայերու վրայ յարձակումին դէպքը զբաղեցուց Համագումարը: Ֆէյսալ, որ այդ միջոցին Փարիզ կը գտնուէր, անձամբ եկաւ այցելեց Ազգային Պատուիրակութեան եւ իր ցաւը յայտնեց Հալէպի մէջ պատահած յարձակումներուն համար, հաւաստելով որ ինք հայերուն ջերմօրէն համակիր է, որ եղածը պարզ թիրիմացութեան մը արդիւնք պէտք է նկատուի եւ թէ ինք խիստ հրամաններ հետադրած է Հալէպ, որպէսզի նման դէպքեր չկրկնուին: Պատուիրակութեան կողմէ կիլիկիա լիազօր ներկայացուցիչ մը ղրկելու կարեւորութիւնը երթալով աւելի կը շեշտուի, ոչ միայն Ալեքսանտրէթի ցաւալի դէպքին Ֆրանսացիներու եւ հայերու միջեւ առաջ բերած փոխադարձ մեղադրանքներուն եւ անխտանալիութեան պատճառաւ, այլ նաեւ առ հասարակ հայերու միջեւ ընդհանուր համերաշխութիւն եւ Կարգապահութիւն առաջ բերելու, ինչպէս նաեւ թէ՛ Ֆրանսացիներու եւ թէ՛ տեղական միւս տարրերու հետ բարեոք յարաբերութիւններ ստեղծելու եւ երկիրը աստիճանաբար դէպի ինքնաւար ռեժիմ մը առաջնորդելու համար: Համագումարի անդամները Պատուիրակութեան լիազօր ներկայացուցիչի այս փափուկ պաշտօնին համար յարմար կը նկատէին Տամատեանը, որ սակայն կը զԺկամակէր ընդունիլ այդ պաշտօնը, քանի որ բացօրոշ կ'երևէր Ֆրանսացիներու անբարեացակամութիւնը հանդէպ հայերուն, եւ ինք վստահ չէր որ Ազգ. Պատուիրակութիւնը պիտի կրնար իրեն զօրավիզ հանդիսանալ՝ երբ ինք անոնց կողմէ դժուարութեան հանդիպէր: Մինչ այս-մինչ այն, կիլիկիոյ ներկայացուցչութեան հարցը առկալիս մնաց, առաջնութիւնը տրուելով նոր Ազգային Պատուիրակութիւն մը ընտրելու կարեւորագոյն հարցին: Պօղոս Նուպար փաշա, որ Ամենայն Հայոց վեհ. Կաթողիկոսէն կարգուած էր իւրեւ նախագահ Ազգային Պատուիրակութեան եւ իր դործակիցները ինք էր ընտրած, կը փափաքէր որ Ազգային Պատուիրակութիւնը նուիրագործուէր համազգային ընտրութեամբ եւ արդէն փաշային այս տեսակէտը մին էր այն գլխաւոր շարժառիթներէն, որոնք մղած էին զինք համահայկական այս ժողովը գումարելու: Ժողովը ձեռնարկեց նոր Պատուիրակութեան ընտրութեան: Ժողովականներու միջեւ այս ընտրութեան խնդիրը ծանր անհամաձայնութեանց տեղի տուաւ: Դաշնակցականները կը պահանջէին որ Պատուիրակութեան հինգ անդամներէն երկուքը դաշնակցական ըլլան: Մնացեալ ժողովականները միայն մէկ դաշնակցական կ'ուզէին ընտրել, միւս չորսը առնելով այլ հոսանքներէ եւ անկուռակցականներէ: Խնդիրը այնպիսի սուր կերպարանք առաւ որ, դաշնակցականները դատ սենեակ մը քաշուելով՝ այնտեղէն սկսան բա-

նակցիլ Համադումարի միւս ժողովականներուն հետ: Անկուսակցական
Ժողովականները՝ դաշնակցականներուն այս պահանջկոտ ընթացքէն
դալթակցելով, ժողովին առաջարկեցին կարեւորութիւն չտալ անոնց
պահանջներուն եւ Պատուիրակութեան ընտրութիւնը կատարել ա-
զատ կերպով, քանի որ ժողովին մեծամասնութիւնը դաշնակցական
չէր: Տամատեան, Թէքէեան եւ Տոքթ. Նշան Տ. Ստեփանեան հակառա-
կեցան այս առաջարկին եւ թէլադրեցին բանակցութիւնները շարու-
նափել դաշնակցականներուն հետ մինչեւ համաձայնութեան մը գոյա-
նայր: Ռամկավարներուն պատճառարանութիւնը հետեւեալն էր. «Դուք՝
անկուսակցականներդ, իրաւամբ դալթակցած դաշնակցականներու
յաւակնութենէն, կ'ուզէք ազատ ընտրութիւն կատարել: Դուք ամե-
նայն դիւրութեամբ կրնաք հինգ հոգի ընտրել իբրեւ Պատուիրակու-
թեան անդամ, ու յետոյ ձեր պաշտօնը ատարելով կը դառնաք իւրա-
քանչիւրդ ձեր տեղը: Դաշնակցութիւնը, զժգոհ եղած ընտրութենէն,
ճակատ կը կադմէ նորընտիր Պատուիրակութեան դէմ, կը քննադատէ
անոր գործերը, անոր դէմ խափանարար դիրք կը բռնէ: Այդ պարա-
պային՝ ո՞վ պիտի պաշտպան կենայ Պատուիրակութեան: Դուք ան
ատեն մէջտեղ չկաք: Մենք՝ Կուսակցականներս ենք որ պիտի ճակա-
տինք դաշնակցականներու դէմ եւ մենք, յաղթենք կամ յաղթուինք,
ազդն է որ պիտի տուժէ: Մենք կը հրաժարինք այդ անփառունակ պայ-
քարէն եւ կը յորդորենք ձեզ որ բանակցութիւնները շարունակէք մին-
չեւ որ համաձայնիք դաշնակցականներուն հետ, քանի որ անոնց այս
յաւակնոտութիւններուն բուն պատասխանատուները դուք էք եղած ձեր
մինչեւ հիմա բռնած չէցուք դիրքովը»:

Ժողովականները ռամկավարներու այս պատճառարանութեան
առջեւ տեղի տալով շարունակեցին բանակցութիւնները, որով կարելի
եղաւ համաձայնութեան յանգիլ՝ ընտրելով երկու դաշնակցական եւ
չորս ոչ-դաշնակցականներ: Այս վերջին տեսակի ընտրելիները եղան՝
Պօղոս Նուսպար Իսաչա, Փրոֆ. Արրահամ Տ. Յակոբեան, Վահան Թէ-
քէեան եւ Արշակ Զօպանեան. իսկ դաշնակցականներէն ընտրուեցան՝
Գարեգին Փաստրմաճեան (Արմէն Դարօ) եւ Տոքթ. Նեւրուզ:

Ազգ. Պատուիրակութեան ընտրութենէն անմիջապէս յետոյ,
Տամատեան ընտանեկան պատճառներով մեկնեցաւ Փարիզէն ու վերա-
դարձաւ Եգիպտոս 1919 Ապրիլի վերջերք: Երբ Տամատեան Եգիպտոս
հասաւ, տեղւոյն ազգայնականները յեղափոխութիւն պայթեցուցած
էին անդլիացիներու դէմ՝ Եգիպտոսի անկախութիւնը փրականացնելու
համար: Տամատեան Փորթ - Սայիտէն հազիւ կրցաւ Գահիրէ անցնիլ եւ
հոն ստիպուեցաւ չորս օր մնալ, մինչեւ որ վարելի եղաւ Երկաթուղիի
տոմսակ մը ձեռք անցնելու եւ անցնիլ Աղեքսանդրիա. ինչպէս Գահիրէ
եւ ուրիշ տեղեր, նոյնպէս Աղեքսանդրիոյ մէջ խռովութիւններ ծագած
էին: Անոնք տեւեցին բաւական օրեր: Տամատեան հազիւ հասած իր
ընտանիքին մօտ, իր անձնական գործերը կարգադրելու վրայ էր, երբ

1919 Յուճիսի սկիզբները Պողոս Նուսյար փաշայէն ստացաւ հեռագիր մը՝ իրեն իմացնող որ զոյղ Պատուիրակութիւնները՝ ի մի ձուլուած Ամբողջական Հայաստանի Պատուիրակութիւն անուան տակ, զինք կարգած էին լիազօր ներկայացուցիչ Կիլիկիոյ, եւ թէ մէկ քանի օրէն Մեսաքթըրի շոգենաւով իրեն պիտի հասցնէին իր հաւատարմագիրներն ու Պատուիրակութեան հրահանգները, եւ թէ Կիլիկիոյ մէջ իր անմիջական ներկայութիւնը անհրաժեշտ ըլլալով՝ պէտք է նոյն շոգենաւով ճամբայ ելլէր, օր առաջ այնտեղ հասնելու համար։ Տամատեան Աղեքսանդրեայէն մեկնելէ առաջ, Կամսարական Արմենակ պէյի գրասենեակին մէջ զեկոյց մը բրաւ Ամերիկայի եւ Փարիզի ազգային կացութեան, ինչպէս նաեւ Դաշնակից պետութեանց ղեպի հայերը ունեցած վերաբերմունքին շուրջ, եւ հոն առաջին անգամ Աղեքսանդրիոյ հայ երեսներէն Տամատեանի բերնէն լսեցին որ Ֆրանսայի վերաբերումը ղեպի մեր ազգային բաղձանքները՝ յուսայի փոփոխութիւն մը կրած էր եւր. 11-ի զինադադարէն ի վեր։

Շոգենաւը հասաւ ու Տամատեան ստանալով Պատուիրակութեան հրահանգները, պատրաստուեցաւ նոյն շոգենաւով մեկնել ղեպի Մերսին։ Իր հետ տարաւ իր Շաքէ գոյստըրը։ Նոյն շոգենաւին մէջ էին՝ Գնդապետ Պիլի Սենթ Մարի, որ Կիլիկիա կ'երթար Գնդապետ Տր-Փիլեփափին յաջորդելու՝ Հայկական Լեզէոնի հրամանատարութեան մէջ, Քափիթէն Լաֆարկ, որ Ատանայի կառավարիչ անուանուած էր, Տեղակալ Լիւիզ, որ Ատանայի ոստիկան - զինուորութեան մէջ սպայի պաշտօն պիտի վարէր։ Միեւնոյն շոգենաւով Ատանա կը ճամբորդէին նաեւ՝ Գահիթէն Որբոսնամ Ընկերութեան քննիչներ Մեթր Աղազարմ եւ Պր. Հրանտ Այաթին։

Շոգենաւը երբ Պէյրութ հասաւ, Տամատեան ցամաք ելաւ եւ այցելեց Ֆրանսական Բարձր Բոմբէր Մ. Ժորժ Փիքոյին, որ իրեն լաւ ընդունելութիւն ըրաւ եւ խոստացաւ հեռագրով տեղեկութիւն տալ Գնդապետ Պրեմոնին՝ իր Կիլիկիա հասնելուն մասին։ Պէյրութի մէջ Տամատեան տեսնուեցաւ Ազգ. Միութեան ատենապետ Տոքթ. Պաղտասար Մելքոնեանին, Սարաֆեան Եղբայրներուն, Հաճի փաշա Կիւլպնէկեանին, Պր. Գէորգ Ալոնյանին եւ որբանոցի տնօրէն Պատ. Խաչատուր Գոռլեանին հետ, ինչպէս նաեւ այցելեց Հայ երիտասարդաց Միութեան լսարան - ընթերցարանը, ուր պաշտօնական ընդունելութիւն եւ ճառախօսութիւններ տեղի ունեցան։

Շոգենաւը Մերսին հասնելուն՝ քաղաքին ազգայիններէն խումբ մը փութացին դիմել շոգենաւ՝ բարի գալուստ մաղթելու Պատուիրակութեան լիազօր ներկայացուցիչին եւ անոր հետ որոշեցին իր քաղաք մուտքին կարգադրութիւնները։ Երբ Տամատեան եւ իր զոյստըրը, Մեթր Աղազարմ եւ Պր. Այաթին նաւամատոյցը հառան, այնտեղ ընդունուեցան Ատանայի Առաջնորդ Գէորգ Վարդապետ Ասլանեանի եւ քաղաքին երեսներէն կողմէ, մինչ հայ վարժարանաց երկսեռ աշակերտները

«Երբոր բացուին դռներն յուսոյ» կիլիկեան ևրզով կը դիմաւորէին զիրենք ևւ իրենց ծաղիկներ կը նուիրէին: Մերսինի յոյներէն մեծահարուստ Պոտոսաքի էֆենտի իր ինքնաշարժը դրած էր Տամատեանի տրամադրութեան տակ, իսկ քաղաքին յոյն գաղութը Ազգ. Միութեան տըրամադրած էր իր ակումբը՝ Տամատեանի հիւրընկալութեան համար: Յաջորդ օրը, Կիրակի, Տամատեան պիտի մեկնէր Ատանա: Առաջնորդ Հայրը կարգադրեց որ փոխանակ շոգեկաւքով Ատանա ճամբորդելու, Տամատեան մեկնէր իրեն հետ, Պոտոսաքի էֆենտիին ինքնաշարժով, ևւ հանդիպէր Տարսոն, ուր տեղւոյն երեւելիներէն Մարտիրոս էֆենտի Շալվարճեանի պսակադրութեան հանդէսը տեղի պիտի ունենար: Այսպէս, Կիրակի կէսօրին, Առաջնորդ Հայրը, Տամատեան ևւ իր դուստրը հասան Տարսոն, ուր ճաշելէ ևւ պսակադրութեան ներկայ պտուելիէ ետք, Տամատեան շոգեկաւքով ճամբան շարունակեց ևւ մայրամուտին հասաւ Ատանա: Կայարան փութացած էին Ազգ. Միութեան անդամները, Փաղաքական Ժողովի անդամներ, վարժարանաց ուսուցիչները ևւ քաղաքի հայ երեւելիները: Գնդապետ Պրեմոնի կողմէ բարի գալուստ մաղթելու եկած էին Տոքթ. Ռուլան ևւ Տեղակալ Կանիէօ: Նոյն իրիկուն Ազգ. Միութեան չէնքին մէջ ընդունելութիւն մը եղաւ Տամատեանին, ևւ Ազգ. Միութեան անդամները անոր ընդհանուր տեղեկութիւններ տուին տեղական կացութեան մասին: Մերձաւորուպէս ամիս մը առաջ, Արեւելեան Միջերկրականի Փրանսական նաւարածին ծովակալին Մերսին ևւ Ատանա այցելութեան առթիւ՝ հայերը ուղած էին իրեն պարտ ու պատշաճ մեծարանքներ ընել: Իրայց յիշեալ ծովակալին Մերսինի մէջ գէպի հայերը ցոյց տուած պաղ վերաբերմունքը պատճառ վճլլայ որ Ատանայի Ազգ. Միութիւնը կայարանին առջև ի պատիւ ծովակալին իր կանդնած յաղթական կաթարին վրայ արձանադրէ հետեւեալ վերտառութիւնը. «Վու գ'էթ քը պիէն վընիւ ան Սիլիսի Արմէնիէն» * : Գրնդապետ Նորման, որ Ատանայի քաղաքապետն էր, այս վերտառութիւնը վար առնել կու տայ: Ասոր վրայ, Ազգ. Միութեան անդամները չեն մասնակցի ծովակալին ընդունելութեան: Այս միջադէպը Փրանսական իշխանութեանց ևւ Ազգ. Միութեան միջև յարաբերութիւնները որոշ չափով պակեցուցած էր: Տամատեանի Կիլիկիա հասնելէն մօտաւորապէս ամիս մը առաջ, Ատանայի երկրաշարժի Մուղաֆֆէր Էտ-Տին էֆենտի կայարանին մօտիկ իր բնակարանին մէջ կը սպաննուի: Այս սպանութեան առթիւ իր տան սպասաւոր Գէորդ ևւ ուրիշ հայ մը կը ձերբակալուին ևւ ոճրագատ ատենանին առջև դատուելով՝ մահուան կը դատապարտուին: Ազգ. Միութեան անդամները Տամատեանին պատմելով այս եղելութիւնները, կը յաւելուն թէ Գէորդ ևւ իրեն հետ դատապարտուող ընկերը այդ ոճիրին մէջ որեւէ մասնակցութիւն չեն ու-

* - «Բարի եկած էք Հայկական Կիլիկիա»:

նեցած և, կը խնդրեն Տամատեանն որ Քոյոնէլ Պրեմոնին մօտ միջ-
նորդէ անոնց դատաւարտութիւնը ջնջելու, կամ գէթ պատիժը մեղմա-
ցընելու համար: Տամատեան Ազգ. Միութեան անդամներուն կ'ըսէ.
«Քանի որ դուք կը պնդէք որ այդ երկու դատաւարտեալները անմեղ
են, ուրեմն ի՞նչ է թէ բուն ոճրագործները որո՞նք են: Այդ պարա-
դային, պէտք է ոճրագործները մատնանշէք կառաւարտութեան, որպէս-
զի անմեղները ազատուին անիրաւ պատիժի ենթարկուելէ: Եթէ այդ
չէք կրնար ընել, ուրեմն մի՛ սպասէք որ Պատուիրակութեան ներկա-
յացուցիչը առ նուազն ոճրագործութեամբ կատկածելի անձերու պաշտ-
պանութիւնն ստանձնէ Փրանսական իշխանութեանց մօտ»:

Յաջորդ օրը Գնդապետ Պրեմոնին այցելելով, Տամատեան անոր
յանձնեց իր հաւատարմագիրը: Քոյոնէլ Պրեմոն խիստ լաւ ընդունե-
լութիւն մը ըրաւ Տամատեանին և խոստացաւ իրեն ամէն գիւրութիւն
ընծայել իր պաշտօնին կիրառութեանը համար:

Նոյն օրը Տամատեան այցելեց անդլիացի ձենըրը Մէօճին, որ
Կիլիկիոյ անգլիական ուժերուն վերին հրամանատարն էր: Ան անգլիա-
կան կառավարութեան ղեպի հայերը լաւապէս տրամադրութիւններուն
հաւաստիքն ընծայեց իրեն:

Տամատեան Կիլիկիա հասնելուն առաջին օրերուն, Տոքթ. Ռո-
յան, որ իրբն հայասէր ինքզինքը սիրելի դարձուցած էր բոլոր հայե-
րուն, սկսաւ Ազգ. Միութեան անդամներէն պահանջել որ Հարունիկի
որբանոցին տիրանալու համար՝ Փրանսական իշխանութիւններէն ու-
ղեն դուրս հանել տալ որբանոցէն ամերիկացիները, որոնց յանձնուած
էր այդ հաստատութիւնը անգլիացիներուն կողմէ, որոնք զայն թուր-
քերէն առած էին Կիլիկիոյ գրաման օրերուն: Տամատեան Ազգ. Միու-
թեան թեւադրեց տեղի չտալ Տոքթ. Ռոյանի այդ պահանջին և այդ
մտքով որեւէ դիմում չընել Քոյոնէլ Պրեմոնին: Բայց որովհետեւ Տոքթ.
Ռոյան կը շարունակէր նկզը ձգել Ազգ. Միութիւնը, Տամատեան Քո-
յոնէլ Պրեմոնին ներկայանալով բացատրեց որ ամերիկացիները Հա-
յաստանի մէջ ևւ քիչ մը ամէն տեղ հարիւր հազարաւոր հայ որբեր կը
պատսպարեն ու կը սնուցանեն որբանոցներու մէջ, այս հանգամանքնե-
րու մէջ ինչպէս կ'ուզուի որ հայեր դիմում ընեն Փրանսական իշխա-
նութեանց որ զանոնք դուրս հանեն հայ որբանոցէ մը: Հայերը ալ-
պիսի ապերախտ քայլ մը չեն կրնար առնել: Բայց, եթէ Փրանսական
իշխանութիւնները իրենք կ'ուզեն ամերիկացիները դուրս հանել և ի-
րենք գրաւել որբանոցը, իրենք մեր խնդրանքին պէտք չունին իրենց
այդ փափաքն իրագործելու համար:

Քոյոնէլ Պրեմոն բանաւոր պտաւ Տամատեանի այս բացատրութիւ-
նը և այն օրէն ի վեր դադրեցան Հարունիկի որբանոցին չուրջ Տոքթ.
Ռոյանի պահանջները Ազգ. Միութեան մօտ:

Տամատեանի Կիլիկիա հասնելէն մօտաւորապէս ամիս մը Լտք,
Կ. Պոլսոյ Բարձրագոյն Դատարանը վերաքննելով Մերսինի դատարա-

նին մահավճիռը երկու թուրք ոճրագործներու դէմ, որոնք հայ մը սպաննած էին, անոնց պատիժը մեղմացուցած եւ վերածած էր ցկեանս րանտարկութեան: Տամատեան այս պարսկայէն օգտուելով, Քոլոնէլ Պրեմոնին մօտ դիմում ըրաւ որ Մուղաֆֆէր էտ-Տին էֆենտիի ըստանութեան ստիժի դատապարտուած երկու հայերու մահապատիժն եւս մեղմացուի եւ վերածուի ցկեանս բանտարկութեան: Այս կեքսով, ըսաւ, քրիստոնեայ եւ մահմետականներու միջեւ արդարութեան կը-շխուր հաւասար բռնուած կ'ըլլայ: Քոլոնէլ Պրեմոն սիրայօթար ընդունեց առաջարկը, մանաւանդ որ արդէն վերջ գտած էր Կիլիկիոյ մէջ տրուած դատավճիռը Կ. Պոլսոյ Բարձրագոյն Դատարանին վաւերացման ենթարկելու նախկին դրութիւնը:

Այդ միջոցին Կիլիկիոյ մէջ օրուան ծանրակշիռ հարցը հայ լեզէոնականներու խնդիրն էր: Ֆրանսական իշխանութիւնները մաս մը լեզէոնականներ Ատանայի մէջ պահելով՝ մնացեալները երկաթուղիի հեռաւոր կայարանները ցրուած էին եւ ասկէ դատ՝ նաեւ լեզէոնականներուն յայտնած էին որ իրենցմէ անոնք որ կ'ուզեն զինուորական ծառայութենէ ազատ կացուցուիլ, իրենց խնդրանքին վրայ գոհացում պիտի տրուի իրենց վաւերքին: Լեզէոնականներէ շատեր՝ արդէն դժգոհ դէպի հայերը եւ դէպի իրենք աննպաստ վերաբերումէն՝ այս զեկոյցին վրայ դիմում կատարած կամ վատարելու վրայ էին զինուորութենէ արձակուելու համար: Տամատեան լեզէոնականներու այս արձակումը ազդային չահերու համար միասակար նկատելով՝ այս մասին տեսակցութիւններ ունեցաւ մէկ կողմէ լեզէոնականներու հայ ենթասպաներուն հետ, որոնք իրենց գանգատները յայտնելով հանդերձ Ֆրանսացիներու վարմունքէն, խոստացան լեզէոնականները ետ կեցնել Լեզէոնին քայքայումին առաջնորդող այդ միասակար քայլէն, միւս կողմէ՝ Քոլոնէլ Տը Փիէփոփի, Քոլոնէլ Յիւ Սենթ Մարիի, ինչպէս նաեւ Քոլոնէլ Պրեմոնի հետ: Քոլոնէլ Փիէփոփ գանգատեցաւ հայ լեզէոնականներէ ոմանց անկարգ վարմունքէն եւ Տամատեանին ներկայացուց կարգ մը վաւերաթուղթեր, որոնցմէ մէկը դէպի Ֆրանսացիները հայոյալից գրութիւն մըն էր՝ գրուած մէկ քանի լեզէոնականներէ, որոնք դասալիք եղած էին: Այսու ամենայնիւ, ինքն ալ ընդունեցաւ որ կարգ մը Ֆրանսացի սպաներ իրենց կոշտ վարմունքով հայ լեզէոնականներու դժգոհութիւն պատճառած էին: Յիւ Սենթ Մարի, որ նորեկ էր եւ չօգնաւին մէջ Տամատեանի հետ բարեկամացած, հայ կամաւորներուն ջատագովականը ըրաւ, ըսաւ թէ հայ գինուորը չի նմանիր ալճերիացի, մարոքցի կամ սենեկալցի զինուորներուն, որոնք մեքենական համակերպութեամբ կը հետեւին իրենց սպաներուն ամէն մէկ հրամանին եւ նոյնիսկ քմահաճոյքին: Հայը, ընդհակառակը, ըսաւ, ազգային արժանապատուութեամբ եւ հպարտ պերականութեամբ օժտուած զինուոր մըն է, որ կրնայ բաղդատուիլ բնիկ Ֆրանսացի զինուորին հետ, եւ աւելցուց թէ ինք այս աչքով կը նայի հայ լեզէոնականներուն վրայ եւ

ախ կարճ ժամանակի փորձառութեամբը չափազանց դո՛ւ է անոնցմէ : Բոլոնէլ Պրեմոն, Կիլիկիոյ ընդհանուր վարիչը, ինքն ալ յայտարարեց թէ ընդհանուր առմամբ դո՛ւ է հայ զինուորներէն եւ ինք ալ կողմնակից չէ Հայկական Լեգէոնին ցրուումին : Լեգէոնականներուն եղած թե-յադրութիւնները իրենց արձակումը խնդրելու մասին՝ զինուորական իշխանութեան կողմէ եղած է առանց իր կամքին :

Այսպէս, Լեգէոնի քայքայման անմիջական վտանգին առաջին առ-նուեցաւ Տամատեանի միջամտութեամբը եւ լեգէոնականներն ալ իրենց կարողապահութեամբն ու անձնութիւնովեամբը Փրանսացիներուն իրենց վրայ վստահութիւնն ու համակրանքը վերահաստատեցին :

Տամատեանի Կիլիկիոյ ժամանումէն քիչ հոգ, Պաղեստին, Սու-րիա եւ Կիլիկիոյ ալիքները ամերիկեան քննիչ յանձնախումբ մը, որուն նպատակն էր տեղացի ժողովուրդներն հարցաւորել՝ հասկնալու հա-մար թէ ի՞նչ էին անոնց քաղաքական ցանկութիւնները եւ թէ ո՞ր Դաշ-նակից պետութեան հոգատարութիւնը կը նախընտրէին : Այս յանձնա-խումբին նախագահն էր Մ. Բրէյն եւ անդամներն էին ծերակուտա-կան Մ. Բրէյնի Մոնթկոմմերի, հայասէր ամերիկացի մը՝ որ թուրքերէն ալ գիտէր եւ որ նախագահ Ուիլսոնի հետեւողներէն ըլլալով՝ Փարի-զէն ծանօթ էր Տամատեանին, եւ մէկ քանի ուրիշներ : Պատուիրակու-թեան հրահանգներուն համաձայն, Տամատեան, Ազգային Միութիւն, հայ առաքելական ու աւետարանական համայնքներու ներկայացուցիչնե-րը ամերիկեան յանձնախումբին առջեւ յայտարարեցին թէ կը փափաքին որ Կիլիկիան վերածուի հայկական ինքնավար նահանգի մը : Գալով հոգատարութեան հարցին, յայտնելով հանդերձ իրենց երախտագիտա-կան զգացումները հանդէպ Դաշնակից պետութիւններուն եւ մասնաու-րաբար Ֆրանսայի, որ ներկայիս Կիլիկիան կը կառավարէ արդար կեր-պով, ըսին թէ՝ ըստ որում Հայ Պատուիրակութիւնները Դաշնակից պե-տութեանց իսկ թելադրութեամբն ու խորհուրդովը Ամերիկայի Միաց-եալ Նահանգաց հոգատարութիւնը ուզած են Հայաստանի համար, ի-րենք ալ նոյնը կ'ուզէին Կիլիկիոյ համար, որ սահմանուած է ու չէ կամ կանուխ Հայաստանի բաղկացուցիչ մասերէն մին ըլլալու : Հայ կաթո-լիկները առանձին հարցաւորածի ենթարկուեցան, որով որոշ կերպով չյայտնուեցաւ թէ ի՞նչ լազնաքներ յայտնեցին, թէ եւ իրենց ալ թե-լադրուած էր միւս հայ հատուածներուն նման արտայայտուիլ : Նոյն-պէս անորոշ մնացին կիլիկիեանկ յոյներու, ասորիներու եւ քաղցկա-ցիներու քաղաքական ցանկութիւնները, թէ եւ այս տարրերէն իւրաքան-չիւրը հայերուն կը հաւատէր որ Կիլիկիան հայկական շրջանակ մը նկատուի՝ անոր վրայ ամերիկեան հոգատարութիւն ուզած է : Կիլի-կիոյ այսուրիժ արարները ի նպաստ Փրանսական հոգատարութեան ար-տայայտուած էին. իսկ թուրքերը յայտնած էին թէ՝ ըստ իրենց փա-փաքին՝ Կիլիկիան պէտք է վերադարձուէր թրքական իշխանութեան :

Այս յանձնախումբէն քիչ յետոյ Կիլիկիոյ հասաւ Զօրավար Հար-

այլըրտի ամերիկեան զինուորական յանձնաժողովը, որ թէեւ հայերու եւ թուրքերու կողմէ զիջերանց գիմաւորուեցաւ, առանց տեղական տարրերու հետ մօտիկ յարաբերութեան մտնելու՝ միայն մէկ օր մնալով Ատանա, ճամբան շարունակեց դէպի Հայաստան եւ Կովկաս: Յետոյ յայտնի տեղաւ որ այս երկու յանձնաժողովներուն տեղեկադիրները Հայաստանի եւ Փոքր Ասիոյ մէջ ամերիկեան հոգատարութեան մասին ոչ վճռակա՛նապէս նուազաւոր, ոչ ալ բացարձակապէս բացասական էին, այլ կը բովանդակէին հոգատարութեան թէ՛ առաւելութիւնները եւ թէ՛ անպատեհութիւնները ամերիկեան քաղաքականութեան եւ տընտեսական շահերու, ինչպէս նաեւ յանձն առնուելիք ֆինանսական զոհողութիւններու տեսակէտէն: Այնպէս որ կարելի չէ ըսել թէ այս տեղեկադիրներն էին որ Հական դեր կատարեցին Հայաստանի հոգատարութեան առաջարկին ամերիկեան Ծերակոյտին կողմէ մերժուելուն մէջ: Ծերակոյտին ազատական մեծամասնութիւնը Ամերիկայի համար տեսակ մը արկածախնդրութիւն նկատեց՝ Մըրրոյի վարդապետութեան հակառակ՝ հին աշխարհի մէկ հեռաւոր անկիւնին մէջ աշխարհի քաղաքական կամ մարդասիրական ձեռնարկութիւն մը, ու զայն մերժեց 1920-ի Ապրիլ 26-ի նիստին մէջ:

Աղգային Պատուիրակութիւնը՝ Փարիզի Համագումարին ալ կարծիքը առնելով՝ Կլիկիա զրկած էր բժշկական առաքելութիւն մը, ղրխաւորութեամբ Տոքթ. Ղազարոսեանի: Այս առաքելութիւնը Ատանայի իջևաններէն մէկը վարձելով՝ մեծածախս նորոգութիւններով ու պատշաճեցումներով զայն վերածեց կանոնաւոր հիւանդանոցի մը, որուն վարի յարկին վրայ ալ կազմեց ձրի դարմանատուն մը՝ թեթեւ հիւանդութեանց կամ պատահական վէրքերու դարմանումին համար: Այս հիւանդանոցին պաշտօնական բացումը կատարեց Տամատեան՝ ի ներկայութեան Բուլնէլ Պրեմտնի եւ ըսլոր Փրանսացի զինուորական ու քաղաքային պաշտօնատարներուն եւ տեղական զանազան հասարակութեանց երեսելիներուն, որոնց կարգին քաղաքի թուրք երեսելիները: Իր բացման ճառին մէջ Տամատեան ըսաւ. «Թուրք կառավարութիւնը հայերը հալածեց ու ջարդեց: Այդ ջարդերուն եւ հալածանքներուն դէմ հալ ազդին միջոցաւ զրկութեան մէկ կոթողն է այս հոյակապ հիւանդանոցը, որուն դարմանատան մէջ եղբայրաբար եւ անխտրաբար ուղտի ինամուփն ու դարմանուփն հայերու եւ ուրիշ տեղացի բնակիչներու հետ՝ նաեւ մեր թուրք հայրենակիցները: Զարիքի դէմ բարիք՝ այս է մեր միջոցաւ զրկութիւնը»: Այս հիւանդանոցը իր գոյութիւնը պահպանեց Կլիկիոյ Փրանսական գրաւումի լաւ ու գէշ օրերուն մէջ եւ իր դռները փակեց միայն այն ժամանակ, երբ Կլիկիոյ պարպումին հետեւանով հայերը միահամուռ կը մեկնէին Ատանայէն:

1919-ի ամբան, Ատանայի մէջ տեղի ունեցաւ արկածով մահը բժշկապետ Տոքթ. Ռուսնի, որ, ինչպէս վերը ըսուեցաւ, ըսլոր հայերուն սիրտը գրաւած էր: Ֆրանսական իշխանութիւնները կը պատ-

բաստուէին ողբացեալ բժիշկին հանդիսաւոր յուղարկաւորութիւնը կատարելու եւ մարմինը թաղելու սուրիացի կաթողիկ Յամայէ ընտանիքին դամբարանին մէջ: Տամատեան եւ Աղգային Միութիւնը փութալով հաղորդել իրենց խորին ցաւակցութիւնը Փրանսացիներու այս կորուստին համար, յայտնեցին որ հայերը այդ անդամանելի վորուստը իրենց համար կը նկատեն ազգային ազէտ մը եւ ի նշան իրենց մեծ սիրոյն եւ հրախտադիտութեանը ղէպի ողբացեալ բժիշկը, կը փափաքին ազգովին մասնակցել յուղարկաւորութեան ու կը խնդրեն որ իրենց արտօնուի հանդուցեալին մարմինը թաղել Արգարեան վարժարանի բակին ճիշդ մէջտեղը: Բոլոնէլ Պրեմոն շնորհակալութեամբ ընդունեց հայոց այս արտայայտութիւնները եւ այս առաջարկը: Հայերը ղիշերանց վարժարանին բակին մէջտեղ փորեցին եւ հոն պատեր հիւսելով յարգարեցին ստորերկրեայ դամբարան մը: Յաջորդ առաւօտ կատարուեցաւ Տոբթ. Ռուլանի փառալուք յուղարկաւորութիւնը, մասնակցութեամբ հայ կաթողիկ եւ հայ առաքելական հոգեւորականութեան, ներկայութեամբ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան ներկայացուցիչ: Ս. Տամատեանի, Աղգային Միութեան անդամներու, Աւտանայի հայ երեւելիներու, հայ լեզգեանականներու եւ հայ կուսակցութեանց պետերուն: Յուղարկաւորութեան թափօրին առջեւէն կը տարուէին հայ դաճաղան կաղմակերպութեանց եւ հաստատութեանց կողմէ զրկուած հսկայ ծաղկեպսակներ, ծաղկազարդ խաչեր եւ յն: Աւտանայի պէս ծաղիկէ ու զարդարանքէ զուրկ քաղաքի մը մէջ հրաշքի պէս բան մըն էր մէկ ղիշերուան մէջ այդքան չքեղ ծաղկեպսակներու, դրամանգներու եւ մեռելական զարդարանքներու պատրաստութիւնը: Թափօրը առաջնորդուեցաւ լատինական եկեղեցին, ուր լատին կղերք՝ շրջապատուած հայ եկեղեցականներով, կատարեց մեռելական արարողութիւնները, սրունց ընթացքին լատինական շարականներ երգեցին՝ բացի դպիրներէն՝ նաեւ Տիկին Լաֆարկ եւ Տիկին Կիզ: Լատինական արարողութիւնը հաղիւ աւարտած՝ դասին մէջ երեւցաւ հայ կաթողիկ կղերականութիւնը, եպիսկոպոս եւ վարդապետներ, հայկական փառալուք զգեստաւորումով, եւ դպիրներ, որոնք կատարեցին մեռելական հայածէս արարողութիւնը, որմէ ետք թափօրը նոյն կաղմով եւ հանդիսաւորութեամբ ուղղուեցաւ Արգարեան վարժարանի բակը, ուր կատարուեցաւ թաղումը՝ ղիշերայն պատրաստուած դամբարանին մէջ: Թաղման արարողութեանց ընթացքին դամբանականներ կարգացին Գոլոնէլներ Պրեմոն եւ Նորման, Պր. Տամատեան, Ժխախոտի ռեմիտի տնօրէնը եւ յայն երեւելիներէն միւս:

Մէկ խօսքով, Աւտանան Աւտանա ըլլալէն ի վեր այսպիսի մեծաշուք արարողութիւն մը երբեք չէր տեսած եւ գուցէ երբեք ալ պիտի չտեսնէ: Այս յուղարկաւորութիւնը Փրանքո-հայկական եղբայրակցութեան մէկ գերազոյն արտայայտութիւնը եղաւ, փարատելով Փրանսացիներու եւ հայերու միջեւ կանխաւ առաջ եկած բոլոր անհամակցողութիւններն

ու թիւերի մացուածքները :

1919 Յուլիս 14-ին Ատանայի մէջ անորինակ խանդավառութեամբ տօնուկացաւ Ֆրանսայի ազգային տօնը : Առտուն քաղաքին բացաստանին վրայ տեղի ունեցաւ զօրահանդէս , որու ընթացքին երկոտանեակ մը սաւառնակներ կը ճախրէին օդին մէջ : Հայերը մեծ բազմութեամբ ներկայ գտնուեցան այս հանդիսութեան , որուն մէջ ռազմական եւ մարզական դանդաղ խաղեր հասարակեցին Ֆրանսացի զինուորները եւ հայ լեզգիներուները : Հոն Տամատեան Յուլիս 14-ի նշանակութեան վրայ ճառ մը կարդաց : Երեկոյն կառավարչատան ընդարձակ պարտէզին մէջ տեղի ունեցաւ զինուորական կեանքէ թատերախաղ մը՝ Սերվիլը , որուն ներկայացումէն ետք տեղի ունեցաւ պարահանդէս :

1919-ի ամառուան ամիսներուն , Ֆրանսացիք շարունակեցին Սուրիայէն Կիլիկիա փոխադրել հայ տարագրեալներու մնացեալ մասը : Այս կերպով՝ նոյն պարտան աշնան՝ Կիլիկիոյ մէջ հայերու թիւը հասած էր 140-150 հազարի , մէջն ըլլալով Քիլիսի , Այնթապի եւ Մարաշի հայերը , ինչպէս նաեւ զէյթունցիները , որոնց փախաւորողները կրկին տեղաւորուած էին իրենց արժուերոյնին մէջ : Անգլիական եւ Ֆրանսական ուժերը միեւնի , Զէյթունի բարձունքը հասած չէին , ոչ ալ այդ բարձրութիւններուն մէջ մնացած էր օսմանեան զօրք եւ կառավարական իշխանութիւն : Այսպէս՝ 1919-ի աշունէն սկսեալ՝ Զէյթուն արտաքին յարաբերութենէ զուրկ՝ կը մայկէր տեսակ մը ինքնիշխան կեանք :

1919 Հոկտեմբերին լուր տարածուեցաւ թէ Անգլիոյ եւ Ֆրանսայի միջեւ կնքուած նոր համաձայնութեան մը հետեւանքով , անգլիական զօրքերը պիտի քաշուէին Կիլիկիայէն , Մարաշի եւ Այնթապի շրջանէն , ինչպէս նաեւ Սուրիայէն ու Լիւանանէն , եւ ամբողջ այդ շրջանները Ֆրանսական զբաղման տակ պիտի մնային :

Այս համաձայնութիւնը դեռ պորձադրութեան դրուած չէր , երբ Հոկտեմբերի մէջ տեղի ունեցաւ առաջին թուրք ասպատակային շարժում մը Կիլիկիոյ դաշտին մէջ (Զուքուր օվա) : Մօտաւորապէս 50 անձէ բաղկացած թուրք հրոսակաւոր մը յանկարծ երեւան եկաւ եւ իր առաջին յարձակումը պորձեց ձիւնի եւ Սիհուն գետերուն մէջտեղը՝ Ատանայի մօտիկ , Եիսէլիլի դաշտին մէջ , Շէխ-Մուրատ գիւղին վրայ եւ անոր հայ քնակիչներէն եօթ անձեր իրենց կիներուն եւ զաւակներուն աչքին առջեւ խողովողելէ ետք՝ կայծակի արագութեամբ իր արշաւանքը շարունակեց դէպի Տարսոն եւ անկէ ալ ճամբան դարձնելով ուղղուեցաւ գէպի Տէօթի-Եսլի կողմերը : Ֆրանսական զօրքեր չուտով այս հրոսակները հարածկու ելան : Ատանայի հայերն ալ՝ Մկրտիչ Եփրեմեանի գլխաւորութեամբ , խումբ մը կամաւորներ ճամբայ հանեցին հրոսակները հարածկու : Միւս կողմէ՝ անգլիացի զօրքերն ալ ջանապիւրով միներուն , հրոսակները յաջողեցան ասպատակել Մըզըրտազ եւ անկէ ալ անյարապան անձանթ ուղղութեամբ :

Այս յանկարծական հրոսակային միջադէպը արդէն պատահած եւ որոշ խուճապային դրութիւն մը առաջ բերած էր Ատանայի մէջ, երբ Մարաշէն հոն հասան խումբ մը հայ պատգամաւորներ, որոնք դիմեցին նախ Տամատեանին եւ յայտնեցին թէ Մարաշի թուրքերը լսած ըլլալով անգլիական զօրքերու մօտաւորու մեկնումը, սկսած են հայերուն սպառնալ որ իրենցմէ ոչ մէկը ողջ պիտի ձգեն անդլիացիներուն մեկնումէն ետք: Պատգամաւորները՝ յանուն Մարաշի հայերուն՝ Տամատեանէն խորհուրդ կը հարցնէին թէ պէ՞տք է իրենց քաղաքէն մեկնին ջարդէ ազատելու համար: Տամատեան պատասխանեց որ այսպիսի ծանրակշիռ պարագայի մը մէջ ինք չի կրնար նախաձեռնութիւն ունենանի իրենց խորհուրդ տալու, բայց լաւագոյն է որ իրենք եւ ինք միասին դիմեն Քոլոնէլ Պրեմոնին եւ անոր խորհուրդին համաձայն շարժին: Ըստ աճմ, պատգամաւորները եւ Տամատեան դիմեցին Քոլոնէլ Պրեմոնին, որ տուաւ հետեւեալ պատասխանը. «Անգլիացիք քանի՜ հետեւեալ, ձիաւոր կամ թնդանօթաձիւ որ ետ քաշեն Մարաշէն՝ Պրանսական բանակը անմիջապէս նոյնքան հետեւեալ, ձիաւոր եւ թնդանօթաձիւ զօրք պիտի կեդրոնացնէ անոնց տեղը Մարաշի մէջ, որով ձեր մտահոգութիւններն ու կասկածները բոլորովին անտեղի են: Գացէք կատարեալ վստահութեամբ մնացէք ձեր տեղերը»: Քոլոնէլին այս պաշտօնական հաւաստումը որեւէ տարակոյսի տեղի չէր թողուր, որով պատգամաւորները վերադարձան Մարաշ եւ հանգստացուցին իրենց մտահոգութեան քաղաքակիցները:

Հոկտեմբերի աւարտին անգլիական բանակներուն Կիլիկիայէն մեկնումը ամբողջապէս կատարուած էր:

Քիչ ժամանակ անց, Ձէյթունի եւ Ֆնտըճաքի կողմերէն յուրեր հասան թէ թուրքերը այդ կողմերը հրոսակային շարժումներու սկսած էին եւ թէ օսմանեան զօրքերն ալ կը մօտենան Ձէյթունի սահմաններուն: Կիլիկիոյ Վեհ, Կաթողիկոսը, Պատուիրակութեան ներկայացուցիչը եւ Աղդ. Միութեան դիւանը միասնաբար դիմում ըրին Քոլոնէլ Պրեմոնին, որ անոնց պատասխանեց յայտարարելով թէ ոչինչ պիտի պատահի այդ կողմերը, զի ոչ միայն Փրանսական բանակը կը հսկէ, այլեւ Փրանսական իշխանութիւնները քիւրտերէ եւ չերքէզներէ կամաւոր գունդեր կազմած են՝ ի հարկին Ֆնտըճաքը եւ Ձէյթունը թուրքերու յարձակումներէն պաշտպանելու համար: Տամատեան ի պատասխան ըստ. «Ձարժանալի՜ բան, Ֆնտըճաքի ու Ձէյթունի հայերը յանձնե՛լ քիւրտերու եւ չերքէզներու պաշտպանութեան»: Դեկտեմբերի մէջ նոր յուրեր հասան թէ բաւական թուով հայեր Ֆնտըճաքէն ու չըջակայ դիւզերէն թուրքերու կողմէ չըջապատուած էին: Այս անգամ հայերը նոյն խումբով դացին Քոլոնէլ Պրեմոնի մօտ ու բողոքեցին եղած խժուրժութիւններուն համար: Քոլոնէլը պատասխանեց թէ ինք ալ ստացած է նման տեղեկութիւններ ու կը ցաւի որ այսպիսի անկարգութիւններ պատահած են: Տամատեան, որ միեւնոյն բազմոցին վրայ նստած էր

Բոլոնէլ Պրեմոնի մօտ, շարամտութեամբ հարցուց Բոլոնէլին. «Կ'ուզէինք իմանալ թէ այս պատահած անկարգութիւններու ընթացքին ի՞նչ հղած է Ֆրանսական իշխանաւորներու կողմէ գինուած քլւրտ եւ չերքէզ կամաւոր գունդերուն բռնած զիրքը»: Բոլոնէլը, որ վերելի մոռցած էր առաջին տեսակցութեան մէջ իր ըրած յայտարարութիւնը եւ Տամատեանի դարմացական պատասխանը, հարցուց անոր թէ ի՞նչ կամաւոր գունդերու մասին է խօսքը: Տամատեան պատասխանեց. «Այն գունդերու մասին, որոնց Ֆրանսական իշխանութիւններու կողմէ կազմուած ու դիմումած ըլլալը յայտարարեցիք մեր վերջին տեսակցութեան ընթացքին»: Բոլոնէլ Պրեմոն. «Ի՞նչ կ'ըսէք, ես այդպիսի խօսք չեմ ըսած»: Տամատեան. «Պարոն Բոլոնէլ, Լեթ գուբ այդ յայտարարութիւնը չըրիք մեզի, ուրեմն ես պարզապէս խաբերայ մըն եմ, եւ այդ պարագային՝ ի՞նչպէս կ'ըլլայ որ ինծի պէս մէկը կը նստեցնէք ձեր զովը»: Բոլոնէլ Պրեմոն. «Ձեմ բտեր որ սուտ կը խօսիք: Միայն թէ չեմ յիշեր իմ կողմէ այդպիսի յայտարարութիւն մը հղած ըլլալը»:

Այս միջադէպերէն քիչ յետոյ, 1920 Յունուարին, ծայր տուաւ Մարաշի թուրքերուն ապստամբութիւնը:

1920-ի Յունուարի սկիզբը Մարաշի թուրքերը, ինչպէս կանխաւ հայերուն ազդարարած էին, ապստամբեցան Ֆրանսական իշխանութեանց դէմ եւ իրենց թաղերուն ու տուներուն մէջ գիրք բռնելով՝ սկսան կրակել Ֆրանսացիներուն եւ հաբերուն վրայ: Ֆրանսական ուժերը կը բաղկանային մէկ քանի վաշտ ալճերիացի ու սենեկալցի զօրքերէ, Հայ Լեգէոնի փոքր զօրամասէ մը եւ վաշտ մըն ալ բուն Ֆրանսացի դիմուորներէ: Ասոնք ճակատեցան թուրք ապստամբներուն դէմ: Մարաշի հայերն ալ իրենց տուներուն մէջ ամբանալով, իրենց զէնքերը դարձուցին թուրք թաղերուն վրայ: Քաղաքին մէջ թուրքերու եւ հայերու թաղերն ու տուները տեղ տեղ իրարու խիստ մօտիկ ըլլալով, հայերը թուրքերուն մէկ քանի տուները գրաւեցին եւ թուրք թաղերու մէջ դառնուած հայերու տուները պարպեցին: Նաեւ Հայ թաղերու մուտքերը պատնէշներով փակեցին: Այս կերպով քաղաքը երկու ընդդիմադարձ ճակատներու բաժնուած հղաւ: Հրացանաձգութիւնները Լըկուստեք կը շարունակուէին դիւեր ու ցերեկ: Ֆրանսացի հրամանատարը՝ Ժեներալ Քերէթ, քաղաքիս այս վտանգաւոր կացութեան մասին հեռագրական տեղեկութիւններ հասցուցած էր Ատանա, ուր կը գտնուէր Ֆրանսական զրաման բանակին գլխաւոր հրամանատարը՝ Ժեներալ Տիւֆիէօ, որ անդիլացիներու մեկնումին առիթով հազիւ ամիս ու կէսէ ի վեր հասած էր Կիլիկիա: Ժեներալ Տիւֆիէօ ազնուական ծագումով Ֆրանսացի մըն էր, ճշմարտախօս, ուղղամիտ ու արդարասէր: Արդ, Ժեներալ Տիւֆիէօ Մարաշի Ֆրանսական ուժերը եւ քաղաքացի հայերը թուրքերուն չարձակումներէն ազատելու եւ թուրք ապստամբները զրպակելու համար, Ատանայէն գէպի Մարաշ ճամբայ հանեց ուժեղ զօրասիւն մը՝ Բոլոնէլ Նորմանի հրամանատարութեան տակ: Զօրասիւնը

Մարաշի առջև, հասա. փետրուարի առաջին շաբթուան մէջ եւ իր արագածիդ թնդանօթներուն հարուածները ուղղեց թուրքերու զիրքերուն վրայ: Թուրքերը, որ տասնեօթ օրէ ի վեր կը կռուէին, այս օդնադօրքին Թնդանօթներու հարուածներուն շերտալով դիմանալ՝ կ'որոշէն անձնատուր ըլլալ: Անմիջապէս իրենց հարուածները կը զաղբիցնեն, իրենց զիրքերուն վրայ ճերմակ դօշակներ կը սլարդեն եւ իրենց ապստամբապետներէն Տօքթ. Մուսթաֆան՝ ճերմակ դօշակի ձեռքին, կը զրկեն դէպի Պրանքօ-հայկական զիրքերը՝ հաստութիւն առաջացնելու համար: Եւրօ օրը երկեղեկան դէմ երկուստեք հրացանաձգութիւնները զադրած էին ու քաղաքին հայերը ուրախ դուրսի յաղթական երգեր կ'երգէին: Իսկ Տօքթ. Մուսթաֆա, որ բանակցութեան եկած ու ամերիկեան հիւանդանոցին սրահը առաջնորդուած էր՝ այնտեղ անհամբեր կը ապստէր ժամանումին Փրանսացի բանակցանքներուն, որոնք կ'ուշահայէին: Արդարեւ, Փրանսացիները՝ հակառակ օրուան յաղթանակին՝ նոյն օրը դպրոցի հրաման ստացած էին Մարաշէն անմիջապէս նահանջելու, եւ բոտ աշիմ՝ մոռցած նոյնիսկ թուրք բանակցաց Տօքթ. Մուսթաֆան, որ իրենց կը սպասէր, քաղաքէն դիշխանց զաղտադուլի մեկնելու պատրաստութիւնները կը տեսնէին: Այն միջոցին որ Տօքթ. Մուսթաֆա կը սպասէր, հայ Կռուողներէն մէկը՝ ղէյթունցի Սարգիս, պատահամբ ընկերոջ մը հետ կը մտնէ ամերիկեան հիւանդանոցը եւ հոն կը տեսնէ Տօքթ. Մուսթաֆան ու իր ընկերոջը վրէժացնէ թէ ասիակ Տօքթ. Մուսթաֆան չէ: Ընկերոջը հաստատական պատասխանին վրայ. «Ան այստեղ ինչ գործ ունի» ըսելով, կը քաշէ ասորճանակը եւ կը կրակէ անոր վրայ: Տօքթ. Մուսթաֆա թաւալդոր գետին կ'իւնայ ու կը փչէ վերջին շունչը: Պրանսացիք որ յետոյ խմացան եղերական մահը թուրք լժիշկին, որ իրենց զինուորական պատուոյն վստահելով իրբեւ բանակցաց իրենց զիծերուն մէջ մտած էր, այլեւս անոր անունը բերան առնելու համարձակութիւնը չունեցան:

Պրանսացոց Մարաշէն մեկնելու կարգադրութիւնը սկիզբէն կարծուեցաւ որ ժեներայ Տիւֆիէօ-ի կողմէ զօրասիւնի հրամանատար Քոլոնէլ Նորմանին տրուած գրաւոր հրամանովը եղած է: Հայերէն ումանք ալ այդ կարգադրութիւնը վերադրեցին Մարաշի Փրանսական ուժերու հրամանատար Զօրավար Քերէթին, որ իրր թէ փախուստի ճամբան րոնած է իր օձիքը ապաստելու համար: Յետոյ առնուած տեղեկութեան մը համաձայն, Զօրավար Քերէթ երբ տեսցած է մեկնումի հրամանը, լացած է Մարաշի կոտիւն տրուած այս անփառունակ փախճանին համար: Բայց հրամանը Արեւելքի Փրանսական ուժերու վերին հրամանատար եւ Սուրիոյ ու Կիլիկիոյ Բարձր Քոմիտէի Զօրավար Կուրոյէն էր, հետեւորար անտարկելի էր եւ վերջնական:

Պրանսացիները փետրուար...-ի* երկեղեկան դէմ զաղտնի տեսնելով

* Ընկ. Տիգրան Պոյադեան իր «Հայկական Լեզունը...» գիրքին մէջ կը յիշատակէ Փետր. 8-ը, իբրեւ բուսական փրանսական ուժերու նշեալ հաւաքման վ.Ղ.:

մեկնումի րուրը պատրաստութիւնները, զիշերը յանկարծ կը մեկնին քաղաքէն, իրենց րուրը ուժերը՝ հայ լեզէոնականներն ալ միասին՝ կը տանին քաղաքին դուրսի կողմը բանակած զօրամասին մէջ, որ անմիջապէս կը տփսի նահանջի շարժումին: Քաղաքին հայերը, նոյնիսկ անոնք, որոնք զիշեր ցերեկ Ֆրանսացւոց սպայակոյտի անդամները կը պատուասիրէին իրենց տուներուն մէջ, անտեղեակ կը թողուին անոնց մեկնումին: Միայն քաղաքին ծայրամասերու հայերը տեսնելով Ֆրանսայիներուն մեկնիլը, անոնցմէ շատեր իրենց ունեցած ամէն բանը ձգելով՝ խուճապահար կը հետեւին Ֆրանսացիներուն եւ այս վերադիւր չորս հազարի չափ հայեր կ'ընկերանան նահանջող զօրքերուն:

Երանապոլիներու այս յանկարծակի նահանջովը հայերուն նոյն օրուան յաղթական ջնճութիւնը կը փոխուի կորանքի եւ յուսահատութեան. իսկ թուրքերը յանկարծ կը մոռնան իրենց պարտութեան խոստովանութիւնը եւ անձնատուութեան պատրաստութիւնները, ու կը վերսկսին առաջնանէն բոլոր վերադիւր իրենց յարձակումները հայկական թաղերու վրայ: Մէկ-երկու օրուան մէջ 8-10 հազար հայեր կը ջարդեն ու այս ջարդերը պիտի շարունակուէին մինչեւ վերջին հայը, եթէ քաղաքին քրիստոնեայ հոգեւորականները՝ յանձինս հայ կաթողիկոսի Առաջնորդ Արքիարեան Աւետիք Արքեպիսկոպոսին, հայ Առաքելական Եկեղեցւոյ առաջնորդին, հայ աւետարանականներու քարոզիչ հովիւին եւ լատիններու ժողովրդագետին, չփութային ժողովուրդին փրկութեանը համար սոսրապրել թուրք ապստամբներու կողմէ իրենց ներկայացուած զոյնմի հեռագիր մը, ուղղեալ Կ. Պոլսոյ ներքին դործոց նախարարին, որուն մէջ, ի միջի այլոց, կը յայտնուէր. «Ֆրանսացիք այս երկիրը պալով, դարերէ ի վեր իրարու հետ եղբոր պէս ապրող իսլամներն ու քրիստոնեաները իրարու ձգելէ ետք՝ կորսուեցան պաշին»:

Գալով նահանջող Ֆրանսական ուժերուն եւ անոնց ընկերացող հայ փախտականներուն, ասոնց ուղեւորութիւնը կատարեալ աղէտի մը կերպարանքն ստացաւ: Առաջին երկու օրերը թէպէտ կը ձիւնէր, օդը մեղմ էր, այնպէս որ ճամբորդութիւնը՝ թէեւ դժուար՝ արտասովոր նեղութիւն մը չէր պատճառեր: Երկրորդ օրուան երեկոյին, նահանջողները հասան Պէշ-Փունար եւ այնտեղ դիշերեցին: Փոսի որ իջեալին մէջ աղբան մեծ բազմութեան համար տեղ չկար, շատեր, մանաւանդ փախտական հայերը, ստիպուեցան բացօթեայ պառկիլ: Գիշերը սկսաւ սոսկալի ձիւնամրրիկ մը: Բացօթեայ պառկողներէն շատեր տեղն ու տեղը ստուցան ու ձիւնին տակ թաղուեցան: Մնացեալները առտուն ճամբայ ելան զինուորներուն հետ զէպի իսթահիլ, մինչ ձիւնի փոթորիկը կը շարունակուէր: Եւ մնացողները, յողածները ճամբուն վերայ վիշխեցին կը սառէին: Այճերիացի եւ մարտքի զինուորներէն շատերուն ոտքերը եւ ձեռքերը սառած էին: Անոնցմէ շատեր չկրնալով իրենց հրացանները իրենց ձեռքին մէջ պահել՝ ճամբուն վրայ կը նե-

տէին: Նահանջը այս դժնդակ պայմաններու մէջ շարունակուեցաւ, մինչեւ որ զինուորները եւ հայ փախստականներէն վերապրողները հասան Ատանա: Պէլ-փունարի մէջ եւ անկէ ասդին իսլահիէի ճամբուն վրայ ձինամբրիկին զոհ դացած հայութեան թիւը կարելի է հաշուել երկու հազար: Վերապրողները եւ զինուորներէն շատեր զրեթէ կիսամեռ վիճակի մէջ հասան Ատանա եւ օրերով դարմանուեցան իրենց առողջութիւնը վերադտնելու համար: Այս վերապրողներուն թիւին մէջ կը գտնուէին, ի միջի այլոց, հոյանտացի կաթողիկ քահանայ մը, որ Ատանայի հայ երեւելիներուն յայտարարեց թէ Փրանսացիք ստիպուած չէին Մարաշը լքելու, մանաւանդ որ թուրքերը անձնատուր բլլալու վրայ էին. ուստի առանց հերքումի ենթարկուելու վարելի է ըսել թէ այս նահանջին դրդապատճառը քաղաքականութիւնն էր, ինչպէս կը հաստատէին նաեւ ամերիկացի միսիոնար մը եւ կաթողիկ վարդապետ Հայր Մայճեան: Այս վերջինը ընկերացաւ Կիլիկիոյ Վեհ. Սահակ Կաթողիկոսէն, Աղղ. Պատուիրակութեան ներկայացուցիչ Միհրան Տամատեանէն եւ Աղղ. Միութեան անդամներէն բաղկացած պատուիրակութեան մը, որ Զօրավար Տիւֆիէօ-ին ներկայացաւ Մարաշի աղիտալի նահանջին ղէմ բողոքելու եւ լուսարանութիւններ պահանջելու համար: Մայճեան Վարդապետ Զօրավարին առջեւ ներկայացուց իր ականատեսի վկայութիւնը Մարաշի անցքերուն եւ նահանջի պարագաներուն վրայ, ու նկարագրեց ճանապարհին աղիտալի նեղութիւնները եւ հաղարաւորներու կորուստը ձիւներուն տակ: Զօրավար Տիւֆիէօ վերջին աստիճան ընկճուած էր ի յուր այս մեծ ազէտին: Ան պատգամաւորութեան բացէ ի բաց յայտարարեց թէ ինք՝ որ Կիլիկիոյ ուժերուն գերադույն հրամանատարն է, բնաւ երբեք հրամայած չէր այս նահանջը, որուն պատասխանատուութիւնը ուրիշ տեղ պէտք է փնտռել, եւ աւելցուց թէ իր զինուորական պետերուն պիտի բողոքէ այս աղիտալի նահանջին բուն պատասխանատուներուն ղէմ:

Մէկ քանի օր ետք, Տամատեան Քոյունէյ Պրեմոնին ուղղեալ նամակով մը կը բողոքէր Մարաշի «ղայթաղալի» նահանջին ղէմ, վերհանելով Փրանսացիներու մեկնումէն ետք քաղաքին մէջ տեղի ունեցած կոտորածը տառնակ հաղարուսը հայերու: Քոյունէյը Տամատեանի այս բողոքի արտայայտութենէն զգածուած՝ այդ բողոքագիրը վը հաղորդէ Զօրավար Տիւֆիէօ-ի, որ նամակով մը Տամատեանէն բացատրութիւն կը պահանջէ թէ «Ի՞նչ է պատճառը իր քաղաքականութեան այս դիմափոխութեան, ինք որ մինչեւ հիմա միայն Փրանսասէր արտայայտութիւններ ունեցած էր»:

Զօրավար Տիւֆիէօ-ի նամակին հետ միաժամանակ՝ Տամատեան կը ստանայ Քոյունէյ Պրեմոնէն գոց պահարանի մը մէջ փակուած պատճէնը այն «գղջումի հեռագիր»ին, զոր Մարաշի հոգեւոր պետերը ուղղած էին Կ. Պոլսոյ ներքին գործոց նախարարին եւ որ Կիլիկիոյ հետազոտական դիւերէն անցքի միջոցին ընդօրինակուած ու հաղորդուած

էր Ֆրանսսական իշխանութեանց :

Տամատեան պատասխանելով Զօրավար Տիւֆիէօ-ի նամակին, պարզապէս դրեց հետեւեալ իմաստով. «Իմ քաղաքականութիւնս որեւէ փոփոխութիւն կրած չէ: Իմ քաղաքականութիւնս է առանց կեղծիքի խօսիլ: Եթէ այս քաղաքականութիւնը ձեզի հաճելի չէ, ինծի կը մնայ մեկնել աշտուղէն: Եթէ Մարտի նահանջը գայթակղալի կոչեցի, այդ որակումը միայն անոր համար չէր որ անոր երեսէն հայերը այնքան մտրդկային եւ նիւթական կտրուտներ կրեցին, այլ նաեւ այն բանին համար որ անոնք բարոյապէս նուաստացումի ենթարկուեցան: Քոլոնէլ Պրեմոն սուսնց մեկնարանութեան ինծի կը հաղորդէ պատճէնը երեւութապէս ստրկական հեռադրի մը, զոր Մարաշի հոգեւոր պետերը՝ իրենց ժողովուրդը կտտորածներէ ազատելու համար՝ ստիպուեալ են ուղղել Թուրքիոյ ներքին զործոց նախարարութեան եւ որով փայտանեն Ֆրանսացիները: Այդ հեռադրի ստորագրողները հարազատ Ֆրանստէրներ են, անոնցմէ մին, օրինակի համար, Արփուրեան Արքեպիսկոպոսը՝ հայ Կաթողիկ պատրիարքոս եկեղեցական մըն է, որուն Ֆրանսաստրկութիւնը ամէն կտակածէ վեր է եւ որ սակայն կատարուած այս նահանջին հետեւանքով այդ բարոյական նուաստացման ենթարկած է ինքզինք՝ իր ժողովուրդին բնաջնջումը կասեցնելու իրեն վերջին միջոց»:

Զօրավար Տիւֆիէօ փութալով պատասխանել Տամատեանի այս դրութեան, անոր հաւաստեց թէ բարձրօրէն կը գնահատէ իր պարզած քաղաքականութիւնը, որ իր ալ քաղաքականութիւնն է: Գալով խնդրոյ նիւթ հեռադրին, ինք տղ հեռադրին համար չի մեղադրեր զայն ակամայ ստորագրողները, այլ անոր ալ պատասխանատուութիւնը կը ծանրացնէ թուրք վայրադ. պաշտօնատարներու վրայ, որոնք եաթազաններու սպառնալիքին տակ բռնութեամբ ստորագրել տուած են այդ հեռադրերը:

Ֆրանսացի վարիչներուն եւ Պատուիրակութեան ներկայացուցիչին միջեւ առաջ եկած միջադէպը այսպիսով փափուեցաւ: Բայց մնաց հայերու նիւթական ապահովութեան Ֆրանսացիներու կողմէ երաշխաւորուելուն խնդրին հարցը: Զօրավարը հարց ներկայացուցիչներուն հաւաքարար այս մասին ըրած կրկնակի դիմումներուն եւ պահանջներուն ի պատասխան, վերջապէս յայտարարեց թէ Կիլիկիոյ Ֆրանսական գրաւումը չ'ենթադրեր որ Ֆրանսա պատրաստ է ամէն պարագայի մէջ երաշխաւորել գրաւուած հողամասերու բնակիչներուն փենաց եւ ընչից ապահովութիւնը: Այդ ապահովութիւնը պարագաներէն կախում ունի: Ներկայ կացութիւնը պատերազմական կացութիւն մըն է, եւ ինչպէս որ Ֆրանսայի մէջ պատերազմի ընթացքին բանակը երբ ըստիպուի քաղաք մը կամ դիրք մը լքել՝ նկատի չ'առնել լքուած տեղին բնակչութեան ապահովութիւնը, նոյնպէս է նաեւ պարագան Կիլիկիոյ քաղաքներու հայ բնակչութեան, որ կրնայ տուժել գինուորական դոր-

ծողութիւններու կամ նահանջներու հետեւանքով: Հայ ներկայացուցիչները Զօրավարին պատասխանեցին թէ Ֆրանսա պատասխանատու է թուրքերոյ մէջ իր պրտած հոգամասերուն բնակչութեան եւ նիւթական ապահովութեան, քանի որ տրուած ըլլալով թուրքերուն բարբարոսական վաթադութիւնը, մուսուլմանութիւնն ու վրէժխնդրութեան անխնայ հակամիտութիւնը՝ Վարկի չէ հայ ազգաբնակչութիւնները մէկ օրէն միւսը լքել իրենց բախտին, ինչ որ իրենց բնաջնջումը պիտի նշանակէր:

Մարաշի նահանջին սոթի տեղի ունեցած այս բանալէճերէն հայ երեւելիները միանպամընդմիշտ համոզում պոյացուցին թէ իրենց ժողովուրդին նիւթական ապահովութիւնը երաշխաւորուած է Ֆրանսական գրաւումին պարզ իրողութեամբը, ալ թէ իրենք պէտք է միշտ պատրաստ ըլլան զէնքի ուժով ապահովելու իրենց ինքնապաշտպանութիւնը:

Մարաշի զէպքը, ուրեմն, ազդանշանը եղաւ կիլիկիոյ ամէն կողմը հայերու ինքնապաշտպանութեան ներուժ չարժումին:

Ուր որ թուրքեր ապստամբական կամ չեթական չարժումներու սկսան, իրենց զէմը դառն՝ բացի Ֆրանսացի զօրքերէ՝ հայ վամուսուրական ուժեր, որոնք մեծապէս օգտակար եղան՝ կասեցնելով թրական չարժումին ծաւալումը:

Փետրուարի մէջ Հաճընէն յուր եկաւ թէ թուրք չեթներ եւ միլլի զինուորներ յարձակած են Վահկայի, Շար-տերէի, Թումուլուի եւ ուրիշ չըջակայ գիւղերու եւ գիւղաքաղաքներու վրայ ու կը պատրաստուին պաշարելու Հաճընը: Հաճընցիները նիւթական օգնութիւն եւ ուղղամթերք կը պահանջէին՝ զիմադրելու համար իրենց վրայ յարձակողներուն: Պատուիրակութեան ներկայացուցիչը եւ Ազգ. Միութիւն զիմեցին Քոլոնէլ Պրեմոնին, որ անմիջապէս 800 մարդէր եւ 900.000 փամփուշտ ճամբայ հանեց զէպի Հաճըն եւ անկէ դատ՝ Հաճընի հայ կառավարիչը՝ որ թուրքերէ մէկն էր, պաշտօնանկ ընելով՝ անոր տեղ իբրեւ կառավարիչ գրկեց՝ զիմոցներուն առաջարկութեամբը՝ փախտաբան կարապետ Չալեանը, որ կորովի անձնաւորութիւն մըն էր (հրնչակեան): Նաեւ գովելով հաճընցիներու զիմադրութեան պատրաստակամութիւնը՝ իր կողմէն խոստացաւ անոնց չուտով օգնութիւն հասցրեալ:

Մէկ քանի օր ետք Ատանա հասան Հաճընի Առաջնորդ Սարաճեան Պետրոս Եփեսոպոս, հայ աւետարանականներու քարոզիչը եւ ուսուցիչ Շմաւոն Փոթթոյեան, որոնք գոյթեցին որ թուրքերը սկսած են ամէն կողմէ պաշարել Հաճընը:

(Հոս կ'ընդհատուի այս յաւաքըութիւնը եւս:)

ՅԱԻԵԼՈՒԱՆ

Այս բաժնով ընթելցողին ուշադրութեան կը յանձնուին նիւթեր, որոնք անմիջական կապ մը ունին Տամատեանի յուշերուն հետ:

Այդ նիւթերէն մեր կողմէ պայմանականօրէն «Արփիարեանի սպանութիւնը» խորագրեալ հատւածը, մեզի անծանօթ պատմառով, դուրս մընացած է Տամատեանի յուշագրութեան այն մասէն, զոր հրատարակութեան տուած է ընկ. Պետրոս Տեփայեան: Այլապէս այս հատուածը իր տեղը պիտի գտնէր յիշեալ երախտաւոր ընկերոջ «Միեկան Տամատեան» գիրքին (Պէյրութ. 1964) 107 եւ 108-րդ էջերով տրուած տեղեկութիւններու կողքին:

Դալով Օգոստոս 4-ի եւ 5-ի դէպքերու պատմութեան վերաբերող գրութիւններուն, անոնք թէեւ ընկ. Միքայէլ Նաթանեանի կողմէ լոյսին տրուած են Պոսթոնի ռաւկավար – ազատական օրկան «Պայքար» տարեգիրքի 1953-ի հատորով, բայց ուզեցինք այս գիրքին մէջ եւս ամփափած ըլլալ զանոնք, նախ՝ քանի որ սերտ առնչութիւն ունին թերաւարտ յուշագրութեան հետ, եւ ապա՝ որովհետեւ նշեալ տարեգիրքով հրատարակուած նիւթերուն եւ ձեռագիր բնագրին բազմաթիւնը երեւան բերաւ տպագրական թէ այլ կարգի թերիւններ, զորս ուզղած ենք այստեղ:

Վ. Ղ.

ԱՐՓԻԱՐԵԱՆԻ ՍՊՍՆՈՒԹԻՒՆԸ

Վերակազմեալներու կողմէ կատարուած փոխարէժի այս սպանութիւններէն ետք, հնչակեան հին ու նոր հատուածներու միջեւ եղբայրասպանութեան դէպքերը ա՛լ ի սպառ դադրեցան: Եւ երկու հատուածները իրր երկու առանձին կուսակցութիւններ ընթացան իւրաքանչիւրը իր սեփական ճանապարհով:

Վերադառնանք Արփիար Արփիարեանին: Ատիկա 1905-ին կը հըրաւիրուի Եղիպտոս իր այնտեղի բարեկամներէն: Այնտեղ՝ կ'անցնի ճէպէճեանի եւ Տոքթ. Ն. Քէչէճեանի հրատարակած «Լուսարեր» թերթին խմբագրութեան գլուխը, եւ քիչ ետք կը ստանձնէ նաեւ խմբագրութիւնը «Եփրակ» գրական հանդէսին, որ Վահան Թէքէեանի եւ Միքայէլ Կիւրճեանի կողմէ հիմնուած էր Գահիրէի մէջ: Արփիար «Լուսարեր»ի մէջ ալ սկսաւ շարունակել Արզուեանի եւ իր արբանեակներուն դէմ «Հայ Հանդէս»ին մէջ բացած պայքարը, մերկացումներ ընելով առնոյ Կ. Պոլիս եւ այլուր կատարած արկածախնդրական եւ ոճրագործական շահատակութեանց մասին:

1906-ի սկիզբները Կ. Պոլսոյ մէջ կը սպաննուի ազգային բարերար Աբիկ Էֆենտի Ունճեան՝ Արզուեանի գործակիցներուն ձեռքով, որոնք «Հայ յեղափոխական գործին ի նպաստ» իրմէ սպառնալիքով մեծաքանակ գումար մը ուզած բայց մերժումի հանդիպած էին: Ունճեան Աբիկ Էֆենտիի սպանութիւնը վերջին կաթիլը եղաւ կուսակցութեան մասնաճիւղերու դժգոհութեան բաժակին յորդելուն համար. զի մասնաճիւղերը քիչ մը ամէն տեղ, մասնաւորապէս Ամերիկայի մէջ, սկսած էին խլրտիլ կուսակցութիւնը անդունդէ անդունդ վարող այս գործիչներուն դէմ: Այս խլրտումին առաջին պոռթկումը տեղի ունեցաւ Ամերիկայի մէջ, խլրտում՝ զոր չկրցան զսպել ո՛չ Ֆիչպուրկի պատգամաւորական ժողովով (1906 Յուլիս 1-8), ո՛չ Գահիրէի մէջ գումարուած Ընդհանուր Պատգամաւորական ժողովով: Ընդհակառակը, Ֆիչպուրկի ժողովին մէջ կուսակցութեան բողոքարկու մասնաճիւղերը բաժնուեցան Արզուեանի կողմնակից ստեղծութիւն ընկերներէն եւ քիչ

ժամանակ տնց Պոստոնի մէջ սկսան հրատարակիլ «Ազդ» պաշտօնաթերթը: Իսկ Գահիրէի պատգամաւորական ժողովը, որուն որոշումներուն համաձայն կուսակցութիւնը պաշտօնի դատադրական ձեւ մը պիտի ստանար, ու պիտի ունենար դիկտատորական բացարձակ իրաւասութիւններով կեդրոնական վարչութիւն մը, որուն անդամները չարքերուն անծանօթ պիտի մնային, պատճառ դարձաւ որ Եգիպտոսի եւ Երկրի մասնաճիւղերն ալ բաժնուին Արզուանի հետեւորդներէն:

Եգիպտոսի վերակազմեալները, երբ կուսակցութեան երկրորդ բաժանումը տեղի ունեցաւ, դիմեցին իրենց վաղեմի ընկեր Միհրան Տամատեանին (Աղեքսանդրիա) որպէսզի իրենց գլուխն անցնի: Տամատեան որ միեւնոյն ատեն Ամերիկայի նահանգային վարչութիւնէն ալ նշման զեկոյց մը եւ հրաւէր ստացած էր, նկատելով որ կուսակցական գործօն կ'անքէ իր մեկուսացման պատճառը այլեւս գոյութիւն չունէր, ութը տարուան պատասխանատուութենէ ազատ մնալէ ետք անգամ մըն ալ մտաւ կուսակցութեան գործօն ծառայութեան մէջ: Նոյն ընթացքը բռնեց նաեւ Լեւոն Մկրտիչեան, որ չորս տարիէ ի վեր հրաժարած էր կուսակցութեան գործերուն մասնակցելէ: Լեւոն Մկրտիչեանին ալ դիմած էին Եգիպտոսի եւ Ամերիկայի շրջանակները:

Արզուանները կուսակցութեան թէ՛ Ամերիկայի, թէ՛ Եգիպտոսի, թէ՛ Կիլիկիոյ եւ Փոքր Հայքի լաւալոյն ուժերուն իրենցմէ բաժնուելէն ետք եւս, փոխանակ զգաստանալու, առաջուանէն աւելի մեծ թափով շարունակեցին իրենց յախուոն եւ արկածախնդրական ընթացքը:

Նոյն 1906 թուականին՝ Կ. Պոլսէն «Ան ձեռք» ստորագրութեամբ սպառնադիրեր զրկեցին Եգիպտոսի մեծահարուստներուն, որոնցմէ մեծաքանակ գումարներ կը պահանջէին «ի նպաստ հայ յեղափոխական գործին», եւ սպառնալիքները գործնականի վերածելու համար, Ամերիկայէն ռաբրիկիչներ ճամբայ հանած էին:

Եգիպտոսի մէջ Արզուաններէն բաժնուած վերակազմեալները այս գիտաւորեալ ոճիւրներու առաջին առնելու համար ինքնարեւարար իրենց պաշտպանութեան տակ ստին սպառնալիքի ենթարկուած հայ հարուստները, եւ պէտք է ըսել որ իրենց ձեռք առած պաշտպանութեան միջոցները իրենց օգտակար արդիւնքը ունեցան, եւ հասնող ահարեկիչները մէկը միւսին ետեւէն ստիպուեցան ձեռնունայն Ամերիկա վերադարձի ճամբան բռնել:

Գալով Արփիար Արփիարեանի, թէպէտ Եգիպտոսի վերակազմեալ ընկերներուն այս հակառուորիստական գործունէութեան մէջ մասնակցութիւն չունէր, ինքն ալ իր կողմէ կը շարունակէր Լուսաքերին մէջ իր միակացումները Արզուաններուն դէմ ու հայ հարուստներուն կը խլաղրէր որեւէ դրամական վճարում չընել ի պատասխան ստացւած սպառնալիքներուն:

1907 Յուլիան, Նիւ-Եորքի մէջ Արզուեանի հետեւորդները ըս-
տանքին ղորդի մեծահարուստ վաճառական Յովհաննէս Թաւանճ-
եանը :

1908 Փետրուարի ակիդքները Եղիպտոսի Վերակազմեալ մասնա-
ճիւղերը տեղեկութիւն ստացած էին Ամերիկայէն նոր ահաբեկիչի մը
ժամանումին մասին, եւ ըստ այնմ իրենց պաշտպանողական հսկողու-
թիւնը բազմապատկած էին սպառնալիքի ենթարկուած հայ հարուստ-
ներուն շուրջ. բայց չէին կրցած մտածել թէ նոյն վտանգին պէտք էր
ենթակայ նկատել Արփիար Արփիարեանն եւս, որ արդէն անդամ մը
մահափորձի ենթարկուած էր Վիենտիկի մէջ նոյն Արզուեանականներուն
կողմէ: Եւ ահա, նոյն փետրուար ամսուն 9-ի գիշերը, Արփիար Ար-
փիարեան հրազէնի երեք հարուածով կը սպաննուի Գահիրէի մէջ, դէ-
պի իր ինակարանը տանող ճամբուն վրայ՝ Ամերիկայէն զրկուած Պետ-
րոս Հիւսեան անուն տիգրանակերտցի ահաբեկիչի մը կողմէ: Մարդաս-
պանը կը ձերբակալուի գիշերապահէ մը եւ ոճրադատ ատեանի դատա-
վճիռովը կախաղանի վրայ կը քուէ իր եղբունը:

Արփիարի սպանութիւնը մեծ յուզում առաջ բերաւ ամբողջ ազ-
գին, մասնաւորաբար Եղիպտահայութեան մէջ: Ո՛չ միայն մեծաշուք
յուզարկաւորութիւն մը վատարուեցաւ, այլեւ Գահիրէի Ս. Աստուա-
ծածին եկեղեցիին մէջ տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտօն մը եւ
յաւարտ եկեղեցական արարողութեանց՝ բողոքի միջոցով մը, որուն
ներկայ էին Եղիպտոսի ազգային բարձրաստիճան անձնաւորութիւննե-
րը՝ ժողովուրդի խոռենքամ բաղմութեան մը մէջ: Միջոցին զլիա-
ւոր ատենախօսն էր Միհրան Տամատեան, որ կուսակցական Կեանքի
մէջ Արփիար Արփիարեանի ընդդիմադիրներէն մին եղած էր, բայց կը
դատապարտէր քաղաքական մարդասպանութիւնը յանձին մարդու մը,
որ իր ամբողջ կեանքը մաշեցուցած էր ազգային գործերու մէջ՝ իբրեւ
գրագէտ, հրապարակագիր, երեսփոխան, իբրեւ հիմնադիրներէն մին
Հայոց Միացեալ Ընկերութեանց, իբրեւ ազատական միտք ու նաեւ իր-
բեւ յեղափոխական:

Քիչ մը վերը քննադատուած է Արփիարի վուսակցական կեանքը,
երեւան բերուելով իր նկարագրին թերի կողմերը ու գործած կարգ մը
սխալները, որոնց մեծագոյնն էր, անտարակոյտ, կողմնակցութիւնը
զոր ցոյց տուաւ երկար ժամանակ դէպի այն արկածախնդիր խմբակը,
որուն ոճիրները մերկացնելու քաջութիւնն ունեցաւ յետոյ եւ որուն
արիւնարբու վրէժխնդրութեան ալ զոհ գնաց ի վերջոյ:

Արփիար, 1895 Դեկտեմբեր 27ին, Պոլսոյ մէջ առաջին անգամ մա-
հափորձի ենթարկուած էր Հ.Յ.Դաշնակցութեան կողմէ, որովհետեւ
Պոլսոյ Դաշնակցութեան կոմիտէին մէկ անխորհուրդ պատգամին ան-
սաստած էր իր «Հայրենիք» թերթին մէջ:

ՕԳՈՍՏՈՍ 4-Ի ԵՒ 5-Ի ԴԵՊԵՏԵՐԸ ԿԻԼԻԿԻՈՅ ՄԷՋ

ՕԳՈՍՏՈՍ 4-Ի ԵՒ 5-Ի ԴԵՊԵՏԵՐՈՒՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Օգոստոս 4-ի առաւօտը, ժամը 10-ին, Աղզային Միութեան Հրաւերով, Միութեան սրահը Հրաւիրուեցան հայ երեք յարանուանութեանց հոգեւոր պետերը եւ Աղզ. Պաշտպանութեան Գերագոյն Մարմնի անդամները, ինչպէս նաեւ յոյն, ասորի, քաղզկացի եւ սուրիացի հասարակութեանց ներկայացուցիչները, որոնք միանալով Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան լիազօր ներկայացուցիչին եւ Աղզ. Միութեան անդամներուն հետ՝ կազմեցին Կիլիկիոյ Միջբրիտանեական Արտակարգ Խորհուրդը:

Պատուիրակութեան ներկայացուցիչը ժողովը բանալով լացատրեց անոր նպատակը, որ էր նոյն օրն Վսկ հռչակել Կիլիկիոյ անկախութիւնը Թուրքիայէն եւ անոր օժտումը ինքնօրէն վարչութեամբ մը՝ ֆրանսական մամուլայի տակ:

Ներկաները առանց բացառութեան համոզուած ըլլալով որ այլպիսի պատմական աֆթի մը ձեռնարկելու ժամանակն հասած էր այլևս, այդ ուղղութեամբ զգայացունց ճառախօսութիւններ տեղի ունեցան եւ ի վերջոյ՝ անօրինակ խանդավառութեան մը մէջ իրենց միաձայն քուէով եւ իրենց ստորագրութիւններով վաւերացուցին այն Անկախութեան Յայտարարութիւնը, զոր իրենց հաւանութեան ենթարկած էր Պատուիրակութեան Պր. ներկայացուցիչը:

Ժողովը որոշեց յիշեալ Յայտարարութիւնը նոյն օրն իսկ հանդիսաւոր կերպով ներկայացնել Կիլիկիոյ ֆրանսական վարչական Հակալէռի պետ Գնդապետ Պրեմանին:

Ժողովականները բազմաթիւ կառքերով ուղղուեցան կառավարչատուն եւ ժամը 12-ին (կէսօր) ներկայանալով Գնդապետ Պրեմանին, Պատուիրակութեան ներկայացուցիչին հակիրճ բացատրողական ճառէն

ետք՝ անոր յանձնեցին Անկախութեան յիշեալ տոբիւմանը :

Գնդապետ Պրեմոն, յետ ընթերցման, բարեացադամ վերաբերում մը ունեցաւ. եւ խոստացաւ այդ կարեւոր Յայտարարութեան ամփոփումը նոյն օրն իսկ հեռագրով հաղորդել Սուրիոյ եւ Կիլիկիոյ Բարձր Գեմիսէր Զօրավար Կուրոյին, իսկ ամբողջական ընագիրը անոր հասցնել առաջին թղթատարով, իր վողմէ հաղորդուելու համար Փրանսական կառավարութեան :

Ժողովականներու վերադարձին, արդէն ամբողջ քաղաքը դրօշազարդուած էր Փրանսական եւ հայկական դոյններով, եւ ամբողջ քրիստոնեայ ժողովուրդը անօրինակ խանդավառութեան ու ցնծութեան մէջ էր : Այսու ամենայնիւ, պաշարման վիճակին պատճառով՝ որեւէ համախմբութիւն կամ հանդիսութիւն տեղի չունեցաւ : Արդէն անդորրութեան անթերի պահպանման համար մասնաւոր միջոցներ ձեռք առնուած էին Ազգ. Միութեան կողմէ եւ հանդարտութեան ու խիստ կարգապահութեան հրաւիրող յայտարարութիւն մը ցրուած էր ժողովուրդին մէջ : Արդարեւ, ժողովուրդին վարմունքը անբասիր եւ օրինակելի էր :

ՕԳՈՍՏՈՍ 5-Ը

Օգոստոս 5-ին առտուն եւ կէսօրէն ետք Միջբրիտոնէական Արտակարգ Խորհուրդը դարձեալ ի նիստ դումարուեցաւ : Այս երկու նիստերուն մէջ ժողովը նկատի ունենալով որ Կիլիկիոյ քրիստոնէից Մարտ 31-ին եւ Մայիս 15-ին Խաղաղութեան Վեհաժողովին եւ Դաշնակից պետութեանց մատուցած հաւաքական բողոքագիրները որեւէ նպաստաւոր սրղիւնքի յանդած չէին եւ որ պաշտօնական Յայտարարութեամբ մը միայն հռչակուած Անկախութիւն մըն ալ կրնար նոյնպէս նկատի չառնուիլ ու թուղթի վրայ մնալ, նկատելով միւս կողմէ որ, ըստ հեռադրական տեղեկութեանց, նոյն օրն իսկ պիտի ստորագրուէր Սեւրի մէջ Թուրքիոյ հետ հաշտութեան դաշնագիրը եւ թէ վաւերացուած դաշնագրի մը դէմ հետադուրի ներկայացուած առարկութիւնները կրնային ներկատի չառնուիլ, հիմնուելով նաեւ ուրիշ կարգ մը նկատումներու վերայ, որոնք Անկախութեան աֆքին մէջ մի ու մի թուարկուած են արդէն, որոշեց իսկոյն գործնական հողի վրայ ղեկ կատարուած աֆքը : Առ այս, անմիջապէս Առեւտրային կառավարութեան մը կազմութեան ձեռնարկելով՝ միաձայնութեամբ ընտրուեցան եւ հռչակուեցան հետեւեալ անձնաւորութիւնները .

Տ. Միհրան Տամատեան վարչապետ

Տ. Տոքթ. Մնացականեան արտաքին յարաբերութեանց

(նախարար)

Տ. Տոքթ. Պեգիբեհեան ներքին (գործոց նախարար)

Տ. Կարապետ Ժամկուչեան պատերազմական

Տ. Անդրանիկ Կենճեան Լընժտից

Տ. Կսրապետ Նալպանտեան պարենաւորման եւ երկրագործական

Տ. Ժան (ասորի-քաղղէացի) կրթական

Տ. Նիքոլաքի էֆենտի դատական

Հաղորդակցութեանց եւ հանրագումար շինութեանց երկու աթոռները լաջ թողուցան ապագային յատկացուելու համար մէկը թուրքի մը եւ միւսը արաբի մը :

Որոշուեցաւ որ նոյն օրն իսկ ժամը 4-ին Առժ. կառավարութիւնը իր պաշտօնին գլուխն անցնի կառավարական շէնքին թուրք վուսաթալուքեան վերապահուած յարկաբաժիններուն մէջ. առ այս, հարկէր կանխաւ կառավարչատունը գրաւել, որո՞ւ համար յատուկ Յանձնախումբ մը ընտրուեցաւ : Յանձնախումբը հայ ոստիկաններու եւ ոստիկան-գինուորներու օգնութեամբ, ինչպէս նաեւ հեռաձայնի հայ պաշտօնեաներուն տրուած հրահանգներուն ճշդիւ գործադրութեամբը յաջող կերպով գլուխ հանեց կառավարչատան գրաւման գործը, առանց որեւէ անախորժ միջոգէպի : Կառավարչատուն բոլոր թուրք պաշտօնեաները մինչեւ յետին զոնապանը դուրս հանուած էին : Այս վերջիններուն տեղ զբոսած էին հայեր :

Ահա այս պայմաններու մէջ, ժամը ճիշդ 4-ին, Առժ. կառավարութեան անդամները, ի բաց առեալ յոյն Նիքոլաքի էֆենտիէն, որ բացակայ էր եւ Տիար Անդրանիկ Կենճեանէն, որ ուշացած ըլլալով յետոյ արդիւրեացաւ իր ընկերներուն քով հասնիլ, կառքերով առաջնորդուեցան կառավարչատուն, մինչ Ազգ. Միութեան սրահին մէջ Միջբիստոնէական Արատկարգ Խորհուրդը իր նիստը կը շարունակէր :

Կառավարչատան բակին մէջ հայ ոստիկաններ կարգ շարուած բարիւրդ կեցած էին եւ գինուորական մեծարանք ընծայեցին Առժ. կառավարութեան անդամներուն : Նոյնը տեղի ունեցաւ կառավարութեան շէնքին մէջ սանդուխներուն վրայ, մինչեւ նահանգապետին (վայլիկն) մեծ սրահը, ուր առանց որեւէ արգելքի մտան քրիստոնեայ պաշտօնեայինքը եւ կարգադիր Յանձնախումբի անդամոց շնորհաւորութիւններն ընդունելէ ետք, մինչ տեսնէր կը պատրաստէին պաշտօնական գրութիւն մը, ուղղեալ Գնդապետ Պրեմոնին, որով անոր պիտի ծանուցանէին տեղի ունեցած յեղաշրջումը, որ վերջ կը զնէր Կիլիկիոյ մէջ թուրքերու վարչութեան, յանկարծ ներս մտաւ Մ. Կիզ, Փրանսական Տեղեկատու Պիւրոյի պետը, որ Մ. Տամատեանէն բացատրութիւն պահանջեց այս անցուդարձերուն մասին, լսուին Գնդապետ Պրեմոնին - որ արդէն յարակից յարկաբաժինին մէջ իր պաշտօնատեղին ներկայ կը գտնուէր - հրաւիրեց զինք իր ընկերներով անմիջապէս հեռանալ կառավարութեան շէնքէն : Տ. Տամատեան պէտք եղած բացատրութիւննե-

ըլ տալէ հտք, միանդամայն աւելցուց թէ իրենք Փրանսացիներուն հետ որեւէ խնդիր չունէին, ընդհակառակը զանոնք կը նկատէին իրենց դաշնակիցները եւ բարեկամները, եւ թէ իրենք կ'ուզէին ամբողջ կազմով Գնդապետ Պրեմոնին ներկայանալ եւ պէտք եղած յայտարարութիւնները ընել իրեն՝ յանուն Միջբրիտանական Արտակարգ Խորհուրդին, որ կը ներկայացնէր Կիլիկիոյ ամբողջ քրիստոնեայ ազգաբնակչութեան ձայնը:

Մ. Կիլի գնաց Գնդապետ Պրեմոնին քով եւ քիչ ետք վերադարձաւ աւելի խիստ հրամաններով, որոնցմով կը հրաւիրէր ներկաները անմիջապէս հեռանալ կառավարչատունէն, հակառակ պարտադրին սպառնալով բռնոյն միջոցներու դիմել: Տ. Տամատեան իր պաշտօնակիցներուն ալ անուշովը յայտարարեց թէ իրենք վեց պատահական անձեր չէին, այլ ամբողջ քրիստոնէից կողմէ ընտրուած պաշտօնական մարմին մը եւ թէ իրենք հոն եկած էին Կիլիկիոյ քրիստոնեայ ժողովուրդներուն վճռական կամքին իրերէ արտայայտիչները եւ թէ այդ հանդամանքներու մէջ իրենք չէին կրնար հեռանալ մինչեւ որ իրենց քաջուելու հրամանը չկար Արտակարգ Ժողովէն, որ ամ փերմնաման նիստ կ'ընէր Ազգ. Միութեան ժողովասրահին մէջ: Անգամ մըն ալ հաւատեց թէ իրենք Փրանսացիներուն բարեկամներն էին եւ Ֆրանսան կ'ընդունէին իրերէ Կիլիկիոյ մանտաքէր (հողատար) պատուութիւն: Քացատրեց նաեւ թէ իրենք Ֆրանսայի հանդէպ իրենց ապացուցած սիրոյն եւ տեղական Փրանսական իշխանութեանց հաստատած պաշարման վիճակին պատճառաւ էր որ տառնձին իրենց կազմով եկած էին, փոխանակ հազարաւորներու թափօրով մը դալու, ինչ որ ամենայն դիւրութեամբ կրնային ընել եթէ ուզէին: Այս բոլոր քացատրութիւնները զուր էին սակայն: Մ. Կիլի ոչ միայն աւելի խիստ կերպով վը հրամայէր մեկնել եւ չէր ուզեր ոչ մէկ քացատրութիւն ըսել, այլ նաեւ վերցուց սրահին հեռաձայնի հաղորդակցութիւնը, որպէսզի ներկաները չկրնային դուրսի հետ յարաբերութիւն ունենալ: Այն ատեն Պր. Տամատեան կտրուկ կերպով պատասխանեց թէ «բռնի ուժի առջեւ միայն կրնային տեղի տալ»: Այս խոսակցութեանց միջոցին ասորի-քաղղէացիներու ներկայացուցիչ Մ. Ժան, տեսնելով որ դործը իր ակնկալածէն տարբեր հանգամանք կ'առնէ, խոհեմութիւն համարեց գողոնի կերպով սրահէն հեռանալ: Յաջորդաբար եկան Լէօթրնան Տէ ֓երիէն՝ թիկնապահ Մ. Պրեմոնի, եւ Գոմանտան Հոսէր, նոյն խիստ հրամանները տուին եւ միեւնոյն կտրուկ պատասխանը տացան Տ. Տամատեանին: Վերջապէս հասաւ ինքը՝ Գնդապետ Պրեմոնը, որ խիստ զայրացած եւ ինքնիրմէն դուրս ելած՝ ծանր բռնել արտասանեց եւ հրամայեց անմիջապէս մեկնել սրահէն: Տ. Տամատեան փրկեց թէ «ուժի առջեւ միայն կրնային տեղի տալ»: Ասոր վրայ Գնդապետը հրաման բրտաւ սուխաւորներ ներս մտնողներէն եւ բռնի դուրս հանելու «այս մարդիկը»: Քիչ ետք չորս սուխաւոր ալճերիացի զինուորներ ներս մտան եւ հրը Գնդապետ Պրեմոն,

Տ. Տամատեանը ցոյց տալով, «Արքեթ սէք օւ» («Ձերբակալեցէք այս մարդը») պոռաց, Տ. Տամատեան վալիին դրսեւդանէն ու թիկնաթռնէն, զորոնք գրաւած էր, հանդարտօրէն յառաջացաւ: Իրեն հետեւեցան իր չորս պաշտօնակիցները, եւ իրենց առաջնորդ ու հետեւորդ ունենալով սուրիսաւորները՝ կառավարչատան սանդղակներէն վար իջան գէպի բակը, ուր սպասող իրենց կառքերը մտնելով՝ ողջոյնի կեցած ոստիկաններու զոյգ շարքերուն մէջէն կառքերը յառաջացան եւ դուրս ելան կառավարչատան բակէն, ուղղուելու համար գէպի Հայ Ռուբինեան Ակումբը, զոր որոշեցին սոթամեայ կառավարչատուն հռչակել:

Քիչ ետք հոն հասան Ազգ. Միութեան եւ միւս ազգային մարմիններու ներկայացուցիչները եւ կացութեան վրայ երկար խորհրդակցութիւն մը ունեցան: Ընդհանուր տրամադրութիւնն էր կառավարչատան պաշտօնական շէնքէն դուրս շարունակել սկսուած ձեռնարկը:

Օգոստոս 6-ին անգամ մըն ալ Ազգային Խորհուրդ գումարուեցաւ, որուն հրաւիրուած միւս քրիստոնեայ հասարակութեանց ներկայացուցիչներէն ոմանք բացակայ դառնուցան եւ ոմանք ալ ներկայ ըլլալով ու զործին ամբողջ սրտով իրենց համակրութիւնը յայտնելէ ետք, յայտարարեցին թէ իրենց զործօն մասնակցութիւնը Փրանսական իշխանութեանց բացորոգ, հաւանութեան պայմանին կապուած էր այնուհետեւ: Հակառակ ծագած այս դժուարութիւններուն, որոշուեցաւ Առժ. վարչութիւնը պաշտօնի վրայ նկատել եւ այսպէս անցաւ Օգոստոս 6-ի օրը: Չմոռնաւ ըսել թէ որոշուած ըլլալով երեք օր քաղաքը դրօշադարձուած պահել, մինչեւ Օգոստոս 6-ի իրիկունը Փրանսական եւ հայկական եռադոյնները քաղաքին գրեթէ բոլոր քրիստոնէական շէնքերուն եւ իսնուութիւններուն վրայ կը ծածանէին:

Օգոստոս 5-ի օրը, կառավարչատան դրաման առթիւ, իբրեւ հետաքրքիր նոյն շէնքին բակը մտնող երեք հայեր ձերբակալուեցան, յայց քիչ ետք ազատ արձակուեցան: Եւօրեայ այս իրադարձութեանց ընթացքին ժողովուրդը պահեց իր հանդարտութիւնը եւ պաղարխունութիւնը, որով որեւէ անկարգութիւն կամ միջադէպ տեղի չունեցաւ: Այս Բերք օրերու ընթացքին զօրաւոր Փրանսական պահակախումբեր քաղաքին մէջ կը շրջէին:

Օգոստոս 5-ի օրը սակայն, ձերբակալուած էր հեռաձայնի հայ պաշտօնեայ մը՝ Թուրքերու, մասնաւորապէս իր տունը կծկտած մնացած վալիին եւ Փրանսացիներու միջեւ հեռաձայնի հաղորդակցութիւնը խանգարած ըլլալու ամբաստանութեամբ: Օգոստոս 7-ի առաւօտը յուր տարածուեցաւ որ Փրանսական իշխանութիւնք պիտի կախն յիշեալ հայ պաշտօնեան: Ասոր վրայ երեք հայ հոգեւոր պետերը ներկայացան Զօրավար Տիւֆիլօ-ին եւ խնդրեցին այդպիսի վճռական միջոցի չդիմել յիշեալ պաշտօնեային վերաբերմամբ: Զօրավարը բարեացակամ կերպով ընդունեցաւ այս խնդրանքը եւ իրօք հեռաձայնի հայ պաշտօնեան մասամբ ալ Պատերազմական Ատեանին առջեւ իր տուած

ճարտար սլառասխաններուն շնորհիւ՝ մէկ քանի օր ետք անսլառ ար-
ձակուեցաւ :

Հոգևոր պետերու այս տեսակցութեան առթիւ Զօրավար Տիւ-
ֆիէօ ազդարարած էր անոնց որ Աղգային խորհուրդը (միւս քրիստո-
նէից մասնակցութեան դադրելով՝ Միջքրիստոնէականը ալս անունը
տաած էր) , որուն նիստերուն շարունակուելուն մասին տեղեկութիւն
ստացած էր , պէտք էր ցրուէր վերջնականապէս եւ Աղգային Միութիւ-
նը միայն իր սովորական դործերով զբաղէր , հակառակ պարագային
զինու զօրութեամբ պիտի ստիպուէր ցրուել ժողովը եւ ձերբակալել
ժողովականները :

Օգոստոս 7-ին , Աղգային խորհուրդի Երեւոյեան նիստին , Հո-
գևոր պետերը ժողովականներուն հաղորդեցին Զօրավարին այս հը-
րամանները : Ժողովը նոյն օրը գումարուած էր Առժ . Վարչութեան
մշակած դործունէութեան ծրագիրը լսելու : Հոգևոր պետերու միջո-
ցաւ տեղի ունեցած այս զինուորական հրամաններուն հանդէպ Պր .
Տամատեան իրբւ . վարչակալու խօսք առնելով րսաւ . «Ստեղծուած այս
հանգամանքներու մէջ մանրամասն ծրագիր պարզելու պէտք չկայ :
Առժամեայ Վարչութիւնը տեսականապէս կը մնայ իր պաշտօնին վը-
րայ՝ ապաստական դիրքի մէջ : Իր առջեւ կը ներկայանան երկու ստի-
պողական գործեր : Ա . - ժողովուրդը շարունակել հանդարտութեան մէջ
պահել եւ որեւէ նոր բարդութեան առիթ չընծայել . Բ . - Սմէն առիթ
օգտուիլ՝ Փրանսական իշխանութեանց պարզելու համար հայերուն
անկեղծութիւնը իրենց հանդէպ և թիւրիմացութիւնները բաձնայով
անոնց վստահութիւնը չաճելու համար : Առանց այս երկու պայմաննե-
րուն յրացման՝ ուրիշ գործի վրայ մտածել աւելորդ է » : Տ . Տամատ-
եանի այս յայտարարութիւնները հաւանութեանը արժանացան բոլոր
ժողովականներուն , որոնք Առժ . Վարչութեան իրենց վստահութիւնը
յայտնելով՝ ժողովը ցրուեցաւ անորոշ պայմանաժամով : Մինչ այդ ,
Ազգ . Միութեան յանձնարարուեցաւ իր նիստերը շարունակել ըստ ա-
ռաջնոյն եւ պրագիլ առօրեայ գործերով :

Այնուհետեւ Առժ . Վարչութիւնը ժամանակ մը շարունակեց իր
նիստերը անչուի կերպով : Իր ծրագրին առաջին մասը - ժողովուրդին
մէջ հանդարտութեան պահպանում - դիւրին էր իրականացնել , եւ ի-
րօք , քաղաքին մէջ որեւէ անախորժութիւն չպատահեցաւ : Բայց երկ-
րորդ մասը , որ կարեւորագոյնն էր - Փրանսական իշխանութեանց հետ
յարաբերութիւն հաստատել - անկարելի եղաւ իրագործել : Զի անոնք
բոլորովին անհաշտ եւ անհամակիր վերաբերում ունեցան դէպի այս
չարժումը , եւ անոնց մերձեցման ամէն փորձ անյաջող անցաւ : Արդէն
Օգոստոս 5-ի աքթին յաջորդ օրն իսկ Փրանսական իշխանութիւնք ա-
մէն պաշտօնական յարաբերութիւն խլած էին Պր . Տամատեանի հետ
եւ սպառնալից ու հայ ազգին հասցէին անարգական բառերով լեցուն
պաշտօնական յայտարարութեամբ մըն ալ ազգին առաջնորդները

մովէ պերժէր (վատ հովիւներ) անուանակոչած էին: Այս հանգամանքներու մէջ այլեւս ոչինչ վարելի էր ընել: Այսուհանդերձ, Առժ. վարչութիւնը իր անուանական գոյութիւնը կը պահպանէր, իր վերջին յոյսը դնելով Հաճոյ արչաւախումբի ձեռնարկին վրայ: Զի եթէ յիշեալ արչաւախումբը իր ճանապարհին Սիւր կարենար. գրաւել, կարելի պիտի ըլլար Առժ. վարչութիւնը այնտեղ փոխադրել եւ աւելի նպատատաւոր պայմաններու մէջ բանակցութեան մտնել մեր դժկամակ Փըրանսացի բարեկամներուն հետ: Սակայն արչաւախումբին շուրջ ոգեւորութեան սրահաւը, որուն թաղմադիմի պատճառները զատ գլուխի մը մէջ թացատրած եմ, չուտով մեր այս յոյսն ալ փարատեց եւ Առժամեայ վարչութիւնը՝ առանց երբեք հրաժարած ըլլալու՝ գործնականապէս դադրեցաւ գոյութիւն ունենալէ:

Ատանա 14 Նոյեմբեր 1920

ՕԳՈՍՏՈՍ 4Ի ԵՒ 5Ի ԱՔԹԵՐՈՒՆ
ՏԵՂԻ ՏՈՒՈՂ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ ԵՒ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐԸ

Հետզհետէ կը տեղեկանամ որ Ատանայի մէջ Օգ. 4ին եւ 5ին տեղի ունեցած քաղաքական խիստ նշանակալից՝ եթէ չըսեմ նշանաւոր սնցքերը, արտասահմանի մէջ այլ ընդ այլոյ մեկնութիւններու եւ նոյնիսկ տեղ տեղ սուր քննադատութիւններու տեղի տուած են, ինծի համար գլխին է դուշակել թէ՛ ի՞նչ բանի մէջ կը կայանայ այս քննադատութիւններու բուն գաղտնիքը: Ամէնէն լուրջ կարծուած մարդիկը անպամ կը սաթաքին խոշոր գծուարութիւններու եւ բարդութիւններու ու անյաջողութիւններու հանդէպ: Ինչպէս ռամկին, նոյնպէս շատ անպամ եւ զարկացեալին աչքին գործ մը, ձեռնարկ մը լաւ եւ նպատակայարմար է, եթէ յաջողութեամբ պսակուի: Նոյն գործը եթէ չգտնէ ազնկալուած յաջողութիւնը, անմիջական յաջողութիւնը, անմիջապէս ծայր կու տան քննադատութիւնները: Մանաւանդ ի բնէ թերահաւատները եւ յոռետեսները, որոնք ոչ մէկ բանով գիտեն ոգեւորելի, առաջին անյաջողութեան վայնասունը կը փրցեն եւ կը սկսին պատասխանատուներ փնտռել: Քաղաքականութեան մէջ ալ «վա՛յ պարտըւողին» բացատրութիւնը իր տեղը ունի «վա՛յ վրիպողին» բանաձևին մէջ, միայն թէ՛ կը կարծեմ որ ներկայ պարագային մէջ քննադատները եւ դատախազները քիչ մը շատ աճապարած են, զի իսկապէս տակաւին շատ հեռու ենք վրիպած ըլլալէ այն նպատակէն՝ որուն կը ձգտէին Օգոստոս 4ի եւ 5ի պատմական աֆքերը, եւ ընդհակառակը ամէն ինչ ցոյց կու տայ թէ՛ գծուարութիւններու, բարդութիւններու եւ անախկաններու ընդմէջէն կրիկեան գործը հսկայաքայլ վճռեանայ դէպի (.....) նպատակը: Օգոստոս 4ի աֆքը պաշտպանելու համար շատ բան չունիմ ըսելիք, ըստ սրում մեր ամէնէն կատաղի քննադատ-

ներն անգամ կը հաւանին այդ աֆրին. կը հաւանին, միմիայն այն պատճառաւ որ Գնդապետ Պրեմոն բարեացակամ ընդունելութիւն ըրած է անոր...: Վա՛յ էթէ զէջ ընդունելութիւն ըրած ըլլար, այդ աֆրը իսկոյն կը դառնար կ'ըլլար անխոհեմ եւ վիսաակար քայլ մը...: Բայց որովհետեւ Օգոստոս Վի աֆրին տեղի տուող միւսնոյն պարագաներն էին որ պարտաւորիչ կը դարձնէին մեզի եւ Օգոստոս Յի աֆրը, հարկ կը դատեմ մասնաւորապէս այդ պարագաները վերլուծել եւ պարզել աշխտել:

Նախ պէտք է դիտեալ թէ՛ երբ Կիլիկիոյ հայերը եւ առհասարակ քրիստոնեաները իրենց Մարտ 31ի և Մայիս Յի հաւաքական քաղաքացիներով թրքական ռեժիմի վերադարձը վը մերժէին, զաւելաւ մը կամ կատակ մը չէր որ կ'ընէին, այլ գործը լըջօրէն առած էին՝ համոզուած ըլլալով որ թուրք տիրապետութիւնը իրենց համար մահացու պիտի ըլլար: Հետեւաբար, քանի որ Դաշնակիցները խույ կը ձեւանային իրենց բոլոր թախանձազին ազերսանքներուն և ամենարուտն քաղաքներուն, անհրաժեշտ էր որ դաշնագրին ստորագրուելէն առաջ առնէր հանդիսաւոր դործողութեամբ մը անգամ մըն ալ վճռականօրէն յայտնէին իրենց կամքը երկրին ապագայ բախտին նկատմամբ: Օգոստոս Վը եւ Յը Կիլիկիցիին համար բախտորոշ օրեր էին, զի ըստ մեր ունեցած տեղեկութեանց, այդ օրերէն մին նախընթերն էր եւ երկրորդը՝ օրն իսկ պաշտօնը ստորագրութեան: Որպէսզի ապագային կարելի չըլլար Կիլիկիցիին պահանջումներուն հակադրել սա շնական ստեղծութիւնը թէ՛ «ի նշ ընել, պաշնադիր մը կայ ստորագրուած, ստիպուած ենք յարգել մեր ստորագրութիւնը եւ գործադրել զայն», պէտք էր որ Կիլիկիոյ քրիստոնեաները նախ քան այդ դաշնագրի ստորագրուելուն նոր կացութիւն մը, կատարուած իրողութիւն մը ստեղծէին, կամ փորձէին ստեղծել: Քաղաքականութեան մէջ այս նկատողութիւնը, որչափ կը կարծեմ, առաջնակարգ կշիռ մը ունի: Արիկա մեր աֆրերուն տեսական կողմերէն մին կը ներկայացնէ:

Այն օրէն ի վեր որ Կիլիկիան տաղնապը սուր կերպարանք ունեցաւ, իմ սեփական գաղափարս եւ համոզումս եղած էր թէ՛ Կիլիկիան հարցի յուժանն բանային Կիլիկիոյ մէջ պէտք էր փնտռել: Ինչպէս որ Գեմալիստները աշտաղ կացութիւն մը ստեղծեցին, պէտք էր նոյնպէս այստեղ հակադիր կացութիւն մը ստեղծել: Հայկական պիւստողիտութիւնը արտատաճմանի մէջ իր զիմումներով անցոր պիտի ըլլար Կիլիկիան հարցը բարեք յուժումի մը յանգեցնելու, եթէ Կիլիկիոյ մէջ չըլլային իրողութիւններ, չըլլար իրողութիւն մը, որոնց կամ որուն վերայ կարենար յենույ ան: Մէկ խօսքով Կիլիկիան հարցին ծանրութեան կեղծոյնը նոյնինչ Կիլիկիոյ մէջ էր: Այս հիմնական տեսակէտովս կը բացատրուին այն բոլոր զիմումները, հեռադիրները, բողոքները եւ ձեռնարկները, զորս կատարած կամ կատարել տուած եմ բարաճուն ստատիստիկամը եւ վճռականութեամբ, ինչպէս ալն մարտական գոր-

ծողութիւնները, որոնց համար այնքան աշխատանք եւ այնքան նիւթական զոհողութիւններ ըրինք: Մի կարծէք որ քրիստոնեայ հասարակութեանց հանդէս բերած զեղեցիկ համերաշխութիւնը եւ միաձայնութիւնը կիրիկեան հարցին չուրջ, դերաշնչտ եւ ինքնաբերական բան մըն էր. այդ երեւոյթն ու կացութիւնը առաջ բերելու համար տեւական աշխատութիւններ թափած եմ, ինչպէս նաեւ այդ ուղղութեամբ աշխատած եմ արարական եւ նոյնիսկ թրքական շրջանակներու մէջ, չընտելով որ այս վերջիններու հետ այս ուղղութեամբ բանախօսութիւնները խանգարեցին մէկ քանի տխմարներ, բոլորովին խեղաթիւրելով անոր իսկական բնաւորութիւնը եւ նշանակութիւնը, եւ այս մասին որքան զգուշիկ նոյնքան յիմարական զրպարտութիւններ տեղացնելով վրաս՝ մասնաւորապէս արտասահմանեան հայ մամուլին մէջ: Ասիկա արդեւք մը չեղաւ, սակայն, որ ասիւի շրջահայեաց եւ խորհրդապահ ձեւով Հարունակէի երբեմն ուղղակի, երբեմն անուղղակի՝ ուժ եւ միտմամբ տալ տեղացի իսլամները իմութեւ պետականութեան դադափարէն ուժացնելու ձգտող ջանքերուն: Մասնաւորապէս քրիստոնէից միջեւ հաստատուած համերաշխական կապին զերագոյն արտայայտութիւնն էր Օգոստոս 4ի ափքը. անիկա առիթ եւ իրաւունք կ'ընծայէ մեր արտասահմանեան զխառնադիրութեան այսուհետեւ խօսելու եւ գործելու յանուն Կիլիկիոյ 275,000 քրիստոնէից: Անկախութեան Յայտարարութիւնը միաթամանակ թանկազին փոխանորդագիր մըն է տրուած Հայ Ազգ. Պատուիրակութեան ձեռքը: Իայց միւս կողմէ մենք իրաւամբ չուզեցինք միմիայն թուղթերով բաւականանալ: Թղթեր՝ գործող դաշնակից գիւնադէտները կրնային սրտի կատարեալ թեթեւութեամբ արհամարհել եւ մէկ կողմ չարտել: Ամանոսի եւ Տէօթ-Յուրի շրջաններու հայերուն առած մասնայատուկ դերքը (որ թէեւ տարածայնութեան պէս անկախութեան հռչակում մը չէր, բայց յայտնապէս դէպի այն բանը նախադատութեան մը երեւոյթը կ'ընծայեր), «Կիլիկեան Միջագետք»ի մէջ կատարուած կենդանի գործերը, եւ ի վերջոյ այնտեղ հռչակուած անկախութիւնը (որոնց մասին խօսած եմ «Ինքնապաշտպանութեան Գործ» զրուխին մէջ), Սիսի եւ Հաճընի վերադարձման համար արշաւախումբեր զրկելու երկիցս ձախողած ձեռնարկները, Ատանայի դուռ հայ քաղաքի մը վերածումը եւ նման իրողութիւններ եւ ջանքեր ուրիշ բան չէին, բայց միայն անհարկուած նոր կացութիւնը ստեղծելու ձգտումներ: Այս ամէնուն նուիրագործումը պիտի ըլլար Օգոստոս 5ի ափքը: Մենք շատ հեռահաս հետեւանքներ կ'ակնկալէինք մանաւանդ Սիսի եւ Հաճընի վերադարձման յաջող փորձէ մը եւ երեքուկէս ամիս շարունակ այս գործը իմ ամբողջ մտահոգութեանս եւ աքնութիւններուս առարկան եղաւ: Ամէն ճիգ թափեցի որ ոչ միայն այդ գործը յաջողէր, այլ մանաւանդ տեղի ունենար այն՝ դաշնագրի ստորագրութեան բուականէն առաջ, եւ այնուհետեւ միայն այդպիսի կատարեալ իրողութիւններու իբրեւ բնական հետեւու-

Թիւն՝ կ'ուզէի առաջ բերել Օդոստոս Ծի աֆքը, իայց եթէ արչաւա-
խումբի ձեռնարկը՝ ինքնապաշտպանութեան գլխուն մէջ բացատրուած
պարագաներով ձախողիցաւ, եթէ նոյնպէս՝ բացատրուած պատճառ-
ներով կիլիկիոյ հայութիւնը թէեւ ինքնապաշտպանութեան մէջ գե-
րազանց, սակայն անատակ հանդիսացաւ պահանջուած լայն չափով
կենդանի գործ մը առաջ բերելու, ասիկա պատճառ մը չէր որ գոնէ
նուազագոյն չափով գործ մը առաջ բերելէ հրաժարէինք: Մեզ չըջա-
պատող աննպաստ պայմաններուն մէջ ինչ որ վարելի էր եւ անյետա-
ձըգելի՝ այն կատարելցինք, եւ եթէ յաւագոյնը եւ կատարելագոյնը չը-
կըրցանք առաջ բերել, եղածը արժեցնել եւ արդիւնադործելը կ'ընայ
արտասահմանին, փոխանակ երեմիականներով եւ բալկան իննադատու-
թիւններով ժամանակ անցնելու:

Հաստատելու համար որ Օդոստոս Ծի աֆքը որքան անհրաժեշտ
էր, իբր նուիրագործումը Օդոստոս Գին, պէտք է բաւ մէկ թէ Օդոս-
տոս Գի իրիկունը Գնդ. Պրեմոն երկու հայերու առանձին առանձին սա-
խօսքերը ըսած էր. «Համոզուեցայ որ հայերը խնդրալիրներ, բողոքա-
գիրներ, փրոֆլամասիոններ (յայտարարութիւններ) գրելու մէջ աշխար-
հի առաջին ազգն են, իսկ դործ մը, աֆք մը յառաջ բերելու անընդունակ
են»: Այս անպամ սակայն աֆքը յաջողից գիրին, հոգ չէ թէ անիկա
չատ հաճոյք չպատճառեց յարգելի Գնդապետին: Այստեղ կէտ մըն ալ
կ'ուզեմ պարզել, որ կարծեմ վարկերութեան զուրկ չէ: Գնդապետին
դպացուցած էի հայկական բու տը մէն (գիտեալ հարուած) մը յառաջ
բերելու մեր արամալորութիւնները եւ այն պատճառները, որոնք մեզ
այդ եզրակացութեան բերած էին: Այդ պատճառներէն մէկ մասը փերը
յիշեցի, մնացեալներուն թիւ ետք պիտի անդրադառնամ:

Զինք սուսնէ բնիւս (հարցախուզելու) մէկ պատճառն ալ այն
էր որ Փրանսասէր քաղաքականութիւնը՝ հասկառակ ամէն բանի, իմ
նրդեգրած ուղեգծիս գլխաւոր առանցքը կը կազմէր միշտ եւ չէի ու-
զեր ընել բան մը, որ յայտնապէս եւ վերջնականապէս հակառակ ըլլար
Փրանսական հայեցակէտերուն, սակայն միեւնոյն ժամանակ երբեք
չէի հետեւած կոյր համակերպող քաղաքականութեան մը, միշտ պա-
հելով խորհելու, գործելու ազատութիւնս եւ անկախութիւնս, ըստ
որում երկու շահերը հաշտեցնելու մշտական միտումս երբեք չէր նշա-
նակեր հայկական կենսական շահերու գոհումը կամ զիջումը: Այդպիսի
ստրկամիտ քաղաքականութեան հետեւող չեղայ եւ չեմ կրնար ըլլալ
երբեք: Այդ քաղաքականութիւնը իր ջատագովներն ունի յանձինս Ա-
ռաջնորդին եւ կաթողիկոսին եւ զիս ուրիշներու, որոնց անուաները առ
այժմ կը վերապահեմ, բայց որոնց թոյլ չտուի որ վացութեան տէր
դառնային: Արդ, երբ Գնդ. Պրեմոնին անպաշտօն կերպով բացատրեցի
իմ տեսակէտներս, ինծի ըսաւ թէ՝ եթէ իմք հայ ըլլար՝ կատարելապէս
իմծի պէս պիտի խորհէր: Նոյնիսկ ինծի անձնապէս խոստացաւ ալ յար-
մար ժամանակը ինծի յայտնել...: Այդ ժամանակը սակայն երբեք չե-

կաւ...: ու երբ վերջին անգամ իրեն շնչտեցի թէ դաշնաւորը «ստորագրուելոյ» վրայ է եւ թէ կարելի չէ լուսթեամբ թողուլ «ը մեր իրաւունքները ոտնակոխ ըլլան, ինծի պատասխանեց թէ՝ իր կարծիքով արդէն ուշացած էիմք: Միևնոյն ատեն յայտնեց թէ այդպիսի գործ մը իրեն եւ ժենեւրային շահերուն ուղղակի վը հակառակէր. «Ասիկա մեզի համար անձնական խնդիր մըն է, ըսաւ. երբ այդպիսի դէպք մը պատահի, ուղղակի մեր պաշտօնանկութեան տեղի կու տայ, զի Ֆրանսական կառավարութիւնը պիտի խորհի թէ կ'ամ մենք համամիտ էինք եւ աչք գոցեցինք՝ փոխանակ արդիւնէր, եւ կ'ամ ա՛յնքան թերի էին մեր աշարքութիւնը եւ մեր տեղեկատու դիւաններուն կազմակերպութիւնը, որ չիրցանք կանխաւ տեղեկանալ եւ արդիւնէլ դէպքը - այս ալ կը նշանակէ անկարողութիւն»: Իրեն փափկօրէն զիտել սուի որ աղբի մը չահերը չէին կրնար «ստորագասուիլ անհատական շահերու եւ տեսակէտներու»:

Այս վերջին տեսակցութենէն մէկ քանի օր վերջն էր որ տեղի ունեցաւ Անկախութեան հռչակումը, որուն յաջորդեց Օգոստոս 29: Թերիւս Գնդապետը անձնապէս իրաւունք ունէր եւ խիստ հաւանօրէն իր պաշտօնանկութեան տեղի տուող պատճառներուն մէջ որոշ տեղ մը ունին կելիկեան վերջին իրադարձութիւնները: Վերողրեալ խօսակցութենէն կրնար դիւրաւ հետեւցնել թէ՝ որեւէ պատրանք չէի տածեր Օգոստոս 29 աքքին հանդէպ տեղական Ֆրանսական իշխանութեանց բռնելիք զիրքին նկատմամբ: Այս մասին զրաւոր փաստեր իսկ ունէի, որոնք յարմար ժամանակին երեւան պիտի հանեմ: Անոնք իրրեւ տեղական իշխանութիւն տարրեր ընթացք մը չէին կրնար բռնել տրամաբանօրէն եւ ըստ միջազգային օրինաց: Եւ կատարելապէս զիտէի թէ՝ նոյնչափ ճիշդ է որ եթէ մեր գործակիցներէն ոմանք ամբողջովին տեղեակ ըլլալին այս նախընթացներուն, ինչպէս նաեւ գործին առնելիք ընթացքին, ապահովապէս պիտի չհամարձակէին այդ քայլը առնելու: Արդէն առանց անոր ալ շատերը այնքան վարանոտ էին որ, այդ աքքը երբեք տեղի չէր կրնար ունենալ՝ եթէ եւ յանձն չառնէի գործին զլուխը անցնիլ: Տիւեմաշի (Երկընտրանքի) մը առջեւ վը գտնուէի, կ'ամ դիրքս վտանգել եւ կ'ամ աքքի զազաւարէն հրաժարիլ. բայց աքքը անհրաժեշտ կը նկատէի, ու երբեք վարելեան մը զզջացած չեմ անոր կատարումէն: Գալով դիրքիս ու պաշտօնիս, արդէն դաշնադրի «ստորագրումէն» ետք քանի որ երկիրը Թուրքիոյ պիտի ձգուէր - անկա ինքնին վերջ պիտի գտնէր: Ասկէ զատ Հայկական Միջագետքի անկախութեան յայտարարութիւններէն ետք, Ֆրանսական իշխանութիւնները զիս եւ Ազգ. Միութիւնը խստիւ կը ստիպէին այնտեղի գործը զատապարտելու, մէկ քանի պետեր, մասնաւորապէս դաշնակցական Վերածինը բռնադատելու որ երկրէն զուրս ելլէ, ինչպէս նաեւ հրաման ընելու որ այդ կողմերը գործող Հայկական Ուժերը ցրուին: Ասոնք անկարելի բաներ էին եւ կացութիւնը անտանելի դարձած էր: Ընդհակառակը մենք կը մտածէինք

Ատանայի աֆքովը այդ մասնակի դէպքերը օրինականացնել ու նուիրադորոժել: Միջանկեալ ըսենք թէ՛ Հայկական Միջպետքի մէջ Հայ Կուսակցականներու կողմէ՛ ձեռնարկուած զինուորական դործողութիւնները միայն քաղաքական նշանակութիւն չունէին, այլեւ քաղաքին պարենաւորման տեսակէտով խիստ մեծ կարեւորութիւն ունէին, այնպէս որ մենք ոչ կ'ուղէինք, ոչ ալ կրնայինք այդ ուժերը ցրուել, հակառակ որ իսկապէս կարգ մը ծայրայեղութիւններ գործուած էին, որոնց դէմ Փրանս. իշխանութեանց զայրոյթը շատ հասկնալի էր, բայց առանց որոնց ո՛չ քաղաքը պիտի կրնար պարենաւորուիլ եւ ոչ ալ Քարաթաշի ճամբան բացուիլ: Ֆրանսացիք թուրքերուն հանդէպ իրենց չարազանց խղճահարութեամբ մեզ եւ նոյնիսկ ինքզինքնին կ'ուղէին զրկել բացայայտ առաւելութիւններէ, բայց ի հարկէ մենք տարբեր կը մտածէինք եւ չէինք կրնար կուրօրէն համակերպիլ իրենց հրամաններուն: Անոնք որ դուքսէն կը դատեն, անկարելի է որ կարենան կատարելապէս պայծառ տեսնել իրերն ու զէպքերը: Շատ անգամ զէպքերու միջեւ իսկ ամենաչնչին մանրամասնութիւնները այնպիսի սերտ կապեր ունին իրարու հետ, որ մէկ ծանր վէտին փոփոխութիւնը ամբողջ գործին փոփոխութիւն կը յանդի: Այս խորհրդածութիւնը կ'ընեմ անգամ մըն ալ ձեզի ըսելու համար թէ Հայկական Միջպետքի ուժերու ցրուումը մեր գործին չէր գար եւ թէ ընդհակառակը մենք կ'ուղէինք անոնց բռնած դիրքը օրինականացնել: Ահա այս ալ մին էր այն պատճառներէն որ առաջ բերին Օգոստոս ձի աֆքը:

Օգոստոս ձի աֆքը անհրաժեշտ դարձնող ուրիշ շատ մը պարագաներ ալ կային: Բաւական է ուշի ուշով կարդալ Անկախութեան Յայտարարութեան «նկատելիւթեանը»՝ այս հանգամանքներուն եւ պատճառներուն թափանցելու համար: Այդ Յայտարարութեան՝ կացութիւնը չօշափող կէտերուն մէջ բառ մը չկայ որ իրականութեան հարազատ արտայայտութիւնը չըլլայ: Այնտեղ մասնաւորապէս շեշտուած են՝ երկրին անասնելի կացութիւնը ամէն տեսակէտով, երկրին մէջ բնական իշխանութեան մը չգոյութիւնը՝ զի թուրք կառավարութիւնը խրտուիլակ մը եւ խլիակ մըն էր: Ֆրանսական իշխանութիւններն անգամ չուարած եւ տպիկար՝ քաղաքին մէջ կրող կանոնը պահպանելու միջոցներէն գործի էին: Սուր, թալանը, անկարգութիւնները, խուճապները հանրութեան անգործութիւնը, ապահովութիւնը եւ մինչեւ իսկ քունը խանդարած էին: Հայկական ազգային իշխանութիւնք Փրանսական իշխանութիւններէ իրենց պտած քիչ քաջաբերին երեւեմ, իրենց վարկն ու հեղինակութիւնը կորսնցուցած էին յաշս ժողովրդեան, որով ազգային ներքին յարակցութիւնը եւ օրկանական կապը քայքայւած՝ ժողովուրդը իր ամբողջային բնազդներուն ձգուած էր, այնպէս որ ամէնէն ոտոր կիրքերը չղթայազերծուած, երկիրն ու քաղաքը մատնուած էին անիշխանութեան: Ատանա պաշարուած, իր եզերքի պար-

տէղներէն իսկ, գիշեր ցերեկ բուռն հրացանաձգութեան եւ ռմբակոծութեան ենթարկուած՝ վտանգաւոր դրութեան մէջ կը գտնուէր: Թէ՛ քաղաքին պաշտպանութեան եւ թէ՛ Հաճընի ազատարար արշաւանումբին համար հայ զինուորներու եւ կամաւորներու թիւը աւելցնելու անհրաժեշտ պէտքը կը տեսնուէր, եւ այս պէտքը տիրող ընդհանուր բարոյալքումին մէջ միմիայն պարտաւորիչ զօրակոչով մը կարելի էր լըրացնել եւ ասոր համար ալ նոյն պէտք կար Ֆրանսական արտօնութեան, որ կը զլացուէր միշտ, եւ երկրորդ՝ ազգային զօրաւոր եւ ազդեցիկ իշխանութեան մը գոյութեան կամ ստեղծումին: Այս ամէնուն վրայ պէտք է աւելցնել մանաւանդ որ Ֆրանսացիներու թէ՛ զինուորականապէս եւ թէ՛ քաղաքականապէս բռնած դիրքը եւ դիտաւորութիւնները վերջին աստիճան հակասական, անբացատրելի եւ կասկածելի էին, այնպէս որ այդ ամենավտանգաւոր ու տալանապալի օրերուն մէջ իսկ, ամէն վայրկեան կը վախցուէր որ Ֆրանսացիք օր մը յանկարծ քաղաքը եւ իրենց դիրքերը թողլով մեկնէին եւ հեռանալին երկրէն՝ բացարձակ խուճապի մատնելով անպաշտպան հարիւր հազարաւոր քրիստոնեաները, մանաւանդ զոչ այսպիսի տխուր նախընթացներու եւ անակնկալներու վարժեցուցած էին մեզի Ֆրանսացիք: Մարաշի, Սիսի, Այնթապի օրինակները թարմ էին ամէնուն մտքին մէջ: Ի՞նչ պիտի ըլլար մեր ժողովուրդին լախտը, եթէ այս տխուր կատակածները իրականանալին յանկարծ՝ առանց որ քրիստոնեայ ժողովուրդը օժտուած ըլլար կանոնաւոր եւ զօրաւոր վարչութեամբ մը: Ժողովուրդին ընդհանուր մահացուցիչ բարոյալքումը դարձանելու, անոր մէջ հաւատքը, յոյսը, խանդավառութիւնը վերահաստատելու տեսակէտով իսկ անհրաժեշտ էր ցնցող եւ տպաւորիչ դէպք մը: Օգոստոս 3ի աքթը տուեալ պայմաններու մէջ, ամէն տեսակէտով անյետաձգելի անհրաժեշտութիւն մըն էր ու կատարուեցաւ ան: Իմ մասնակցութիւնս այդ դէպքին՝ ինծի համար անխուսափելի բան մըն էր, ինչպէս վերջ ալ ակնարկեցի, զի վրնամ ըսել թէ՛՝ գործին գաղափարն իսկ իմ նախաձեռնութիւնս էր: Ասկէ զատ, եթէ դէպքը առանց իմ մասնակցութեան կատարուէր իսկ, դարձեալ իմ դիրքս վայրկեանապէս պիտի խախտուէր, ըստ որում՝ Ֆրանսական իշխանութեան հանդէպ այս աքթը կամ դատապարտելու եւ կամ պաշտպանելու եւ արդարացնելու երկընտրանքին մէջ պիտի գտնուէի: Բացայայտ է որ ինծի համար անկարելի էր զայն դատապարտել: Այսպիսի սուր եւ վճռական կացութեան մը հանդէպ Պատուիրակութեան ներկայացուցիչ Տաճատեանին թերեւս ներելի ըլլար վարանիլ, բայց անհատ Տաճատեանին անկարելի եւ աններելի էր այդ վարանումը:

Արդէն 14 ամսուան պաշտօնավարութեանս ընթացքին, մինչեւ այդ բախտավճիռ օրը, ամենամեծ համբերատարութեամբ դիւանդիտական ամէն կարելի եւ երեւակայելի աշխատանք թափած էի Կիլիկիոյ հայութեան շահերն ու իրաւունքները պաշտպանելու, ինչպէս նաեւ ռուսեղծուած ծանր կացութիւնը ի նպաստ մեզի օգտագործելու տեսակէ-

տէն: Այդ դիւանագիտական աշխտութիւնները, որոնք տրամաբանական երկար չլթայ մը վը կազմէն եւ որոնք ղէպրերու յառաջացման ընթացքին համեմատութեամբ հետզհետէ աւելի կորուլի եւ վճռական ձեւ մը առին, եկած հառած էին պատի մը առջեւ: Այլեւս զրեթէ ոչինչ կար ընելիք: Զայնը այլեւս գործողներունն էր: Եթէ դործը յառաջ բերաւ դիւանագիտական յարաբերութիւններու խլում, անոնք կրնան դիւրաւ վերահաստատուիլ՝ եթէ պարագաները նպաստաւոր դառնան: Հակառակ պարագային այդ յարաբերութիւնները իրենց նախկին օգտակարութիւնը կորսնցուցած են, քանի որ Ֆրանսական իշխանութիւնները մեր պահանջները ըստ պատշաճի յսկու տրամադրութիւն չէին ցոյց տար նոյնիսկ Օգոստոս 5էն առաջ, այլ՝ ընդհակառակը՝ կամայական, բռնապետական ընթացքի մը սկսած էին եւ վը շարունակեն հետեւիլ, օգտուելով պաշարման վիճակէն, զոր մի՛ միայն հայոց դէմ գործելու համար ստեղծեցին:

Անպաշտօն խօսակցութիւններու մէջ, զորս վերջերս ունեցայ զանազան բարձր պաշտօնատարներուն հետ, եւ իմ դիրքս բացատրեցի եւ անոնք ըմբռնեցին այն ինչ որ ճակատագրական էր, աւելի յայն հասկըցողութեամբ մը, քան թերեւս մեր արտասահմանեան սալոնի դիւանագէտներէն ոմանք...:

Կը կրկնեմ ինչ որ վերեւ ըսի, թէ չեմ գլջացած բնաւ այն առնուած քայլէն եւ անոր իմ անհրաժեշտ մասնակցութենէս. եւ իթէ Օգոստոս 4ի աքթը որեւէ նշանակութիւն մը ունեցաւ կամ պիտի ունենայ, այդ ալ ապահովապէս Օգոստոս 5ի գործողութեան կը պարտինք: Անոնք որ դիւրաւ եւ գործնական երկու անբաժանելի աքթերը իրարմէ կը բաժնեն, առաջինը ծափահարելով եւ երկրորդը դատապարտելով՝ ամենամեծ տխմարութիւնը կը գործեն: Իրբեւ թէ առաջինը Ֆրանսական կառավարութեան հաճելի եղած է եղեր, յայց երկրորդը առաջինին լաւ տպաւորութիւնը փարատած եւ Ֆրանսացիներու զայրոյթը եւ հակառակութիւնը հրահրած է եղեր մեր վրայ: Այսպէս մտածողները կը մոռնան թէ՝ դիւանագիտութեան խզմտանքը շատ յայն ու առած-դակն է: Անիկա եթէ գործին զայ, կը զիջանի ապստամբներու եւ դաւադիրներու հետ իսկ բանակցիլ հաւասարէ հաւասար, եւ մինչեւ իսկ Մուսթաֆա Քեմալի եւ արբանեակներուն պէս անարգ յեղուակներու եւ արիւնարբու մարդասպաններու հետ այնքան զայթակղական դիւնադադարներ կ'ենէ: Հետեւաբար մեր Օգոստոս 5ի աքթէն չէր որ անոնք պիտի խրաչէին. անոնք՝ համակիր թէ անհամակիր՝ ստիպուած էին մեզ արդիւնէլ, բայց մենք ալ ստիպուած էինք աքթը կատարել:

• • •

Կը մնայ վերջին, բայց ոչ նուազ վարեւոր բացատրութիւն մը: Արդարացի հարց մը կը ներկայանայ ամէն հեռուէն դիտողին առջեւ...

քանի որ Օղոստոս Յի Բաբր անհրաժեշտ կը նկատուէր, ինչո՞ւ ուրեմն անշուք կերպով կատարուեցաւ այն, փոխանակ անոր տալու մեծաճանդէս աշխարհացունց բնաւորութիւն մը:

Պէտք է ըսեմ որ այս փէտին մէջ ալ մենք ինքզինքնիւ եւ մեր դործը նսմացուցինք մի միայն ի սէր Ֆրանսայի: Մեր չափազանց Ֆրանսասիրութիւնը, Ֆրանսացիներու նկատմամբ մեր չափազանց փափկանըկատութիւնը եւ ուղիղ ընթացքը միակ պատճառն է մեր Բաբրին այնքան անշուք կերպով դործադրուելուն: Նոյն օրը, անկէ առաջ եւ մինչեւ անդամ այսօր իսկ Ատանայի մէջ մենք կացութեան բացարձակ տէրն էինք եւ ենք, հետեւաբար նոյն օրը մեզի համար ամենադժուրին դործ մը պիտի ըլլար 5000 հոգինոց վեհաշուք թափօրով մը կառավարչատուն երթալ ու զայն զրաւել, փոխանակ միայն 6 հոգիով երթալու: Ընդհակառակը, յատուկ յայտարարութեամբ մը ժողովուրդը հանդարտութեան հրաւիրեցինք եւ համախմբումները արգելեցինք, եւ այս՝ միմիայն յարգած ըլլալու Ֆրանսական իշխանութեանց յայտարարած պաշարման վիճակին տրամադրութիւնները, եւ որպէսզի մի գուցէ Ֆրանսացիները զինուորական միջոցներու գիմէին եւ անոր իրը հետեւանք՝ ընդհարումներ եւ արիւնահեղութիւն պատահէր:

Եւ - կը խնդրեմ լաւ ուշադրութիւն դարձնել սա կէտին - մեր այդ նախազգուշութիւնները այն բանին համարժէք չէին որ խնայուէր հայու արիւնը: Մեծ դադափարի մը համար, մեր ժողովուրդի կենսական չահերուն համար՝ մի քանի տասնեակ, կամ նոյնիսկ հարիւրեակ հայերու կեանքին զոհօրելը նշանակութիւն չունէր մեզի պէս դիտարկից եւ հայրենասէր ազգի մը համար: Բայց ինչ որ մեզի սոսկում կը պատճառէր, եւ որուն որեւէ պարագայի տակ կը խորչէինք եւ ընդմիշտ պիտի խորչինք տեղի տալ՝ այն էր որ այդպիսի ընդհարման մը պատահականութեան պարագային միակ Ֆրանսացի զինուոր մը, նոյնիսկ անեկալցի՝ վիրաւորուէր անհատ հայու մը կողմէ, կամ ալճերիացի զինուորի մը գլխակը ծակուէր հայու մը կողմէ արձակուած գնդակէ մը. զի այդ պարագային մեր ամբողջ դործը պիտի կրնար խեղաթիւրելու եւ այն երեւոյթը ստանալ որ, իբր թէ՛ հայերը ապստամբած ըլլալին Ֆրանսական զրաւման իշխանութեանց դէմ եւ անոնց դէմ գէնք արձակած: Ահա այս էր մեզ կաշկանդող միակ պարագան եւ որ մեզի թելադրեց այնքան շրջահայեցութեամբ եւ փափկանկատութեամբ շարժիլ, նոյնիսկ այն աստիճան վարեւոր նկատուած դործողութեան մը հանդիսաւորութիւնը եւ նոյնիսկ յաջողութիւնը վնասելու գինով: Այս ամենակարեւոր կէտը մենք այստեղ, զէպքէն յետոյ, առիթ ունեցած ենք համոզիչ կերպով պարզարտելու. Ֆրանսական իշխանութեանց, որոնք հիմա կ'ընդունին ու կը գնահատեն մեր իրենց նկատմամբ բռնած ընթացքին խղճահարութեան հասնելու աստիճան անկեղծ եւ ուղիղ հանգամանքը: Անշուշտ դուք ալ չէք մոռնար այս էական փէտը ի վեր հանել, ամէն անգամ որ առիթը ներկայանայ:

Այս դուրսը կարելի չէ վերջացնել առանց անգամ մըն ալ անդ-
րադատնալու մեր առած կորույթի քայլին հասանական արդիւնքներուն :
Հակառակ որ Ֆրանսացիք այս գէպքերէն ետք առերեւոյթս խստացու-
ցին իրենց վերաբերումը հայերուս նկատմամբ, հակառակ որ հալա-
ծանքի նմանող կեցուածք մը առին մեզի հանդէպ, բայց իրականին մէջ
վերջնականապէս համոզուեցան որ այստեղ անկարելի պիտի ըլլայ թըր-
քական դաշնադրի տրամադրութիւնները տառացիօրէն զործադրել՝ ա-
ռանց ծանր անպատեհութեանց եւ իրարանցումներու : Եւ որովհետեւ
տեղւոյն վրայ գոնուող եւ կիլիկիոյն առօրեայ կեանքին ականատես Ֆը-
րանսացիները բնականաբար աւելի պայծառ կը տեսնեն կացութիւնը
քան ի՛նչ ՏՕՐսէի մէջ իրենց հաշիւներուն եւ մասնաւոր տեսութիւննե-
րուն ու հայեցակէտներուն համաձայն ժողովուրդներու բախտը տնո-
րինել փորձողները, վստահաբար գիտենք որ այստեղի Ֆրանսական
վարչութիւնները կեդրոնէն եւ Պէյրութէն իրենց ստացած հրահանգնե-
րը զործադրելու ձեւեր առնելով հանդերձ, չեն դադրիր ամէն օր իրենց
հեռագիրներով եւ տեղեկագիրներով սրբոյն կացութիւնը եւ Զանալ
համոզել արտաքին գործոց նախարարութիւնը՝ Կիլիկիոյ մէջ Զանալ
ստեղծելու առանձին գոյափոխակ մը, որ զոնէ որոշ չափով մը համա-
պատասխանէ հայերու եւ միւս քրիստոնեաներու, ինչպէս նաեւ ուրիշ
տարրերու բաղձանքներուն : Այս ընդհանուր, բայց իրենց մանրամաս-
նութեանց մէջ իրարմէ տարրերու բաղձանքներուն իբրեւ նուազագոյն
արտայայտութիւնը՝ պահուած է «տեղական ինքնավարութիւն» բանա-
ձեւը՝ Թրանսալի բոնֆրոյի կամ մամուլիոյ տակ : Կիլիկիոյ մէջ տի-
րող ընդհանուր կարծիքն այն է, որ այս նուազագոյն պահանջին յաջո-
ղութիւնը երաշխաւորուած է այլեւս : Թուրք, իսլամ եւ առհասարակ ոչ
քրիստոնեայ ցեղերը կամաց կամաց սկսած են համոզում գոյացնել որ
գոնէ այս նուազագոյն պահանջի զործադրութեամբ միայն Վրկիբը
կրնայ իրադադութեան երես տեսնել եւ կարելի է ըսել թէ հաշտուած են
այս զազաւարին հետ : Տեղական մամուլը ազատօրէն կը քննասիրէ այս
ինչիբը՝ առ հասարակ նպաստաւոր տրամադրութիւններով : Թրքական
վարչութեան վերահաստատութեան դատը, բարեբախտաբար մեզի
համար, լրջօրէն վտանգուած է այս կերպով : Նոյնպէս գրեթէ ապահով
ենք որ Ֆրանսացիք հրաժարած վամ հրաժարելու վրայ են Կիլիկիան
երկուքի բաժնելու եւ հատուածներէն մին Սուրիոյ կցելու իրենց նախ-
կին գաղափարէն :

Ինչպէս կը տեսնէք, կիլիկեան կացութեան մէջ արդէն փոխուած
բան մը կայ եւ մեր պահանջներուն դոնէ մէկ մասը զոհացում գտնա-
լու երեւոյթն առած է արդէն, եւ այս ուղղութիւնէն անգամ մըն ալ յե-
տադարձ նահանջ մը անկարելիութեան պէս բան մը դարձած է : Ասիկա
միտթարական երեւոյթ մըն է, «Տեղ պրէյքիմկ աւ տիի այս» (սառցա-
հալ)՝ պիտի ըսէին անգլիացիները : Արտասահմանի հայկական դիւանա-
գիտութեան համար նպաստաւոր գետին մը պատրաստուած է՝ աշխա-

տելու որ հայկական շահերուն աւելի եւ աւելի համապատասխան տրամադրութիւններ ձեռք բերուին:

ԿԻԼԻԿԵԱՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ ԶԱՆԱԶԱՆ ՁԵՒԵՐԸ ԵՒ ԱՆՈՆՑ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆԸ

Հոս հարկ կը դատեմ, աւելի պարզութեան համար, մէջ բերել ու վերլուծել կլիկեան հարցի լուծման զանազան ձեւերը որ կրնան առաջարկուիլ:

1. Թուրք տիրապետութեան եւ վարչութեան վերահաստատութիւնը, ըստ դաշմագրի: Ասիկա, ինչ քննարկով եւ երաշխաւորութիւններով ալ որ չընտանաւ ըլլայ, բացարձակապէս անընդունելի է, եւ այլեւս խնդրոյ նիւթ չի կրնար ըլլալ ստեղծուած այս հանգամանքներուն մէջ:

2. Թրքական գերիշխանութիւն իր լայն իմաստով, բայց երկիրն օժտուած տեսակ մը տեղական վարչութեամբ մը՝ փրանսական վարչական քննարկին տակ. զրաւման զօրքերուն մէկ մասին առժամապէս պահպանուիմով՝ մինչեւ երկրին վերջնական խաղաղեցումը եւ նոր ռեժիմին քնակաման կերպարանք ստանալը: Ասիկա կը համապատասխանէ տեսակ մը թրքական «առանձնաշնորհայ նահանգ» մը կազմելուն, աւելի կամ նուազ պատշաճեցուած տեղական առանձնաշատուկ պայմաններուն: Ասիկա կրնայ որակուիլ «վարչական ինքնավարութիւն» բառով եւ կը յիշեցնէ նախկին Լիւանանը կամ նոյնիսկ անկէ պակաս բան մը: Եթէ մենք այսչափով դոհանայինք, ասիկա ներկայիս այլեւս բացարձակապէս չահուած բան մը կրնայ նկատուիլ: Ասիկա տեղացի թուրքերը եւ իսլամները կրնայ դոհանել, բայց քրիստոնեաները ո՛չ երբեք:

3. Թրքական անուանական գերիշխանութիւն, բայց երկիրն օժտուած վարչական եւ քաղաքական բացարձակ ինքնավարութեամբ փրանսական մանտայի տակ: Նախկին Արեւելեան Ռումէլիի կամ նախապատերազմեան չընտանի Եգիպտոսին պէս բան մը, բայց որուն մէջ տեղական բոլոր տարրերը բացարձակապէս համահասարակ քաղաքական իրաւունքներ պիտի վայելէն իրարու հանդէպ, ո՛չ մէկ տարրը զերաւելի ըլլալով միւսէն, զոնէ ըստ երեւոյթի, Ֆրանսայի բարի կամեցողութեանը մնալով իր շահերուն պահանջման համաձայն մէկ տարրը կամ միւսը ձեռքի տակ նպաստաւորել: Այս ռեժիմը միայն հայերուն եւ քրիստոնեաներուն բնդունելի կրնայ ըլլալ հակառակ պարագային, իբրեւ նուազագոյն չարիք: Զի այս ալ չարիք մըն է արդարեւ եւ կրնայ աստիճանաբար, անզգալիօրէն յանգիլ այս երկրին մէջ քրիստոնեայ եւ մասնաւորապէս հայ տարրին նուազումին ու տեղաբացումին, տուեալ ըլլալով մէկ կողմէ Ֆրանսական արդի արեւելեան քաղաքականութեան նենգամիտ եւ նուազ վստահելի ձգտումները, եւ միւս կող-

մէ թրքական յոյնիսկ անուանական գերիշխանութեան մնալուն հետեւանքով համիալամական էմքրիկներուն շարունակութեան մէկ հաւանականութիւնը: Հետեւաբար այս ոեծիմն ալ չ'երաշխաւորեր երկրին տեւական իտպադեցումը:

4. Երրորդ հատուածին մէջ նախատեսուած *ռեթիմը* որոշապէս (նեթըման) քրիստոնէապաշտպան եւ հալապաշտպան հակումով: Այսինքն, նկատի առնելով քրիստոնեաներուն եւ մասնաւորապէս հայերուն երկրին վիճակը կենսունակ եւ գործօն տարրը ըլլալը, հայերուն պատմական իրաւունքները եւ վերջին տառապանքներն ու զոհողութիւնները, անոնց քաղաքակրթական եւ զարգացական աւելի բարձր մակարդակը, վերջապէս անոնց վաշտակիցի եւ յաղթողի հանդամանքը, մինչ թուրքերը եւ միւս իսլամները մինչեւ այսօր կը շարունակեն մնալ անուղղայ թշնամիներ, քրիստոնեաներուն եւ հայերուն ապահովութիւնը գերակշիռ զիբք մը տեղական վարչութեան մէջ եւ այժմէն ձեռք բերուին այս մասին դաշնադրական հաստատուն երաշխաւորութիւններ: Մէկ խօսքով, հայերը ըլլան երկրին ամէնէն աւելի նպաստաւորն աւարը, կարենալ ազատօրէն զարգացնելու համար իրենց սեփական քաղաքակրթութիւնը, իրենց ցեղական աճումն ու բարօրութիւնը այս երկրին մէջ, որ իրենց հայրենիքն է: Այս ոեծիմը թէ եւ երբորդ հատուածի ոեծիմին անպատեհութիւններէն մէկ քանին նուազագոյն չափով կը բաժնուի իր մէջ, սակայն ներկայ հանդամանքներու մէջ կրնայ ընդունելի ըլլալ հայերու համար. զի քրքական անուանակամ գերիշխանութիւնը իր բոլոր անպատեհութեանց հետ առաւելութիւն մըն ալ ունի, զոր մեղի կը սորվեցնէ Թուրքիոյ ժամանակակից պատմութիւնը: Երկրորդ անուանապէս թրքական նկատուելով՝ բաց դուռ մը կը մնայ, որ մը չէ որ մը զայն միացնելու Մայր Հայրենիքին եւ իրադրուելու՝ մինչեւ Միջերկրական տարածուող Ամբողջական Հայաստանի ծրագիրը, որ մեր քաղաքական իտէայն է:

5. Կիլիկիեան անկախութիւնը քրքական ամէն գերիշխանութեան բարձումով, քաղաքական եւ վարչական ամենալայն ինքնավարութեամբ, նրախայի մանտային տակ: Այս ձեւը Թուրքիայէն բացարձակ անջատում կը նշանակէ, եւ Սուրիոյ մէջ ներկայիս կազմուած չորս տնկախ պետութեանց նման պետութեան մը կազմութիւնը: Այսպիսի անկախութիւն մը կրնայ երկու տարբեր ձեւի տակ ըմբռնուիլ: Առաջինը՝ իր ներքին կազմով եւ վարչական սկզբունքներով կը մօտենայ երրորդ հատուածին մէջ պատկերացուած ոեծիմին, եւ մենք այս հատուածին մէջ այս առաջին ձեւը միայն նկատի ունինք, երկրորդ ձեւը՝ որ իր կարգին չորրորդ հատուածի նախատեսած դրութեան աւելի առաջացած մէկ կերպն է - վերապահելով յաջորդ հատուածին:

Թուրքիայէն անկախ Կիլիկիա մը հաստատելով հանդերձ՝ Փրանսացիք կրնան արդարեւ անոր բնակիչներուն տալ հաւասարութեան, «հաւասար եւ արդար վերաբերում»ի այնպիսի կարգ ու սարք մը՝ որ

իրականին մէջ հայկական ազատ զարգացումին ճնշումն ու խեղդումն ըլլայ: Ասիկա արդէն Փրանսական զաղթային քաղաքականութեան որոշ ձգտումն ու յատկանշին է ամէն տեղ, - ամէնքը հաւասարապէս նպաստաւորել ձեւացնելով, իրականապէս ո՛չ մէկը նպաստաւորել, այլ ամէնուն զարգացումը խեղդել եւ միայն իրենց աղղեցութիւնը եւ տիրապետութիւնը տարածել եւ ամրապնդել: «Մեկախ» հռչակուած Լիբանանին Փրանսացիներէ տրուած (թէ եւ առժամեայ) Սահմանադրութիւնը - որուն պատճէնը զրկելով՝ ձեր մասնաւոր ուշադրութեան կը յանձնարարեմ - չափ հրահանգիչ ու թելադրական է այս նկատմամբ:

Այս ռեժիմը որեւէ գերակշիռ տարրի մը վրայ չկոթնելով՝ անդոյն, տարտամ, խառնածին վարչութիւն մը պիտի ձեւացնէ: Բարեկենսան խառնակութիւն մը, որուն մէջ ոչ մէկ խորհրդական իր պաշտօնակցին հետ պիտի ունենայ տեսակետներու եւ հակումներու նոյնութիւն: Անոնք պիտի չկրնան իրար հասկնալ եւ փոխանակ հասարակաց բարիքին համար աշխատելու, իւրաքանչիւրին ազատ զարգացումին խոչընդոտ պիտի հանդիսանան: Ասիկա «քառակուսի անիւով» կառք մը պիտի ըլլայ, վրաս մեր եղնիկ մատնեալքին բացատրութեամբը՝ «ի համազղկաց լծեալ այս կառք զարմանալիք»: Այս ռեժիմը Փրանսացիներու րացարձակ քմահաճոյքին ենթակայ, ուրիշ խոչոր վտանգ մըն ալ կը ներկայացնէ: Ֆրանսացիները պիտի կրնան անարգել կերպով մէկ տարրը միւսին դէմ հանել, բաժնել՝ տիրիւն համար, եւ առհասարակ գործադրել մէկը կամ միւսը այն հայալմնաս տարբեր ծրագիրներուն, որոնց մասին ընդարձակօրէն խօսեցայ առանձին գլուխի մը մէջ: Ֆրանսացիին հետ ո՛վ որ առանց կանխորոշ յստակ համաձայնութեան եւ պարտադիր յանձնառութիւններու, այլ խօսքով՝ առանց պայմանագրուած հաստատուն երաշխաւորութիւններու կը քալէ, անսլայման խաբուած է: Այս մասին ո՛րչափ ծանրանամ քիչ է: Ոչ միայն ամէն օրուան, այլ ամէն վայրկեանի փորձառութիւնն է որ ինծի կը թելադրէ այս նախազգուշացուցիչ տողերը:

6. Դարձեալ կիլիկեան անկախութիւն՝ Ֆրանսայի մանտայիմ տակ, րայց շրջապատուած հայաքանատ երաշխաւորութիւններով:

Այս ձեւը, ինչպէս ըսի, չորրորդ հատուածի նախատեսած դրութեան աւելի յառաջացելով մէկ կերպն է: Երկուքին մէջ գլխաւոր տարբերութիւնն այն է որ, մինչ առաջին ձեւին մէջ Սուլթանին անուանական ցերիշխանութիւնը կ'ընդունուի, որով երկիրը միջազգային օրէնքով տակաւին թրքական հողամաս մը կը նկատուի, առանց թուրք կառավարութեան կողմէ վարչական որեւէ ոտնձգութեան, երկրորդ ձեւին մէջ երկիրը արդէն անջատ եւ անկախ է Թուրքիայէն եւ կը կազմէ առանձին պետութիւն մը: Իսկ երկու ռեժիմներուն նմանութիւնը կը կայանայ այն բանին մէջ, որ երկուքին մէջ ալ հայ տարրն է որ առաւելակշիռ դեր մը եւ դիրք մը ունի երկրին վարչութեան մէջ: Այս ձեւն է որ նախատեսած եւ պահանջած ենք այն Անկախութեան Աֆքով, զոր

Հռչակեցինք Օգոստոս Աին: Այս ձեւը կ'ենթադրէ Փրանսացիներու եւ Կիլիկիոյ քրիստոնեաներուն եւ ի մասնաւորի Հայերուն սերտ զործակցութիւնը եւ Համերաշխ աշխատակցութիւնը երկիրը բարեկարգ վարչութեամբ մը օժտելու եւ անոր բարօրութիւնն ու յառաջդիմութիւնը ապահովելու համար: Եւրոպական, արդիական քաղաքակրթութեան ըսկզբունքներն են որ պիտի կիրարկուին այս երկրին մէջ, ինչ որ մահմետականներու դո՛ւնէ ժամանակաւորապէս վարչական - քաղաքական իրաւունքներուն սեղմումովը միայն կրնայ ապահովուիլ: Ասիկա մեծ զոհանք մը պիտի չըլլայ թուրքերուն ու մահմետականներուն համար, որոնք այլապէս ամէն կարգի ազատութիւններ եւ երաշխաւորութիւններ պիտի վայելէին, ինչպէս նաեւ օրէնքին տուելու քաղաքային բացարձակ հաւասարութիւն, իբրեւ Կիլիկիոյ ազատ քաղաքացիներ: Թուրք եւ իսլամներու քաղաքական իրաւանց այս ժամանակաւոր սեղմումը, սահմանափակումը անհրաժեշտ է, ոչ միայն որովհետեւ անոնք այս պատերազմին մէջ թշնամիներ եւ յետոյ պարտեալներ հանդիսացան, մինչ հայերս դաշնակիցներ եւ յաղթողներ եղանք, այլ նաեւ որովհետեւ անոնք Ձինդաղարի ընթացքին եւ մինչեւ այսօր իսկ ապացուցին եւ դեռ կը շարունակեն ապացուցանել թէ՛ անկարող են ըմբռնել զարուս յառաջդիմական ոգին, եւ թէ իրենք տակաւին միեւնոյն անհաշտ թշնամիներ են, միեւնոյն երկրաքանդ մոլեռանդներ եւ վայրենիները: Մեր նախընտրած այս ռեժիմով է որ կանխաւ զգուած պայմաններով եւ երաշխաւորութիւններով, Ֆրանսան պիտի յարգէ հայերու պատմական իրաւունքներն այս երկրին մէջ, անոնց ազատ զարգացման եւ բարգաւաճման, ինչպէս նաեւ ազատ ներդաշխութիւնը իրաւունքը՝ ըլլայ արտասահմանէն, ըլլայ թուրք տիրապետութեան ենթակայ չըջակայ եւհանդէսներէն: Ասիկա նաեւ պիտի ծառայէ իբրեւ հատուցում մը հայերու յանձն առած ճիգերուն եւ զոհողութիւններուն, ինչպէս նաեւ անոնց կրած տառապանքներուն եւ նիւթական անհաշուելի կորուստներուն թէ՛ պատերազմի ընթացքին եւ թէ մանաւանդ Ձինդաղարի երկարատեւ չըջանին, որ Կիլիկիոյ համար աննախընթաց տաղանայի եւ օրհասական պայքարի չըջան մը եղաւ: Այս չըջանին մէջ հայերու փառասուր ինքնապաշտպանութիւնը, դեռ մինչեւ այսօր շարունակուող դիւցադնական դիմադրութիւնը Քեմալիստներուն եւ այս կերպով Փրանսացիներուն մատուցուած թանկագին ծառայութիւնը՝ առանց օրինաւոր վարձատրութեան պէտք չէ որ անցնին: Թէ ո՛րչափ բանաւոր ու չափաւոր է մեր այս պահանջը՝ այդ արդէն բացայայտ է այն բանով որ, դեռ 1916ի վերջերը մեր հիմակուան պահանջած իրաւունքները Մ. Պրիանի դաշխճը, Յայնիսկ աւելի լայն չափով ու ծաւալով խոստացած էր մեզի՝ Հայկական Լեզգոնի կազմութեան բանակցութեանց մէջ: Լեզգոնը կազմուեցաւ, իրմէ սպասուած ծառայութեան տասնապատիկը կատարեց, ու վերջին մէկ տարուան ընթացքին Կիլիկիոյ հայը իր ազատագրութեան ամէնէն ծանրագին փրկանքը մճարեց, ու հիմա

ասպետական եւ ազատամիտ Ֆրանսան է որ պիտի զլանայ մեզի իր խոստումներուն վատարումը, այն Ֆրանսան, որ մեր ճիգերուն մէկ տասներորդը իսկ չընող եւ մենէ քաղաքակրթապէս անհամեմատ ցած մակարդակի վրայ դնուող ցեղերու, համայնքներու կամ աղանդներու ինքնավարութիւններ կը բաշխէ շոայշօրէն՝ մեզի մօտիկ սուրիական շրջանին մէջ։ Բայց մենք միայն իրաւունքի անունով ալ չէ՛ որ կը խօսինք, այլեւ յարմարութեան, պատշաճութեան եւ գործնականութեան անունով։ Երկիրը տեւականապէս խաղաղեցնելու, թրքական ոտնձգութեանց եւ համիսլամական էմքրիկներու վճռական կերպով վերջ մը դնելու եւ երկրին իրական բարգաւաճումը եւ յառաջդիմութիւնը բարաշխաւորելու լաւագոյն կերպն է այս միակ արդար եւ բանաւոր լուծումը կիլիկիան խնդրոյն՝ ներկայ հանգամանքներու մէջ, լուծում մը՝ որ միանգամայն մեր հայկական ապաւայ հեռապատկերները չի սրբեր, չ'անհետացնէր իսպառ։

Ես կը կարծեմ որ արդի Ֆրանսական քաղաքականութիւնը շատ զգուար պիտի ըլլայ բերել հաշտեցնել այս լուծումին, զոր Ֆրանսացիք - յանիրաւի անշուշտ - իրենց չահրուուն հակառակ վը նկատեն ընդհանրապէս։ Անոնք Կիլիկիոյ մէջ մնալ կ'ուզեն անշուշտ, բայց առանց որեւէ պայմանի։ Կ'ուզեն բնիկներուն (իմտիմէն - այս բառը իր փեթորաքիֆ (աղծառուած) իմաստով) հետ վարուիլ այնպէս ինչպէս իրենք յարմար կը դատեն Եւ մեր վողմէ քաղաքական որեւէ պահանջ կամ յաւակնութիւն զարմանք կը պատճառէ իրենց։ Կարծեմ առանց մեր բարեկամ Ֆրանսայի դէմ մեղանշելու, կրնամ դիտել այս առթիւ թէ՛ ո՛րչափ որ կիլիկեան խնդրին մէջ Ֆրանսայի կամքը գերակշիռ է, բայց եւ այնպէս Ֆրանսան միեակը չէ այս խնդրոյն գերիշխան կարգադրողը, մասնաւորապէս Անգլիոյ ձայնն ալ կշիռ ունի այս խնդրոյն մէջ։ Պէտք է աշխատիլ ձեռքի տակէ, առանց Ֆրանսան խորշեցնելու, Անգլիոյ բարեկամական միջնորդութիւնը եւ բարեխօսութիւնը ապահովելու։ Ֆրանսայի մօտ՝ մեր վերոյիշեալ հայկական պահանջներուն ի նպաստ։ Իմ կարծիքովս Կիլիկեան սքաթիւ մը պէտք է պատրաստուի ու կրնաքուի Փարիզի կամ Լոնտոնի մէջ, որուն մէջ լիուլի կերպով նախատեսւած եւ Երաշխաւորուած ըլլան հայկական շահերն եւ իրաւունքները այս երկրին մէջ։ Ելիմ չ'ալտօ Է ձգուի բախտին։

Կիլիկեցի հայը, որ այսօրն զոհողութիւններ յանձն առաւ, կը պահանջէ ու վը սպասէ որ դիւանագիտութիւնը այս արդիւնքը ապահովէ իրեն։ Անիկա կիսամիջոցներով չի գոհանար, լաւ համոզուած ըլլալով որ անոնք ներկայ խռովիւալ, քառասոյին ու կործանարար վիճակին ու պայքարներուն յաւերճացումը պիտի ըլլան։ Կիլիկեցին կը խնդրէ ու կը պահանջէ իր Պատուիրաւութենէն վերջին կորովով աշխատելու որ Կիլիկիոյ խնդրոյն լուծման մէջ այս վճռական ու դրական արդիւնքը ձեռք բերուի եւ րան չ'մնայ տարտամութեան, անորոշութեան ու մութի մէջ։ Այսչափ պայքարներէ ու յուսախաբութիւններէ հտք՝

Ֆորսնսացիներու հետ ամէն օր մէկ տարրեր չուանի վրայ լարախաղացութիւն ընելու սիրտ չունինք, մանաւանդ նկատի ունեցէ՛ք որ, մինչ անոնք բաց աչքով լարախաղացութիւն կ'ընեն, մեր աչքերը խնամքով կ'ապուած են...

Իբրեւ ամփոփում, կը կարծեմ որոշապէս հաւեցուցած ըլլալ Ձեզ որ կիլիկեցիին ակնկալած զոյալիճակը այս վերջին Երդ հատուածին մէջ պարզուած ձեւն է, և թէ՛ անոր բացարձակ անկարելիութեան պարագային՝ չորք ձեւը: Ասոնցմէ զատ որեւէ ձեւ լուծում անընդունելի և աղիտութիւն է և միայն բռնի կրնայ զործադրուիլ, և չատ չատ մեր վողմէ ակամայ համակերպութեան մը միայն արժանանալ իրրի անկարելիութեան հանդէպ նուազագոյն չարիք մը:

ԿԻԼԻԿԵԱՆ ԴԱՏԻՆ ԻՍԿԱՎԱՆ ԲՆՈՅԹԸ ՆԵՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆՆԸ

Ժամանակէ մը ի վեր արտասահմանի մամուլը և հայ դործիչները, նոյնիսկ ամէնէն ձեռնհասներէն և սրտասխանատուներէն, որ պիտիք են Աւարոնեան և Խատիւեան, կիլիկեան հարցին շուրջ կը պարզեն տեսութիւններ, որոնք հեռի են իրականութիւնը ներկայացնելէ, և որոնք կիլիկեան դատին իսկական թնոյթին և նշանակութեան մասին ցաւալի անհասկացողութիւն մը կը մատնեն: Շատեր կը կարծեն, արդարեւ, որ կարգ մը կիլիկեանակ գործիչներ արուեստականօրէն կիլիկեան հարց մը ստեղծած և մէջտեղ նետած են, և անով կը զբաղեցնեն դիւանագիտութիւնը, մամուլը և կիլիկիոյ տեղական վարչութիւնները: Վտանգաւոր խաղ մը վերջապէս, որ իր դերակատարներուն վրայ ահոյի պատասխանատուութիւններ կը ծանրացնէ, հետեւաբար վերեւ ակնարկուած հայ գործիչները սրտի կատարեալ թեթեւութեամբ կարող վըլլան թոթուել իրենց ուսերը, լուալ իրենց ձեռքերը և յայտարարել ի յուր բարեկամի և թշնամիի, յայտարարել տանիքներու վրայ, թէ «կիլիկեան մի հեռաւոր հողամաս է», որ նուազ կը չահագորգո՞ւ հայութիւնը, թէ հայութիւնը պէտք է համախմբուի այնտեղ, ուր ներկայիս հայկական եռագոյնը կը ծածանի, թէ «ներկայիս կիլիկեան հարց մը վարելի չէ յարուցանել, ատիկա ասպագալի խնդիր է. թէ կիլիկեան ասպագալ Հայաստանի մը ծայրն է, այնպէս որ կարելի չէ կեդրոնը երեսի վրայ ձգել և ծայրերով զրադիլ»: Թէ «այդպէս ընելով մենք վտանգած կ'ըլլանք Հայկ. Հանրապետութեան գոյութիւնը: Մեր ուժերը ամփոփելու ենք: Մենք Տաճկահայաստանը ոչ Խաբէտէրունէն կրնանք դրաւել և ոչ ալ Տրապիզոնէն, այլ Երևանէն, Իկտիլէն: Եկէք Երևան և զօրացուցէ՛ք հայ բանակը:» Շատեր նոյնիսկ աւելի առաջ կ'երթան և ծիծաղելիօրէն կը կարծեն որ կարգ մը արեւմտահայ գործիչներ՝ կարծես դժգոհ հայկական Հանրապետութեան կազմութենէն և անոր դէմ մախանքով և ատելութեամբ լեց-

ւած՝ կը ջանան Կիլիկիոյ մէջ իրենց երևակայած պատկերին համապատասխան երկրորդ «Հայաստան» մը ստեղծել՝ մահացու մրցակից մը այժմու Հայկ. Հանրապետութեան: Ասկէ աւելի արտառոց ենթադրութիւն մը եւ երևակայութիւն մը կարելի չէ մտաբերել: Անոնք որ այս ծիծաղելի ենթադրութիւններուն մէջ կ'իյնան, կ'երևայ թէ բնաւ չեն ուսումնասիրած կիլիկեան հարցը:

Կիլիկեան հարցը մենք չստեղծեցինք: Անիկա գոյութիւն ունէր պատերազմէն առաջ: Անիկա գոյութիւն առաւ պատերազմի ընթացքին, 1916ի դաղտնի համաձայնութեամբ եւ Հայկական Լեզէոնի կազմութեան ծանօթ պարագաներով: Անիկա միջազգայնօրէն մարմին առաւ Թուրքիոյ հետ զինադադարի վաղորդանին՝ երբ Հայկական ու Դաշնակից բանակներու զրաման տակ տռնուեցաւ այդ հոգամասը: Անիկա որդեգրուեցաւ ամբողջ Հայութեան կողմէ, երբ Կիլիկեան իբրեւ Հայաստանի ամբողջացուցիչ մասը սահմանօրէն Դաշնակիցներէն, ոչ միայն Ազգային Պատուիրակութեան կողմէ, այլ անոր հետ միասնարար Հայաստանի Հանրապետութեան Պատգամաւորութեան կողմէ: Անիկա սուր կերպարանք եւ կիզիչ այժմէութիւն ստացաւ այն օրէն՝ երբ Քեմալականներու արշաւանքին եւ աւերումին ենթարկուեցաւ ծանր վտանգի մատնելով այնտեղ ի նորոյ վերահաստատուած հարիւր յիսուն հազարէ աւելի հայութիւնը - հայկական հոծ համախմբում մը, որուն նմանը Հայկական Հանրապետութեան արդի սահմաններէն դուրս, մեր հայրենիքի ոչ մէկ մասին մէջ կարելի է գտնել դժբախտաբար: Անիկա հայութեան համար կենաց եւ մահու խնդիր մը դարձաւ այն օրէն, երբ յայտնուեցաւ թէ Դաշնակիցները Կիլիկիոյ մեծագոյն մասին վրայ կ'ուզեն վերահաստատել թրքական անիծապարտ տիրապետութիւնը: Կիլիկիոյ հայութիւնը դիւանագիտական կացութեան եւ քաղաքական արդի իրականութեան խորապէս խելամուտ, շատոնց համոզուեցաւ որ ներկայիս Կիլիկիան Հայաստանի մէկ նահանգը դարձնելու ձգտել եւ յամառելու երազատեցութիւն պիտի ըլլար: Բայց այդ պատճառ չէր որ Կիլիկահայութիւնը յուսահատութեան եւ անձնասպանութեան մղուէր եւ կոյր կրաւորական համակերպութեամբ անպամ մըն ալ ընդունէր դարաւոր դահլճին անարգ լուծը: Բայց դարձեալ պէտք չէ րիաւ մոռնալ որ Կիլիկեան այժմու հարցը հայկական նախաձեռնութեամբ ստեղծուած հարց մը չէ: Հայերը չէին որ ապստամբեցան Դաշնակիցներուն կամ նոյնիսկ Թուրքիոյ դէմ: Քեմալիստ ապստամբներն էին, ընդհակառակը, որ յարձակեցան հայ գիւղերու եւ քաղաքներու վրայ, Մարաշը կոտորեցին, Հաճընը սպառեցին եւ մինչեւ այսօր կը չարունակեն իրենց ստպատակութիւնը եւ յարձակումները, Կիլիկիոյ մէկ ծայրէն միւսը սուրի եւ հուրի մատնելով: Միթէ հայերը պէտք չէին ինքնապաշտպանութեան զիմել, եւ եթէ Քեմալականներու անլուր բարբարոսութիւնները մէկ կողմէ, եւ հայերու դիւցազնական դիմադրութիւնը միւս կողմէ՝ քաղաքական սուր հարցի մը կերպարանքը եւ

այժմէութիւնը ընծայեցին Կիլիկիոյ դատին, միթէ ասոր համար Կիլիկիոյ հայերը եւ գործիչները մեղաւոր եւ դատապարտելի են, թէ ոչ ընդհակառակը շնորհաւորելի: Միթէ իրաւունք չունինք փափաքելու եւ ջանալու արժեցնել մեր տասնեակ հազարաւոր զոհերուն մարտիրոսութիւնը եւ մեր աննկուն հերոսներուն դիւցազնութիւնը: Միթէ ներկայի դառն դասերէն օգտուելով իրաւունք չունինք պահանջելու թրքական տիրապետութեան վտարումը այս էապէս քրիստոնէական եւ ըստ վկայութեան Մ. Ժորժ Փիքոյի «զուտ հայկական» հողամասէն: Միթէ իրաւունք չունինք Կիլիկիոյ 150.000 հայութեան եւ 100.000ի չափ ուրիշ քրիստոնէայ բնակչութեանց կենաց, ընչից եւ պատուոյ ապահովութեան եւ անոնց նիւթական ու բարոյական յառաջդիմութեան եւ բարգաւաճման համար հաստատուն, իրական ևրաշխաւորութիւններ պահանջելու: Ու դարձեալ, պահ մը քաղաքական մարզին մէջ մտնելով, արդեօք իրաւունք չունինք մեր կամքէն անկախ կերպով ստեղծուած տարապաններէն օգտուելով եւ չեմունելով մեր անցեալ ու ներկայ իրաւունքներուն վրայ եւ իրր նախատեսութիւն ապագայ հաւանականութեանց ու պատեհութեանց, այժմէն ձգտել օժտելու Կիլիկիան թուրքիայէն անկախ ինքնավար քրիստոնէական վարչութեամբ մը եւ այս կերպով ստեղծել Կիլիկիա մը, որ այնպէս համեմատէր Հայաստանին, ինչպէս Կրետէն երբեմն կը համեմատէր Յունաստանին, Արեւելեան Ռումէլին՝ Պոլկարիոյ: Բազմաթիւ տնտեսական, քաղաքական եւ ազգային նկատումներ ու շահեր, նոյնպէս վեր կը հանեն այսօրուան կիլիկեան հարցին կենսական կարեւորութիւնը ընդհանուր հայութեան ապագային վերաբերութեամբ: Կիլիկեան հարցի մը դոյութիւնը ուրանալով, կիլիկեան դատը լքելը՝ պիտի նշանակէր 150,000 հայկական հոծ համախմբութիւն մը իր բախտին ձգել, կամ աւելի ճիշդ դայն ցրուել աշխարհի չորս հովիտուն եւ նոյնիսկ ենթադրելով որ այս 150,000 հայութիւնը միահաղոյն անկարելի տրամադրութիւնը ունենար ամբողջովին Հայաստան փոխադրուելու, ո՞ր մէկ խելացի եւ հեռատես հայր պիտի յանձնարարէր անոր այսպիսի քայլ մը՝ առանց նովին գործով վերջնականապէս հրաժարելու հայ ազգին դարերէ ի վեր անուցած կիլիկեան ապագայ երազներէն եւ իտէայներէն: Կիլիկեան Հայաստանի ապագայ պատուհանը բլլալու սահմանուած է, բացուած դէպի բաց ծովը, դէպի եւրոպա, դէպի քաղաքակրթութիւնը: Բայց որպէսզի օր մը այդ պատուհանը բացուի, պէտք է այժմէն խորհիլ, քանի որ պատերազմը եւ ներկայ իրադարձութիւնները այդ առիթը ընձեռած են, այնտեղ պահպանելու ապահով եւ բարգաւաճ հայութիւն մը: Այդպիսի հայութեան մը դոյութիւնը միտն՝ ապագային իրաւունք պիտի տայ Հայաստանին իր սահմանները ընդարձակելու միջնէ Արջերիական, եւ ոչ թէ պատմական մոռցուած իրաւունքներ եւ կամ աշխարհակալական ցանկութիւններ հայութենէ ամայացած հողամասի մը վրայ: Թող չըսեն մեզի թէ Կիլիկիոյ հայկական կարեւոր կեդրոն մը դառնալը՝ դէ-

սյր այդ երկիրը քաշելով արտասահմանեան հայ ուժերը եւ դրամա-
դրութիւնները, Հայկական Հանրապետութեան բազմամարդութեան եւ
բարգաւաճումին պիտի վնասէ: Պէտք է գիտնալ միանգամ ընդ միշտ
որ իրերուն ինական եւ տնդիմադրելի բերմամբ այլ են Հայաստանի
բազմամարդութիւնը կազմելու սահմանուած հայտարարելը, եւ այլ են
Կիլիկիոյ մէջ կեդրոնանալ ցանկացող հայ տարրերը: Ինչ արուեստա-
կան արգելիչ միջոցներ ալ ձեռք առնուին, Իզմիրի, Կ. Պոլսոյ, Յու-
նաստանի, Եգիպտոսի, Եւրոպայի եւ Ամերիկայի հայ զաղութներուն մէկ
կարեւոր մասը տնտեսական, կլիմայական եւ այլ բազմապիսի պատ-
ճառներով աւելի պիտի նախասիրէ կիլիկեան արդաւանդ եւ վաճառա-
չա՝ դաշտերուն եւ ծովեզերքներուն վրայ հաստատել իր նոր բնակա-
վայրը, քան երթալ հաստատուիլ Մեծ Հայաստանի իստաշունչ լեռ-
նադաւառներուն մէջ: Բայց այս պատճառով Հայաստանը նուազ հայ
բնակիչներ պիտի չունենայ, որոնք պիտի դիմեն դէպի Արարատեան
մեր մայր բնադատաւ, ինչպէս վերոյիշեալ հայ զաղութներէն, որպէս
Ռուսաստանէն, Պետաքապիայէն, Պուլկարիայէն, Պարսկաստանէն եւ
Հնդկաստանէն: Կիլիկիան ոչ միայն Հայաստանի «վտանգաւոր» մըր-
ցակից մը պիտի չըլլայ, այլ՝ ընդհանրապէս՝ ամէն վայրկեան անոր
ցանկալի գիրիւր նետուելու տենչացող փոքրիկ քոյրը, սնդիկի փոքր
զուռնոյ մը, որ ամէն վայրկեան պիտի մղուի վազել միանալ համարարի
մեծագոյն գունդին: Պատմութիւնը պիտի կրկնուի Հայաստանի նը-
կատմամբ ճիշդ այն հոլովոյթով, ինչ որ տեղի ունեցաւ Յունաստանի
եւ Պուլկարիոյ պարագային՝ Կրետէի եւ Արեւելեան Ռումէլիի վերա-
բերմամբ:

Ահա այս տեսութիւններով եւ կը կարծեմ եւ կը պնդեմ իսկ, թէ
կիլիկեան ներկայ ճշմարտամբ եւ հրատապ հարցը ուշադրութենէ վրիպե-
ցնողները եւ անոր բարուք ու նպաստաւոր կարգադրութեանը համար ի-
րենց բարոյական եւ նիւթական բոլորապատու աջակցութիւնը եւ
ձեռնադրութիւնը ինչպիսիք ու զլացողները ամենաճանր պատասխանա-
տուութիւն կը ստանձնեն ապագայ հայ սերունդներուն եւ պատմու-
թեան առջեւ:

Ամէն հայ Կիլիկիոյ այժմու հարցին հանդէպ իր դիրքը որոշե-
լու համար ոչտք է հանապազ ի մօտ ունենայ թէ Կիլիկիան հայկա-
կան նահանգներու Բենիամինն է, թէ Կիլիկիան Հայաստանի միջերկ-
րականներուն դոհարն է, Հայաստանը դէպի ծովը քաջող մագնիսը.
անցեալ, ներկայ եւ ապագայ հայ սերունդներուն գրգանոյշ երազը: Մի
մոռնաք որ այս տողերը գրողը հայկական Նահանգներուն մեծագոյն
մասը տեսած ու ճանչցած, քայլ առ քայլ չափելիաժ է:

Եթէ Կիլիկիոյ մասին կտակս կ'ուզէք լսել, այդ կտակը Աւետարա-
նէն քաղուած միակ պարբերութիւն մըն է - «Մի՛ տայք զսրբութիւնս
չանց եւ մի՛ արկանէք մարդարիտս ձեր առաջի խոզոց»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- Ներածություն	7
ԻՐ ՅՈՒՇԵՐԷՍ	
Նախաբան	18
Գլուխ Ա.- Հայ յեղափոխության ծագումը նախակուսակցական շրջան	21
Գլուխ Բ.- Կուսակցություններու ծնունդը և անոնց ձևափոխությունները	75
- Տամատեանին յոյս տեսած յուշերուն շարունակությունը	103
ՅԱԻՆՈՒԱԾ	
— Արփիարեանի սպանությունը	161
— Սգոստոս 4-ի և 5-ի դէպքերը Կիլիկիոյ մէջ	164

ԻՄՊԵՐԱՏՐԻՍՄԵՆ

ՀԱՅԿԱՅԻՆ

ԻՄՊԵՐԱՏՐԻՍՄԵՆ

ՀԱՅԿԱՅԻՆ ԻՄՊԵՐԱՏՐԻՍՄԵՆ

ՀԱՅԿԱՅԻՆ ԻՄՊԵՐԱՏՐԻՍՄԵՆ

ՀԱՅԿԱՅԻՆ ԻՄՊԵՐԱՏՐԻՍՄԵՆ

ՀԱՅԿԱՅԻՆ ԻՄՊԵՐԱՏՐԻՍՄԵՆ

ՀԱՅԿԱՅԻՆ ԻՄՊԵՐԱՏՐԻՍՄԵՆ

1911

1911

1911

1911

1911

1911

1911

1911

1911

